ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Բ.Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԴ 1/14 (07)
ԳՄԴ 87.3 y7
Խ 282

Աշխատանքը հավանության է արժանացել Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գիտական խորհրդի կողմից (13 հուլիսի 2004 թ., արձանագրություն թիվ 16):

Մասնագիտական խմբագիր՝ պրոֆեսոր
Հ.Ս.ՎԱՖԻՅԱՆ

Խ 282 ԽԱՉԱՏՐՅԱՆ Բ.Ա. Փ ԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ. Ուսումնական ձեռնարկ: Երևան, Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 2004, 236 էջ:

Ձեռնարկում հասանելի մատչելի ձևով շարադրված են փիլիսոփայական գոյաբանական, իմացաբանական, մարդաբանական, տիեզերական և այլ թեմայի հիմնախնդիրները: Ձեռնարկը լիովին կարող է բավարարել ոչ միայն գյուղատնտեսական ակադեմիայի բակալավրական և մագիստրանտական ուսուցման պահանջները, այլև կարող է օգտակար լինել այլ բուհերի ուսանողների, ասպիրանտների և ընդհանրապես փիլիսոփայական խորհրդածություններով տարվողների համար:

Խ $\frac{0301020000}{0173(01)-2004}$ 2004

ԳՄԴ 87.3 y7

ISBN 99941-934-2-2

© Հայկական գյուղատնտեսական ակադեմիա

ԳԼՈՒԽ I

«ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ» ԱՌԱՐԿԱՆ

1. Ինչ է փիլիսոփայությունը.

Ինչ է փիլիսոփայությունը հարցին այնքան էլ հեշտ չէ միանշանակ պատասխան տալ: Եթե նախկինում փիլիսոփայությունը համարվել է գիտությունների գիտություն, ապա այժմ այն անգամ գիտություն չի դիտվում, քանզի ցանկացած գիտություն ունի հետազոտության կոնկրետ ոլորտներ, հիմնախնդիրների լուծման կոնկրետ սկզբունքներ և ձեռք բերած գիտելիքների հավաստիության ստուգման կոնկրետ չափանիշներ: Իսկ փիլիսոփայությունը այդպիսին չէ: Իհարկե փիլիսոփայական գիտելիքների, փիլիսոփայական մտածելակերպի նկատմամբ բոլոր բնագավառների մտածողներն էլ հարգալից վերաբերմունք են ցուցաբերում, ակնածանք են դրսևորում: Սակայն զարմանալին այն է, որ փիլիսոփայություն որպես այդպիսին գոյություն չունի: Պարզապես եղել են, այժմ էլ գոյություն ունեն փիլիսոփայական տարբեր ուղղություններ, հոսանքներ, ուսմունքներ, դպրոցներ, որոնք որոշակի սկզբունքներով, հիմնախնդիրներով, հարցադրումներով նման են միմյանց, կամ զանազանվում են միմյանցից: Ընդ որում տարբեր դարաշրջաններում փոփոխվել է ոչ միայն փիլիսոփայական խորհրդածությունների թեման, այլև փիլիսոփայական հիմնախնդիրների լուծման սկզբունքներն ու եղանակները: Այստեղ ինքնըստինքյան հարց է առաջանում. ե՞րբ, ինչ՞ու և ինչպե՞ս է ձևավորվել փիլիսոփայական մտածողությունը:

Փիլիսոփայական մտածելակերպը ձևավորվել է այն ժամանակ, երբ մարդը դիտելով իր շրջապատն ու տիեզերական անհուն տարածությունները սկսեց ըմբռնել իր տեղն ու դերն այդ հոյակապ համակարգում և միաժամանակ զարմանալ ու հետաքրքրվել, թե ինչից և ինչպես են առաջացել այդ ամենը: Փիլիսոփայությունը զարմանալու հատկություններով օժտված և ինտելեկտուալ բարձր մակարդակ ու վերլուծական մտածողություն ունեցող մարդու խորհրդածություն է: Զարմանալու ունակությունից զուրկ մարդը ոչ կարող է փիլիսոփայել, ոչ էլ ուրիշների փիլիսոփայածն ըմբռնել: Հազարամյակների ընթացքում շրջակա աշ-

խարհի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող և զարմանք տածող մարդկանց ըմբռնումներն ու խորհրդածություններն էլ ամբողջականացվել է որպես փիլիսոփայություն: Առարկայի անվանումը հունարեն «phileo»-սիրել և «sophia»-իմաստություն բառակապակցությունն է և նշանակում է իմաստասիրություն:

2.Փիլիսոփայական մտածելակերպի յուրահատկությունները.

Փիլիսոփայական մտածելակերպի յուրահատկությունն առաջին անգամ նշել է մ.թ.ա. VI դարի հույն մտածող Պյութագորասը: Նրա կարծիքով «Կյանքը նման է խաղերի, ոմանք գալիս են մրցելու, ոմանք առևտուր անելու, իսկ ամենաերջանիկները՝ նայելու»: Պյութագորասի համոզմամբ փիլիսոփայությունը տեսնելու, հասկանալու, խորհելու, բացատրելու հնարություն է: Մ.թ.ա. IV դարի հանճարեղ իմաստուն Պլատոնը փիլիսոփայություն էր համարում հավերժ և բացարձակ ճշմարտության որոնումը և ճանաչումը: Արիստոտելը փիլիսոփայելու պահանջը փնտրում էր համընդհանուրին հասու լինելու մեջ: Սոփեստները փիլիսոփայությունը ներկայացնում էին որպես անձնական օգուտի ու շահի տեսանկյունից դիմացինի հետ բանավիճելու և իր իրավացիությունը ապացուցելու արվեստ:

Միջնադարյան քրիստոնեական մտածելակերպում փիլիսոփայությունը ըմբռնվում է որպես աստվածային իմաստությանը հասու լինելու աշխարհիկ իմաստություն:

XVII դարում Ֆրենսիս Բեկոնը և Ռենե Դեկարտը փիլիսոփայությունը ներկայացնում էին որպես ճշմարիտ և օգտակար գիտելիք ձեռք բերելու մեթոդ:

XIX-XX դարերում փիլիսոփայությունը դիտվում է իրեն և շրջակա աշխարհը ճանաչելու փորձ անող մարդու աշխարհըմբռնում և համակարգված տեսական շխարհայացք:

Եթե ընդհանրացնենք փիլիսոփայության վերաբերյալ այս հակիրճ դիրքորոշումներն ու մեկնաբանությունները, կարելի է եզրակացնել, որ փիլիսոփայությունը այն իմաստունների հայացքների համախումարն է, որոնք փորձել են ըմբռնել և բացատրել, թե ինչից է առաջացել աշխարհը, ինչպիսի ուժեր և օրինաչափություններ են դրսևորվում նրանում, ինչպիսի տեղ է զբաղեցնում մարդն այդ ոլորտներում և ինչպիսին է նրա հոգու բնույթը, ինչ է բարիքը և արդարությունը և այլ հիմնախնդիրներ: Այսինքն, աշխարհի կառուցվածքի և դրանում մարդու

տեղի ու դերի վերաբերյալ խորհրդածությունների համակարգ:

Անտիկ դարաշրջանում այդ խորհրդածություններում ընդգծվել է ոչ միայն աշխարհի նախահիմքի՝ սուբստանցիայի վերաբերյալ մտորումներ, այլև մարդու բնույթի, էության ճանաչմանը նպատակաուղղված արժեքավորումներ: Փիլիսոփայական մտորումները նպատակաուղղելով մարդու բնույթի ըմբռնմանը, Սոկրատեսը առաջադրում է «Ճանաչիր ինքդ քեզ» սկզբունքը:

Ժամանակների փոփոխման հետ մեկտեղ փոխվել է և փիլիսոփայական մտորումների նպատակաուղղվածությունն ու շրջանակները: Միջին դարերի իմաստուններն իրենց հայացքները բևեռում էին երկրայինի և երկնայինի, ժամանակավորի և հավերժի, անկատարի և կատարյալի բնույթի պարզաբանումների վրա: XVII-XIX դարերի մտածողներն ուշադրությունը կենտրոնացնում էին ճանաչողության հնարավորության հարցադրումների վրա: XX դարի մտածողներին հետաքրքրում էր գիտական հայտնագործության տրամաբանության հիմնախնդիրները: Փիլիսոփայության վերաբերյալ տարբեր դարաշրջանների իմաստունների մտորումներն ընդհանրացնելով, կարելի է համոզվել, որ ոմանք փիլիսոփայելու հետևությունը դիտել են ճշմարտության որոնման, իսկ ոմանք էլ՝ իրենց շահերի տեսանկյունից այն թաքցնելու մեջ: Իմաստուններից ոմանք հայացքները հառել են տիեզերքի անհուն տարածություններին, իսկ ոմանք էլ փորձել են ըմբռնել և բացատրել շրջակա աշխարհի իրադարձությունների պատճառահետևանքային փոխազդեցությունների բնույթն ու ընդհանուր օրինաչափությունները. Այդ տարաբնույթ ըմբռնումներում զգալի տեղ է հատկացվել նաև երկրայինի և երկնայինի, բնականի և գերբնականի բնույթի պարզաբանումներին: Դժվար է միանշանակ հիմնավորել, թե փիլիսոփայությունը ծնավորվել ու դարձել է աստծո, թե՞ մարդու բնույթի և էության վերաբերյալ խորհրդածությունների համակարգ: Սակայն միանշանակ կարելի է պնդել, որ մինչև XIX դարը իմաստունները փորձել են ստեղծել իրենց փիլիսոփայական դպրոցներն ու համակարգերը: Դա իրականացվել է գոյաբանական, իմացաբանական, բարոյագեղագիտական, սոցիալ-քաղաքական և այլ բնույթի հիմնախնդիրների վերաբերյալ խորհրդածություններով: Այդ պատճառով էլ մինչև XIX դարը փիլիսոփայությունը անվանվել է գիտությունների գիտություն: Եվ՝ փիլիսոփաները, և՝ բնագետները համոզված են եղել, որ փիլիսոփայությունը պետք է բացատրի և լուծի բնության և հասարակության զարգացման ու փոփոխության կնճռոտ հիմնախնդիրները:

Իմաստունների համոզմամբ փիլիսոփայությունը մարդու հետաքրքրությունն է շրջակա աշխարհի միապաղաղությունից դուրս գալու հնարների փնտրման գործում: Դա հատանելիի հետևում անըմբռնելիի վերաբերյալ մարդու խորհրդածությունն է ինքն իր հետ: Այդպիսի ինտելեկտուալ խորհրդածությունը կոչված է բացահայտելու շղարշով ծածկվածը: Իհարկե այդ շղարշի մեջ թափանցել շատ քչերին է հաջողվում, իսկ ինչ որ բան տեսնել ու հասկանալ հաջողվել է եզակիներին: Այդպիսի երջանիկներից են եղել Պարմենիդեսը, Պլատոնը, Արիստոտելը, Հեգելը և այլոք: Այս իմաստունների ինտելեկտուալ հզոր թռիչքը անհասանելի է սովորական մարդկանց: Դրանով էլ հենց պայմանավորված է փիլիսոփայության բարդությունը: Օրինակ, հավատացյալն աղոթելիս կտրվում է շրջապատից և հաղորդակցվում է աստծո հետ: Էքստազային նման իրավիճակում կարող են հայտնվել միլիոններից՝ եզակիները: Այդպիսին է և տեսանելիի էությունը հասկանալով անտեսանելին ըմբռնելու փիլիսոփայի ինտելեկտուալ ճախրանքը: Յասպերսի բնորոշմամբ փիլիսոփայական մտածելակերպը վերջավորի, այսինքն, առարկայական մտածողությամբ անսահմանի, անառարկայականի մասին խորհրդածելն է: Օրտեգա-ի-Գասսետի կարծիքով «Փիլիսոփայությունը որսորդություն է միասնականի, կեցության հետեվից: Մարդը միշտ չի բավարարվում նրանով, ինչ իրեն տեսանելի, հասանելի է լինում աշխարհում, ինչը գտնվում է նրա շուրջը, քանզի այն, ինչ գտնվում է մեր շրջապատում, լոկ հատվածներ են, որոնց ստեղծարար էությունը անհասանելի է մարդուն»: Ինչպես նետը տեսնելով մենք մտածում ենք նետածիգի մասին, այնպես էլ փիլիսոփան շրջակա առարկաների, իրադարձությունների հիմքում փորձում է տեսնել, ըմբռնել կեցությունը, այն ինչից առաջացել են և ինչի շնորհիվ կան ու գոյություն ունեն այդ առարկաները: Ահա թե ինչու մարդը փիլիսոփայելու պահանջ է զգում: Փիլիսոփայել, նշանակում է փնտրել աշխարհի այն ամբողջականը, որը տրված չէ մեզ և անհասանելի է: Անտիկ Հունաստանի իմաստունները այդպիսին են համարել բոլոր իրերի հիմքում ընկած կայուն, անփոփոխ, անստեղծելի, անոչնչանալի որակը:

3. Փիլիսոփայության պատմական ըմբռնումները

Իմաստունների կողմից փիլիսոփայությունը ըմբռնվել և հիմնավորվել է դարաշրջանի գիտական մտքի զարգացման բնույթին համապատասխան:

Պլատոնի համոզմամբ փիլիսոփայության խնդիրը հավերժ և բացարձակ ճշմարտության ճանաչելն է, որը կարող են անել միայն փիլիսոփաները: Նրանք ի ծնե օժտված են իմաստուն հոգով և կարող են տափանցել սովորական մարդկանց անհասանելի գաղտնիքների մեջ:

Արիստոտելի ըմբռնմամբ փիլիսոփայությունը համընդհանուրի իմացությունն է, իսկ առարկան՝ կեցության պատճառների վերաբերյալ իմացությունը: Նրա կարծիքով «Փիլիսոփայությունը միակ գիտությունն է, որը գոյություն ունի հանուն իրեն»:

Սոփեստները փիլիսոփայությունը հասկանում էին այնպիսի իմաստություն, որին տիրապետողը կկարողանար իր ցանկություններն ու նպատակները ներկայացնել որպես ճշմարտություն: Նրանց կարծիքով փիլիսոփայական գիտելիքների շնորհիվ կարելի է ցանկացած փաստարկներով դիմացինին պարտադրել իր տեսակետը:

Էպիկուրի կարծիքով փիլիսոփայությունը կոչված է մարդուն ազատելու ապագայի հանդեպ սարսափից և նպաստել ձեռք բերելու երջանկություն և հոգեկան հավասարակշռվածություն:

Միջին դարերում եկեղեցու հայրերի կողմից առաջադրված՝ «Առանց հավատի չկա գիտելիք, չկա ճշմարտություն» սկզբունքը զգալիորեն փոխեց փիլիսոփայության դերի ու նշանակության ըմբռնումները: Այս դարաշրջանում փիլիսոփայությունը դիտվում է որպես աշխարհիկը աստվածայինին ծառայեցնելու մտածելակերպ:

XVI-XVIII դարերում հասարակության զարգացման գործընթացներում կարևորվում է բնագիտական հետազոտությունների դերը: Առաջնորդվելով այդ պահանջմունքների տեսանկյունից Ֆ.Բեկոնը փիլիսոփայության հիմնախնդիր դարձրեց բնության ուսումնասիրության մեթոդների մշակումը: Հոբսի համոզմամբ փիլիսոփայությունը գիտություն է մարմնական սուբստանցիաների մասին: Ոչ մարմնականը չի կարող ընդգրկվել փիլիսոփայության հետազոտության ոլորտում: Հոբսը փիլիսոփայությունը դարձրեց մարմնական սուբստանցիաների բնույթը և դրանց միջև առկա պատճառահետևանքային կապերը բացահայտող գիտություն:

Կանտը փիլիսոփայությունը բնորոշում է որպես գիտություն՝ մարդկային բանականության վերջնական նպատակների, գիտելիքի բացարձակ սահմանների մասին:

Հեգելի համոզմամբ փիլիսոփայությունը մտածողության, ճանաչողության յուրահատուկ ձև է:

Հուսերլի կարծիքով փիլիսոփայությունը գիտություն է ճշմարիտ

նախահիմքերի մասին:

Շլիկի ըմբռնմամբ փիլիսոփայությունը նախադասությունների իմաստը բացահայտելու գործունեություն է: Փիլիսոփայության օգնությամբ նախադասությունները բացատրվում են, իսկ գիտության միջոցով՝ վերիֆիկացվում (ստուգվում):

Յասպերսը փիլիսոփայությունը դիտում է կյանքի իմաստն ըմբռնելու ծգտոլ ուժ:

Մարքսիզմը փիլիսոփայությունը հասարում է՝ բնության, հասարակության, մարդկային մտածողության համընդհանուր օրինաչափությունների վերաբերյալ գիտություն:

4. Փիլիսոփայությունը որպես աշխարհայացք

Աշխարհայացքը՝ մարդկանց գիտելիքների, համոզմունքների, մտածմունքների, հավատալիքների, գաղափարների ամբողջականացված, արժեքավորված հայացքների համակարգ է: Փիլիսոփայությունը լինելով մարդու, հասարակության և բնության վերաբերյալ առավել ընդհանրացված հայացքների համակարգ դրսևորվում է որպես աշխարհայացք: Իհարկե «աշխարհայացք» հասկացությունը ավելի լայն է «փիլիսոփայություն» հասկացությունից: Հետևաբար փիլիսոփայությունը ընդգրկվում է աշխարհայացքում: Աշխարհայացքը և փիլիսոփայությունը իրականության արտացոլման տարբեր խորությունների արդյունք են՝ Աշխարհայացքը սկսվում է աշխարհազգացողությունից: Այս մակարդակում իմաստավորվում է կեցության արտաքին արտահայտությունները, երևույթների աշխարհը: Այդ գործընթացի աստիճանական խորացումը դրսևորվում է աշխարհըմբռնումով: Այդպիսի ճանաչողությունը հիմնվում է զգայական փորձի վրա: Այստեղ հստակեցվում է երևույթների ու գործընթացների փոխկախվածությունը, իմաստավորվում է նմանության և տարբերության բնույթը: Աստիճանաբար ճանաչողությունը խորանում և ըմբռնվածը արտահայտվում է հասկացությունների միջոցով: Այս փուլում ձևավորվող աշխարհայացքը բացահայտում է երևույթների ու գործընթացների էությունը և օրինաչափությունները: Դա արդեն խորքային աստիճանի արտացոլում է: Այդպիսի ըմբռնումները վերացական մտածողության և տեսական ճանաչողության դրսևորում են: Փիլիսոփայությունը հենց այդպիսի աշխարհըմբռնում է, աշխարհայացքի բարձրագույն աստիճան:

Աշխարհայացքը և փիլիսոփայությունը աշխարհի արտացոլման արդյունք են: Սակայն այդ արտացոլման խորությունը նույնը չէ: Աշխարհայացքը զգայությունների մակարդակով իրականացվող արտացոլման ձև է, որը դրսևորվում է դիտակետ աշխարհընկալում: Իսկ հասկացությունների միջոցով իրականացվող վերացական մտածողությունը ամբողջականացվում է որպես փիլիսոփայական աշխարհայացք:

Աշխարհայացքի բովանդակային պարզաբանումներում կարելի է առանձնացնել ճանաչողական, արժեքաորմատիվային, հոգեֆիզիոլոգիական, պրակտիկ հիմնատարրեր:

Աշխարհայացքի ճանաչողական հիմնատարրերում ամբողջացվում է առօրեական, գիտական, մասնագիտական գիտելիքներն ու պատկերացումները: Դրանում արտացոլված է աշխարհի վերաբերյալ գիտատեսական ընդհանրացումներ, անհատական և հասարակական ճանաչողության արդյունքների ամփոփումներ, դարաշրջանի ազգերի ու ժողովուրդների մտածելակերպը:

Աշխարհայացքի արժեքաորմատիվային հիմնատարրերում ընդհանրացվում են համոզմունքները, բարոյահրավական նորմերը, հավատալիքները, գաղափարներն ու արժեքները: Այստեղ կարևորվում են մարդու բնույթի, կյանքի իմաստային հարցադրումները, չարի և բարու պատկերացումներ, բարոյական, իրավական, կրոնական, գեղագիտական և այլ բնույթի համոզմունքներ:

Աշխարհայացքի հոգեֆիզիոլոգիական հիմնատարրերում արտացոլվում է մտածողի, գիտնականի, փիլիսոփայի, քաղաքական գործչի հոգեկան տվայտանքները, հուզական ապրումները, կամային հատկանիշները:

Աշխարհայացքի պրակտիկ հիմնատարրերում բնորոշվում է մտածողի հայացքների հիմքերը, գործելաոճը, մտածելակերպի ուղղվածությունը: Հետևաբար, աշխարհայացքը ոչ թե պարզապես մարդու գիտելիքների, համոզմունքների, պատկերացումների պարզ ընդհանրացում է, այլ որոշակի սկզբունքներով արժեքավորված գիտելիքների համակարգ: Այսպիսով կարելի է ընդհանրացնել, որ աշխարհայացքը մարդկանց գործելաոճը բնորոշող, վարքագիծը կոդմնորոշող, շրջակա աշխարհի իրադարձություններն իմաստավորող պատկերացումների, համոզմունքների ընդհանրացված, արժեքավորված հայացքների համակարգ է:

Հազարամյակներ շարունակ, ինչպես առանձին անհատի, այնպես էլ սոցիալական խավերի ու դասակարգերի պրակտիկ գործունեու-

թյունը ունեցել է որոշակի ուղղվածություն և սոցիալական դիրքորոշում: Իրականության երևույթների նկատմամբ այդ դիրքորոշված պատկերացումների, համոզմունքների ու գաղափարների ամբողջական համակարգը կոչվում է աշխարհայացք: Ուրեմն աշխարհայացքը պետք է ըմբռնել որպես տվյալ դարաշրջանի հասարակության սոցիալական խմբերի, դասակարգերի բնության և հասարակական կյանքի երևույթների իմաստավորված գաղափարների համակարգ: Այդ համակարգի էմոցիոնալ, հոգեբանական և սոցիալ-դատակարգային պատկերացումների հիման վրա ձևավորված համոզմունքները դառնում են անհատի, սոցիալական խմբերի ու դասակարգերի ակտիվ գործունեության ազդակներ:

Աշխարհայացքը կարող է լինել առօրեական, կրոնական, փիլիսոփայական և այլ բնույթի:

<u>Առօրեական աշխարհայացքը</u> ձևավորվում է տարերայնորեն, ամենօրյա կենսափորձի հիման վրա: Նման պատկերացումների ձևավորման վրա զգալի ազդեցություն կարող են թողնել ժողովրդի կրթական մակարդակը, ինտելեկտուալ, հոգևոր և քաղաքական կուլտուրան, ազգային, կրոնական և այլ բնույթի ավանդությները: Առօրեական աշխարհայացքի բովանդակության մեջ արտացոլվում է սերունդների կողմից ամրակայված արժեքները, սովորությները, կենսափորձը, ժամանակակիցների պրակտիկ գործունեությունը: Դրանք նպաստում են մարդկանց կողմնորոշվելու կյանքի բարդ իրավիճակներում, ըմբռնելու դեպքերի, իրադարձությունների ծավալման ընթացքը:

<u>Կրոնական աշխարհայացքը</u> երկրայինը երկնայինով, բնականը գերբնականով հիմնավորելու համոզմունքների, հավատալիքների խըտացված արտահայտություն է: Այդպիսի համոզմունքներում իրականը արժեքավորվում է սնոտիապաշտական սկզբունքներով:

<u>Փիլիսոփայական աշխարհայացքը</u> բնության և հասարակության տարբեր ոլորտների բազմաբնույթ արժեքավորումների, սկզբունքային կողմնորոշումների ընդհանրացված համակարգ է: Այդպիսի աշխարհայացքը առօրյա պատկերացմամբ անըմբռնելին ըմբռնելի դարձնելու ինտելեկտուալ ճախրանքի դրսևորում է: Մարդկային հասարակության գիտակցական գործունեության ընթացքում փիլիսոփայական աշխարհայացքը դրսևորվել է երկու արմատական ուղղություններով՝ մատերիալիստական և իդեալիստական: Եթե հայացքների հիմքում ընկած է նյութականի առաջնայնության և ոչ նյութականի երկրորդայնության սկզբունքը, դա մատերիալիստական աշխարհայացք է: Իսկ ոչ նյու-

նականի առաջնայնության և նյութականի երկրորդայնության համոզմունքի դեպքում գործ ունենք իդեալիստական աշխարհայացքի հետ: Այստեղ ոչ թե առկա է նյութականի գերագնահատման և ոչ նյութականի թերագնահատման սկզբունքը, այլ կարևորվում է հոգևոր ու նյութական երևույթների ծագումնաբանական հարցադրումը, որը ճանաչողական և գաղափարական նշանակություն ունի:

ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ ԵՎ ԻԴԵԱԼԻԶՄԻ ՀԻՄՔԵՐԸ: Դարեր շարունակ փիլիսոփայության հիմնական ուղղությունների, հոսանքների, դպրոցների սկզբունքային և դավանաբանական անհաշտելիության հիմքը եղել է կեցության և գիտակցության, բնության և ոգու, նյութականի և ոչ նյութականի հարաբերության առաջնայնության լուծման հարցը, որը անվանվել է փիլիսոփայության հիմնական հարց: Այն մտածողները, որոնք կեցությունը՝ մատերիան համարել են առաջնային, իսկ գիտակցությունը երկրորդային, նրանից ածանցված, կոչվել են մատերիալիստներ: Իսկ այն մտածողները, որոնք հիմնավորել են ոգու, գիտակցության առաջնայնությունը կեցության նկատմամբ համարվել են իդեալիստներ: Փիլիսոփայության հիմնական հարցի նկատմամբ դիրքորոշման ճշգրտումը կարևոր նշանակություն ունի ինչպես մատերիալիստական և իդեալիստական աշխարհայացքների էության ըմբռնման, այնպես էլ այդ համոզմունքների ձևավորման ակունքների պարզաբանման գործում: Մատերիալիստական աշխարհայացքի առաջացման և ձևավորման հիմքում ընկած է մարդկային պրակտիկան: Բնության հետ փոխհարաբերության պրակտիկ գործունեության հիման վրա մարդը հանգում է այն եզրակացության, որ իրերը, առարկաները, բնությունը գոյություն ունեն օբյեկտիվորեն, իր գիտակցությունից անկախ: Իդեալիստական աշխարհայացքի ձևավորման գործում վճռական դեր է խաղացել հասարակության դասակարգային շերտավորման հետ առաջացող սոցիալական խտրականությունը, երբ իշխող վերնախավի զբաղմունքը դառնում է մտավոր աշխատանքը, իսկ ստոր֊ին խավերին և մասսաներին բաժին է ընկնում ծանր ֆիզիկական աշխատանքը: Մտավոր աշխատանքով զբաղվող վերնախավի գաղափարախոսների մոտ ձևավորվում է այն համոզմունքը, որ հոգևոր գործունեությունը առաջնակարգ է, իսկ ֆիզիկականը, նյութականը երկրորդային է և հոգևորից կախված: Դրան համապատասխան ամրանում է այն համոզմունքը, որ գիտակցությունը, ոգին, գաղափարը առաջնային է, իսկ իրերը, առարկաները երկրորդային են, այսինքն իրերի, առարկաների մասին հասկացությունները, գաղափարները գոյություն են ունեցել բուն իրե-

Մատերիալիզմը որպես իրերի, երևույթների օբյեկտիվ գոյության մասին մարդկանց ողջախոհ համոզմունք և փիլիսոփայական աշխարհայացք, նպաստում է բնության և հասարակության վերաբերյալ գիտական տեսության մշակմանը: Հիմնավորելով նյութականի առաջնայնության և հոգևորի երկրորդայնության գաղափարը այն ճանապարհ է հարթում ֆիզիկականի և հոգեկանի էության ըմբռնման համար: Մատերիալիզմը բազմակողմանիորեն և խորությամբ բացահայտում է մարդու կողմից աշխարհի ճանաչողության հնարավորությունները, բնության և մարդկային մտածողության շարժման ընդհանուր օրենքները, զգայականի և տրամաբանականի հարաբերակցությունը, զարգացման, շարժման աղբյուրը: Այն ուսուցանում է, որ առարկաների ու երևույթների մեջ գոյություն ունեն հակադիր ուժեր, որոնց պայքարով էլ պայմանավորված է ինքնաշարժումը: Իդեալիզմը ծագում է ճանաչողության բարդ ու հակասական գործընթացում վերացական մտածողության բացարձակացման, ռեալ իրերից հասկացությունների անջատման ճանապարհին: Ելնելով հոգևորի առաջնայնությունից և մատերիականի երկրորդայնությունից իդեալիզմը հանգում է ժամանակի ու տարածության մեջ աշխարհի վերջավորության, աստծու կողմից նրա ստեղծագործության գաղափարին: Նման մտածողությունը հետևողականորեն գիտակցությունն էլ դիտում է բնությունից կտրված, նրանից վեր կանգնած աննյութական նախսահիմք: Իսկ տեսական մտածողության մեջ հասկացությունները անջատում և հակադրում է նրանց օբյեկտներին: Իդեալիստական աշխարհըմբռնումը թերագնահատելով և նսեմացնելով նյութականը և գերագնահատելով ոչ նյութականը, ոգին, գաղափարը, իբրև իրականության հիմք է ընդունում գերանհատական գիտակցությունը: Այն դառնում է կամ նպատակային սկզբնապատճառ, որը կատարում է արտաբնութենական աստծու կամքը, կամ էլ ամենազոր արարիչ, որը ստեղծել է ժամանակի ու տարածության մեջ վերջավոր այս աշխարհը:

ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԵՎ ԴՈՒԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԿՈՒՑՈՒՄԸ:

Փիլիսոփայական աշխարհայացքի մատերիալիստական դիրքորոշման համաձայն հոգևորը մատերիականի արդյունք է, իսկ իդեալիստական համոզմունքը մատերիականն է համարում հոգևորի արդյունք:

Այս երկու համոզմունքներն էլ ելնում են մեկ սկզբունքից: Մատերիալիզմը որպես նախասկզբնական առաջնային ու որոշիչ է ընդունում մատերիան, նյութականը, իսկ իդեալիզմը՝ հոգևորը: Նման մոտեցումը փիլիսոփայության մեջ կոչվում է մոնիստական դիրքորոշում, այսինքն համոզմունքները բխեցվում են մեկ նախահիմքից: Բայց փիլիսոփայության պատմության մեջ եղել են մտածողներ, որոնք ընդունել են երկու նախահիմք: Նրանց պատկերացմամբ հոգևորը և մատերիականը առանձին, ինքնուրույն, իրարից անկախ նախահիմքեր են: Այսպիսի համոզմունքը կոչվում է դուալիստական: Դուալիզմը հավասարապես արժեքավորում է և նյութական և աննյութական նախահիմքերը: Այդպիսի համոզմունքում մատերիան և գիտակցությունը, ֆիզիկականը և հոգեկանը դիտվում են հավասարարժեք նախահիմքեր: Նման հայացքներ զարգացնող Ռ.Դեկարտի համոզմամբ մտածող ոգին և տարածական մատերիան միմյանցից անկախ, ինքնուրույն գոյություն ունեցող նախահիմքեր են: Դեկարտի կարծիքով մարդու մեջ ռեալ կերպով իրար հետ կապված են անկենդան նյութական նախահիմքը և մտածող հոգին: Որոշակի զանազանություն է նկատվում նաև մատերիալիստական և իդեալիստական ուղղությունների ներսում:

ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ ԵՎ ԻԴԵԱԼԻԶՄԻ ՏԱՐԱՏԵՍԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մատերիալիզմի առաջին պատմական ձևը՝ պարզունակ մատերիալիզմը բնության բազմազանության մեջ փնտրում էր այն ընդհանուր նախահիմքը, որից պետք է առաջացած լինեին աշխարհի ողջ բազմազանությունը (Թալես, Անաքսիմենես, Դեմոկրիտ և այլ մտածողներ): Միջին դարերում Ռոսցելին, Դունս Սկոտը, Օկամը զարգացրեցին իրերի առաջնայնության և հասկացությունների երկրորդայնության նոմինալիստական համոզմունքները, որը մատերիալիզմի սկզբունքների ջատագովություն էր կրոնի գերիշխանության դարաշրջանում: 17-18-րդ դարերում առանձնանում է մեխանիստական, մետաֆիզիկական մատերիալիզմը, որը բնության վերջին տարրերը համարեց անչունչ և որակազուրկ, բնությունը՝ բացարձակ անփոփոխ, բայց շարժումը ընդունեց որպես բնության համընդհանուր, անօտարելի հատկություն (Դիդրո, Հոլբախ, Հելվեցիուս, Լամետրի): 19-րդ դարի կեսերին ձևավորվեց դիալեկտիկական մատերիալիզմը, որը ամեն ինչ դիտելով շարժման և զարգացման գործընթացում հաղթահարեց նախկին մատերիալիզմի սահմանափակությունները և բացահայտեց պատմական

գործընթացի օրինաչափությունը: Իրականության իմաստավորման մատերիալիստական այս տարատեսակությունների դեմ անզիջում պայքար է մղել իդեալիզմը: Օբյեկտիվ իդեալիզմը որպես նախահիմք է ընդունում «բացարձակ ոգին», «համաշխարհային բանականությունը», իրերից անջատված ինքնուրույն գոյություն ունեցող հասկացությունը, գաղափարը: Ըստ Պլատոնի իդեաները (գաղափարները) ի սկզբանե և հավերժ գոյություն ունեն «Իդեաների աշխարհում», իսկ իրերն ու առարկաները այդ «իդեաների» ստվերներն են, աղոտ արտացոլումը: Այս համոզմունքի համաձայն հոգևորը որպես անկախ, ինքնուրույն նախահիմք գոյություն ունի մարդկանց գիտակցությունից դուրս, բնությունից առաջ: Սուբյեկտիվ իդեալիզմը սկզբունքային տարբերություն չի դնում օբյեկտիվորեն գոյություն ունեցող իրերի և դրանց զգայական պատկերների միջև: Բերկլին, Մախը, Ավենարիուսը պնդում են, որ միայն չիմացությունն է պատճառը, որ տեսանելի աշխարհի առարկաները իրականի տեղ ենք ընդունում: Մեզ հայտնի են միայն մեր զգայությունները, որոնք ճանաչողության միակ առարկան են: Նման դիրքորոշումը միակողմանիորեն բացարձականացնում է զգայական ընկալումների դերը:

Մատերիալիզմը և իդեալիզմը նախկինում եղել են սկզբունքորեն հակադիր աշխարհայացքներ: Սակայն փիլիսոփայության պատմության մեջ աշխարհայացքային տարբեր բևեռներ հանդիսացող այդ սկզբունքները երբեմն զգալիորեն այնպես են մոտեցել միմյանց, որ ծնավորվել է միանգամայն նոր փիլիսոփայական համոզմունք: Այդպիսի պատկերացումներն անվանվել է դեիզմ (լատիներեն deus - աստված):

Դեիստական աշխարհայացքում հիմնավորվում է, որ Աստված միայն ստեղծել է աշխարհը: Հետագա գործընթացները ծավալվել են առանց աստծո միջամտության: Տիեզերքում ընթացող բոլոր գործընթացները ծավալվում են բնական օրինաչափություններով:

Դեիստական համոզմունքներ զարգացրել են մատերիալիստական աշխարհայացքը չմերժող Ֆ.Բեկոնը, Ջ.Լոկը, Ի.Նյուտոնը, իդեալիստական աշխարհընկալում ունեցող Գ.Լայբնիցը, Դ.Հյումը, դուալիստ մտածող Ռ.Դեկարտը և այլոք:

5. ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ

ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: Մարդկային հասարակության բանական գործունեության պատմական առաջին էտապում ձևավորված աշխարհայացքը առասպելաբանությունն է (դիցաբանությունը):

Առասպելը մեր նախահայրերի պատկերացումների ու աշխարհագիտության այն շրջանակն է, որում փորձ է արվում երևույթների հետևում տեսնել իմաստ ու օրինաչափություն, անձնավորել դրանք: Նույնիսկ այդ մարմնավորումն, իմաստավորումն ու բացատրությունն այժմյան պատկերացմամբ հնարածին ու ֆանտաստիկ էր, բայց աչքի էր ընկնում վառ երևակայությամբ ու հարուստ ներկապնակով: Այդպիսի չխամրող առասպել է Վահագն աստծո ծնունդը.

Երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը,
Երկնում էր և ծովը ծիրանի,
Երկունքը բռնել էր ծովում
Նաև կարմրիկ եղեգնիկին:
Եղեգնի փողով ծուխ էր ելնում.
Եղեգնի փողով բոց էր ելնում
Եվ բոցից դուրս էր վազում
Մի խարտյաշ պատանեկիկ:

Մեր նախահայրերի պատկերացմամբ իրական աշխարհն իր երևույթներով ու գործընթացներով առասպելականի շարունակությունն է, նրանք՝ այդ թեալ ու երևակայական, բնական ու գերբնական աշխարհի մի մասը: Նրանք շնչավորում էին բնությունը և հավատում էին իրենց կողմից կյանքի կոչված ուժերի գոյությանը: Նման մտածելակերպում միախառնված է նրանց կենսափորձը, խոհերն ու ձգտումները, կենդանի հայեցողության հիման վրա բնության կերպարանափոխության երևույթի աստվածացումը, բարի ու չար նախասկզբի մասին պատկերացումը:

Դիցաբանական հավատալիքներում մարդը փորձել է ըմբռնել, հասկանալ, բացատրել շրջակա աշխարհն ու տիեզերքը, իր և բնության փոխհարաբերությունները, ծննդի և մահվան գաղտնիքները: Այդպիսի համոզմունքներում արտացոլված է մեր նախնիների աշխարհ ըմբռնումը: Անգլիացի ազգագրագետ Մալինովսկու բնորոշմամբ դիցաբանությունը տվյալ էթնոսի հավատալիքների և վարքագծի նորմերի խտացված արտահայտությունն է: Այսինքն դիցաբանությունը բնության երևույթների և իրենց կոլեկտիվ կյանքի վերաբերյալ մեր նախնիների

պատկերացումների խտացված արտահայտությունն է: Այդ պատկերացումներում ամբողջականացվել է նրանց գիտելիքները, հավատալիքները, վարվեցողության նորմերը, աշխարհաճանաչողությունը: Այսինքն, մարդը լուծվում է բնության մեջ և կլսզմում է նրա մի մասնիկը: Եվ ինչպես ինքն է շնչավոր, այնպես էլ շնչավորված է պատկերացնում իր շրջապատի բոլոր օբյեկտները: Օրինակ, Հոմերոսի համոզմամբ ի սկզբանե գոյություն ունեցող հավերժ, անսահման, մութ քաոսն օժտված է կենսունակությամբ: Ամբողջ աշխարհը, այդ թվում և անմահ աստվածները առաջանում են այդ քաոսից: Նման առասպելներում անցյալը կապվում է ապագայի հետ, որն էլ ապահովում է սերունդների հոգևոր կապը: Ժողովուրդների առասպելներում հաղորդվում է աշխարհի, մարդկանց ու կենդանիների ծագման նկարագրությունը, հերոսների քաջագործությունները: Դիցաբանական պատկերացումներում զգալիորեն առկա էր և կրոնական հավատալիքներ, սակայն դրանք ամբողջականացված և ինքնուրույն աշխարհայացքի տեսք են ստանում հասարակության դասային շերտավորման ընթացքում:

Բնական ուժերի և հասարակական կյանքի սոցիալական անարդարության հանդեպ անզորության զգացողությունը, առկա պայմաններում իղձերի, ցանկությունների, ծգտումների կատարման անհնարինության ըմբռնումը, ինչ-որ ուժի օգնությամբ, ինչ-որ ժամանակ դրանց իրականացման հույսը նպաստեցին աշխարհայացքի երկրորդ պատմական տիպի՝ կրոնի առաջացմանը: Կրոնի ծագումը համընկնում է հասարակության զարգացման այն ժամանակաշրջանին, երբ ձևավորվել է ոգու՝ որպես հոգեկանի, բանականության՝ մարմնականից անկախ գոյություն ունենալու գաղափարները: Դա այն դարաշրջանն է, երբ ինքնուրույն սուբստանցիա են համարվում և հակադրվում են միմյանց բնությունը և ոգին, մարմինը և հոգին: Այսինքն, կրոնական հավատալիքների ձևավորման հիմնական պայմաններ են նյութականի՝ որպես ժամանակավորի ու անցողիկի և ոչ նյութականի՝ որպես կատարյալի ու անմահի գաղափարների զարգացումը: Ֆոյերբախի բնորոշմամբ կրոնը ձևավորվել է հասարակության զարգացման այն շրջանում, երբ մարդը բախվելով շրջակա աշխարհի խորհրդավոր ու անհասկանալի երևույթներին դրանց վերագրեց գերբնական հատկություն: Նրա կարծիքով կրոնի մեջ զգացող, մտածող ու կամեցող մարդն է իր զգացմունքներով, ցանկություններով ու երազանքներով: Մարդը կրոնի մեջ մարմնավորել է իր երազանքները: Նա հավատացել է աստվածների ամենազորությանը, քանզի ցանկացել է որպեսզի հասնի իր

իրականացված երազանքներին: Մարդն աստվածներին օժտել է անմահությամբ՝ հույս փայփայելով, որ ինքն էլ չի մահանա ու անհետ չի կորչի: Աստված պետք է ամենազոր լիներ, որպեսզի կատարեր մարդու ցանկությունները:

Տեսական մտածողության զարգացման սկզբնական էտապում, վերացարկվելով առարկայական իրականությունից, բայց չկարողանալով բացատրել որոշ իրական երևույթներ, մարդը դրանց վերագրել է մտացածին, գերբնական հատկություններ, ինքնուրույն, սուբստանցիոնալ գոյություն, որը ի վերջո վերածվում է ամենազոր, բարի և արդարադատ աստծո գաղափարի: Աստված, որը ունեզուրկ, հարստահարված ու պատվազրկված թշվառին հանդերձյալ աշխարհում երանելի կյանքով ապրելու հույս է ներշնչում: Այդ հույսը միշտ իրեն սնող հասարակական հարաբերությունների հրաշալի պահապան է եղել:

Գիտակցելով իր անզորությունը ստեղծված իրավիճակում, հավատացյալը հայացքը հառում է դեպի անորոշ հեռուն՝ այնտեղից ա- կընկալելով փրկության հույս:

Փիլիսոփայություն: Առաջապելաբանության ու կրոնին զուգահեռ անտիկ ժամանակաշրջանում ձևավորվեց աշխարհընմբռնման մի նոր համակարգ, որը իր մեջ ընդգրկեց կոնկրետ գիտությունների և աշխարհայացքային հիմնախնդիրների համապարփակ գիտելիքներ: Այն անվանվեց փիլիսոփայություն: Այդ դարաշրջանում նույն մտածողի մեջ համատեղվում էին գիտնականը և փիլիսոփան: Կոնկրետ գիտականի և աշխարհայացքի յուրօրինակ այդ միասնությունը ընդգրկում էր բավականին լայն շրջանակ և կոչվում էր գիտությունների գիտություն:

Բնական գիտությունները ուսումնասիրում են մատերիայի շարժման զանազան ձևերը, հումանիտար գիտությունները բացահայտում են հասարակական կյանքի տարբեր կողմերը, իսկ փիլիսոփայությունը հիմնավորում է կեցության և ճանաչողության համընդհանուր օրինաչափությունները:

Փիլիսոփայությունը գոյաբանական, իմացաբանական, մարդաբանական, սոցիալ-քաղաքական և այլ բնույթի վերլուծություններին, խորհրդածությունների համընդգրկուն գիտելիքների համակարգ է:

6. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հազարամյակների ընթացքում փիլիսոփա իմաստունները իրենց ուշադրությունը կենտրոնացնելով տիեզերքի, բնության և հասարակության ոլորտների ուսումնասիրության վրա փորձել են ըմբռնել ու բացատրել դրանցում ծավալվող գործընթացների բնույթն ու էությունը, պարզել բազմաթիվ ու բազմաբնույթ կապերի ու հարաբերությունների պատճառահետևանքային փոխպայմանավորվածության հիմքերը: Այդ բազմաբնույթ ու բազմաբովանդակ հարցալուծումներից կարելի է առանձնացնել հետևյալ հիմնախնդիրները:

1. Կեցության առավել ընդհանուր հարցերի հետազոտությունը: Հնագույն սկզբանե փիլիսոփաների աշխատություններում կարևոր տեղ է հատկացվել կեցության, նյութականի և իդեալականի փոխհարաբերության արժեքավորմանը: Կեցության մասին փիլիսոփայական ուսմունքն անվանվել է օնտոլոգիա (հունարեն ontos-գոյ և logos-ուսմունք): Այստեղ կարևորվում է սուբստանցիայի, նախահիմքի, սկզբնապատճառի վերաբերյալ խորհրդածությունները: Այդ խորհրդածություններում հիմնավորվում է կեցության բնույթն ու էությունը, համընդհանուր հասկացությունների այն համակարգը, որոնց մարդը կարող է հասու լինել զգայական ու գերբնական ինտուիցիայի միջոցով: Փիլիսոփայության մեջ սուբստանցիան իմաստավորվում է որպես հիմքում ընկած էություն, կայուն, ինքնուրույն, ինքն իր պատճառը հանդիսացող գոյ, միասնական կայուն սկիզբ, սկզբնահիմք: Փիլիսոփայական օնտոլոգիան աշխարհի նախահիմքի, հիմնատարրերի որոնման հարցալուծումն է:

2 Ճանաչողության առավել ընդհանուր հարցերի վերլուծություն: Փիլիսոփաներին միշտ հետաքրքրել է աշխարհի ճանաչելիության հարցալուծումը: Այսինքն, մարդու կողմից աշխարհի ճանաչողության հնարավորությունների, գիտելիքի հավաստիության հիմնախնդիրները: Ճանաչողության վերաբերյալ փիլիսոփայական ուսմունքը կոչվում է գնոսեոլոգիա (հունարեն gnosis –իմացություն և logos-ուսմունք):

Փիլիսոփաների մեծամասնությունը չի կասկածում աշխարհը ճանաչելու մարդու ունակությունների վրա: Հիմնավորվում է, որ մարդն աստիճանաբար կարող է բացահայտել օբյեկտների, երևույթների, գործընթացների խորքային հատկությունները: Սակայն քիչ չեն նաև աշխարհի ճանաչելիության հնարավորությունների հարցում մարդու ունակությունները սահմանափակող մտածողները: Նման մտածողների հա-

մոզմունքները ծևավորվել են ագնոստեցիզմի, սկեպտիցիզմի և այլ հոսանքների ծևով:

Ագնոստիցիզմը (հունարեն a- ոչ, gnosis - իմացություն) լիովին կամ մասնակիորեն հերքում է աշխարհի ճանաչողության հնարավորությունը: Նման համոզմունքներում սահմանափակվում է գիտության դերը երևույթների, օբյեկտների էության ճանաչման գործում: Այդպիսի մտածելակերպ դրսևորել են Հեքսլին, Հյումը, Կանտը և այլոք: Օրինակ, 1860թ. Հեքսլին հիմնավորում էր, որ «հնարավոր չէ պնդել, թե կա՞ արդյոք մեր զգայարաններում արտացոլվող օբյեկտիվ ռեալականություն, որը մենք կարողանանք ճանաչել»: Իսկ Հյումը կասկածելով օբյեկտիվ աշխարհի ռեալականությանը, նշում էր, որ «գիտելիքի բոլոր օբյեկտները գուցե առաջանում են և գոյություն ունեն միայն մեր զգայարաններում»:

Անտիկ դարաշրջանում Պրոտագորասը, XVIII դարում Ի. Կանտը հիմնավորում էին, որ ճանաչողության ճշմարտացիության հարցը վերջնականապես և միանշանակ հնարավոր չէ լուծել, քանզի սկզբունքորեն աշխարհն անճանաչելի է:

Աշխարհի ճանաչելիության հնարավորությանը կասկածանքով մոտեցող մտածողներին կոչում են սկեպտիկներ:

Սկեպտիցիզմը (հունարեն կասկածում եմ) մերժում է հավաստի գիտելիք ծեռք բերելու հնարավորությունը: Նման համոզմունքներում հիմք է ընդունվում մարդկային ճանաչողության սահմանափակությունը և հարաբերականությունը: Հիմնավորվում է, որ օբյեկտիվ իրականության վերաբերյալ մեր գիտելիքները սպառիչ, վերջնականապես ճշգրտված չեն, ուստի պետք է խուսափել որևէ բան միանշանակ հաստատելուց կամ ժխտելուց, քանզի դա հավաստի լինել չի կարող: Այդպիսի կարծիքներ զարգացրել են անտիկ դարաշրջանում Պիռոնը, Արքեսիլայոսը, Կառնեադեսը, Էնեսիդեմը, միջին դարերում Նիկոլայ Կուզանացին, էրազմ Ռոտերդամցին, Մոնտենը, Վերածննդի դարաշրջանում Պիեռ Բեյլը, XX դարում Կոհենը, Նատորպը, Կասիրերը, Վինդելբանդը, Ռիկերտը, Պիրսը, Դյուին, Զեյմսը:

Պիռոնի համոզմամբ երջանիկ լինելու համար մարդը պետք է իմանա, թե՝ 1. Ինչպիսին է իրերի բնույթը, 2. Ինչպես պետք է վերաբերել դրանց, 3. Ինչ օգուտ կստանա այդպիսի վերաբերմունքից, որը անհնար է, քանզի իրերի բնույթն անորոշ է, անկայուն և մարդը չի կարող դրանց մասին ունենալ ճշգրիտ գիտելիք:

Կառնեադեսը, Արքեսիլայոսը, զարգացնելով Պիռոնի համոզմունք-

Ի տարբերություն հնության մարդու, որ մարդու բնականությունը առնչվելով անհասկանալի խնդիրների, կարող է մոլորվել: Շրջակա աշխարհի վերաբերյալ մարդու պատկերացումները կարող են լինել թե հավանական, թե ճշմարտանման, ուստի պետք է խուսափել անվերապահ պնդումներից: Ներկայիս կարծիքով միևնույն իրի վերաբերյալ ոչ միայն տարբեր կարող են լինել մարդկանց զգայական ընկալումներն, այլև, կախված տրամադրությունից, տարիքից նույն անձը տարբեր ընկալումներ կարող է դրսևորել: Մարդկանց պատկերացումները կախված են ոչ միայն իրերի կառուցվածքից, այլև ավանդություններից, բարքերից, իրավական օրենքներից: Չարի և բարու ըմբռնումն ու մեկնաբանությունը բոլոր ազգերի կողմից նույնաբնույթ վերլուծության չի ենթարկվել:

Սկեպտիցիզմը հատկապես դրսևորվում է հասարակության զարգացման այն դարաշրջաններում, երբ նախկինում ամրակայված արժեքները արժեզրկվում են, իսկ նոր ծևավորվող արժեքներն էլ չեն ընդունվում բոլորի կողմից:

3. Հասարակության գործառնության և զարգացման առավել ընդհանուր հարցերի ուսումնասիրություն: Հասարակական կյանքի հետազոտություններն ընդգրկող փիլիսոփայական հարցալուծումներն ամբողջականացվել են սոցիալական փիլիսոփայություն բաժնում:

4. Մարդու բնույթի և էության հիմնախնդիրներ: Ի սկզբանե փիլիսոփայությունը ծևավորվել է որպես մարդու բնույթի և էության վերաբերյալ խորհրդածություն: Հարցալուծումների այս բնագավառն անվանվել է փիլիսոփայական մարդաբանություն: Փիլիսոփայական կատեգորիաները, օրենքներն ու սկզբունքները կրում են համընդհանուր բնույթ, արտացոլում են բնության և հասարակական կյանքի համընդհանուր օրինաչափություններ: Սակայն ամեն դարաշրջանում դրանք յուրահատուկ լուծումներ են ստացել:

7. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱԶՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ

Փիլիսոփայության բազմիմաստությունը առաջին հերթին արտահայտվում է փիլիսոփաների անհատականությամբ: Ամեն մի փիլիսոփա յուրովի անհատականություն է: Հետևաբար փիլիսոփաների մտահորիզոնը, աշխարհըմբռնումը, սկզբունքային դիրքորոշումները էականորեն կզանազանվեն միմյանցից:

Փիլիսոփայության բազմիմաստությունը պայմանավորված է նաև

իրականության բազմաձևությամբ: Մեզ շրջապատող աշխարհը հարուստ բազմազանություն է: Բոլոր մարդիկ այդ բազմազանությունը միատեսակ չեն ընկալում: Ինչպես որ արվեստի տարբեր ուղղությունները արվեստագետների կողմից իրականությունը տարբեր ձևով զգալու, ընկալելու և իրենց պատկերացրածը յուրովի վերարտադրելու արդյունք են, այնպես էլ փիլիսոփայական տարբեր աշխարհայացքները, հոսանքները, ուղղությունները իմաստունների կողմից աշխարհը, իրադարձությունները տարբեր ձևով ընկալելու, ըմբռնելու և արժեքավորելու արտահայտություն է:

Հասարակության զարգացման բնականային դարաշրջաններն միմյանցից տարբերվում են սեփականության ձևով, սոցիալական կառուցվածքով, քաղաքական վարչակարգով և այլ գործոններով: Փիլիսոփան հանդիսանալով իր դարաշրջանի ծնունդը վերլուծում, ընդհանրացնում և արժեքավորում է տեղի ունեցող իրադարձությունները: Այդպիսի արժեքավորումների արդյունք հանդիսացող փիլիսոփայական տարբեր հոսանքները բազմակարծիքայնության ակնհայտ դրսևորում են: Հեգելի պատկերավոր արտահայտությամբ փիլիսոփայի աշխարհըմբռնումը ձևավորվում է նրա դարաշրջանին բնորոշ արժեքների հիման վրա: Եվ քանի որ պատմական դարաշրջանները միմյանցից տարբերվում են մշակույթով, բարոյագեղագիտական և այլ արժեքներով, տարբեր դարաշրջանների փիլիսոփաների աշխատություններում կարտացոլվի սկզբունքային տարբեր դիրքորոշումներ: Հեգելի դիպուկ հիմնավորումով փիլիսոփայի աշխարհըմբռնումը դրսևորվում է նրա ապրած դարաշրջանին բնորոշ արժեքներին համապատասխան: Այդ իսկ պատճառով էլ յուրաքանչյուր դարաշրջանի փիլիսոփայական միտքը կտարբերվի մյուսներից, քանզի պատմական դարաշրջանները զարգացման բնույթով ու մշակույթով զանազանվում են միմյանցից: Միաժամանակ ամեն փիլիսոփա ստեղծում է իր մտածելակերպին համապատասխան փիլիսոփայական համակարգ: Այդ համակարգը նրա հոգևոր գործունեության արդյունքն է: Իսկ նա լինելով իր դարաշրջանի հասարակական հարաբերությունների ծնունդ, իր հայացքներում կարտացոլի այդ հարաբերությունների արժեքները:

Ձևավորված փիլիսոփայական ուսմունքները, հոսանքները, համոզմունքները կունենան և նմանություն և տարբերիչ գծեր, քանզի ցանկացած փիլիսոփայական ուսմունք ոչ միայն տվյալ դարաշրջանի, այլև այն ստեղծող մտածողների հոգեկան կերտվածքի արդյունք է: Հետևաբար փիլիսոփայության բազմակարծիքայնությունը պայմանավոր-

[illegible] է այլ [illegible] հասկավառի մտածողների անհատականությամբ, հոգեկան կյանքովածությով, քաղաքական հարաբերությունների բնույթով և այլ գործոններով

8. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Փիլիսոփայական ցանկացած համակարգ իրենում բովանդակում է որոշակի տեսանկյունից հետազոտվող օբյեկտների, երևույթների, գործընթացների արժեքավորումներ: Դրանք կարող են լինել սոցիալական, քարոյական, գեղագիտական, գաղափարախոսական և այլ բնույթի հիմնախնդիրների հարցալուծումներ: այդպիսի հարցալուծումները չափազանց կարևորվում են հասարակության զարգացման բեկումնային ժամանակաշրջաններում, երբ անխուսափելի է դառնում զարգացման նոր կուրսի և դրան համապատասխան նոր արժեքների ընտրությունը: Նման իրավիճակների ծավալման բնույթն ըմբռնելու, զարգացման ընթացքը հասկանալու համար քաղաքական գործիչները պետք է կատարեն փիլիսոփայական խորը վերլուծություններ: Այդպիսի դեպքում չափազանց կարևորվում է ճիշտ մեթոդի ընտրության հարցը:

Մեթոդ հունարեն նշանակում է ճանաչողության ուղի: Փիլիսոփայության մեջ այդ ուղիների, հետազոտության հնարների վերաբերյալ ուսմունքը կոչվում է մեթոդաբանություն:

Փիլիսոփայության մեթոդաբանական գործառույթը դրսևորվում է բնական և հասարակական գիտությունների հետազոտությունները որոշակի սկզբունքների տեսանկյունից կողմնորոշելու, նպատակաուղղելու գործընթացով: Փիլիսոփայությունը լինելով աշխարհի և մարդկային հասարակության տարբեր ոլորտների վերաբերյալ տեսական ու պրակտիկ ուսումնասիրությունների, վերլուծությունների, ընդհանրացումների, արժեքավորումների համընդգրկուն գիտելիքների համակարգ բնական և հասարակական գիտությունների համար կարող է մեթոդաբանական գործառույթի դեր կատարել: Փիլիսոփայական գիտելիքների աշխարհայացքային կողմնորոշվածությունը, մատերիալիստական, իդեալիստական և այլ բնույթի հարցալուծումների սկզբունքային դիրքորոշվածությունը փիլիսոփայության առարկան դարձնում է աշխարհճանաչողության մեթոդաբանություն: Այդպիսի մեթոդաբանությունը բնական և հասարակական գիտությունների համար խիստ անհրաժեշտ է. Իհարկե ամեն գիտություն առաջնորդվում է հետազոտու-

ության իր մեթոդներով, որոնց միջոցով կատարվում է բազմաբնույթ ուսումնասիրություններ և ձեռք է բերվում բազմաբովանդակ լրատվություն: Այդ լրատվությունը ընդհանրացնելու և արժեքավորելու գործում փիլիսոփայական գիտելիքները չափազանց կարևոր դեր կարող են կատարել:

Փիլիսոփայական համընդգրկուն գիտելիքների համակարգում կարևոր տեղ է հատկացվում մատերիալիստական և իդեալիստական աշխարհայացքների հիմքերի պարզաբանմանը: Մատերիալիզմը և իդեալիզմը հանդես են գալիս որպես կեցության և գիտակցության բնույթի, էության և հարաբերության քննարկման առավել ընդհանրացնող մոտեցումներ: Աշխարհայացքային այդպիսի դիրքորոշումների ազդեցությունը կարող է վճռորոշ լինել ցանկացած գիտնականի տեսական ընդհանրացումները արժեքավորելու գործում:

Բնական գիտությունների ոլորտում մեթոդաբանական կարևոր դեր կարող է կատարել փիլիսոփայության դիալեկտիկական մեթոդը: Այդ մեթոդը ամեն ինչ դիտում է փոխադարձ կապի, շարժման ու զարգացման գործընթացում: Այդպիսի մոտեցման դեպքում իրադարձությունների ծավալման, փոփոխության պատճառները հիմնավորվում են հակասությունների ծագումով: Այդպիսի դիրքորոշումը հնարավորություն է ընձեռում հասարակական կյանքի ճգնաժամային իրավիճակների պատճառները ճիշտ ու խորությամբ ուսումնասիրելու և արդյունավետ եզրահանգումներ կատարելու:

Փիլիսոփայության աշխարհայացքային գործառույթը կարևորվում է հետազոտողի դիրքորոշումները նպատակաուղղելու և ստացված արդյունքները գնահատելու գործում: Ուսումնասիրության մեթոդի ընտրության և սպասվելիք արդյունքները գնահատելու գործում չափազանց կարևորվում է աշխարհայացքային մոտեցումը: Իրադարձությունների ծավալման միևնույն գործընթացը հետազոտելիս աշխարհայացքային տարբեր դիրքորոշումներ ունեցող մտածողները միևնույն եզրահանգումների չեն հանգի: Մեր խորհրդարանում հաճախ օրենքների նախագծի քննարկումը ընթանում է կուսակցական խմբավորման շահերի տեսանկյունից: Նման քննարկումներում ոլորտի զարգացմանը նպաստող օբյեկտիվ գործոնները միտումնավոր անտեսվում են: Տարբեր աշխարհայացքներ ունեցող և տարբեր շահերով առաջնորդվող պատգամավորների առճակատումից տուժում է ողջ հասարակությունը: Փիլիսոփայական լայնախոհ մտածելակերպ չունեցող պատգամավորը չի ըմբռնում, որ ցանկացած հարցի քննարկման ժամանակ շեղվե-

լավ օբյեկտիվությունից օգուտ չի բերի ոչ իր խմբակցությանը, ոչ էլ հասարակությունը. Սոցիալական ընդգծված խտրականության միջավայրում հասարակության ներդաշնակ զարգացման օբյեկտիվ գործոնները միշտ էլ անտեսվել են հանուն իշխող վերնախավի շահերի: Սակայն կամայականորեն հարուստ վերնախավի շահերին տեսանկյունից դործելը երբեք կայուն հաջողության գրավական չի կարող լինել, քանզի ոչ մի կրատական քաղաքական համակարգին բնորոշ իրադարձությունների ծավալման ընթացքը առանձին անհատների կամքից կախված չէ. Փիլիսոփայությունը ուսուցանում է, որ ցանկացած տնտեսական դարաշրջան ունի զարգացման իր օբյեկտիվ գործընթացները: Հասարակությունը ներդաշնակ կզարգանա միայն այն դեպքում, երբ իշխանությունների վարած քաղաքականությունը կհամապատասխանի այդ գործընթացների բնույթին: Իսկ նման գործելաոճ դրսևորելու համար պետք է հասարակության բոլոր ուժերը նպատակաուղղել դեմոկրատական սկզբունքներին համապատասխան:

Փիլիսոփայության կանխատեսողական գործառույթը պայմանավորված է կեցության փոփոխության ու զարգացման ընդհանուր օրինաչափությունների և իրադարձությունների ծավալման պատճառահետևանքային հիմնախնդիրներ բացահայտելու փիլիսոփայության բնույթով: Փիլիսոփայությունը ուսուցանում է, որ իրականության մեջ ամեն ինչ գտնվում է պատճառահետևանքային փոխկապվածության վիճակում: Այդպիսի սկզբունքով առաջնորդվող հետազոտողը համեմատաբար ճիշտ կկռահի իրադարձությունների ծավալման ընթացքը և սպասվելիք արդյունքները:

Փիլիսոփայական հարուստ գիտելիք ունեցող մտածողը և քաղաքական գործիչը քաջատեղյակ լինելով, որ մարդը ոչ միայն սոցիալական միջավայրի ծնունդ է, այլև բնության արգասիք, իր գործունեությունը այնպես կծրագրի, որ ոչ միայն չխախտի բնության և հասարակության փոխազդեցության օրինաչափությունները, այլև հասարակական գործընթացները կնպատակաուղղի բնապահպանական հիմնախնդիրների լուծման տեսանկյունից: XX դարի 90-ական թվականներին Հայաստանում նախապես չհիմնավորված սեփականաշնորհման կտրուկ գործընթացները հանգեցրին ոչ միայն արտադրության կազմալուծմանը, այլև բնական ռեսուրսների ոչնչացմանը: Եթե քաղաքական այրերը տարբեր ոլորտների մասնագետների հետ բազմակողմանիորեն քննարկեին Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակը, սեփականաշնորհումը կիրականացվեր այնպես, որ ոչ միայն ար-

տադրությունը չէր կազմալուծվի ու թալանվի, այլև ազգի մի մեծ զանգված, չէր հայտնվի մուրացկանի իրավիճակում: Փիլիսոփայությունը պարզաբանում է, որ ցանկացած համակարգի ներդաշնակ զարգացման համար չպետք է կոպիտ ձևով խախտվի այդ համակարգի տարրերը միմյանց կապող կապերն ու հարաբերությունները: Այս պարզ ճշմարտության անտեսման պատճառով էր, որ XX դարի 90-ական թվականներին բնական ռեսուրսներով հարուստ Ռուսաստանին Բ Ելցինը հասցրեց այնպիսի կարգավիճակի, որ բանվորներին աշխատավարձ վճարելու համար ստիպված վարկ էր մուրում Եվրոպական տերություններից:

Փիլիսոփայության արժեքաբանական գործառույթը պայմանավորված է փիլիսոփայական հոսանքների, ուղղությունների սկզբունքներով: Այդ համակարգերում ուսումնասիրվող օբյեկտը գնահատվում է սոցիալական, բարոյական, գեղագիտական, գաղափարական և այլ արժեքներով, որոնք չափազանց կարևոր դեր կարող են խաղալ հասարակության զարգացման անցումային ժամանակաշրջաններում զարգացման ուղի ընտրելու գործում:

Փիլիսոփայության արժեքաբանական գործառույթը չափազանց կարևորվում է դեմոկրատականացման գործընթացում հայտնված Հայաստանի համար: Դարեր շարունակ հայ ժողովուրդը, չունենալով պետականություն, դիմակայել է հզոր թշնամիներին, տոկացել ու հասել է մեր օրերին՝ ազգային ինքնակեցությունը, բարոյական նորմերը, քրիստոնեական դավանանքը անաղարտ պահելու շնորհիվ: XX դարի 90-ական թվականներին մենք ձեռք բերեցինք դարերով երազած անկախությունը: Սակայն, այժմ, Հայաստանի մերօրյա դեմոկրատականացման հորձանուտում կորցնում ենք մեր ազգին հարիր շատ արժեքներ: Նոր արժեքների ընդունումը պետք է ներդաշնակի ազգի ինքնակեցությունը բնորոշող ավանդական արժեքների հետ, եթե չենք ցանկանում, որ հայ ժողովուրդը դառնա կոնգլոմերատ: Իսկ այդպիսի իրավիճակում հայտնված փոքրաքանակ ժողովուրդներն ու ազգերը չեն կարող դիմակայել հզոր տերությունների աշխարհաքաղաքական ոտնձգություններին և կկորցնեն իրենց ազգային ինքնակեցությունը:

Փիլիսոփայության բարոյագեղագիտական գործառույթը պայմանավորված է առարկայի բովանդակության դաստիարակչական ներգործություն թողնող հատկությամբ: Փիլիսոփայությունը բնության, հասարակության զարգացման օրինաչափությունների, մարդու բնույթի և էության վերաբերյալ իմաստունների հազարամյակների ընթացքում

[illegible] : Այդ ժառանգության մեջ արտացոլվել է տարբեր դարաշրջանների մարդկանց, ազգերի ու ժողովուրդների մտածելակերպը, ավանդույթները, հոգեկան կերտվածքը, բարոյական նորմերը, ձեռք բերած նվաճումներն ու կորցրած արժեքները: Նախկին սերունդների թողած այդ ժառանգությունը ապրող սերունդների համար զարգացման ու դաստիարակության օրինակելի չափանիշ կարող է հանդիսանալ: Այդպիսի արժեքներին ծանոթ անձը, քաղաքական գործիչը կցուցաբերի կիրթ վարքագիծ, լայնախոհ մտածելակերպ, ստեղծված իրավիճակում առողջ դատելու և ճիշտ կողմնորոշվելու ընդունակություն: Այդպիսի կամային հատկություն և հոգեկան կերտվածք ունեցող քաղաքական գործիչը XX դարի 90-ական թվականներին կազմալուծվող խորհրդային պետության գործընթացները կդարձներ կառավարելի և թույլ չէր տա տասնամյակների ընթացքում ժողովրդի կուտակած հարստությունը այնպես թալանվեր, որ տասնյակները դառնան գերհարուստ, իսկ հազարները՝ մուրացիկ:

Խորհրդային տնտեսակարգը կառուցվեց հանրային սոփականության արժեքների հիման վրա: Սակայն ժողովուրդը չուներ այդ արժեքները ներդնելու և հետևողական իրականացնելու բարոյական սկզբունքներ և քաղաքական կուլտուրա: Այդ պատճառով էլ սոցիալական արդարություն քարոզող կուսակցական վերնախավը տասնամյակների ընթացքում խորթանալով հասարակությունից դարձավ արտոնյալ ու հարուստ վերնախավ: Ինչպես կարող էր այդ վերնախավը սոցիալական արդարություն իրականացնել, եթե ինքը խորթացել էր ժողովրդից: Այդ պատճառով էլ խորհրդային հզոր տերությունը այդքան հեշտ փլուզվեց: Ընդ որում, փլուզման պատճառներից կարևոր դեր խաղաց նաև բարոյական արժեքների սնանկացումը: Հազարամյակների ընթացքում, իմաստուն փիլիսոփաները խորհելով հասարակության օրինաչափ զարգացման վերաբերյալ հիմնավորել են, որ հզոր կայսրությունները միշտ էլ փլուզվում են բարոյական նորմերի արժեզրկման պատճառով:

Իրավական, սոցիալական պետություն կառուցելու համար ժողովուրդը պետք է գործի բարոյական սկզբունքներով: Իսկ բարոյական սկզբունքներով առաջնորդվելու համար պետք է ունենալ քաղաքական կուլտուրա: Այսինքն հարգել ու չանտեսել հազարամյակների ընթացքում ժողովուրդների ստեղծած հոգևոր արժեքները: Այդպիսի գործում փիլիսոփայությունը անփոխարինելի ուղեցույց կլինի:

9. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Փիլիսոփայության և կոնկրետ գիտությունների փոխադարձ կապը կարևորվել է հազարամյակների ընթացքում: Առանց այդ կապի դժվար է պատկերացնել ժամանակակից գիտությունների հետագա ուղին: Հետազոտության գործընթացում գիտնականը հաճախ ընկնում է այնպիսի ճգնաժամային վիճակների մեջ, երբ փորձնական տվյալների նոր կուտակումները, մանրակրկիտ վերլուծություններն ու վերաստուգումները հնարավորություն չեն տալիս բացատրելու ամրապնդված հայացքներին ու պատկերացումներին հակասող փաստերն ու արդյունքները: Ստեղծված իրավիճակից դուրս գալու, հին տեսության սահմանափակությունը ըմբռնելու և նոր տեսություն կառուցելու համար անհրաժեշտ է կատարել հին տեսության ներսում ծագած հակասությունների փիլիսոփայական վերլուծություն և իմաստավորում, որի արդյունքները հնարավորություն կտան պարզաբանելու հակասությունների էությունը, փնտրելու ճգնաժամից դուրս գալու ուղիներ, նշելու հետագա հետազոտությունների շրջանակը: Այդ գործընթացում ընդարձակվում և հարստանում է նաև փիլիսոփայության հիմնախնդիրների շրջանակն ու կատեգորիալ ապարատը:

Կոնկրետ գիտությունների և փիլիսոփայության սերտ փոխհարաբերությունը պայմանավորված է նաև նրանով, որ մարդկային իմացությունը բոլոր ժամանակներում էլ հիմնախնդիրների նորովի քննարկման և մեկնաբանման կարիքը կզգա: Որպես մարդկային ինտելեկտուալ գործունեության յուրահատուկ դրսևորում գիտությունը ֆիզիկական, տեսական, իդեալական օբյեկտների վերաբերյալ հիմնավորված, ապացուցված և կանխատեսված գիտելիքների համակարգ է, իսկ փիլիսոփայությունը՝ բնության և մարդու էության ըմբռնման ու իմաստավորման գաղափարների ամբողջություն: Հետևապես իր բնագավառի տեսական-փիլիսոփայական հիմնախնդիրների իմացումը կհանդիսանա քննագետի արդյունավետ աշխատանքի նախապայման ու երաշխիք, իսկ փորձնական և տեսական գիտությունների նվաճումներին իրազեկ լինելը փիլիսոփային հնարավորություն կտա իմաստավորելու գիտությունների ձեռք բերած նվաճումները, ինտելեկտուալ կամուրջ կառուցելու ներկայի և ապագայի միջև:

Փիլիսոփայությունը ոչ միայն կրել ու կրում է բնական գիտությու-

ների ազդեցությունը, այլև ինքն էլ իր հերթին ազդել ու ազդում է նրանց զարգացման վրա. Բնական գիտությունների դարակազմիկ հայտնագործությունների փիլիսոփայական արժեքավորումները կարող են որոշվել նոր հոսանքի, կամ ուղղության ձևով: Իսկ այդ փիլիսոփայական վերլուծություններն ու հիմնավորումները կարևոր մեթոդաբանական ուղեցույց կարող են լինել բնագետների համար իրենց ուսումնասիրությունների ուղղվածությունը ծրագրելու գործում: Հանճարեղ Գյոթեն նշում էր, որ «ֆիզիկոսից չի կարելի պահանջել, որպեսզի նա լինի փիլիսոփա: Բայց նա պետք է ծանոթ լինի փիլիսոփայի աշխատություններին, որպեսզի իր հետազոտություններում կատարի փիլիսոփայական ընդհանրացումներ: Փիլիսոփայից չի կարելի պահանջել, որպեսզի նա լինի ֆիզիկոս, բայց ֆիզիկայի բնագավառի հետ նրա շփումները և ցանկալի են և անհրաժեշտ»: Երբեմն դասական և նոր տեսությունների միջև անխուսափելիորեն հառնող հակասությունների հմաստավորումն ու լուծումը գրեթե անհնար է առանց իմացաբանական վերլուծությունների: Այսինքն, եղածի և նորի իմացաբանական արժեքավորման անհրաժեշտությունը եղել է ու միշտ էլ կլինի, քանզի եթե տվյալ սերնդի հետազոտությունների շրջանակն որոշակի սահման ունի, ապա մարդկության հետաքրքրասիրությունը և հետազոտությունը սահման չի ճանաչում: Այդ ճանապարհին գիտության կառքում իմաստուն փիլիսոփայի տեղը երբեք թափուր չի մնա:

ԳԼՈՒԽ II

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԷՏԱՊՆԵՐԸ

I ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄԻՏՔԸ

1. ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ ՅՈՒՐՕՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԻԵԶԵՐԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ:

Անտիկ Հունաստանում իմաստուն փիլիսոփաները իրենց խորհրդածությունները նպատակաուղղում էին Արեգակի, երկրի, աստղերի, կենդանիների, բույսերի, մարդու առաջացման հիմնահարցերին: Նրանք փորձում էին ըմբռնել և բացատրել բնության էությունը, աշխարհի, տիեզերքի օրինաչափությունները, հիմնավորել աշխարհի սկզբնահիմքի բնույթը: Հույն փիլիսոփաների ուշադրությունը կենտրոնացած էր նախահիմքի (սուբստանցիայի) իմաստավորման, դրա բնույթի պարզաբանումների վրա: Նրանք փնտրում էին այն հիմնական, անփոփոխ, անստեղծելի ու անոչնչանալի որակը, հիմնատարրը, որը պետք է ընկած լիներ իրականության ողջ բազմազանության հիմքում: Այդպիսի հարցադրումներով զբաղվողների նկատմամբ հասարակությունը մեծ պահանջատիրություն էր ցուցաբերում:

Անտիկ Հունաստանում հռետորական գործունեությունը չափազանց բարձր էր գնահատվում: Ցանկացած ազատ քաղաքացի կարող էր դրսևորել իր ընդունակությունները բազմակողմանիորեն: Հասարակությունը հարգում էր համոզիչ խոսող, իր տեսակետը փաստարկումներով հիմնավորող անձանց: Ճարտար խոսելու, մարդկանց վրա տպավորություն թողնելու արվեստը կենսական անհրաժեշտություն էր դարձել: Այսպիսի միջավայրն էլ հենց նպաստեց փիլիսոփայական մտածելակերպի զարգացմանը: Այդ գործընթացի կարևոր խթանիչ հանդիսացավ նաև հունական դիցաբանությունը: Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական», Հեսիոդոսի «Թեոգոնիա» պոեմներում խոսվում էր նաև փիլիսոփայական գոյաբանական հարցերի մասին: Պոեմներում պատմվում էր, որ նախահիմք հանդիսացող քաոսից ծնվում են Երկիրը, Տարտարոսը, էրոսը, իսկ դրանցից էլ՝ աստվածնե-

[illegible] և Ներոնները: Դրանք բոլորն էլ ընդհանուր տիեզերքի [illegible] և ենթարկվում են տիեզերական օրինաչափություն-[illegible] տիեզերքը դիտվում էր ներդաշնակ ամբողջություն: Այսպի-[illegible] աշխարհաշուծումներով էլ պայմանավորված է անտիկ Հունաստանի փիլիսոփայական մտքի տիեզերակենտրոն (կոսմոցենտրիստական) բնույթը: Այդ ժամանակաշրջանի փիլիսոփայական դպրոցների զարգացրած հայացքներում առաջնակարգ տեղ է զբաղեցնում անստեղծելի, բացարձակ կեցություն համարվող տիեզերքը: Անտիկ հույների պատկերացմամբ ողջ տիեզերքը կարգավորված ու ներդաշնակ ամբողջություն է: Տիեզերքի մասին հույն փիլիսոփաների խորհրդածությունները մտահայեցողական բնույթ են կրում: Նրանք ջանում էին հասել այն, ինչը հասանելի է իրենց զգայություններին և իմաստավորել այն, ինչը մատչելի է բանականությանը:

2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ

Աշխարհում ամեն ազգ ձևավորվել ու զարգացել է իրեն բնորոշ ազգային կերտվածքով, հոգևոր մշակույթով, բարոյականային հատկություններով: Սկզբնական շրջանում այդ արժեքները խտացվել և արտացոլվել են նրա ավանդություններում: Աստիճանաբար դրանք ընդհանրացվել են դիցաբանական պատկերացումների ձևով: Դիցաբանական մտքի հիման վրա էլ ձևավորվել է փիլիսոփայական մտածելակերպը: Այդ պատճառով էլ արևելյան և արևմտյան փիլիսոփայական մտքի ձևավորման ու զարգացման գործընթացում զարմանալի նմանության հետ մեկտեղ նկատվում է և զգալի զանազանություն:

Հնդկաստանում, Չինաստանում և Հունաստանում փիլիսոփայական միտքը ձևավորվել է մ.թ.ա. VII-VI դարերում: Այդ ժողովուրդների փիլիսոփայական համոզմունքներում արտացոլվել է նրանց դիցաբանությանը բնորոշ աշխարհի առաջացման, կյանքի ծագման, մահվան ու անմահության և այլ բնույթի հիմնախնդիրներ: Բոլորի մոտ էլ փիլիսոփայությունը դիտվել է որպես լավ մտածելու, լավ խոսելու, պարկեշտ վարքագիծ դրսևորելու գործընթացին նպաստող իմաստություն:

Արևելյան և արևմտյան փիլիսոփայական մտքում զգալի տեղ է հատկացվել բարոյագեղագիտական հայացքներին: Այդ ժողովուրդների իմաստունները երջանկության և դժբախտության, գեղեցիկի և տգեղի, բարու և չարի, արդարության և անարդարության հիմնախնդիրները

վերլուծել, պարզաբանել և արժեքավորել են նույնաբնույթ սկզբունքներով:

Անտիկ դարաշրջանի փիլիսոփայական մտքում զուրմանալի նմանություն է դիտվում նաև աշխարհայացքային հարցալուծումների շարադրանքում: Մատերիալիստական և իդեալիստական աշխարհայացքները մ.թ.ա. VII-III դարերի Հնդկաստանի, Չինաստանի և Հունաստանի փիլիսոփայական դպրոցներում պարզաբանվել ու շարադրվել է գրեթե միանման հիմնավորումներով: Չորս տարրերը՝ հողը, կրակը, ջուրը, օդը որպես սուբստանցիա են դիտվում և Հնդկաստանի Լոկայաթա մատերիալիստական ուսմունքում և հույն փիլիսոփա Էմպեդոկլեսի մոտ: Հնդկաստանի, Չինաստանի և Հունաստանի փիլիսոփայական դպրոցներում, հոսանքներում և առանձին մտածողների աշխատություններում նկատվում է նաև շարժման զարգացման, փոփոխության հիմնախնդիրների լուծման նմանություն: Հակադրությունների միասնության ու տարբերության դիալեկտիկան նույնաբնույթ վերլուծության է ենթարկվում բրահմանի վերաբերյալ Հնդկաստանի «Ուպանիշատներում», դաոյի վերաբերյալ Չինաստանի դաոսիզմում, լոգոսի վերաբերյալ հույն փիլիսոփա Հերակլիտեսի հայացքներում:

Արևելքի և արևմուտքի փիլիսոփայական միտքը քիչ է զանազանվում նաև սոցիալ-քաղաքական հիմնախնդիրների հարցալուծումներով: Հնդիկ Կաուտիլյայի «Արտհաշաստրա» և հույն Արիստոտելի «քաղաքականություն» աշխատություններում արծարծվում են հասարակության դասային շերտավորման, պետության ձևերի, կառավարման մեթոդների, իրավական նորմերի, տնտեսական գործունեության և այլ բնույթի հիմնախնդիրներ:

Հունաստանի, Հնդկաստանի, Չինաստանի փիլիսոփայական մտքում հիմնախնդիրների նմանության հետ մեկտեղ նկատվում է նաև զգալի զանազանություն: Ազգային ավանդույթները, հոգեկան կերտվածքը, բնակլիմայական պայմանները որոշակի հետք են թողել այդ ժողովուրդների փիլիսոփայական մտածելակերպում: Արևելքի ժողովուրդների փիլիսոփայությունը առավելապես մարդաբանական ուղղվածություն ունի: Արևմուտքի ժողովուրդները ուշադրությունը կենտրոնացրել են ավելի շատ բնափիլիսոփայական հիմնախնդիրների վրա: Անտիկ Հունաստանի փիլիսոփաների աշխատություններում առանձնանում է գոյաբանական, իմացաբանական, մեթոդաբանական, բարոյագեղագիտական, տրամաբանական, քաղաքական հիմնախնդիրները: Անգամ մարդաբանական բնույթի շարադրանքներում չարևել-

յան և արևմուտքի փիլիսոփաների մոտ նկատվում է հարցադրումների նպատակաուղղվածության զանազանություն: Արևելքի փիլիսոփաները մարդու հիմնախնդիրը քննարկում են առավելապես կյանքի կենսագործունեության տեսանկյունից: Այստեղ շեշտադրվում է մարդկանց փոխհարաբերության, վարվելակերպի, սոցիալական կարգավիճակի և այլ բնույթի հիմնախնդիրներ: Արևմուտքի փիլիսոփաների աշխատություններում վերլուծվում են կեցության և ճանաչողության հիմնախնդիրներ:

Արևելքի փիլիսոփաների աշխատությունները ունեն կրոնափիլիսոփայական բովանդակություն: Այդպիսին են բուդդայականությունը, բրահմանականությունը, կոնֆուցիականությունը: Արևմտյան փիլիսոփաները զարգացնում են առավելապես մատերիալիստական հիմնախնդիրներ: Իսկ իդեալիստ մտածողները, անգամ շրջանցելով կրոնական աշխարհայացքային հարցադրումները, ավելի շատ ուշադրություն են դարձրել ճանաչողության մեթոդաբանական հիմնահարցերի վրա: Անտիկ Հունաստանի փիլիսոփաների աշխատությունները կրոնափիլիսոփայական բովանդակություն չեն ունեցել:

Նմանության ու տարբերության հետ մեկտեղ անտիկ դարաշրջանի արևմուտքի և արևելքի փիլիսոփայական միտքը արտացոլել է իր ժամանակաշրջանի նյութական և հոգևոր արժեքները, հանդիսացել է քաղաքակրթության հանրագումար:

3. ԱՆՏԻԿ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Ցանկացած դարաշրջանի փիլիսոփայական մտքի զարգացվածության ցուցանիշներից մեկն էլ ձևավորվող փիլիսոփայական դպրոցներն են և դրանց գործունեության ազդյունք հանդիսացող փիլիսոփայական հիմնախնդիրների բնույթն ու շրջանակը: Նման սկզբունքով պետք է արժեքավորել մ.թ.ա. VII-VI դարերում փիլիսոփայական միտք ձևավորող **ՄԻԼԵԹՅԱՆ ԴՊՐՈՑԻ** գործունեությունը: Դպրոցի հիմնադիրը եղել է Թալեսը (մ.թ.ա. 625-547) մեծ լումա են ներդրել նաև Անաքսիմանդրոսը (մ.թ.ա. 610-546) և Անաքսիմենեսը (մ.թ.ա 588-525): Դպրոցը զարգացրել է մատերիալիստական մտածողություն:

Գոյաբանական հարցադրումներում Թալեսը սուբստանցիոնալ որակ է դիտում ջուրը՝ խոնավության որակ: Նրա համոզմամբ տիեզերքի ողջ բազմազանությունը առաջացել է ջրից: Այսինքն, բոլոր իրերը կարող են առաջանալ և քայքայվել, իսկ խոնավության որակը անստեղ-

ծելի ու անոչնչանալի կմնա: Մշտապես անփոփոխ, անստեղծելի ու անոչնչանալի այդ որակից էլ գոյանում են աշխարհի բոլոր իրերը, այդ թվում նաև բուսական ու կենդանական աշխարհի բոլոր տեսակները:

Անաքսիմանդրոսի համոզմամբ իրերի սկզբնապատճառ է հանդիսացել առաջացնելու հատկություն ունեցող անսահմանը: Հավերժորեն անփոփոխ գոյություն ունեցող այդ ակտիվ նախասկիզբը նա անվանում է ապեյրոն: Լինելիության և քայքայման ողջ գործընթացը ապեյրոնից անջատվող տաքի և սառի, չորի և թացի որակների տարաբնույթ փոխազդեցությունների արդյունք է:

Անաքսիմենեսը նախահիմք-սկզբնապատճառ է դիտում նոսրանալու և խտանալու հատկություններով օժտված օդը: Օդի խտացման ճանապարհով առաջանում են պինդ մարմինները, այդ թվում և երկիրը: Օդի նոսրացման և շիկացման ընթացքը հանգեցնում է երկնային լուսատուների ձևավորմանը: Անաքսիմենեսի օդը կենդանի, ակտիվ նախասկիզբ է: Տիեզերքում ամեն ինչ օդի ձևափոխման արդյունք է: Օդը նաև ակտիվություն ունեցող որակ է, հոգի: Անաքսիմենեսի կարծիքով ողջ տիեզերքին, բուսական ու կենդանական աշխարհին ակտիվություն հաղորդող ուժը օդն է: Մարդու հոգին էլ օդակերպ է:

Միլեթյան դպրոցը զարգացրել է հիլոզոիստական համոզմունքներ: Հիլոզոիզմ (հունարեն հյուլե-մասնիկ և զոոս-կյանք, կենսունակություն բառակապակցություն է, որը բառացի նշանակում է հյուլեն ունի կենսունակություն): Այդպիսի մտածելակերպում կյանքը, զգայունակությունը հատուկ են բնության բոլոր իրերին: Անաքսիմենեսի ընդունած նախահիմք օդը, Թալեսի նախասկիզբ ջուր-խոնավությունը օժտված են ակտիվությամբ, կենսունակությամբ: Դրանք կենդանի որակներ են, ուժ, ամեն ինչ սնուցող որակ: Միլեթյան դպրոցի մտածողները ողջ տիեզերքը դիտում էին շնչավորված: Նրանք իրենց գոյաբանական հարցալուծումներում փնտրում էին հավերժորեն գոյություն ունեցող անոչնչանալին, որը առաջացման և ոչնչացման գործընթացի բազմաբնույթ փոխազդեցություններում կմնար անփոփոխ և կկազմեր գոյություն ունեցող ամեն ինչի նախահիմք-սկզբնապատճառ:

ԷԼԵԱԹՆԵՐԻ ԴՊՐՈՑԸ մ.թ.ա. VI-V դարերում փիլիսոփայական խորհրդածությունները կենտրոնացնում է շարժման բնույթի, էության հիմնախնդիրների վրա: Դպրոցի ներկայացուցիչներն են՝ Քսենոփանեսը, Պարմենիդեսը, Զենոնը, Մելիսը: Դպրոցի հիմնադիր Քսենոփանեսը սկսելով բազմաստվածության քննադատությունից, մի կողմից հիմնավորում է, որ աստվածները մարդկանց պատկերացման արդյունք են,

Այս կողմից էլ ընդունում է, որ տիեզերքում գոյություն ունի աննյութական, միասնական, անշարժ ու անփոփոխ գոյ աստված: Դա զուտ միտք է, որը կառավարում է ողջ տիեզերքը: Միտք աստվածը Քսենոփանեսի պատկերացմամբ համասեռ, անփոփոխ, միասնական հավերժություն է: Այս գաղափարները հետագա զարգացում ստացան Պարմենիդեսի «Բնության մասին» գրքում:

Պարմենիդեսը փիլիսոփայական հիմնախնդիր դարձնելով կեցության բնույթի պարզաբանումները, հիմնավորում է, որ դա հավերժ է, անստեղծելի, անոչնչանալի, միասեռ ու անընդհատ: Պարմենիդեսի կարծիքով կեցությունը գոյություն ունի, իսկ ոչ կեցությունը գոյություն չունի, քանզի այն մտածելի չէ: Մտածելի է միայն գոյություն ունեցողը: Նրա համոզմամբ ամեն ինչ լցված է կեցությամբ: Դատարկ տարածություն գոյություն չունի: Ամենուր մի կեցությունը հպված է այլ կեցության հետ: Այդպիսի հպվածությունը անընդհատություն է:

Գոյաբանական հարցալուծումներում Պարմենիդեսը հիմնավորում է, որ տեսանելի աշխարհի ողջ բազմազանությունը առաջացել է երկու նախահիմքերի խառնուրդից: Այդ նախահիմքերից լույսը եթերային կրակ է, իսկ խավարը՝ սառնություն, մթություն, կոշտացած հող: Պարմենիդեսի կարծիքով աշխարհում տեղի ունեցող բոլոր երևույթները կառավարում է ճշմարտության և անհրաժեշտության աստվածուհին:

Էլեաթները որոշակի տարբերակում են մտցնում զգայական և ռացիոնալ ճանաչողության հավաստիության հիմնավորման հարցում: Նրանց համոզմամբ զգայական ընկալմամբ ձեռք բերած գիտելիքը կարող է պատրանքային լինել, քանզի այն ծանոթացնում է մեզ միայն իրերի արտաքին կողմերի հետ: Ճշմարտությունը ձեռք է բերվում միայն ռացիոնալ ճանաչողությամբ:

Զենոնը փորձեց քննարկման հարց դարձնել աշխարհի բազմազանության և շարժման հիմնախնդիրը: Նա փորձում է հիմնավորել, որ եթե էությունը բազում է, ապա այն միաժամանակ պետք է լինի և այնքան փոքր, որ չունենա մեծություն, և այնքան մեծ, որպեսզի ունենա անսահման մեծություն: Այն չունի մեծություն, քանզի բազում իրերից յուրաքանչյուրը ինքն իրեն միավոր է, որովհետև բազումը միավորների գումար է: Բայց եթե այն միավոր է, ապա այն պետք է լինի անբաժանելի: Ուրեմն այն կետ է, որը գումարվելով չի մեծանում և հանվելով չի փոքրանա: Այսինքն այն չունի մեծություն և խտություն, ոչինչ է: Իսկ եթե միավորը ոչինչ է, ապա միավորների գումարն էլ ոչինչ կլինի:

Զենոնը «դիխոտոմիա», «Աքիլլեսը և կրիան», «թռչող նետ» ապո-

րիաներում (հունարեն ապորիա նշանակում է անելանելի վիճակ, դժվար լուծելի հիմնախնդիր) քննարկման խնդիր դարձրեց սահմանափակի և անսահմանի, վերջավորի և անվերջի հարցը: Նա հանճարեղորեն ըմբռնեց վերջավորի և անվերջի հակադրությունը: «Դիխոտոմիա» ապորիայում Զենոնը հիմնավորում է, որ դեպի նպատակը շարժվող առարկան պետք է նախ անցնի ճանապարհի կեսը, իսկ այդ կեսը անցնելու համար՝ նրա կեսի կեսը և այսպես շարունակ: Այստեղից նա եզրակացնում է, որ մարմինը չի հասնի նպատակակետին, քանզի նրա ուղին անսահման է և պետք է հաղթահարի անվերջ կեսեր: «Թռչող նետ» ապորիայում Զենոնը հիմնավորում է, որ նետը չի շարժվում, որովհետև ժամանակի տվյալ ակնթարթում նետը զբաղեցնում է իր չափսին համապատասխան տարածք, իսկ զբաղեցնել տարածք նշանակում է գտնվել հանգստի վիճակում, այսինքն, չշարժվել: «Աքիլլեսը և կրիան» ապորիայում Զենոնը փաստարկում է, որ արագավազ Աքիլլեսը չի կարող հասնել և անցնել իրենից առաջ շարժվող կրիային: Ինչու՞: Մինչև Աքիլլեսը հասնի կրիայի տեղը, կրիան մի փոքր առաջ շարժված կլինի: Մինչև հասնի մյուս տեղը կրիան էլի մի փոքր առաջ շարժված կլինի: Այստեղից Զենոնը եզրակացնում է, որ Աքիլլեսը անվերջ կմոտենա կրիային, բայց նրանից չի կարող անցնել:

Արիստոտելը քննարկելով Զենոնի ապորիաները նշում է, որ Զենոնը անսահման բաժանելիությունը շփոթում է անսահման մեծի հետ: Չնայած ժամանակը և տարածությունը հնարավորության սահմաններում անսահմանորեն բաժանելի են, բայց դա չի նշանակում, որ դրանք իրականում անսահմանորեն բաժանված են: Իհարկե Զենոնը չի փորձում ժխտել զգայարաններով շարժման ընկալման հնարավորությունը: Այդ հարցում նա կասկած չունի: Նրա նպատակն է մատնանշել, որ շարժման երևույթի տրամաբանական հիմնավորման ժամանակ անխուսափելիորեն բախվում ենք հակասությունների: Սրանում է հենց Զենոնի հանճարեղությունը: Քննարկվող ժամանակաշրջանում մտածողների մոտ իշխում էր այն կարծիքը, որ տարածությունը բաղկացած է բազում առանձին մասերից, իսկ ժամանակը՝ բազում առանձին պահերից: Մետաֆիզիկական այս համոզմունքների առկայության պայմաններում Զենոնը մատնացույց արեց տարածության, շարժման, ժամանակի մասին իր ժամանակի գիտության հիմնական հասկացություններում եղած հակասությունները: Նա հանճարեղորեն զգաց, որ տարածությունը, շարժումը, ժամանակը ընդհատության և անընդհատության միասնություն են, բայց պատմական սահմանափակության պատճառով

էության մասին թվացյալ տեղ ընդունեց:

ՊԼԱՏՈՆԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ (մ.թ.ա. 487թ.) զարգացնում է օբյեկտիվ իդեալիստական փիլիսոփայություն: Այդ փիլիսոփայությունը ձևավորվում է պլատոնյան էյդոսների (գաղափարների) մեկնաբանության հիման վրա: Զարգացվում է մի համոզմունք, ըստ որի նյութական, եզակի իրերը գտնվում են անընդհատ փոփոխության վիճակում: Դա զգայելի նյութական աշխարհն է: Այդ աշխարհի իրերն առաջանում և ոչնչանում են Դրա հետ մեկտեղ գոյություն ունի նաև մտահասանելի էություններ, գաղափարների (էյդոսների) աշխարհ, որը անփոփոխ է, անստեղծելի ու անոչնչանալի և գտնվում է հեռու տիեզերքում: Նման համոզմունքների համաձայն ընդհանուր հասկացությունները (գաղափար, էյդոսներ), ռեալ, օբյեկտիվորեն գոյություն ունեն:

Պլատոնյան ակադեմիայում զարգացվում էր երկու, միմյանցից անկախ, հավերժորեն գոյություն ունեցող նախահիմքերի՝ էյդոսների և նյութի վերաբերյալ համոզմունքներ: Եվ էյդոսը և նյութը անստեղծելի, անոչնչանալի հավերժական գոյեր են: Սակայն կատարելությամբ դրանք զանազանվում են միմյանցից: էյդոսները կատարյալ, գործուն, ձևաստեղծ գոյեր են: Դրանք իրերի նախատիպերն են, էությունը, սկզբնապատճառը: Իսկ նյութը անձև է, անորոշ: Նյութը իրերին, առարկաներին բնորոշ անկայունության, փոփոխականության, անկատարության պատճառն է: Նման համոզմունքի համաձայն իրի գեղեցկության դրսևորումը գեղեցկության էյդոսի հետ հաղորդակցվելու արդյունք է: Ստացվում է, որ գոյություն ունի էյդոսների աշխարհ, նյութի աշխարհ և դրանց միջև գտնվող նյութական-զգայական աշխարհ: Մեզ շրջապատող նյութական-զգայական աշխարհը էյդոսների ստվերն է, ոչ կատարյալ, աղավաղված պատկերը: Այս ըմբռնումները Պլատոնը մատչելի ձևով հիմնավորում է քարանձավի օրինակով: Այն մարդիկ, ովքեր ծնվել և մեծացել են քարանձավում, դրսի աշխարհի մասին պատկերացում կկազմեն քարանձավի մուտքից դիմացի պատին ընկնող ստվերների միջոցով: Նրանց համոզմամբ դրանք իրական են: Եթե նրանցից մեկը դուրս գա քարանձավից, դիտի շրջապատը և վերադառնալով պատմի իր տեսածը, նրան ոչ ոք չի հավատա: Այդպես են և երկրաբնակները: Մարդկանց թվում է, թե իրենց շրջապատի ամեն ինչը իրական է, ռեալ, քանի որ նրանք դրանցից բացի ոչինչ չեն տեսել: Նրանց ինտելեկտին հասու չէ էյդոսների՝ իսկական գոյերի աշխարհի ըմբռնումը: Դրան կարող է հասու լինել միայն փիլիսոփայի միտքը, որին մարդիկ չեն հավատում:

Պլատոնի համոզմամբ էյդոսների աշխարհը ոչ միայն գոյի օրենքների, օրինաչափությունների, այլև գեղեցկության, ճշմարտության, բարու աշխարհն է: Փիլիսոփան պետք է օգնի մարդկանց ըմբռնելու դրանց էությունը, իսկ փիլիսոփայության խնդիրն է՝ կատարելագործել մարդկանց բանականությունը, նրանց հատու դարձնել չարից խուսանավելու և դեպի բարին ընթանալու իմաստնությանը: Փիլիսոփայությունը պետք է նպաստի հոգու մաքրագործմանը, մարդուն հեռու պահի ցանկությունների, կրքերի գայթակղությունից:

Ակադեմիայում ուսուցանվում էր, որ մարդը բաղկացած է անկատար, մահկանացու մարմնից և կատարյալ, անմահ հոգուց: Պլատոնի համոզմամբ հոգին նախքան մարմնի մեջ զետեղվելը շփվում է էյդոսների հետ, իդեալական աշխարհում ծեռք է բերում ճշմարիտ գիտելիք: Սակայն մարմնի հետ միավորվելուց հետո այդ գիտելիքները մոռացության են տրվում: Ճանաչողության խնդիրը դրանց վերհիշումն է, քանի որ դրանք ի ծնե գտնվում են բանականության մեջ: Մարդու մտածողությունը, գիտակցությունը՝ հոգու հիշողությունն է: Այդ հիշողությունը ակտիվացնելու, հոգու բնածին գիտելիքները ադեկվատ օգտագործելու համար փիլիսոփայությունը չափազանց մեծ դեր կարող էր կատարել: Մարդուն շրջապատող աշխարհի իրերն իդեալական աշխարհի էյդոսների ստվերներն են: Այդ իսկ պատճառով էլ զգայությունների միջոցով մարդը կարող է գաղափար կազմել միայն ստվերների մասին: Իսկ իրերի էության ըմբռնումը հնարավոր է հոգու հիշողության շնորհիվ: Միայն փիլիսոփայությունը կարող է նպաստել հոգու հիշողության ակտիվացմանը և մարդու ինտելեկտուալ կատարելագործմանը:

Պլատոնի ակադեմիայում ուսուցանվում էր, որ իդեալական կառավարող կարող են լինել կամ փիլիսոփան, կամ տիրակալները, որոնք զբաղվում են փիլիսոփայությամբ: Փիլիսոփայի առավելությունը նրա մեջ է դեպի գեղեցիկը, դեպի ուսումն ու գիտությունը: Նրա հոգին բարձր է ու ազնիվ: Նա ունի լավ հիշողություն, ճանաչողական ընդունակություն, նրբաճաշակ է, մեծահոգի, ճշմարտության, արդարության, խիզախության ու խոհականության ընկեր է: Դա նրանց հոգու բնատուր հատկություններն են: Իսկ հասարակության ստորին խավերը տարվում են զգայական հաճույքներով և ճշմարտությունը մնում է նրանց իմացության դաշտից դուրս: Պլատոնը կարևոր է համարում նաև զինվորականների դաստիարակության հարցը, դրա հիմքում դնելով երաժշտությունը (հոգու մարզման համար) և մարմնամարզությունը (մարմնի մարզման համար): Զինվորները պետք է ապրեն ճամբարներում, ստա-

[illegible] Իսկ աշխատավոր երրորդ դա-
[illegible] ստեղծի և կերակրի պետությանը:
[illegible] նշում է, որ այդեգիան թուլացնում ու բարոյապես այլա-
[illegible] սովորեցնում է ուխտադրժություն, խաբե-
[illegible] փառասիրություն ու ագահություն, բայց և պարտադրում է
[illegible] գիտությունների միջոցով մաքրել իրենց հոգիները:

ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ԼԻԿԵՅԸ (մ.թ.ա. IVդ.) զարգացրել և տարածել է վիճակագրական, տրամաբանական, բնագիտական, քաղաքական և [illegible] գիտելիքներ: Իսկ աշխարհայացքային հարցա-
լուծումներում առկա է դուալիստական մտածելակերպ: Ընդունվում է միմյանցից անկախ նյութական և իդեալական նախահիմքերի գոյությունը: Նյութը անձև է, անորակ, չեզոք, բայց անստեղծելի ու անոչնչանալի: Իսկ ձև էյդոսը աննյութական ակտիվություն է: Իրերը անկատար, չեզոք նյութի և ակտիվ ձևի միասնության արդյունք են: Ձևը նյութին տալիս է իրական կեցություն: Լինելիության այդ գործընթացում նյութը ձևավորվում է, իսկ ձևը՝ նյութականացվում: Ձևը իրին որոշակիություն է հաղորդում, ձևավորում և դառնում է դրա էությունը: Ձևը բովանդակում է և շարժում, և նպատակ: Ողջ տիեզերքը ձևի և նյութի միասնության դրսևորում է: Արիստոտելի համոզմամբ տիեզերքն ունի իր ձև էյդոսը՝ ձևերի ձևը (միտք, բանականություն): Տիեզերական էյդոսը մտածողություն է մտածողության մասին: Այսինքն, ճանաչում է և իրերի էյդոսներին, և ինքն իրեն: Դա դեմիուրգ է, սկզբնապատճառ և առաջնաշարժիչ աստված: Արիստոտելի պատկերացմամբ այդ աստվածը աննյութական գոյ է, մաքուր էներգիա, միտք և բոլոր գոյերի վերջնանպատակ համարվող բարձրագույն բարիք:

Իմացաբանական հարցալուծումներում Արիստոտելը ցուցաբերում է սենսուալիստական դիրքորոշում: Նրա համոզմամբ զգայական իմացության հետևանքով մարդու մոտ առաջանում է ճանաչվող իրի զգայական պատկեր: Այդ պատկերները կրկնվելով ամրակայվում են հիշողության մեջ: Այդ պատկերացումների ընդհանրացման և վերացարկման շնորհիվ ձևավորվում են ընդհանուր հասկացություններ: Այդ հասկացությունների միջոցով էլ մարդը ընդհանրացնում է իր գիտելիքները փիլիսոփայության, արվեստի և գիտության ձևով: Արիստոտելի կարծիքով ճանաչել առարկան, նշանակում է իմանալ դրա ձևը, էությունը: Իսկ ձեռք բերված գիտելիքի հավաստիությունը, ճշմարտացիությունը հիմնավորվում է իրականությանը համապատասխանելու և

մտածողության կանոններին բավարարելու չափանիշով:

Հիմնավորելով, որ մեր մտքերի կապերն արտացոլում են օբյեկտիվ իրականության կապերն, Արիստոտելը ստեղծեց այդ կապերը հետազոտող գիտությունների գործիք՝ մտահանգման և ապացուցման ուսմունք (տրամաբանություն), որը հայտնի տրվածը իր բացատրության տարրերի աղբյուրին հանգեցնելու կուռ մեթոդ է:Այստեղ մշակվում է նույնության, հակասության, երրորդի բացառման օրենքները, դեդուկտիվ մտահանգման կանոնները: Մշակելով տրամաբանական հնարներով նոր գիտելիքներ ձեռք բերելու դեդուկտիվ մեթոդի կանոնները, Արիստոտելը հիմնավորում է, որ դատողության ընթացքում միևնույն հատկացությունը տարբեր իմաստով չի կարելի գործածել (նույնության օրենք): Նույն հետևողականությամբ հիմնավորվում է, որ երկու հակադիր դատողություններ միաժամանակ ճշմարիտ լինել չեն կարող (հակասության օրենք), քանզի դրանցից մեկի ճշմարիտ լինելու դեպքում մյուսը կեղծ կլինի (երրորդի բացառման օրենք):

Մեծ է Արիստոտելի Լիկեյի ներդրումները նաև քաղաքականության և բարոյագիտության բնագավառում: «Նիկոմախի բարոյագիտություն» աշխատության մեջ Արիստոտելը հիմնավորում է, որ հասարակության մեջ մարդը պետք է դրսևորի բարոյական վարքագիծ: Հասարակության մեջ իրեն դրսևորելու, քաղաքական կյանքին ակտիվորեն մասնակցելու համար մարդը պետք է օժտված լինի բարոյական առաքինություններով: Իսկ առաքինի լինելու համար մարդը պետք է ստանա անհրաժեշտ դաստիարակություն և կրթություն: Առաքինի կարող է լինի միայն ազատ մարդը, որը ունակ կլինի ինքնուրույն ընտրություն կատարելու և պատասխանատվություն կրելու իր արարքների համար: Այդպիսին չի կարող լինել ստրուկը, քանզի նա ինքն իրեն չի պատկանում:

Արիստոտելի համոզմամբ «Մարդը քաղաքական կենդանի է»: Նա ծնվում է որպես քաղաքական էակ և իրենում կրում է միասնական ապրելու բնազդ: Համատեղ ապրելու համար մարդիկ պետք է գործեն արդարության սկզբունքով: Սակայն արդարությունը պետք է դիտել հավասարների նկատմամբ: Արիստոտելի կարծիքով արդարությունը բոլորի հավասարությունն է ոչ թե բոլորի համար, այլ հավասարների միջև:

ՍՈՓԵՍՏՆԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ: Մ.թ.ա. V դարի հունական քաղաք-պետությունների դեմոկրատական կարգերում չափազանց հարգի էր հռետորական արվեստը: Հասարակությունը բազմակողմանիորեն զարգացած, պետության կառավարման հի-

ությունները տիրապետող, մարդկանց հոգեբանությունը հասկացող և ճարտասանությամբ գերող անձերի նկատմամբ մեծ պատկառանք էր ցուցաբերում: Դա նպաստեց իմաստունների՝ սոփեստների ասպարեզ ելնելուն, որոնք վճարովի հիմունքներով մտածելու և խոսելու արվեստի գաղտնիքներին հաղորդակից էին դարձնում ցանկացողներին: Պրոտագորասը, Գորգիասը, Հիպիասը, Պրոդիկոսը և այլոք փիլիսոփայությունը նպատակաուղղեցին մարդաբանական հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Հատկապես կարևորվում էր երկխոսությունների, վիճաբանության միջոցով հակառակորդին համոզելու, մտահղացածը տրամաբանական հնարներով հիմնավորելու, տարաբնույթ փաստարկներով ապացուցելու և հաղթելու արվեստի գաղտնիքներին տիրապետելը: Սոփեստները մարդկանց ուսուցանում էին, որ ամեն ինչ հարաբերական է և բոլոր կարծիքներն էլ կարող են ճշմարիտ լինել: Պրոտագորասը, հիմնական ուղեցույց դարձրեց «Մարդն է բոլոր իրերի չափանիշ» սկզբունքը: Դրանով հիմնավորվում էր, որ մարդու ընկալումները սուբյեկտիվ են: Հետևաբար սուբյեկտիվ կարող են լինել և շրջակա աշխարհի ու հասարակության վերաբերյալ մեր ըմբռնումները, կարծիքները, դատողությունները: Ճշմարտության չափանիշ կարող է լինել միայն մարդու համոզեցուցիչ հիմնավորումները: Պրոտագորասի պատկերավոր արտահայտությամբ բոլոր կարծիքներն էլ ճշմարիտ են: Միայն պետք է կարողանալ դրանք հիմնավորել և հակառակորդին համոզել: Դրույթի ճշմարտացիության չափանիշը մարդու շահն է:

Սոփեստների փիլիսոփայելու տրամաբանությունը մի կողմից նպաստում էր բազմակարծիքայնության զարգացմանը, մյուս կողմից էլ խարխլում էր ավանդույթների հիմքերը: Հիմնավորելով, որ տարբեր ազգերի մոտ տարբեր են հավատալիքները, սովորույթները, բարոյական նորմերը, նրանք հասարակության կողմից ընդունված բարոյական նորմերն ու պետական օրենքներն էլ համարում էին հարաբերական: Հիպիասի համոզմամբ բոլոր մարդիկ պետք է հավասար լինեն, սակայն պետության օրենքները նրանց դարձնում են անհավասար:

Սոփեստների փիլիսոփայությանը յուրահատուկ ծառայություն է մատուցել Սոկրատեսը: Առաջնորդվելով «Ճանաչիր ինքդ քեզ» սկզբունքով, նա փիլիսոփայական խորհրդածությունները նպատակաուղղեց մարդու բնույթի, էության ըմբռնումներին: Նրա համոզմամբ «Փիլիսոփայության» առարկան պետք է լինի մարդը իր բարդ ներքնաշխարհով, իսկ մարդու բնույթի ըմբռնման համար չափազանց կարևորվում է «Գիտելիքն առաքինություն է» սկզբունքի ընդունումը: Սոկրատեսը

մարդու բարոյական կերպարը կապում էր բանականության հետ: Միայն իր բանականությունը կատարելագործող, գիտելիքների տիրապետող մարդը կարող է առաքինի լինել, հասկանալ թե ինչ է բարին և օգտակարը: Միայն այդպիսի անձը կհասկանա, որ հասարակության մեջ ցանկացած մարդու բարեկեցությունը պայմանավորված է ընդհանուրի բարեկեցությամբ: Միայն ընդհանուրի բարեկեցությամբ մտահոգվող անձը կարող է առաքինի լինել:

Զարգացնելով «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ» սկզբունքը Սոկրատեսը մարդկանց հրավիրում էր բանավիճելու և տրամաբանական փաստարկներով հասնելու ճշմարտության: Կասկածանքի հարուցման ճանապարհով նա փորձում էր խախտել մարդկանց քարացած մտածելակերպը:

Առաջադրված գաղափարների բնույթով Լևկիպոսի և Դեմոկրիտեսի (մ.թ.ա. VI-V դարերում) բնափիլիսոփայական միտքը կարելի է ներգրավել փիլիսոփայական դպրոցների շարադրանքում, քանզի նրանց զարգացրած ԱՏՈՄԻՍՏԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ նոր և յուրահատուկ հարցալուծում է: Այդ հայացքում ողջ իրականությունը դիտվում է ատոմների և դատարկության միասնություն: Կեցության ատոմները Դեմոկրիտեսի պատկերացմամբ միմյանցից տարբերվում են ձևով, մեծությամբ, կարգով: Ատոմները անբաժանելի, անթափանցելի, փոքրագույն, անստեղծելի և անոչնչանալի մասնիկներ են: Դրանց միացումից առաջանում են տարբեր հատկություններով օժտված իրերը: Իսկ իրերի քայքայումը այդ ատոմների բաժանման արդյունք է: Դա անընդհատ գործընթաց է: Դատարկ տարածության մեջ անկանոն շարժվող ատոմները բախվելով միմյանց առաջացնում են տարբեր համակցություններ: Ծանրը ատոմների համակցությունից առաջացել է երկիրը, իսկ թեթև ատոմներից՝ երկինքը:

Լևկիպոսի և Դեմոկրիտեսի համոզմամբ տիեզերքում ատոմների տարբեր համակցությունից առաջացել են անհամար աշխարհներ: Դրանք գոյություն կունենան այնքան ժամանակ, քանի դեռ դրանց ատոմները չեն անջատվել միմյանցից: Այդ անջատումը ևս դիտվում է օրինաչափ գործընթաց: Ողջ տիեզերքում տարբեր աշխարհների առաջացումը և ոչնչացումը ատոմների միացման և անջատման արդյունք է: Դա անընդհատ գործընթաց է: Երկիր մոլորակի առաջացումը ևս ատոմների համակցության արդյունք է: Բուսական և կենդանական աշխարհի առաջացման հիմք են կազմել ծանր ատոմները՝ հողը և ջուրը: Իսկ թեև նուրբ ատոմներից առաջացել է հոգին, որով օժտված են և

անհամասեռ, և մասնիկ հոգին ևս մարմնի նման մահկանացու է, քանի որ նրան ատոմների համակցությունը ևս կարող է քայքայվել: Մարմնի գոյությունը և ակտիվությունը պայմանավորված է հոգու ատոմների ակտիվությամբ:

Լևկիպոսի և Դեմոկրիտեսի ատոմիստական տեսության մեջ ամեն ինչ պատճառականացված է: Պատահականությունը բացառվում է: Նրանց համոզմամբ մարդիկ պատահականությունը ընդունել են իրենց չիմացությունը թաքցնելու համար: Տիեզերքում ամեն ինչ կատարվում է անհրաժեշտաբար: Առանց պատճառի ոչինչ տեղի չի ունենա: Դեմոկրիտեսը տեղի ունեցող իրադարձությունների պատճառական կապերի բացատրությունը չափազանց բարձր էր գնահատում: Այդպիսի իմացությունը նա պարսկական գահին տիրանալուց վեր է դասում:

Ատոմիստները հետևքրքիր ձևով են հիմնավորում մարդկային ճանաչողությունը: Դեմոկրիտեսի համոզմամբ իրերից անջատվում են նրանց կերպարների նմանություն կազմող մասնիկներ և հասնելով մարդու զգայական օրգաններին, դրանց ծակոտիներից ներս են թափանցում և համապատասխան զգայական պատկեր են առաջացնում:

Անտիկ Հունաստանի փիլիսոփայական ժառանգության մեջ կարևոր ներդրում է կատարել ՀԵՐԱԿԼԻՏԵՍԸ (մ.թ.ա. 540-480թթ.): Նրա համոզմամբ ամեն ինչ առաջացել է նախանյութ կրակից: Կրակը դիտվում է որպես անստեղծելի, անոչնչանալի հավերժորեն անփոփոխ գոյություն ունեցող ակտիվ նախահիմք: Հերակլիտեսի համոզմամբ տիեզերքը չի ստեղծվել ոչ մարդկանց, ոչ էլ աստվածների կողմից, այլ միշտ եղել է կա ու կլինի անընդհատ բոցավառվող ու մարող հավերժ կենդանի կրակ: Շարժունությունը, փոփոխությունը գոյություն ունեցող ամեն ինչի էությունն է: Անփոփոխ ոչինչ գոյություն չունի: Ամեն ինչ գտնվում է շարժման, փոփոխության գործընթացում: Անընդհատ շարժումն ու փոփոխությունը Հերակլիտեսը ներկայացնում է գետի օրինակով: Ինչպես որ գետի ջրերն են անընդհատ հոսում ու փոփոխվում, այնպես էլ իրականությունն է գտնվում այդպիսի փոփոխության վիճակում: Այդ փոփոխություններով է պայմանավորված ողջ լինելիության գործընթացը: Իսկ լինելիությունը հակասությունների, հակադրությունների փոխպայմանավորվածություն է: Դրանք միմյանց հարաբերակից են և հավասարակշռում են միմյանց: Դրանով է պայմանավորված ողջ տիեզերքի կանգունությունը և ներդաշնակությունը: Փիլիսոփան այդ ներդաշնակությունը ըմբռնող իմաստասեր պետք է լինի: Միայն նա կարող է հասկանալ թե ինչու՞ կրակը հակադրութ-

յունների հիմքն է, բանականություն (լոգոս), տիեզերական օրինաչափություն: Հերակլիտեսի համոզմամբ կրակը տարբեր կերպարանափոխությունների միջոցով դրսևորվում է որպես իր, առարկա, երևույթ, գործընթաց: Լոգոսը այդ կերպարանափոխությունների ուղին է, առաջացումն ու քայքայումը կարգավորող օրինաչափություն, ողջ տիեզերքի ներդաշնակության հիմքը: Համաշխարհային լոգոսի միջոցով է կարգավորվում ողջ տիեզերքը: Մարդու բանականությունն էլ այդ լոգոսի դրսևորման արդյունք է: Լոգոս բանականությունը կարող է շփվել տիեզերական լոգոսի հետ: Սակայն այդպիսի շփումը հազվադեպ է տեղի ունենում: Մարդկանց մեծամասնությունը հասու չէ դրան: Միայն իմաստունների բանականությանն է դա հասանելի: Նման դեպքում մարդը ղեկավարվում է բանականության օրենքներով և տեսնում է իր նմաններից ավելի հեռուն:

II ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄԻՏՔԸ

1. ՏԻԵԶԵՐԱԿԵՆՏՐՈՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻՑ ԱՍՏՎԱԾԱԿԵՆՏՐՈՆԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Անտիկ դարաշրջանի փիլիսոփայության գոյաբանական և իմացաբանական հարցադրումներում զգալի տեղ էր զբաղեցնում տիե- զերքի առաջացման, երկնային լուսատուների բնույթի պարզաբանումները: Իմաստունները հայացքները հառելով տիեզերքի անհուն տարածությունները, փորձում էին համատեղել երկրայինն ու երկնայինը, պարզել այդ ոլորտների առաջացման հիմքերն ու ընդհանրական գծերը: Նրանց ըմբռնումներում երկրայինն ու երկնայինը միասնական ամբողջություն էին կազմում: Մարդը դիտվում էր որպես փոքր տիեզերք:

Միջին դարերում փիլիսոփայական միտքը կրում է աստվածակենտրոն ուղղվածություն: Կրոնափիլիսոփայական հարցադրումները բխեցվում էին կրոնական դոգմաներից և չպետք է դուրս գային կրոնական մտածողության շրջանակներից: Անտիկ փիլիսոփայության «Մըտքերդ համաձայնեցրու բանականության օրենքներին ու պահանջներին» սկզբունքը փոխարինվում է սուրբ գրքերի և հեղինակությունների անսխալականության պահանջով: Այս պահանջների հիման վրա ձևավորված փիլիսոփայությունը առաջնորդվում էր հավատի և աստվածաբանության առաջնայնության հարցադրումներով: Անտիկ դարաշրջա-

[illegible] գլխավոր օրինաչափություն, միտք, բանականություն իմաստավորող հիերարխիտեական Լոգոսը Միջնադարում Փիլոն Ալեքսանդրիացու կողմից մեկնաբանվում է որպես աստծո կողմից ստեղծված ոգի: Փիլոնի համոզմամբ այդ ոգին սկզբում եղել է աստվածային միտք. «սկզբում եղել է բառը (Լոգոս) և բառը եղել է աստծո մոտ և բառը եղել է աստվածը»:

Միջնադարյան մտածողների կրոնափիլիսոփայական հարցադրումներում ամեն ինչ դիտվում է գերբնական նախասկզբի (աստծո) արարչագործության արդյունք: Բնությունը, հասարակությունը և մարդու գոյությունը կախման մեջ է դրվում գերբնական ուժից (աստծուց):

Անտիկ դարաշրջանում փոքր տիեզերք համարվող մարդը միջնադարյան աստվածաբանական փիլիսոփայության մեջ դառնում է անկատար, մեղսունակ էակ, որը ողջ կյանքում պետք է ապաշխարհի աստծո բարեհաճությանը արժանանալու համար: Փրկվելու համար մարդը պետք է ընդունի աստվածային խորհրդավորությունը:

Կրոնափիլիսոփայական գոյաբանության մեջ աստված բարձրագույն կեցություն է, բարձրագույն բարիք, բարձրագույն ճշմարտություն, բարձրագույն գեղեցկություն: Իսկ պատմությունը ներկայացվում է որպես աստծո թագավորությանը հասնելու նպատակաուղղված գործընթաց:

2. ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Միջնադարյան կրոնափիլիսոփայական իմացաբանության մեջ առաջնակարգ տեղ է զբաղեցնում բանականության և հավատի հիմնախնդիրը: Եկեղեցու հայրերը ձգտում են խիստ չտարանջատել աստվածաբանության և փիլիսոփայության, հավատի ու բանականության ոլորտները: Օգոստինոս Ավրելիոսը (Երանելի 354-430) հիմնավորում է, որ իմացության նպատակն՝ Աստծուն ճանաչելն է: Բանականությունը պետք է հիմնվի հավատի վրա, քանզի միայն հավատի դրույթները կարող են լինել բացարձակ ճշմարտություն: Եթե մարդու բանականությունը չլուսավորվի Աստծո լույսով մարդը չի կարող հասկանա իրերի էությունը:

Կրոնական աշխարհայացքում հավատն ունի խորը հուզակամային հիմք: Կլիմենտ Ալեքսանդրացու կարծիքով ամենահավաստին հավատով միջնորդավորված ճանաչողությունն է, քանզի հավատն աստ-

ծո հետ մարդու մերձեցում է: Մարդու ճանաչողությունը առանց աստծո միջնորդության լիակատար լինել չի կարող: Բանականությունը աշխարհը ճանաչում է ոչ թե իր ընդունակությունների հիման վրա, այլ աստվածային լույսի օգնությամբ: Այդ լույսը լուսավորում է ինչպես իրերն, այնպես էլ մարդկային մտածողությունը: Օգոստինոս Ավրելիոսի կարծիքով առանց հավատի գիտելիք չկա: Ամբողջ աշխարհը ներթափանցված է բանականությամբ, լոգոսով: Նրա համոզմամբ «ոչ իրերը, ոչ էլ մարդկային հոգին այդպիսի լույս չունեն»: Նրանք լուսավորվում են արտացոլված լույսով: Ամեն ինչ տեսանելի, ռեալ է միայն աստծո միջոցով: Օգոստինոսի համոզմամբ կրոնական հավատը ռացիոնալ հիմնավորման անհրաժեշտության կարիք չի զգում: Հավատացյալը հայտնության միջոցով հասու է դառնում աստվածային ճշմարտությանը: Իսկ դա ամենահավաստի ճանաչողությունն է: Բանականությունը պետք է հպատակվի հավատին, իսկ հավատը պետք է ամրապնդվի բանականությամբ:

IX-XIV դարերում փիլիսոփայությունը շարունակում է զարգանալ կրոնաաստվածաբանական հարցալուծումների ոլորտում: Այս դարաշրջանում եկեղեցու հայրերը փիլիսոփաներին պարտադրում են ծառայելու կրոնին, մեկնաբանելու աստվածային հայտնությունների իմաստն ու բովանդակությունը: Իմաստասիրությունը նպատակաուղղվում է կրոնական դոգմաների անսխալականության հիմնավորմանը: Ճանաչողության գործընթացում ընդգծվում է դեդուկտիվ մտահանգման դերը: Կրոնափիլիսոփայական բնույթի շարադրանքներում մեծ տեղ է հատկացվում հեղինակությունների հայացքներով հայտնության իմաստի և բովանդակության հիմնավորումներին: Այս ուղղությամբ զգալի ներդրում են կատարել Էրիուգենան (IX դար), Անսելմ Քենթերբերացին (XII դ.), Պիեռ Աբելյարը (XII դ.), Բոնավենտուրան (XIII դ.), Ալբերտ Մեծը (XIII դ.), Թոմա Աքվինացին (XIII դ.):

Էրիուգենան «Նախասահմանվածության մասին», «Բնության բաժանման մասին» աշխատություններում հիմնավորում է, որ և փիլիսոփայության և կրոնի ուսումնասիրությունների աղբյուրը աստվածային իմաստությունն է, հետևաբար դրանց միջև հակասություն չպետք է լինի: Կրոնը հենվում է հայտնության, իսկ փիլիսոփայությունը՝ բանականության ճշմարտությունների վրա: Դրանք պետք է փոխլրացնեն միմյանց:

Անսելմ Քենթերբերացին առաջնորդվելով «Հավատում եմ, որպեսզի հասկանամ» նշանաբանով, հիմնավորում է, որ առաջնայինը կրո-

նական դոգմաներին են, հավատը, սակայն չի մերժում և բանականության դերը դրանց հավաստիության հիմնավորման գործում: Պիեռ Աբելյարը ճանաչողության գործընթացում ավելի մեծ տեղ է հատկացնում տրամաբանական եզրահանգումներին և բանական հիմնավորումներին: «Այո և ոչ» աշխատության մեջ փորձում է ըմբռնելի դարձնել այն, ինչին պետք է հավատալ: «Հասկանում եմ, որպեսզի հավատամ» նրա առաջ քաշած սկզբունքը նպատակաուղղված էր կրոնական դոգմաների բանական հիմնավորմանը: Դրանց հավաստիության, ճշմարտացիության հիմնավորման գործում նա կարևորում էր կողմ և դեմ կարծիքների համատեղման միջոցով եզրահանգումներ կատարելը:

XIII դարում հավատի և բանականության, աստվածաբանության և փիլիսոփայության հարաբերակցության հարցադրումներով մեծ լումա են ներդրել Փարիզի և Օքսֆորդի համալսարանները: Հատկապես պետք է կարևորել օգոստինոսականության սկզբունքները: Պահպանողական հայացքներ բովանդակող փիլիսոփայական այդ հոսանքում կարևորվում էր բանականության նկատմամբ հավատի գերազանցության հիմնավորումները: Թերագնահատելով զգայական և փորձնական ճանաչողության դերը հիմնավորվում է, որ միայն Աստծո կամեցողության և ներգործության շնորհիվ մարդը կարող է ճանաչել թե բնական և թե վերբնական գոյերի բնույթը: Այսպիսի համոզմունքներ զարգացրել են Բոնավենտուրան (1221-1274), Ռոջեր Բեկոնը (1210-1254) և այլոք: Բոնավենտուրայի համոզմամբ մարդու բանականությունը թույլ է և ինքնուրույն, առանց Աստծո օգնության չի կարող ոչինչ ճանաչել: Մարդը միշտ կարող է սխալվել, իսկ աստվածային լույսի ճառագման շնորհիվ հասկանում է ոչ միայն շրջակա աշխարհի իրերի, այլև Աստծո էությունը: Ռոջեր Բեկոնը, ընդունելով հանդերձ փորձի դերը ճշմարիտ գիտելիքների ձեռք բերման գործում, այնուամենայնիվ հոգևոր իրողությունների ըմբռնման հարցում կարևորում է աստվածային ճառագման դերը: Դրան հասու են միայն աստվածաբանները և փիլիսոփաները: Այստեղից էլ Ռ.Բեկոնը հիմնավորում է, որ փիլիսոփայությունը պետք է նպատակաուղղվի հավատի ճշմարտությունների մեկնաբանմանը:

3. ԱՇԽԱՐՀԻԿ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԱԿՈՒՐՄՈՒՄՆԵՐԸ

Միջին դարերում եկեղեցու հայրերը մեծ ուշադրություն են դարձնում Արիստոտելի աշխատությունների մեկնությանը: Արիստոտելի հայացքները կաթոլիկ եկեղեցու գաղափարախոսությանը ծառայեցնելու գործում զգալի ներդրում են կատարել Ալբերտ Մեծը (1193-1280), Թովմա Աքվինացին (1225-1274), Դունս Սկոտը (1266-1308) և այլոք: Գիտության և կրոնի փոխհարաբերության հարցակարգումով նրանք զարգացրեցին աշխարհիկ և աստվածային ճշմարտության վերաբերյալ հետաքրքիր գաղափարներ: Այդպիսի համոզմունքների շնորհիվ հավատի և բանականության, գիտելիքի և կրոնի փոխհարաբերության հիմնախնդիրը տեղափոխվում է փիլիսոփայության և աստվածաբանության բնագավառը և ձևավորվում է երկյակ ճշմարտության գաղափարների տեսքով: Երկու ճշմարտությունների առաջադրման իմաստը գիտության և փիլիսոփայության անջատումն էր աստվածաբանությունից: Թ.Աքվինացու համոզմամբ հավատը և բանականությունը կոչված են ճանաչելու միևնույն ճշմարտությունը (Աստծուն), սակայն ամեն մեկը դա անում է տարբեր ճանապարհով: Բանականությունը հիմնվում է գիտության և փիլիսոփայության վրա, իսկ հավատը՝ աստվածաբանության:

Թ. Աքվինացին հիմնավորում էր, որ փիլիսոփայության ուսումնասիրությունների բնագավառը երկրային, աշխարհիկ գոյերն ու երևույթներն են: Այդ հետազոտություններում փիլիսոփայությունը կարող է հենվել ոչ միայն բանականության, այլև փորձի տվյալների վրա: Իսկ աստվածաբանության բնագավառը երկնայինի, գերբնականի ոլորտն է: Աստվածաբանության հիմքը հավատքի ճշմարտություններն են, կրոնական դոգմաները: Աքվինացու համոզմամբ փիլիսոփայությունը և աստվածաբանությունը չպետք է հակասեն միմյանց: Իսկ եթե այդպիսի բան դրսևորվի, ուրեմն անճշտությունը պետք է փնտրել փիլիսոփայության ոլորտում, քանզի հայտնությունը, կրոնական դոգմաները անկասկածելի, անժխտելի ճշմարտություններ են: Աքվինացու կարծիքով մարդկային բանականությունը միշտ կարող է սխալվել, մոլորվել: Բանականության վրա հիմնված փիլիսոփայությանը անհասանելի են հայտնության ճշմարտությունները: Այդ իսկ պատճառով էլ բանականությունը, փիլիսոփայությունը ոչ միայն պետք է ծառայեն կրոնին, այլև հետևեն հայտնության ճշմարտություններին և դրանք մատչելի, հասանելի դարձնեն

հավատացյալների համար: Սակայն հավատը միշտ բարձր է բանականությունից և հավատի շատ սկզբունքներ անմատչելի են բանականությանը. Այդ իսկ պատճառով էլ փիլիսոփայությունը միշտ էլ աստվածաբանության կարիքը կզգա:

Երկակի ճշմարտության ուրույն հայացքներ է զարգացնում Դունս Սկոտը: Նրա համոզմամբ հավատը և բանականությունը, աստվածաբանությունը և փիլիսոփայությունը միմյանցից տարբեր ու անկախ են: Աստվածաբանության առարկան Աստվածն է և նրա արարչագործությունը: Արարիչը կարող է ճանաչվել միայն հավատի միջոցով: Հավատը ունի երկնային բովանդակություն և անհասանելի է բանականությանը: Իսկ փիլիսոփայության առարկան կեցությունն է, որը ճանաչվում է փորձի և բանականության միջոցով: Հետևաբար, եզրակացնում է Դունս Սկոտը, բանականությունը ի զորու չէ ապացուցելու հավատի ճշմարտությունները և լուսավորվել նրա կողմից: Աստված անընդգրկելի մեծություն և ամենակարող սկզբնապատճառ է, որը տրամաբանորեն ապացուցել անհնարին է: Աստվածային կամքը գերազանց է բանականությունից, քանզի Աստված ամենազոր և ամենագետ է: Նման համոզմունքներ զարգացնում է նաև Օկկամը (1290-1350), հիմնավորելով, որ բանականության միջոցով հնարավոր չէ ներկայացնել կրոնական ճշմարտություններ:

Զգալի հետաքրքրություն է ներկայացնում աշխարհիկ և աստվածային ճշմարտությունների վերաբերյալ Ֆ. Բեկոնի խորհրդածությունները: Նրա համոզմամբ փիլիսոփայությունը և աստվածաբանությունը միմյանցից զանազանվում են ոչ միայն ուսումնասիրության բնագավառներով, հետազոտության մեթոդներով, այլև հետապնդած նպատակներով ու դրան հասնելու միջոցներով: Փիլիսոփայությունը և աստվածաբանությունը ունեն տարբեր կոչումներ և չպետք է խառնվեն միմյանց գործերին:

Անդրադառնալով փիլիսոփայության նկատմամբ աստվածաբանության առաջնայնության հիմնավորումներին Աքվինացին Արիստոտելի փիլիսոփայական մտածելակերպի սկզբունքներով փորձում է լուծել աստվածաբանական հիմնախնդիրները: Ելակետ ընդունելով «անշարժ սկզբնաշարժիչի» վերաբերյալ Արիստոտելի գաղափարը Աքվինացին հիմնավորում է, որ տեսնելով ամեն ինչի շարժումը մենք պետք է հավատանք առաջնաշարժիչի գոյությանը: Միայն Աստված, լինելով անշարժ, կարող է շարժում հաղորդել և շարժման մեջ դնել բոլոր գոյերին: Պատճառների շղթան անհրաժեշտորեն մի տեղ պետք է ընդհատ-

վի: Դա նշանակում է, որ պետք է գոյություն ունենա ամեն ինչ շարժման մեջ դնող, ամեն ինչի պատճառ հանդիսացող արարիչ: Աքվինացու հետևողմամբ աստված մարդուն հայտնվում է երկու ճանապարհով. 1. Բնական՝ ստեղծված, արարչագործված աշխարհի միջոցով և 2. Գերբնական՝ հայտնության միջոցով: Գիտությունը և փիլիսոփայությունը բանականության միջոցով ճանաչելով արարչագործված աշխարհը, հանգում են աստծո գոյության փաստին: Իսկ սուրբ գրքերում պարունակվող գերբնական հայտնությունների միջոցով աստվածաբանությունը մարդուն հնարավորություն է տալիս ընդունելու հավատի ամենակարևոր ճշմարտությունները: Աքվինացին դրանով տարանջատելով բանականությունը և հավատը, աստվածաբանությունից տարանջատեց փիլիսոփայությունը և գիտությունը:

Երկյակ ճշմարտության գաղափարներ զարգացրել է նաև XVII դարի ֆրանսիացի փիլիսոփա Պիեռ Հասենդին: Նրա համոզմամբ փորձի և բանականության միջոցով մարդը բացահայտում է բնական երևույթների բնույթը և գիտելիք է ձեռք բերում դրանց վերաբերյալ, իսկ աստվածային, գերբնական բնույթի ըմբռնումներն իրականանում են հավատի և հայտնության միջոցով:

4. ՈՒՆԻՎԵՐՍԱԼԻԱՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Միջնադարյան փիլիսոփայության մեջ ունիվերսալիաների (լատիներեն՝ ընդհանուր գաղափարներ) վերաբերյալ փիլիսոփաների և եկեղեցու հայրերի միջև մղվող բանավեճը խիստ կարևորվում էր գոյաբանական և աստվածաբանական հիմնախնդիրների լուծման տեսանկյունից: Այդ խնդրի վերաբերյալ աստվածաբանների և փիլիսոփաների դիրքորոշումները հիմնվում էր տարբեր ելակետերի վրա: Մտածողների մի մասը ունիվերսալիաները համարում էր ինքնուրույն, առանձին գոյություն ունեցող, իսկ ոմանց կարծիքով դրանք պարզապես իրերի անվանումներ են:

Միջնադարյան փիլիսոփայության հիմնախնդիրներից մեկի՝ էության և գոյության, հավատի և բանականության հարաբերության հարցի լուծումը ծնեց <u>նոմինալիզմի</u> և <u>ռեալիզմի</u> մտայնության պայքար: <u>Նոմինալիզմը</u> միջնադարյան մտածողների համոզմունքներում դրսևորվեց որպես փիլիսոփայությունը ռեալ բնության հետազոտությանը նպատակաուղղելու վաղ փորձարարական գաղափարամիտում: Նոմինալիստ-

նկատի ունենալով ռեալ կերպով գոյություն ունեն միայն զգայորեն ընկալելի եզակի իրերն իրենց անհատական հատկություններով: Իսկ այդ իրերի վերաբերյալ մեր մտածողության ստեղծած ընդհանուր հասկացությունները իրերից անկախ գոյություն չունեն և չեն կարող արտացոլել նրանց հատկությունները: Իրի առաջնայնության և հասկացության երկրորդայնության պնդման այս համոզմունքի նպատակն էր հիմնավորել, որ աստծու կեցությունը կրոնական հավատի առարկա է և ոչ թե փիլիսոփայության: Փիլիսոփայությունը հենվում է ապացուցումների վրա, իսկ կրոնը՝ հավատի: Մարդկային միտքը կարող է ըմբռնել միայն այն, ինչ տրվում է զգայությունների միջոցով և ինչ վերացարկվում է զգայական տվյալներից: Իսկ ոչ նյութական նախահիմքերի մասին մարդը ոչ մի գիտելիք չի կարող ունենալ: Իմացության խնդիրը ռեալ կերպով գոյություն ունեցող եզակիի ըմբռնումն է: Իսկ ընդհանուրը գոյություն ունի միայն ճանաչող սուբյեկտի մտքում: Ընդհանուր հասկացությունները բազմաթիվ օբյեկտներ համատեղորող նշաններ են, տերմիններ, որոնք գոյություն ունեն միայն մտքում, իրերից հետո, թեև զուրկ չեն օբյեկտիվ նշանակությունից և այնպիսի նշաններ են, որոնք փոխարինում են ինքնին իրար նման առարկաների: Նոմինալիստական համոզմունքների զարգացնողներ հանդիսացան Ռոսցելինը, Դունս Սկոտը, Օկկամը: Նրանց հայացքների դեմ գաղափարական անհաշտ պայքար ծավալեցին ռեալիզմի ներկայացուցիչները՝ Անսելմ Քենթերբերացին, Վիլհելմ Շամպոցին, Թովմա Աքվինացին:

Միջնադարյան <u>Ռեալիզմի</u> նպատակն էր բանականության օգնությամբ ապացուցել աստծու գոյությունը, այսինքն մարդու գիտակցության մեջ եղած աստծու մասին գաղափարից տրամաբանական անհրաժեշտությամբ բխեցնել նրա գոյությունը: Առաջադրված նպատակների իրականացման տեսական հիմք ծառայեց կեցության մասին Պլատոնի և Արիստոտելի ուսմունքը: Հիմնավորելով, որ ընդհանուր հասկացությունները (ունիվերսալիաները) նախորդում են եզակի իրերին և օժտված են ռեալ գոյությամբ, ռեալիզմի գաղափարակիրները պնդում էին, որ աստվածն էլ որպես հոգևոր գոյ և բարձրագույն ձև տիեզերքում գոյություն է ունեցել ամեն ինչից առաջ: Նյութական տարրերը չեն կարող գոյություն ունենալ ձևից առանձին, իսկ ձևը կարող է գոյություն ունենալ նրանցից անկախ:

III ՀԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՋԱՏԱԳՈՎԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

1. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ

V-VII դարերում քրիստոնեական հավատի և գաղափարախոսության ամրապնդման համար եկեղեցու գործիչները նրբորեն օգտագործում էին փիլիսոփայության տեսական ժառանգությունը և հնարավորությունները: Ակտիվ գործունեություն ծավալելով հավատացյալների միջավայրում, նրանք փիլիսոփայական գիտելիքները հմտորեն ծառայեցնում էին քրիստոնեական դավանաբանական հիմնախնդիրների մշակմանը և ամրապնդմանը:

Հեթանոսության պարզունակ մատերիալիզմի և բազմաստվածության գաղափարների դեմ վճռական պայքար ծավալեց քրիստոնեությունը, որը ձևավորվեց որպես երկրային զրկանքներից ու տառապանքներից ազատագրվելու չքավոր մասսաների հույսերի համակարգ: Այդ պայքարում զգալի ակտիվություն ցուցաբերեցին Ագաթանգեղոսը, Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկ Կողբացին: Ագաթանգեղոսը (V դար) «Պատմություն հայոց» աշխատության մեջ հիմնավորում է, որ աշխարհի առաջնահիմքը, պաստճառների պատճառը աստվածն է: Աստծուն «արարչակից» է որդին, «համագործ» է սուրբ հոգին: Ամեն ինչ աստծո արարչագործության արդյունք դիտելով հանդերձ Ագաթանգեղոսը բուսական ու կենդանական աշխարհի առաջացման ակունքը փնտրում է ջրի մեջ:

V-VII դարերում հայ փիլիսոփաները շփվելով հունական նյութական և հոգևոր մշակույթի հետ հմտորեն այն ծառայեցնում էին քրիստոնեության գաղափարախոսությանը: Եզնիկ Կողբացին, Դավիթ Անհաղթը Պլատոնի և Արիստոտելի մշակած գոյաբանական, իմացաբանական հարցալուծումները հարմարեցնելով քրիստոնեության աստվածաբանական հիմնախնդիրներին ստեղծեցին կրոնափիլիսոփայական յուրովի համակարգ: Նրանք փիլիսոփայության գոյաբանական և իմացաբանական հարցալուծումները կառուցում էին քրիստոնեության դավանաբանական սկզբունքների վրա և հարմարեցնում էին աստվածաբանական դոգմաների բովանդակության պահանջներին: Աշխարհայացքային այդպիսի դիրքորոշումների հիման վրա ձևավորված մտածողությունը կոչվեց քրիստոնեական ջատագովական փիլիսոփայություն: Այդպիսի մտածողությունը կարևորում էր փիլիսոփայության դերը կրո-

նակաև դոգմաների հիմնավորման գործում: Այդ ժամանակաշրջանի քրիստոնեական ջատագովությունը դարձավ փիլիսոփայական մտքի զարգացման հիմնական ուղենիշ: Հայ փիլիսոփաները Պլատոնի և Արիստոտելի հայացքները վերահմաստավորում էին քրիստոնեության ոգով և ծառայեցնում էին աստվածային արարչագործության հիմնավորմանը:

2. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Կրելով արևելյան և արևմտաեվրոպական փիլիսոփայական հոսանքների, ուսմունքների ազդեցությունը, հայոց քրիստոնեական ջատագովական փիլիսոփայությունը զարգացրել է ազգային ինքնակեցությունը ամրապնդող գաղափարներ: Հայ փիլիսոփաները և եկեղեցու գործիչները ազգային ինքնությունը վառ պահելու միտումով գաղափարատեսական պայքար էին ծավալում Սասանյան պետության զրադաշտական կրոնի հանդեպ: Նրանք երկուստեք ձգտում էին քրիստոնեությունը դարձնել ազգային անկախությունը պահպանելու հոգևոր զենք: Այդ գործում փիլիսոփայությունը և աստվածաբանությունը փոխլրացնում էին միմյանց: Փիլիսոփայական գիտելիքներով հիմնավորվում էր քրիստոնեության դավանաբանական սկզբունքները, իսկ այդ սկզբունքներով ոգեկոչվում էր օտար նվաճողներին ազգովի դիմակայելու պահանջ: Այդ խնդիրը չափազանց հմուտ ձևով իրականացրեց Եզնիկ Կողբացին «Եղծ աղանդոց» աշխատությունով:

V դարը հայ ժողովրդի համար խիստ բախտորոշ ժամանակաշրջան էր: Սասանյան Պարսկաստանի տիրակալ Հազկերտ 2-րդը ձգտում էր ամեն կերպ վերջ տալ Հայաստանի ներքին անկախությանը և լիովին ենթարկել իր կամքին: Այդ խնդրում հայերի անկոտրում դիմադրության պատճառը նա համարում էր երկու ժողովուրդների կրոնների տարբերությունը: Միաժամանակ քրիստոնեությունը դիտում էր Հայաստանի և Բյուզանդիայի մերձեցման գրավական և պահանջում էր հայերից կրոնափոխ լինել: Հազկերտը հաշվազված էր, որ եթե հայերը հավատափոխ լինեն և ընդունեն Պարսկաստանի զրադաշտական կրոնը, կթուլանա Պարսկաստանին ընդդիմանալու հայերի համառությունը և ինքը վերջնականապես կտիրի Հայաստանին:

Ինչպես եկեղեցու հայրերն, այնպես էլ հայ իմաստունները ըմբըռ-

նելով Պարսկաստանի կողմից Հայաստանի նկատմամբ իրականացվող քաղաքականության նպատակները կազմակերպեցին բազմակողմանի դիմադրություն: Այդ գործում գրիչը, հավատքը և զենքը նպատակաուղղվեց միասնական ծրագրի իրականացմանը: Հայ գործիչները լավ գիտակցում էին, որ միայն զենքի ուժով հնարավոր չէ դիմակայել հզոր թշնամուն: Հոգևորականներն իրենց աղոթքներով, փիլիսոփաներն իրենց գրչով, զինվորականներն իրենց բազկով համախմբվեցին օրհասական այդ պայքարի:

Ազգին կոչելով մարտնչելու հանուն հայրենիքի և եկեղեցու, պատմիչ Եղիշեն հիմնավորում էր, որ «հասկացված մահն անմահություն է»: Եզնիկ Կողբացին իր «Աղանդների հերքում» աշխատությունով կազմակերպեց գաղափարական պայքարի գործը: Նա հրաշալի գիտակցում էր, որ հայերին կրոնափոխ անելու Պարսկաստանի պահանջներն ու ձգտումները հեռուն գնացող նպատակներ են հետապնդում: Այդ իսկ պատճառով էլ իր ողջ հմտությունը ներդրեց հիմնավորելու, որ քրիստոնեությունը ավելի կատարյալ է, քան պարսից զրվանականությունը և այն պետք է մերժվի: Կողբացին անհերքելի փաստարկներով ապացուցում է, որ բարու և չարի սկզբունքներով հիմնավորված զրադաշտական-դուալիստական կրոնում չարիքը սուբստանց է դիտվում և այն պետք է մերժվի հայերի կողմից:

Հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով Իրանի գաղափարական ագրեսիայի՝ զրադաշտական կրոնի չարի (խավարի) աստված Ահրիմանի և բարու (լույսի) աստված Որմիզդի էության պարզաբանման վրա, Եզնիկը «Եղծ աղանդոց» աշխատության մեջ հիմնավորում է, որ աստվածը պետք է անծի լինի, իսկ չարն ու բարին գործողություններ են, արգասիք և նախահիմք ու աստված լինել չեն կարող: Բնության մեջ բացարձակ չար կամ բարի չկան, կան չար կամ բարի գործողություններ: Հանգամանքից է կախված և արարքով է պայմանավորված տվյալ գործողության բարի կամ չար լինելը:

Հիմնավորելով պարսկական զրադաշտական կրոնի անհատարությունը, Եզնիկը զուգահեռաբար ներկայացնում է քրիստոնեության առավելությունները: Քրիստոնեական կրոնի աստվածը բացարձակ գոյ է: Աստված անսկիզբ, հավերժորեն գոյություն ունեցող, ոչնչից ամեն ինչ ստեղծող արարիչ է: Չորսը տարրերը և դրանցից կազմված ամեն ինչ աստծո արարչագործության արդյունք են: Եզնիկ Կողբացին քրիստոնեության կատարելությունը հիմնավորում է նաև մարդու կամքի ազատության վերաբերյալ մտորումներում:

Քրիստոնեության դավանաբանական հարցալուծումներում մարդու կամքի ազատության հիմնախնդիրը կարևոր տեղ է զբաղեցնում: Քրիստոնեական աստվածը դիտվում է անստեղծելի և անոչնչանալի բացարձակ կատարելություն: Աշխարհում ամեն ինչ բացարձակ կատարելության կամքի դրսևորման արդյունք է: Ուրեմն աշխարհում ամեն ինչ պետք է լինի կատարյալ ու բարի, քանզի աստված իր բնույթով անաղարտ կատարելություն է և նրա ստեղծածը անկատար ու չար լինել չի կարող: Սակայն, մարդ արարածը հազարամյակների ընթացքում բարի գործերի հետ մեկտեղ կատարել է և բազում չար գործեր:

Բարու և չարի արմատների որոնման արժեքավորման հարցը աստվածաբանական փիլիսոփայության մեջ կարևորվում է երկու տեսանկյունից:

1. Եթե ամեն ինչ ստեղծել է աստված, ապա չարն էլ նրա արարչագործության արդյունք է: Եթե չարը աստծո արարչագործության արդյունքն է, ուրեմն ինքն էլ պետք է չար բնույթ ունենա: Նման եզրահանգումը անհարիր է քրիստոնեական մտածելակերպին, քանզի աստված իր էությամբ կատարյալ բարություն, առաքինություն, մաքրություն է: Հետևաբար չարը նրա բնույթին հարիր չէ:

2. Եթե չարը աստծո արարչագործության արդյունք չէ, բայց գոյություն ունի, ուրեմն ինքնուրույն սուբստանց է, ինչպես որ հանդես է գալիս պարսկական զրադաշտական կրոնում: Այսպիսի հարցալուծումը ևս ընդունելի չէ քրիստոնեական մտածելակերպում և պետք է մերժվի: Սակայն չհիմնավորված մերժումը հարցի լուծում չէ.

Քրիստոնեության նվիրյալ ջատագով Եզնիկ Կողբացին որոնում է չարի բնույթի հիմնավորման այնպիսի բացատրություն, որում չի նսեմացվում աստծո անաղարտությունը և չի հերքվում ամենակարողությունը:

Կողբացու համոզմամբ «ինչ որ աստծո կամքով է լինում, բարի է, իսկ ինչ որ նրա կամքից դուրս է, չար է»: Եվ քանի որ ամեն ինչ աստծո արարչագործության արդյունք է, ուրեմն ամեն արարված պետք է լինի այնպիսին, ինչպես ի սկզբանե կամեցել է աստված: Այս հարցին Կողբացին հրաշալի լուծում է գտնում: Նրա կարծիքով «բանականությունից զուրկ արարվածները կամքի ազատություն չունեն» և վարվում են այնպես, ինչպես կամեցել է աստված նրանց ստեղծելու ժամանակ: Ինչպես տիեզերական բոլոր օբյեկտները, այնպես էլ երկիրն ու նրա

վրայի բուսական և կենդանական աշխարհի բոլոր տեսակները կատարում են աստծո կամքը և չեն շեղվում նրա նախանշած ուղուց: Նրանց բնույթում չարություն չկա, քանզի «չարը ոչ գոյավոր է, ոչ էլ աստծուց է առաջացել», այլ մարդկային հարաբերությունների արդյունք է:

Կողբացու համոզմամբ աստված մարդուն ստեղծել է «իր պատկերով և իր նմանությամբ»: Աստծո ստեղծած «առաջին մարդն ինքնակամություն և ազատություն է ունեցել, նրանից էլ նույնը իր հաջորդներն են ժառանգել»: Ուրեմն նա ծնավորվում ու բանական կենդանի է դառնում «չարիքներից զերծ, իսկ երբ չափահաս մարդ է դառնում, այն ժամանակ իր ազատակամությամբ հակվում է դեպի չարիքը»: Կողբացու կարծիքով «չարը ոչ գոյավոր է, ոչ էլ աստծուց է առաջացել: Չարը անհնազանդի անհնազանդությունից է եղել»: Այսինքն, մարդն ոչ թե իր էությամբ է չար ստեղծվել, այլ «չար է դառնում մեկի սադրանքով»: Իր ստեղծածներից աստված միայն մարդուն է շնորհել կամքի ազատություն: Իսկ մնացած ամեն ինչ պետք է հարկադրանքով «ծառայեն աստծո հրամանին»: Նման հարցալուծումով քրիստոնեական աստվածը անսկիզբ, հավերժորեն գոյություն ունեցող, կամքով ու բանականությամբ օժտված, ոչնչից ամեն ինչ ստեղծող բացարձակ գոյ է:

4. ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄԸ: ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ

Անտիկ Հունաստանի փիլիսոփայության ժառանգությունը հատկապես Պլատոնի և Արիստոտելի աշխատությունները մոռացությունից փրկելու գործում զգալի վաստակ են ներդրել Ալեքսանդրիայի, Ասորիքի և Հայաստանի մտածողները: Այդ գործում հատկապես մեծ է 5-րդ դարի կեսերից ծնավորված հունաբան դպրոցի՝ Աթենքի, Կոստանդնուպոլսի, Ալեքսանդրիայի գիտական կենտրոններում կրթված հայ մտավորականների վաստակը: Նրանց շնորհիվ 5-7-րդ դարերում Հայաստանը դարձել էր Արևելքի և Արևմուտքի կուլտուրաների կամրջող օղակ, իսկ փիլիսոփայական կուլտուրան՝ հունականի և հայկականի սինթեզ: Արիստոտելի «Կատեգորիաների» և «Մեկնության մասին» աշխատությունների նրանց հայերեն բարձրարժեք թարգմանությունները հաստատուն տեղ էին գրավում միջնադարյան հայ կրթական համակարգում: Այդ գործում չափազանց արժեքավոր է Դավիթ Անհաղթի (5-6-րդ դ.դ.) ներդրումը: Արիստոտելի «Անալիտիկայի», «Կատեգորիաների», Պորփյուրի «Ներածության» Դավիթ Անհաղթի մեկնությունները և

«Փիլիսոփայության սահմանումներ» աշխատությունը շոշափում են գոյաբանության, իմացաբանության, հոգեբանության, բարոյագիտության և այլ հիմնախնդիրներ:

Հմտորեն համատեղելով Պլատոնի և Արիստոտելի աշխարհայացքային հարցալուծումները, Անիաղթը Հայաստանում ձևավորեց նոր պլատոնական փիլիսոփայական ուղղություն: Առաջնորդվելով ընդհանուր գաղափարների վերաբերյալ Պլատոնի և Արիստոտելի մեկնություններով Անիաղթը հիմնավորում է, որ ընդհանուր գաղափարները ոչ միայն գոյություն են ունեցել իրերից առաջ աստծո մտքում և հանդիսացել են ստեղծվելիք իրերի նախատիպեր, կերպարներ, այլև առանձին իրերի մեջ, որպես դրանց էությունները և մարդկային մտածողության մեջ, որպես ընդհանուր հասկացություններ: Դա միանգամայն յուրովի մոտեցում էր, քանզի Պլատոնի մոտ ընդհանուր գաղափարները արտերկրային են, իսկ Անիաղթի մեկնաբանությամբ դրանք ունեն և արտերկրային և երկրային բնույթ: Անիաղթի քննորոշմամբ ընդհանուրը առաջանում է մարդու մտածողության մեջ որպես առանձին գոյացությունների ընդհանրական հատկություն:

Անիաղթը փիլիսոփայությունը բաժանում է տեսականի և գործնականի: Տեսական փիլիսոփայությունը բովանդակում է աստվածային և աշխարհիկ ճանաչողության հիմնախնդիրներ, բնագիտական և մաթեմատիկական հետազոտություններով բացահայտվող օրինաչափություններ: Այստեղ զգայության և երևակայության միջոցով մարդը ձեռք է բերում բազմակողմանի գիտելիքներ, հաղորդակցվում է իրերի էության հետ, բացահայտում է իր և ուրիշների բանական կարողությունները, մտքի թռիչքները, հասնում աստծո բնույթի ըմբռնմանը: Գործնական փիլիսոփայությունը բարոյագեղագիտական, հասարակական-քաղաքական հիմնախնդիրների ոլորտն է: Այստեղ փիլիսոփայի հայացքը պետք է նպատակաուղղվի դեպի առաքինին, բարին, քանզի դա ճշմարտության ըմբռնման հիմքն է: Անիաղթի համոզմամբ միայն ճշմարիտն է բարի, որովհետև դա աստծո հատկությունն է: Նա կատարյալ փիլիսոփային համեմատում է աստծո հետ: Միայն աստվածը և կատարյալ փիլիսոփան են օժտված կատարյալ բարությամբ: Աստված հոգ է տանում բոլորի մասին, իսկ փիլիսոփան՝ լուսավորելով մարդկանց անկատար հոգիները, նրանց հասանելի դարձնելով բարու, առաքինության, կատարյալի էությանը բարիք է գործում:

Անիաղթը բարձր է գնահատում և տեսական, և գործնական փիլիսոփայությունը, քանզի միայն ճանաչելով շրջակա աշխարհը, հասկա-

նալով գոյի բնույթն ու էությունը, ըմբռնելով արարչի կատարելությունը և արարվածների անկատարությունը, մարդը կարող է հասու լինել գեղեցկության, առաքինության պատճառներին: Միայն այդպիսի անձը կարող է հասնել հոգեկան կատարելության, լինել բարի և առաքինի, ձգտել այդպիսին դարձնել ուրիշներին: Դա կարող է անել միայն իմաստուն փիլիսոփան: Այս խնդրում փիլիսոփայության դերի կարևորումը երևում է անգամ փիլիսոփայության նրա սահմանումներում:

Անհաղթը փիլիսոփայությունը սահմանում է որպես 1. Գիտության գոյի իմացության մասին: Նման բնորոշումով նա ընդհանրացնում է անտիկ Հունաստանի փիլիսոփայության սուբստանցիոնալ հարցադրումները: Փիլիսոփայության նպատակը դիտելով գոյի բնույթի իմացումը, Անհաղթը ցանկանում է ընդգծել, որ փիլիսոփայության ուսումնասիրության բնագավառն՝ ողջ աշխարհն է, իսկ նպատակը՝ գոյություն ունեցող ամեն ինչի խորքային հատկությունների ճանաչումը: Գտնելով, որ դա բավարար չէ փիլիսոփայության խորհրդատվությունը հիմնավորելու համար, նա դիմում է նոր բնորոշման. 2. Փիլիսոփայությունը գիտություն է աստվածային և մարդկային իրողությունների մասին: Որևէ փիլիսոփայի խնդիրը պետք է լինի ոչ միայն թափանցել գոյի բնույթի մեջ, ըմբռնել դրա էութենական հատկությունները, այլև արժեքավորել դրանք, ցույց տալ աստվածային կատարելության անհունությունը, ամենակարողությունը: Փիլիսոփան իր ամենակարող ինտելեկտով պետք է ձգտի հասկանալու ամենաստեղծ արարչի բնույթը, էությունը և դրա հիման վրա բացատրի նրա կողմից արարված էակի մարմնական անկատարության ու հոգու կատարելության հակադրամասնությունը: Այդ խնդրի տրամաբանական իմաստավորումը մարդուն պետք է հանգեցնի իր արարչի առջև իր ոչնչության ըմբռնմանը: Այստեղից էլ Անհաղթը եզրակացնում է, որ 3. Փիլիսոփայությունը՝ մահվան մասին խորհելն է: Դրանով կարևորվում է մարդու բնույթի, հոգեկան ապրումների ուսումնասիրությունը: Փիլիսոփայի խնդիրը պետք է լինի իր նմանին հասկացնելու մահվան և անմահության խորհուրդը: Մարդը պետք է ըմբռնի իր անզորությունը մահվան առջև և ձգտի իմաստալից ապրել երկրային ժամանակավոր կարճ կյանքը: Փիլիսոփայի խնդիրը պետք է լինի մարդկանց հասկացնելու մահվան և անմահության իմաստը: Երկրային ժամանակավոր կյանքը բովանդակալից անցնելու կարևորությունը: Որևէն 4. Փիլիսոփայությունը՝ Աստծուն նմանվելն է: Փիլիսոփայական հարցադրումներում կարևորվում է չարի և բարու արժեքավորումները: Միայն չարից խուսափելով և բարին կատարելով,

աշխարհի մասին գիտելիքներ ձեռքբերելով մարդը կկարողանա նմանվել աստծուն, քանզի աստված լույս է և կատարելություն: Այդ կատարելությանը հասու լինելու գործում մեծ է փիլիսոփայության առաքելությունը, որովհետև միայն ինտելեկտուալ զարգացումը հնարավորություն կտա մարդուն հասկանալու առաքինի վարքագիծ դրսևորելու, բարին կատարելու և չարից խուսափելու իմաստը: Այստեղից էլ Անհաղթը եզրակացնում է, որ 5. Փիլիսոփայությունը արվեստների արվեստ և գիտությունների գիտություն է: Ասել կուզի, որ փիլիսոփայական հայացքները ամենուրեք առկա են բարոյագեղագիտական և բնագիտական հիմնախնդիրներ: Փիլիսոփան ոչ միայն ուժեղ է թափանցի շրջակա աշխարհի իրերի, երևույթների բնույթի մեջ, պարզի դրանց առաջացման ու զարգացման դրդապատճառները, այլև ընկալի դրանց կատարելությունը և հիմնավորի թե ինչու միայն գեղեցիկին ու կատարյալին հետևելով կարելի է հասնել առաքինության: Անհաղթի համոզմամբ առաքինի վարքագիծը պայմանավորված է բազմակողմանի զարգացվածությամբ: Եվ քանի որ բազմակողմանի զարգացած կարող է լինել միայն փիլիսոփան, ուրեմն 6. փիլիսոփայությունը իմաստասիրություն է: Ըմբռնելու, ճանաչելու, մեկնաբանելու արվեստ: Փիլիսոփայությունը՝ իմաստություն սիրելն է:

Անհաղթի համոզմամբ չնայած բնությունը շատ բան է թաքցրել մարդուց, չպետք է բացարձակացնել այդ հանգամանքը և կասկածել մարդու իմացական կարողությունների վրա: Հենվելով ակնհայտի վրա մտածողը կարող է բացահայտել ոչ ակնհայտը, թափանցել գաղտնի էության խորքը, իմացության տրամաբանական միջոցներով հասնել բացարձակ ճշմարտության ճանաչմանը:

Գիտելիքի ձեռքբերման հարցում առաջնայնությունը տալով իմացության դեդուկտիվ մեթոդին Դավիթը չի թերագնահատում զգայական իմացության դերը: Հատկապես արժեքավոր է եզակիի և ընդհանուրի նրա մեկնաբանությունը: Եզակիի գոյությունը պայմանավորված է ընդհանուրի գոյությամբ: Ընդհանուրի բաժանման շնորհիվ նրա բաժանված մասերը կորցնում են իրենց սկզբնական տեսքը և դառնում են որակապես նոր գոյ: Բայց դրանից հետո էլ կապը ընդհանուրի հետ չի խզվում: Ըստ Դավիթ Անհաղթի ընդհանուրը ոչ թե մտքի կամայական ծնունդ է, այլ ռեալ գոյ: Ընդհանուրի ռեալ հիմքը բազումն է: Ընդհանուրի գաղափարն էլ բխում է ռեալ իրերի ու երևույթների ընդհանրությունից: Այստեղ ակնհայտ է ընդհանուրը առարկայական-զգայական աշխարհի բուն իրերի ռեալությունից

բխեցնելու Արիստոտելի, և ընդհանուրը նախորդում է եզակիին Պորփյուրի սկզբունքների ազդեցությունը: Անհաղթի մոտ ընդհանուրը դիտվում է որպես նախահիմք: Եզակիից առաջ գոյություն ունեցող ընդհանուրը՝ նախահիմքն աստվածն է: Գոյը մարմնականի և ոչ մարմնականի ամբողջությունն է: Մարմնական գոյը (նյութը) իներտ է և շարժման մեջ է դրվում հոգու կողմից: Անշարժը շարժվողից առաջ է եղել, որովհետև նա շարժման սկիզբն է:

5. ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԲՆԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Աստծո արարչագործության գաղափարը չհերքեց նաև խոշոր բնագետ մաթեմատիկոս Անանիա Շիրակացին (7-րդ դ.): Ըստ նրա աշխարհի բազմազանության հիմքում ընկած են չորս տարրերը՝ հողը, ջուրը, օդը, կրակը: Հողի բնության տակ Շիրակացին հասկանում է ցրտությունը և չորությունը, ջրի բնության տակ՝ ցրտությունը և խոնավությունը, օդի բնության տակ՝ տաքությունը և խոնավությունը, կրակի բնության տակ՝ տաքությունը և չորությունը: Այդ չորս տարրերը ստեղծել է աստվածը: Աստված աննյութական, անսկիզբ, իր լինելիության պատճառը իր մեջ պարունակող գոյ է: Աստված նաև անտարածական է, որովհետև ինքն է բոլոր գոյացությունների և զետեղարանը և արարիչը: Իսկ չորս տարրերը օժտված են մեխանիկական և հակադիր ուժերի միջոցով առաջացող շարժման կարողությամբ: Ամեն ինչ առաջանում է այդ չորս տարրերի տարբեր համակցություններից և գտնվում է անընդհատ շարժման ու փոփոխության վիճակում: Շիրակացին «Տիեզերագիտություն» աշխատության մեջ համադրելով հավատի և բանականության, գիտության և աստվածաբանության հիմնախնդիրները, հիմնավորում է, որ բնության ուսումնասիրության հարցում հեթանոս իմաստասերների հայացքները չեն հակասում աստվածաբանական մեկնություններին և կարող են արդյունավետ աղբյուրներ դիտվել: Նրա համոզմամբ բնական գիտությունների և քրիստոնեական հավատի ճշմարտությունները չեն հակասում միմյանց:

Շիրակացու համոզմամբ գիտության մեջ վիճահարույց հիմնախնդիրների լուծման ուղին փորձն է: Փորձի շրջանակներում նա կարևորում է նաև շրջելու, լսելու, տեսնելու միջոցով ձեռք բերված գիտելիքների հավաստիությունը: Շիրակացուն հոգեհարազատ է և արիստոտելյան դեդուկցիայի միջոցով ճշգրիտ գիտելիքներ ձեռք բերելը: Գի-

ունելով ի նկատի նրա ստուգման հարցում նա փորձի հետ կարևորում է և տրամաբանական հիմնավորվածությունը:

Ընդունելով հանդերձ երկնային լուսատուների արարչագործված լինելու գաղափարը Շիրակացին հանգամանորեն մերժում է դրանց գերբնական ունակությունների և մարդկանց ճակատագիրը կանխորոշելու գաղափարը: Նրա համոզմամբ երկնային լուսատուները անշունչ գոյացություններ են և չեն կարող իրենցով պայմանավորել մարդկանց ճակատագիրը: Դրանք իրենց բնույթով չեն կարող լինել չար կամ բարի, հետևաբար մարդկանց վարքագիծը ևս կախված չէ դրանցից:

6. ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԲՆԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում բնափիլիսոփայական մտածողությունը մի կողմից թափանցեց տիեզերքի խորքերը, մյուս կողմից էլ ծեռնամուխ ոեղավ մարդու հոգեկան ու ֆիզիոլոգիական գործընթացների ուսումնասիրությանը: Մխիթար Հերացին (12-րդ դար) «Ձերմանց մխիթարություն» աշխատության մեջ հետազոտության առարկա դարձրեց մարդուն, նրա հոգեկան աշխարհն ու ֆիզիոլոգիական գործընթացները: Նա տենդային հիվանդությունների ախտաբանության, կանխարգելման և բուժման համակարգում զգալի տեղ հատկացրեց նաև պսիխոթերապիային, երաժշտական ներգործությանը: Ընդգծելով օրգանիզմի և միջավայրի փոխադարձ կապը, Հերացին նշում է, որ մարդու վրա զգալի ազդեցություն է թողնում աշխարհագրական միջավայրը, կլիման սննդամթերքի որակը, սննդի ռեժիմը, աշխատանքի բնույթը, տարիքը, խառնվածքը, սովորույթները, հոգեկան վիճակը: Հերացին տարբերակում է երեք հոգի (շունչ), հոգի բնութեան (գտնվում է լյարդում), հոգի կենդանութեան (գտնվում է սրտում), հոգի զգայության (գտնվում է գլխի առաջին կիսագնդում): Մարմնի հետ մահանում է և հոգին: Մարդու օրգանիզմի կենդանության հիմքը գլխուղեղն է, որը գործում է հինգ զգայարանների միջոցով: Գլխուղեղն ունի երեք փոսիկներ, առաջինում տեղավորված է տեսողության նյարդը, մեջտեղում՝ բանականության կենտրոնը, երրորդում՝ հիշողության կենտրոնը: Հերացին բավականին խորությամբ ուսումնասիրեց մարդու անատոմիան և ֆիզիոլոգիան, հիմնավորեց, որ հիվանդությունը օրգանիզմի ֆունկցիոնալ գործունեության խախտումն է, և այն բուժելու համար պետք է նախապես պարզել դրա առաջացման պատճառները:

IV ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

XIV-XVI դարերում եվրոպական պետություններում արմատական փոփոխություններ է տեղի ունենում հասարակության տնտեսական, քաղաքական, գիտական ոլորտներում: Անտիկ գրականության, արվեստների, փիլիսոփայության արժեքների հիմքի վրա ձևավորվում է բարոյագեղագիտական, մարդաբանական նոր համոզմունք, որն ընդունված է անվանել հումանիզմ (լատիներեն humanus - մարդկային): Մարդակենտրոն այդ մտածելակերպը լույսի շող էր կրոնական մոլեռանդ միջավայրում: Միջնադարյան աստվածակենտրոն աշխարհայացքի կողմից նվաստացած մարդը աստիճանաբար հասնում է ինքնահաստատման և ինքնակատարելագործման: Փիլիսոփաների, արվեստագետների աշխատություններում մարդը դառնում է աստվածային արարչագործության շարունակող: Աստծո կողմից ամբողջ կյանքում ապաշխարելու դատապարտված մարդը հանկարծ գիտակցում է, որ կյանքն անիմաստ է առանց երկրային գործերի և հոգևոր ու նյութական հաճույքների: Ինկվիզիցիայի թանձր խավարը ցրող մարդը հասկանում է, որ աղոթքի հետ մեկտեղ չափազանց կարևոր է իր աշխատասիրության, տաղանդի, գիտելիքների վրա հենվելը: Պայծառացած մարդը սկսեց մտորել, որ հարկ չկա հրաժարվել աշխարհիկ վայելքներից՝ երկնային թագավորությանը արժանանալու համար: Դա բարձրագույն բարիքի, զգայական և հոգևոր բավականության, հաճույքի վերաբերյալ սոկրատյան, ստոիկյան, էպիկուրյան և քրիստոնեական ըմբռնումների զուգակցում էր: Այդ համադրությունը աշխարհիկը հավասարեցնում էր երկնայինին, նյութականը՝ հոգևորին: Երկնայինով զմայլվելը դառնում է անհրաժեշտ, բայց ոչ բավարար, կյանքի իմաստն ըմբռնելու և այն վայելելու համար: Մարդու ինքն իրեն ճանաչելու սպահանջն ի վերջո հանգեցրեց՝ ծնվածը մինչ մեռնելը պետք է վայելի համոզմունքի ձևավորմանը: Մարդն ի վերջո հասկացավ, որ բոլորովին էլ արատավոր չէ զմայլվելու հետ մեկտեղ ճաշակելու ծգտումը:

Մեծագույն հումանիստ մտածողներ Դանթե Ալիգիերին, Ֆրանչեսկո Պետրարկան, Ջովանի Բոկաչիոն, Լեոնարդո դա Վինչին, Միշել Մոնտեն, Ֆրանսուա Ռաբլեն, Ալբրեխտ Դյուրերը, Վիլյամ Շեքսպիրը, Էրազմ Ռոտերդամցին հիմնավորում էին, որ մարդու մեջ կարևորվում է ոչ թե ծագումը, կամ սոցիալական դիրքը, այլև անձնական հատկութ-

յունները: Հասարակության կողմից գնահատվում է մարդու խելքը, կըրթությունը, ստեղծագործական էներգիան, ձեռներեցությունը, արժանապատվության զգացողությունը: Այս ժամանակաշրջանում կատարյալ մարդ է համարվում ուժեղ, տաղանդավոր, բազմակողմանիորեն զարգացած անձնավորությունը:

Հումանիզմին բնորոշ է ազատախոհական մտայնությունը: Այդ գաղափարների զարգացումն արտացոլվեց անգամ բնական օրինաչափությունների բացատրություններում: Հումանիտար մտածողները հանդուրժողականություն ցուցաբերելով կրոնական դավանաբանական հիմնախնդիրների նկատմամբ, չմերժելով քրիստոնեության դերն ու նշանակությունը, այնուամենայնիվ աստծուն համարում էին միայն արարչագործ արարիչ: Հիմնավորվում էր, որ աստված ստեղծելով աշխարհը և այն շարժման մեջ դնելով, հետագայում ոչ մի միջամտություն չի ցուցաբերում այդ ընթացքին: Աստված չի միջամտում նաև մարդկանց կյանքին: Մարդիկ ազատ են իրենց գործողություններում, բայց պետք է խելամիտ գործեն: Նրանց համոզմամբ մարդկային ճանաչողության հնարավորությունները անսահման են, քանզի մարդու բանականությունը նման է աստվածային բանականությանը: Պետրարկան միջնադարյան աստվածային իմաստությունը փոխարինեց մարդկային իմաստնությամբ:

Հումանիզմի դարաշրջանի մարդկանց կյանքը ամբողջովին թափանցված է արվեստով: Փիլիսոփաների, արվեստագետների ստեղծագործություններում գովերգվում է մարդու մարմնական գեղեցկությունը և հոգեկան հարստությունը: Անգամ կրոնական թեմաներով ստեղծագործություններում ընդգծվում է աշխարհիկը և մարմնականը: Դանթեն «Աստվածային կատակերգություն» պոեմում ոչ միայն կատարելության հասցրեց դժոխքի և դրախտի նկարագրությունը, այլև Բեատրիչեի կերպարով կերտեց գեղեցկության և իմաստության անձեռագործ հուշարձան:

Ձևավորվող հումանիստական և անհատապաշտական նոր աշխարհայացքում նյութական արժեքների կողքին դրվում էր նաև հոգևոր արժեքները: Փիլիսոփայության, արվեստի, գիտության ոլորտներում ուշադրությունը կենտրոնացվում է մարդու բնույթի, էության ըմբռնումների վրա: Ուսումնասիրության օբյեկտ է դառնում հույսերով, կենսախնդությամբ օժտված մարդը: Պիկո Դելա Միրանդոլան, Մարսիլիո Ֆիչինոն, Նիկոլայ Կուզանացին և այլոք շեղվելով կրոնական գաղափարախոսությունից, հենվելով անտիկ փիլիսոփայության և հոգևոր մշա-

կույթի արժեքների վրա, ստեղծեցին մարդու մասին համընդհանուր ուսմունք: Դա աստվածաբանական մտածողությանը ոչ հակադիր աշխարհընթացում էր, որում անտիկ փիլիսոփայության և գրականության արժեքները հաշտեցվում էր քրիստոնեության դավանաբանական սկզբունքների հետ: Մարդակենտրոն այդ աշխարհայացքում աստծուց թողություն հայցող անձը դառնում է ինքնավստահ ստեղծագործող էակ: Այդպիսի էակում ամբողջականացվում էր բնականը և բանականը, աշխարհիկը և աստվածայինը: Լորենցո Վալլայի պատկերավոր արտահայտությամբ մարդը պետք է խուսափի տառապանքներից և ձգտի զգայական ու հոգևոր բավականության, քանզի հաճելին նաև օգտակար է: Վալլան «Ճշմարիտ և կեղծ բարիքի մասին» աշխատության մեջ հիմնավորում է, որ մարդը երջանիկ լինելու համար պետք է օգտվի բնության բարիքներից:

Հումանիզմը ձերբազատվեց աստծո նկատմամբ կրոնական խանդոտությունից և մարդկանց հայացքը նպատակաուղղեց դեպի աշխարհիկը: Դանտեն, Պետրարկան, Վալլան հիմնավորում էին, որ մարդը իր շահերը պետք է զուգակցի հասարակական շահերի հետ: Մարդն իր գործունեությամբ, վարվելակերպով պետք է օգտակար լինի ոչ միայն իր ընտանիքին, այլև հասարակությանն ու հայրենիքին: Նա իր հմտությամբ, խելքով կարող է հետևել բնության օրենքներին և մեծ ծառայություն մատուցել հայրենակիցներին: Հումանիստների համոզմամբ սերը բնության նկատմամբ ոչ միայն անձնական երջանկության հասնելու միջոց է, այլև բնական բարիքները մարդկանց ծառայեցնելու հնարավորություն: Բնության նկատմամբ տածած սերը տանում է դեպի աստծո էության փառաբանմանը, քանզի աստծո ստեղծած աշխարհը կատարյալ է ու բարի: Էրազմ Ռոտերդամցու համոզմամբ աշխարհը ստեղծվել է կատարյալ և մարդը չպետք է խախտի այդ կատարելությունը: Մարդը միշտ պետք է հետևի բարոյականության բնական կանոններին: Մարդը կարող է այդպես վարվել, քանզի նա ոչ միայն արարված, այլև արարող էակ է: Կուզանացու համոզմամբ աստվածայինի և մարդկայինի հակադրամիասնություն կազմող էակը գգայության, բանախոհության միջոցով ճանաչում է աշխարհը, բանականությամբ հասնում է աստծո կատարելության, արարչագործության ըմբռնմանը: Ճանաչողության այդ գործընթացում էլ կատարելագործվում է նրա բնույթը: Մարդուն դիտելով որպես ճանաչող և ստեղծագործող էակ Ֆիչինոն հիմնավորում է, որ երկրային կյանքում կարելի է հասնել կատարյալ երջանկության: Մարդու բարոյական կատարելագործվելը

իրականանում է ինտելեկտուալ ստեղծագործության ճանապարհով: Մարդն արարող, ստեղծագործող ինքնակատարելագործվող էակ է: Ճանաչողության հզոր ունակության շնորհիվ նա կարող է հասնել աստծո էության ըմբռնմանը: Պիկո Դելա Միրանդոլան շեշտադրելով մարդու ճանաչողական ունակությունները հիմնավորում է, որ փիլիսոփայական գիտելիքներին տիրապետելու շնորհիվ մարդը կարող է հասնել հրեշտակային կատարելության: Փիլիսոփայությունը մարդուն հաղորդակից է դարձնում ազատ մտածելու և գործելու հմտություններին: Դա նաև ինքնակատարելագործման ուղի է: Միայն այդպիսի ճանապարհով մարդը կձերբազատվի հեղինակությունների ազդեցությունից և կըմբռնի բարոյական առաքինության, համընդհանուր բարիքի էությունը:

2. ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Հումանիզմի քաղաքական միտվածությունը XVII-XVIII դարերում եվրոպական երկրներում արժեքավորվեց որպես լուսավորականություն: Վոլտերը, Հերդերը, Դիդրոն, Ռուսոն, Լամետրին, Հելվեցիուսը, Հոլբախը և այլոք փաստարկելով կալվածատիրական հարաբերությունների դաժանությունը, թագավորական իշխանության անսահմանելիությունը, կրոնական մոլեռանդության վնասաբերությունը հիմնավորում էին, որ բարու, արդարության, գիտության, կրթության տարածման ու ներդրման միջոցով կարելի է փոխել դաժան բարքերն ու կենցաղը: Հասարակության արմատական վերափոխման հարցում գլխավոր դերը հատկացնելով բանականությանը, կրթությանը, դաստիարակությանը լուսավորիչները կալվածատիրական հարաբերությունները համարում էին անբնական ու անբանական և առաջադրում էին քաղաքական ազատության, մարդկանց հավասարության պահանջներ: Հիմնավորելով, որ բանականությունը վերափոխիչ մեծ ուժ է, լուսավորիչները մարդկանց ուշադրությունը կենտրոնացրեցին դաստիարակության խնդիրների վրա: Նրանց համոզմամբ մարդկանց կրթելու և դաստիարակելու միջոցով կարելի է արմատախիլ անել տգիտությունը, սնոտիապաշտությունը, բռնությունը և ներդնել մարդասիրական սկզբունքներ, դեմոկրատական հարաբերություններ: Հիմնավորելով, որ վատ բարքերը սոցիալական վատ միջավայրի արդյունք են, լուսավորիչները ցանկանում էին մարդկանց կրթելով և դաստիարակելով փոխել սոցիալական վատ միջավայրը, վերացնել թագավորական բռնություններն ու կամայականությունները: Դա նոր ձևավորվող ու պատմական ասպարեզ ելնող բուրժուազիայի ինքնահաստատման և ազատ ձեռներեցու-

թյան իրավունք նվաճելու գաղափարախոսություն էր: Այդ գաղափարախոսության նպատակն էր գիտության շնորհիվ հաստատել «բանականության թագավորություն» և հասարակական-քաղաքական հարաբերությունները վերափոխել ազատության, եղբայրության, հավասարության արժեքների ներդրմանը համապատասխան: Ենթադրվում էր, որ գիտության նվաճումները տարածելով հասարակության լայն խավերի ոլորտում կարելի կլինի արմատապես փոխել միապետական կարգերը և տնտեսական, սոցիալական բարեկեցություն ապահովել բոլորի համար: Այդ գործում կարևորվում էր նաև լուսավորված միապետի դերը: Նման անձը մեղմելով հասարակության մեջ տիրող իրավական անհավասարությունը, բռնությունները, բոլորի համար կապահովեր հավասար պայմաններ: Ջոն Լոկը «փորձ մարդկային բանականության մասին» աշխատության մեջ պահանջում էր, որպեսզի հասարակության մեջ բոլորն էլ ունենան ազատության և սեփականության իրավունք: Իշխանությունները հասարակության բոլոր անդամների համար ստեղծեն շահույթ ստանալու հավասար պայմաններ: Ադամ Սմիթի համոզմամբ միայն ազատ շուկայական հարաբերությունների ոլորտում մարդիկ կգտնվեն իրավահավասար պայմաններում և կկարողանան լիարժեք ներդնել իրենց կարողությունները: Կանտը լուսավորականությունը դիտում էր որպես բանականության շնորհիվ բարոյական կատարելության հասնելու ուղի:

Կրոնական մոլեռանդությանն ու ֆատալիզմին հակադրելով հանդուրժողության սկզբունքը Մոնտեսկյոն մտածելակերպի համար պատժելը համարում է ազատության երաշխիքի ոչնչացում: Պատժման ենթակա է միայն մարդու կատարած գործողությունը և ոչ թե հավատալիքների ու գործող օրենքների հետ տարամիտվող մտքերը: Ժան-Ժակ Ռուսսոն «Խոհրհրդածություն մարդկանց միջև անհավասարության ծագման և հիմքերի մասին», «Հասարակական դաշինք» աշխատություններում քննարկման հարց դարձնելով անհատի ճակատագիրը, հիմնավորեց, որ մասնավոր սեփականությունն է եղել և քաղաքացիական հասարակության ձևավորման և անհավասարության առաջացման պատճառը: Ըստ Ռուսսոյի աշխատանքի հասարակական բաժանումը դառնալով հասարակության առաջընթացի պայմաններից մեկը միաժամանակ մարդկային կյանքի բնական ներդաշնակության խարխլման պատճառ է հանդիսացել: Մասնագիտացումը մի կողմից նպաստում է արհեստների ծաղկմանը, մյուս կողմից էլ մարդկանց կախման մեջ է դնում միմյանցից: Արդյունքում ստացվում է տարբեր զբաղմունքի տեր մարդ-

կանց օտարացում, մեկուսացում: Մարդկային տառապանքների հիմնական պատճառներից մեկը Ռուսսոն համարում է մարդու դրության և ցանկությունների, պարտքի և հակումների միջև եղած հակասությունը: Ինտելեկտուալ զարգացումը նպաստել է մարդու մեջ նախասկզբնական ներդաշնակության, պահանջմունքների և ընդունակությունների ճիշտ հարաբերակցության կործանմանը, թուլացրել է մարդու բնական հզորությունը: Քաղաքակրթության հակասությունների աղբյուրը սոցիալական անհավասարությունն է: Պետությունը ևս այդ անհավասարության արդյունքն է: Մարդը ծնվում է ազատ, բայց ամենուր շղթայված է: Ըստ Ռուսսոյի, հասարակության հարուստների և աղքատների բաժանվածության վերացման համար պետք է վերացնել մասնավոր սեփականության անհավասարաչափ բաշխվածությունը: Դրան հասնելու համար պետք է մարդու մեջ զարգացնել ազնվություն, ինքնուրույնություն, ակտիվություն, նրան հեռու պահել ցոփ ու շվայտ կյանքից:

Հայ իրականության մեջ լուսավորական շարժման գաղափարակիրներ դարձան Մ. Բաղրամյանը, Շ. Շահամիրյանը, Խ. Աբովյանը, Ստ. Նազարյանը, Գր. Արծրունին և այլոք: Բանականությունը համարելով ճշմարիտ ճանաչողության միակ աղբյուր, նրանք հիմնավորում էին, որ բանականությունը աստծո շնորհ է և տրվել է մարդուն ոչ թե իր նմանի, այլ բնության վրա իշխելու համար: Մարդը պետք է ազատ լինի: Իսկ ազատության հասնելու լավագույն ուղին նրանք համարում էին լուսավորությունը: Հայ երիտասարդությանը կոչելով հաղորդակից լինել եվրոպական լուսավորականության արժեքներին, նրանք ցանկանում էին այդ արժեքների ներդրման շնորհիվ ասիականը եվրոպականացնել ու արմատապես փոխել կովկասյան իրականությունը:

3. ԳԻՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

XVII-XVIII դարերում հավատի և բանականության, աստվածայինի և աշխարհիկի միջնադարյան հարցադրումները փոխարինվում են գիտափիլիսոփայական հիմնախնդիրներով: Կրոնական դոգմաների, աստվածաբանական ճշմարտությունների, հեղինակությունների անկասկածելիության սկզբունքները փոխարինվում են փորձի և բանականության հեղինակությամբ: Արմատական փոփոխությունների այդ գործընթացում գոյաբանական հիմնախնդիրները մղվում են հետին պլան՝ իրենց տեղը զիջելով իմացաբանական և մեթոդաբանական բնույթի հարցադրումներին: Մտածողների հայացքը աստվածաբանական հիմնախնդիրներից տեղափոխվում է բնության ուսումնասիրության ո-

լորտը: Հետաքրքրասեր բնափիլիսոփան չբավարարվելով կրոնական դոգմաների ընձեռած հնարավորությունից ձգտում է իր պատկերացումներով, ըմբռնումներով հասկանալ ծավալվող իրադարձությունների բնույթը, անձնական նախաձեռնությամբ, փորձերով բացահայտել բնության գաղտնիքները: Մարդը խորհում է իր ճանաչողական ունակությունների հնարավորություններն ընդարձակող հնարների միջոցների մասին:

Գիտական հետազոտության արդյունավետ մեթոդի մշակման գործում զգալի ներդրում է կատարել Ֆ. Բեկոնը (1561-1626): «Նոր օրգանոն» աշխատության մեջ Բեկոնը, փիլիսոփայությունը և գիտությունը նպատակադրելով մարդկանց բարեկեցության բարձրացման խնդրի լուծմանը, հիմնավորում է, որ ճանաչելով բնության օրենքները մարդը կարող է դրանք ծառայեցնել իր կարիքների բավարարմանը: Իսկ այդ խնդրի իրականացման համար կարևորում է հետազոտության նոր մեթոդի մշակման հարցադրումը: Փիլիսոփայության խնդիրը համարելով բնության ուսումնասիրության միջոցով բնական օրինաչափությունների բացահայտումը, Բեկոնը մշակեց հետազոտության նոր մեթոդ, արիստոտելյան «օրգանոն»-ից զանազանվող «նոր օրգանոն»: Նրա համոզմամբ արիստոտելյան դեդուկցիան ընդհանուրից ընթանալով դեպի մասնավորը, ճշմարիտ գիտելիքի հայտնաբերման արդյունավետ միջոց չի կարող լինել: Բեկոնի կարծիքով գիտական ճանաչողության արդյունավետ մեթոդը պետք է մասնավորից ընթանա դեպի ընդհանուրը: Այդպիսի մեթոդը ինդուկցիան է: Հետազոտության ինդուկտիվ մեթոդը Բեկոնը համարում է բնության իմացության, նրա օրենքները բացահայտելու բանալի: Նրա կարծիքով ինդուկտիվ մեթոդն այդպիսին դառնալու համար նախ մարդու բանականությունը պետք է մաքրվի կեղծ պատրանքներից, սուբյեկտիվ նախապաշարումներից, աշխարհայացքային տարբեր բնույթի ազդեցություններից՝ սեռի, քարանձավի, հրապարակի, թատրոնի պատրանքներից կամ կուռքերից:

Սեռի կուռքի տակ ըմբռնվում է զգայությունների անկիրթությունը, զգացմունքներից, կրքերից ներշնչվելը, հոգեկան միակերպությունից, սահմանափակությունից չձերբազատվելը: Բեկոնի կարծիքով մարդիկ շրջակա աշխարհի, բնության մասին դատում են իրենց սուբյեկտիվ պատկերացումներով՝ հաշվի չառնելով այլոց ըմբռնումները, տվյալ երևույթի տարաբնույթ դրսևորումները: Հաճախ մարդը կամք ու կորով չցուցաբերելով դժվար ըմբռնելի խնդիրը լուծելու, հետազոտու-

թյունը շարունակելու գործում, ընդունում է նպատակին հասնելու ավելի հեշտ ճանապարհ, որով ճշմարիտ է համարում թվացողը, այլոց արտահայտած կարծիքները:

Քարանձավի կուռքի տակ հասկացվում է մարդու հոգեկան կերտվածքի, դաստիարակության անհատականությունները: Ամեն մարդ ունի յուրահատուկ հոգեկան կերտվածք, ներաշխարհ, որը զգալի հետք է թողնում աշխարհը ճանաչելու նրա հետազոտությունների, արված եզրահանգումների վրա: Դրանով է պայմանավորված, որ միևնույն երևույթի ուսումնասիրության ժամանակ մարդիկ ցուցաբերում են տարբեր մոտեցում, կատարում են տարբեր եզրահանգումներ: Հասարակական կյանքի զարգացման գործընթացում ոմանք առաջնությունը տալիս են նորին, մյուսները չափանիշ են դարձնում ավանդականը, անցյալի արժեքները: Անգամ զանազան օբյեկտների ուսումնասիրության ժամանակ ոմանք առաջնորդվում են տարբերությունները համադրելով, մյուսները՝ ընդհանրությունները ի մի բերելով: Քարանձավի կուռքը առավելապես բնորոշ է գիտության բնագավառի մարդկանց, որոնք իրենց սուբյեկտիվ նախապատվությունների, համակրանքների, հակակրանքների, պատճառով մի դեպքում առաջնությունը տալիս են նորին, մեկ այլ դեպքում հնին:

Բեկոնի համոզմամբ սեռի և քարանձավի կուռքերը բնածին են: Դրանք մարդու հոգեկանի անբաժանելի մասն են կազմում: Դրանց արմատները գտնվում են անձի հոգեկանում և միշտ էլ բացասական ներգործություն կարող են թողնել նրա ուսումնասիրությունների արդյունքների ամփոփման վրա: Դրանից իսպառ խուսափել հնարավոր չէ: Սակայն հասկանալով ու ըմբռնելով դրանց թողած բացասական ազդեցությունը, կարելի է փոքրացնել, կամ կանխել հնարավոր շեղումներն ու սխալները:

Հրապարակի կուռքի տակ իմաստավորվում է բառերի, հասկացությունների սխալ գործածությունը: Հաճախ մարդիկ իրենց արտահայտություններում գործածում են այնպիսի բառեր, որոնց իմաստը հստակ և խորությամբ չեն պատկերացնում: Նման հանգամանքը փիլիսոփայական շատ քննարկումների հիմք է հանդիսացել: Հատկապես դա չափազանց ընդգծված է դրսևորվում Միջնադարյան սխոլաստիկական փիլիսոփայության մեջ: Թ. Աքվինացու և այլոց աշխատություններում առկա են բազմաթիվ անորոշ, խրթին արտահայտություններ, անիմաստ հիմնավորումներ, անըմբռնելի ձևակերպումներ: Այդպիսի թյուրիմացություններից խուսափելու համար Բեկոնը պահանջում է

ճիշտ կազմել և ըստ բովանդակության օգտագործել բառերն ու հասկացությունները:

Թատրոնի կուռքի տակ հասկացվում է փիլիսոփայական տարբեր հոսանքների թողած ազդեցությունը: Բեկոնի կարծիքով մարդու աշխարհայացքի ձևավորման վրա զգալի հետք կարող են թողնել սնոտիապաշտությունը, սոփեստությունը, էմպիրիզմը, ռացիոնալիզմը: Նման հանգամանքի պատճառով միջնադարյան փիլիսոփայական միտքը, գտնվելով կրոնի ճնշիչ ազդեցության տակ, ընդունեց սխոլաստիկական բովանդակություն և հեռացավ բնության օրինաչափությունների ուսումնասիրություններից: Նման շեղումներից ձերբազատվելու համար պետք է խուսափել փիլիսոփայական հոսանքներին կուրորեն հետևելուց:

Պահանջելով բանականությունը մաքրել կուռքերից, կեղծ պատկերացումներից, Բեկոնը նպատակադրվել էր ստեղծել այնպիսի մեթոդ, որը հիմնվեր փորձի դերի ու նշանակության առաջնայնության ընդունման սկզբունքների վրա և դառնար հայտնագործության արվեստ: Այդպիսի մեթոդի մշակման ճանապարհին նա պարզաբանումներ է տալիս «մրջյունի», «սարդի», «մեղվի» մեթոդների վերաբերյալ: Բեկոնի համոզմամբ եթե ուսումնասիրողը գլխավորը չի զատում երկրորդականից և հետազոտության բոլոր տվյալները միանշանակ կարևորում է, առաջնորդվում է «մրջյունի» մեթոդով, որը քիչ արդյունավետ է: Այդպիսին է նաև «սարդի» մեթոդը, քանզի այդ դեպքում ուսումնասիրողը հաշվի չի առնում ուրիշների կարծիքները և սահմանափակվում է միայն իր պատկերացումների ու եզրահանգումների շրջանակում:

Բեկոնի կարծիքով արդյունավետ է միայն «մեղվի» մեթոդը, որով առաջնորդվողը էականը կառանձնացնի ոչ էականից, գլխավորը՝ երկրորդականից, որի շնորհիվ կբացահայտի ուսումնասիրվող օբյեկտի հիմնական և բնորոշ հատկությունները: Ճիշտ մեթոդի ընտրությունը գիտնականի հաջողության երաշխիքն է, քանզի այն լապտերի նման կլուսավորի նրա ուղին:

Առանձնացնելով ճանաչողության երեք ընդունակություն՝ հիշողություն, երևակայություն, բանախոհություն Բեկոնը հիմնավորում է, որ բնական և քաղաքացիական պատմությունը հենվում է հիշողության վրա, պոեզիան՝ երևակայության վրա, բնագիտությունը, մաթեմատիկայի, փիլիսոփայությունը՝ բանախոհության վրա: Ըստ Բեկոնի իմացության անմիջական խնդիրը պետք է լինի առարկաների գործող պատճառների կամ վերջնական պատճառների (նպատակի) հետազո-

տությունն ու գիտությունների համակարգում չի անտեսում նաև մարդաբանության դերը, որում հասարակության վերաբերյալ գիտությունը անվանում է քաղաքականություն, մարդու մարմնի մասին գիտությունը՝ ֆիզիոլոգիա, հոգու մասին գիտությունը՝ հոգեբանություն:

Բեկոնյան մատերիալիզմի համակարգող Թոմաս Հոբսը աշխարհում ամեն ինչ դիտում է որպես մատերիական տարրերի շարժման արդյունք, իսկ մարմինների շարժումը՝ հրման և լարման միջոցով մեկ մարմնից մյուսին փոխանցվող մեխանիկական օրենքների արտահայտություն: Մարդու հոգևոր կյանքը ևս այդ օրինաչափության դրսևորումն է: Մարդիկ և կենդանիները լոկ բարդ մեխանիզմներ են, որոնք անշունչ մարմիններից տարբերվում են միայն նրանով, որ ունեն նախկին տպավորությունները պահպանելու և դրանք նոր տպավորությունների հետ համեմատելու ընդունակություն ունեցող օրգաններ:

Հիմնավորելով, որ մտածողությունը ներհատուկ է մատերիային և ինքնուրույն գոյություն չունի, Հոբսը ժխտեց ինչպես աննյութական հոգու և աստծու, այնպես էլ բնածին գաղափարների գոյությունը: Գաղափարների և ողջ իմացության աղբյուրը զգայություններն են: Օդի տատանումը մարդու մոտ ծնում է ձայնի գաղափարներ: Եթերի տատանումները՝ լույսի և գույնի գաղափարներ: Այդ գաղափարները հետագայում վերամշակվում են մտքի կողմից, որն իրականացնում է համեմատման, կապակցման և բաժանման ակտիվ գործունեություն: Զգալի հետաքրքրություն է ներկայացնում նաև Հոբսի ուսմունքը պետության և իրավունքի մասին: Հասարակության զարգացումը նա բաժանում է երկու փուլերի՝ բնական և քաղաքացիական: Բնական փուլում մարդիկ ղեկավարվում են ինքնապաշտպանության բնական օրենքով, որում իրավունքը համընկնում է ուժի հետ: Այդ անարդարությունը փոխելու համար մարդիկ որոշում են իրենց իրավունքի մի մասը փոխանցել ուրիշներին, որի վերաբերյալ կնքված դաշինքը դնում է քաղաքացիական փուլի հիմքը: Ստեղծվում է միասնական կամքի պետություն, որի կատարյալ ձևը, ըստ Հոբսի, միապետությունն է: Հասարակության բոլոր անդամները պետք է ենթարկվեն միապետի աշխարհիկ իշխանությանը: Սակայն իշխանության հրամանի և քաղաքացու ինքնապահպանության բնական ձգտման միջև բախում առաջանալու դեպքում Հոբսը քաղաքացիներին իրավունք էր վերապահում ապստամբելու բնական իրավունքը ոտնահարող իշխանության դեմ: Երբ հպատակը նախկին իշխանության հովա-

նավորությունից չի օգտվում նա ազատ է ենթարկվելու նոր իշխանությանը:

Մարդկային ճանաչողության կարողությունների վերաբերյալ խորհրդածությունները XVII-XVIII դարերում ամբողջականացվել են սենսուալիզմի և ռացիոնալիզմի ուսմունքների տեսքով: Որպես իմացաբանական ուղղություններ, դրանք զանազանվում են միմյանցից գիտելիքի աղբյուրի, ճանաչողության ձևի և հնարավորությունների հիմնավորման հարցերով:

ՍԵՆՍՈՒԱԼԻԶՄԸ իմացության գործընթացում կարևորում է զգայությունների դերը: Գիտելիքներ ձեռք բերելու հարցում կարևորելով զգայությունների և փորձի դերը սենսուալիստները ողջ ճանաչողությունը բխեցնում են զգայական փորձից: Սենսուալիստական համոզմունքներում գիտական ճանաչողությունը, անգամ մարդու կենսափորձը հիմնվում է զգայական ընկալումների վրա: Լոկի պատկերավոր արտահայտությամբ «ինտելեկտում ոչինչ չկա, որը նախապես չլիներ զգայություններում... գիտակցությունը սկզբում սպիտակ թղթի նման մաքուր է... միայն փորձի շնորհիվ է նա ձեռք բերում բովանդակության գաղափարներ»: Լոկը «փորձ մարդկային բանականության մասին» աշխատության մեջ քննադատելով բնածին գաղափարների մասին Դեկարտի համոզմունքները, հիմնավորում է, որ մարդու բանականության մեջ բնածին գաղափարներ չկան, քանզի բոլոր տեսակի գաղափարները ձևավորվում են զգայությունների և փորձի միջոցով:

Բեկոնը ևս Լոկի նման ճանաչողության միակ հավաստի աղբյուր է դիտում փորձը: Սակայն փորձի տակ իմաստավորում է ոչ միայն զգայությունների տվյալներն, այլև դիտարկումը և փորձարարությունը: Իսկ Բերկլին, միակողմանիորեն բացարձակականացնելով զգայությունների դերը ճանաչողության գործընթացում, հիմնավորում է, որ մարդու համար կարևորը սուբյեկտիվ փորձն է, քանզի ճանաչող սուբյեկտը գործ ունի իր զգայությունների և ներքին փորձի հետ և չի կարող դուրս գալ դրա շրջանակներից:

Սենսուալիստական մտածելակերպը կարող է ձևավորվել տարբեր հիմքերի վրա: Օրինակ, Լոկը զգայությունների աղբյուր է դիտում արտաքին աշխարհը: Իսկ Բերկլիի համոզմամբ զգայող սուբյեկտով է պայմանավորված իրերի, օբյեկտների գոյությունը: Նրա կարծիքով գոյություն ունենալ, նշանակում է լինել զգայելի: Այսինքն, առարկաները գոյություն ունեն այնքանով, որքանով դրանց մասին մտածում է աստված, հայում է ճանաչող սուբյեկտը: Միանգամայն այլ դիրքորոշում է

[illegible] Դավիդ Հյումը: Նրա կարծիքով ռեալ են միայն մարդու զգայությունները ու տպավորությունները: Գիտելիքը ձևավորվում է միայն զգայական ընկալումներից: Բանականությունը լոկ կարգավորում է այդ զգայական տպավորությունները:

Սենսուալիստական համոզմունք զարգացնող որոշ մտածողներ պարփակվելով փորձի նեղ շրջանակում հաշվի չեն առնում երևույթի բազմաբնույթ դրսևորումների հետևանքները: Նման համոզմունքն անվանվում է էմպիրիզմ: Էմպիրիկները հիմնվում են փորձի սահմանափակ արդյունքների վրա և դրանից զատ ոչինչ չեն նկատում:

ՌԱՑԻՈՆԱԼԻԶՄԸ գիտելիքի ձեռքբերման աղբյուրի և հնարների հարցադրումներում առաջնությունը տալիս է բանականությանը: Կասկածի տակ դնելով զգայական ճանաչողության հավաստիությունը Դեկարտը «Խորհրդածություններ մեթոդի մասին», «Մետաֆիզիկական խորհրդածություններ» աշխատություններում նպատակադրվում է մշակել գիտական ճանաչողության այնպիսի մեթոդ, որը հիմնվի բանականության, ինտելեկտուալ ինտուիցիայի և դեդուկցիայի վրա: Այդպիսի կարևոր և դժվար խնդիր լուծելու համար հարկավոր էր նախ ազատվել հեղինակությունների և փիլիսոփայական տարբեր հոսանքների ազդեցությունից: Նպատակադրվածն իրականացնելու համար դեկարտը դիմում է կասկածանքի մեթոդին: Մթոդաբանական այդ հնարով նա մերժում է գիտական հետազոտության գործընթացում հանդիպող անհարկի համոզմունքները:

Դեկարտը «Խորհրդածություններ մեթոդի մասին», աշխատության մեջ զարգացնելով արմատական կասկածի իր տեսությունը պահանջում էր. 1. գիտական հետազոտության գործընթացում խուսափել շտապողականությունից և ճշմարիտ համարել միայն այն դատողություններն, որոնք անկասկածելի են, պարզ ու հստակ, 2. հիմնախնդիրը լավագույն ձևով և հեշտությամբ լուծելու համար այն բաժանել բազմաթիվ պարզ մասերի, 3. հետազոտությունը սկսել պարզից և աստիճանաբար ընթանալ դեպի բարդը՝ կարևորելով բոլոր մանրուքները, 4. ուսումնասիրության պարզաբանումները, մեկնաբանությունները շարունակել այնքան, մինչև ամրակայվի լիակատար համոզվածություն:

Դեկարտը կասկածի էր ենթարկում մարդու գիտակցության մեջ առկա բոլոր գիտելիքների հավաստիությունը: Միակ անկասկածելին համարում էր «ես կասկածում եմ» դրույթը, քանզի կասկածել նշանակում է մտածել:

Դեկարտի համար ռացիոնալիզմը դարձավ նաև իմացության տե-

սության ելակետ: Թեև նա չմերժեց հավաստի գիտելիքների ձեռքբերման գործում զգայական փորձի դերը, այնուամենայնիվ դա համարում էր ոչ լիարժեք աղբյուր: Դեկարտի կարծիքով առարկաների էությունը հնարավոր չէ ըմբռնել զգայությունների և փորձի միջոցով: Նրա համոզմամբ հավաստի գիտելիքի աղբյուրը միայն բանականությունն է: Գոյություն ունեն բնածին գաղափարներ, որոնք կախված չեն փորձից: Բնածին գաղափարները ոչ թե պատրաստի վիճակում գտնվում են մարդու մտածողության մեջ, այլ նախատրված են և բացահայտվում են բանականության գործունեության ընթացքում: Այդպիսի գաղափարներ են «սուբստանցիա», «կեցություն», «Աստված»:

Դեկարտի կարծիքով բնածին գաղափարները գիտելիք, լրատվություն են տալիս, իսկ ինտելեկտուալ ինտուիցիան ապահովում է դրանց գիտակցումը, հավաստիությունը, ճշմարտացիությունը, քանզի այն բանականության բնական լույսն է:

Քննադատելով բեկոնյան ինդուկցիայի սահմանափակությունները Սպինոզան հիմնավորում է, որ հավաստի գիտելիքի ստացման միջոցը բանական ճանաչողությունն է: Նրա համոզմամբ բանական ճանաչողությունը հենվում է ինտուիցիայի վրա, որն աչքի է ընկնում բացարձակ հավաստիությամբ, պարզ է ու ակնհայտ:

Սենսուալիզմի և ռացիոնալիզմի ծայրահեղությունների յուրահատուկ համադրություն է իրականացնում Լայբնիցը: «Մոնադաբանություն» աշխատության մեջ զարգացնելով բազմաթիվ սուբստանցիաների մասին տեսությունը (գոյություն ունեն էներգիայով, կենսունակությամբ, ուժով, անհատականությամբ օժտված բազում հոգևոր ատոմներ՝ մոնադ սուբստանցիաներ) նա փորձում է հաղթահարել ֆիզիկականի և իդեալականի դուալիզմը, զուգորդել սենսուալիզմի և ռացիոնալիզմի ելակետային հիմնախնդիրները: «Նոր փորձեր մարդկային բանականության մասին» աշխատության մեջ Լայբնիցը մերժում է Ջոն Լոկի «մարդու հոգին ի ծնե նման է մաքուր թղթի» հայեցակետը: Նրա համոզմամբ մարդու հոգին ի ծնե դատարկ չէ: Ճանաչողությունը կարող է իրականանալ միայն որոշ գիտելիքների առկայության դեպքում: Այդպիսի գիտելիքները գոյություն ունեն հնարավորության ձևով և կարող են իրականանալ միայն զգայությունների շնորհիվ: Սակայն զգայական իմացությունը հենվում է մասնավոր օրինակների վրա և սահմանափակ բնույթ ունի:

Լայբնիցի համոզմամբ գոյություն ունեն երկու բնույթի ճշմարտություններ՝ փաստի և ներըմբռնման (ինտուիտիվ): Ներըմբռնման ճըշ-

մարտությունները վերլուծական այնպիսի դատողություններ են, որոնք անկախ են փորձի արդյունքներից: Դրանք հավերժական ճշմարտություններ են: Իսկ փաստի ճշմարտությունները այնպիսի գիտելիքներ են, որոնց հավաստիության հիմնավորման համար բավարար են միայն փորձի տվյալները:

4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

XVIII-XIX դարերի փիլիսոփայական մտքի զարգացման գործում զգալի ներդրում են կատարել գերմանացի մտածողներ՝ Կանտը, Ֆիխտեն, Շելլինգը, Հեգելը, Շոպենհաուերը և այլոք:

ԿԱՆՏԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆՆ ընդունված է բաժանել մինչքննադատական (մինչև 1775 թվականի հայացքները, որոնցում զարգացվում են բնափիլիսոփայական հիմնախնդիրներ) և քննադատական (1775-1804 թվականների ժամանակահատվածը, որում արծարծվում են իմացաբանական և մարդաբանական հիմնախնդիրներ) փուլերի:

Առաջին փուլում հատկանշական է «Երկնքի համընդհանուր բնական պատմություն և տեսություն» աշխատությունը, որում զարգացվում է տիեզերական գործընթացների համընդհանուր փոխներգործության գաղափարներ: Այդ աշխատության մեջ Կանտը հիմնավորում է, որ արեգակնային համակարգն առաջացել է ձգողական և վանողական ուժով օժտված տիեզերական սմպափոշու մասնիկների փոխներգործության միջոցով: Ըստ Կանտի, եթե ընդունենք, որ հեռավոր ժամանակներում միջմոլորակային դատարկությունները լցված են եղել մատերիայով, որը ցրված է եղել արեգակնային համակարգի զբաղեցրած տարածքում, ապա հնարավոր կլինի առանց որևէ արարչագործության ու աստվածային ուժի ընդունման, հենվելով միայն ֆիզիկայի օրենքների վրա, հիմնավորել, թե տարածության մեջ ցրված այդ նյութից ինչպես է առաջացել մեր արեգակնային համակարգությունը: «Տվեք ինձ մատերիա», - ասում է Կանտը, «և ես ցույց կտամ ձեզ, թե ինչպես պետք է նրանից առաջանա աշխարհը»: 1755 թվականին հրատարակած «Երկնքի համընդհանուր բնական պատմություն և տեսություն» գրքում Կանտը հիմնավորեց, որ Արեգակնային համակարգն առաջացել է մատերիական մասնիկների վիթխարի ամպափոշուց: Այդ ամպափոշուց Արեգակի և նրա մոլորակների կազմավորման գործընթացն ու հետագա զարգացումը բացատրվում է ամպափոշու մասնիկների ձգողական ու վանողական ուժերի փոխազդեցության մեխանիզ-

մով և Նյուտոնի հայտնագործած օրենքների օրինաչափությամբ: Կանտի տեսությունից բխում էր, որ տիեզերքի օբյեկտները, Արեգակը, Երկիրը, երկրի վրայի բուսական ու կենդանական աշխարհը գոյացել են որոշակի ժամանակահատվածում: Ընդ որում վերանում էր արտաքին հարվածի կարիքը, որովհետև շարժումը առաջանում է մոլորակների առաջացման հետ մեկտեղ: Բոլոր համակարգերի շարժման աղբյուրը տիեզերական համընդհանուր ձգողականության օրենքն է: Արժեքավոր է նաև Կանտի այն հիմնավորումը, որ դեպի Լուսին ուղղված կողմում Երկրի մակերեսի կետերը ընդգրկված լինելով երկրի շարժման մեջ և ձգվելով Լուսնի գրավիտացիոն դաշտից, առաջացնում են մշտական մակընթացային ալիք, որը ունենալով երկրի պտտման ուղղությանը հակադիր ուղղություն, դանդաղեցնում է երկրի պտույտը:

Քննադատական ժամանակաշրջանի հայացքներում Կանտը փորձում է հիմնավորել, թե 1. ի՞նչ է մարդը, 2. ի՞նչ կարող է իմանալ, 3. Ի՞նչ կարող է անել, 4. ինչի՞ վրա պետք է հույս դնի: «Զուտ բանականության քննադատություն», «Պրակտիկ բանականության քննադատություն», «Դատողականության քննադատություն» աշխատություններում Կանտը փորձում է հիմնավորել, թե ե՞րբ կարող ենք գիտելիքը համարել օբյեկտիվ և հավաստի: Նրա համոզմամբ իրերի բնույթի ճանաչողությունը պայմանավորված է մարդու բանականության ակտիվ գործունեությամբ: Մարդը ճանաչում է ոչ թե «ինքնին իրերը», այլ դրանց երևույթները: «Ինքնին իրերը», փորձի մեջ չեն տրվում, այդ պատճառով էլ անճանաչելի են: Մարդը ճանաչում է գիտակցության երևույթները: Իմացության առարկան այդ երևույթներն են: «Ինքնին իրերն» ազդում են մարդու զգայական օրգանների վրա և ծնում են տարակերպ զգայություններ: Այդպիսի զգայությունները կարգավորվում են զգայունական նախափորձային ձևերով՝ տարածության և ժամանակի միջոցով: Այսինքն, դասավորվում են ավանդական չափումներով և ամրագրվում են որպես տվողականություն: Այդպիսի վերափոխումների շնորհիվ ձևավորվում են ընկալումները, որոնք կրում են սուբյեկտիվ և անհատական բնույթ: Մտածողության ձևերի՝ հասկացությունների և կատեգորիաների վրա հիմնված բանականության գործունեությունը այդ ընկալումներին տալիս է անհրաժեշտ և համընդհանուր բնույթ: Այսպիսով, «ինքնին իրը» զգայական օրգանների հաղորդիչների միջոցով դառնում է սուբյեկտի գիտակցության նվաճում, «հայտնվում է նրան» և նա կարող է դրանց հետ կատարել որոշակի մտահանգումներ:

Իրերն ինչպես որ գոյություն ունեն սուբյեկտի գիտակցության մեջ

Կանտն անվանում է երևույթներ: Նրա կարծիքով մարդը կարող է ճանաչել, իմանալ միայն երևույթները: Իսկ թե ինչպես են իրերն իրենք իրենց, այսինքն, նրանց հատկություններն ու որակները, դրանց փոխհարաբերությունները սուբյեկտի գիտակցությունից դուրս, մարդը չգիտե և իմանալ էլ չի կարող: Մարդն իրերի մասին գիտե միայն այն ձևով, ինչպես նրանք տրվում են գիտակցությանը: Այդ պատճառով էլ «ինքնին իրերը» մարդու համար դառնում են անճանաչելի: Կանտի համոզմամբ «ինքնին իրերի» աշխարհը անհասանելի է զգայունակությանը: Այն փակ է տեսական բանականության, գիտության համար: Բայց դա չի նշանակում, թե այս աշխարհը հասանելի չէ մարդուն:

Կանտը ճանաչողությունը համարում է ապոսթերիորի (փորձի միջոցով ստացված) և ապրիորի (փորձից չկախված): Հավաստի գիտելիք կարելի է ստանալ միայն փորձի միջոցով տրվածի վերաբերյալ: Բանականությունը առանց փորձի տվյալների չի կարող ճանաչել մտահասանելի իրերը, քանզի ինքն է կառուցում ճանաչողության առարկան: Մարդը ճանաչում է աշխարհն այնքանով, որքանով այն ստեղծում է իր մտքում: Այսինքն, մարդը ճանաչում է իր մտքի գործունեության արդյունքները:

Կանտի կարծիքով իրերի աշխարհը («ինքնին իրեր») գոյություն ունի մարդու գիտակցությունից անկախ: Դրանք ներգործելով մեր զգայարանների վրա առաջացնում են զգայություններ: Այդ ճանապարհով ձեռք բերված լրատվությունը գիտելիք է իրերի երևութական կողմերի ու հատկությունների մասին: Իսկ «ինքնին իրերը» անճանաչելի են: Նրանց էությունը գտնվում է մեր ճանաչողության ունակության սահմաններից դուրս: Կանտի համոզմամբ մարդու գիտակցությունը ճանաչվող առարկային հաղորդում է այն ձևը, որի տակ միայն նա կարող է ճանաչվել: Այսինքն գիտակցությունը ինքն է ճանաչվող առարկային հաղորդում համընդհանուր և անհրաժեշտ գիտելիքի ձև: Ասել կուզի, որ ոչ թե մեր մտքի ձևերն են համակերպվում բնության իրերի հետ, այլ բնության իրերն են համակերպվում մտքի ձևերի հետ: Մարդու միտքը բնության մեջ կարող է գտնել միայն այն, ինչ ինքը ներդրել է նրա մեջ մինչև փորձը: Գիտելիքի ձևի առումով բնությունը, որպես համընդհանուր ու անհրաժեշտ գիտելիքի առարկա, կառուցվում է իր իսկ գիտակցության կողմից: Բայց աշխարհը, որպես անպայմանական ամբողջ անճանաչելի «ինքնին իր» է: Կանտի համոզմամբ աշխարհը, որպես անպայմանական ամբողջ, չի կարող լինել մտահայեցողական տեսական ճանաչողության առարկա: Հենց որ մարդը փորձի տեսական պատաս-

խան տալ այն հարցին, թե ինչ է աշխարհը որպես անպայմանական ամբողջ, այդ փորձը անխուսափելիորեն կհանգեցնի իրար հակասող պատասխանների՝ անտինոմիաների: Օրինակ, աշխարհի մասին, որպես անպայմանական ամբողջի հնարավոր չէ միանշանակ պնդել ոչ նրա անսահմանության, ոչ էլ սահմանափակության մասին, որովհետև հարցադրման բովանդակությունը անճանաչելի «ինքնին իր» է: Մերժելով էության և երևույթների հակադրության կանտյան մեկնաբանությունը ՀԵԳԵԼԸ հիմնավորում է, որ երևույթները նույնքան օբյեկտիվ են, որքան և էությունը: Էությունը դրսևորվում է երևույթի մեջ: Հետևապես, ճանաչելով երևույթները՝ մենք դրանով իսկ ճանաչում ենք և էությունը: Ըստ Հեգելի «Տիեզերքի թաքնված էությունն իր մեջ չունի մի ուժ, որն ի վիճակի լիներ դիմադրություն ցույց տալու իմացության խիզախումներին»: Գիտակցությունն առարկայի մեջ բացահայտում է իր սեփական էությունը և դրա շնորհիվ բարձրանում է մինչև ինքնագիտակցության: Այդ բարդ գործընթացում մտածողությունը մի կողմից հենվում է զգայական փորձի տվյալների վրա, մյուս կողմից էլ հայտնաբերում, պարզաբանում է այնպիսի երևույթներ, որոնք անհասանելի են մեր զգայարաններին: Ըստ Հեգելի հասկանալ առարկան նշանակում է գիտակցել նրա հասկացությունը, որովհետև «հասկացությունն այն է, ինչն ապրում է բուն իրերի մեջ»: Կեցությունը մտածողության, հասկացության, գաղափարի մարմնացումն է: Հեգելի մոտ բանականը, աստվածայինը, իրականը, անհրաժեշտը համընկնում են իրար հետ: Ամեն իրական՝ բանական է, ամեն բանական՝ իրական:

Կանտի համոզմամբ մարդը սահմանափակ էակ է և կարող է ճանաչել միայն իր գործունեության արդյունքները: Այդ իսկ պատճառով էլ նա չի կարող օժտված լինել ինտելեկտուալ ինտուիցիայով: Այդպիսի օժտվածություն կարող է ունենալ միայն աստված:

Բարոյագիտության իր սկզբունքները Կանտն ամբողջականացնում է «Պրակտիկ բանականության քննադատություն» աշխատության մեջ: Նա բարոյական օրենքները օժտում է անհրաժեշտության և համընդհանրության բնույթով: Այդ օրենքները ունեն համընդհանուր նշանակություն և պարտադիր են բոլորի համար: Ապրիորի բնույթ ունեցող այդ օրենքները Կանտն անվանում է «կատեգորիկ իմպերատիվ»: Այդ սկզբունքի համաձայն յուրաքանչյուր ոք պետք է վարվի այնպես, որպեսզի նրա կամքի դրսևորումը համապատասխանի ընդհանուրի կամքին: Միայն այդպիսի վարքագիծը կդառնա համընդհանուր օրենսդրության սկզբունք:

ՀԵԳԵԼԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ հիմնադրույթները արտացոլվել են «Ոգու ֆենոմենոլոգիա» և «Տրամաբանության գիտություն» աշխատություններում: Այդ համակարգը նա անվանել է «բացարձակ իդեալիզմ»:

Տիեզերական ողջ գործընթացը Հեգելը ներկայացնում է «բացարձակ գաղափարի» (համաշխարհային բանականության) եռաստիճան զարգացման տեսքով: Այդ զարգացման փուլերին համապատասխան էլ նա իր փիլիսոփայական համակարգը բաժանում է տրամաբանության փիլիսոփայության, բնափիլիսոփայության, ոգու փիլիսոփայության:

Տրամաբանության փիլիսոփայությունը Հեգելը բաժանում է կեցության մասին ուսմունքի, էության մասին ուսմունքի և հասկացության մասին ուսմունքի:

Կեցության մասին ուսմունքում հիմնավորում է զարգացման սկիզբը: Այդ փուլում Հեգելի կողմից միտքը ներկայացվում է հատկություն, որակ չունեցող զուտ կեցություն, կամ ոչինչ: Սակայն դա ոչ թե չեզոք ոչինչ է, այլ լինելություն: Հենց այդ լինելության շնորհիվ էլ զուտ կեցությունը (մաքուր միտքը, ոչինչը) աստիճանաբար փոխակերպվում է «առկա կեցության», օժտվում է որակով: Դա քանակական փոփոխություններից որակական փոփոխությունների անցման բազմաբնույթ գործընթաց է: Այստեղ հիմնավորվում է, որ հասկացությունները գտնվում են անընդհատ շարժման ու զարգացման մեջ:

Էության մասին ուսմունքում Հեգելը քննարկում է զարգացման աղբյուրի հարցը: Այստեղ հիմնավորվում է, որ շարժման և զարգացման հիմքը հակասությունն է: Առանց հակասության չի կարող լինել շարժում և զարգացում, քանզի դա կենսունակության դրսևորում է: Զարգացման գործընթացում տարբերությունները աստիճանաբար վերածվում են հակադրությունների և համակարգը ներքաշվում է հակասությունների ոլորտը: Հեգելը դա ներկայացնում է որպես անընդհատ գործընթաց և ձևակերպում է հակադրությունների պայքարի ու միասնության, բացասման բացասումի օրենքների տեսքով:

Հասկացության մասին ուսմունքում Հեգելը պարզաբանում է բացարձակ գաղափարի էությունը: Այստեղ քննարկվում է մտածողության սուբյեկտիվ ձևերը (հասկացություն, դատողություն, մտահանգում), որով բացարձակ գաղափարը դրսևորվում է տեսական ու պրակտիկ գործունեության միասնության ձևով: Դրանով բացարձակ գաղափարը հասնում է ինքնաճանաչողության և հաջորդ փուլում դրսևորվում է

բնության ձևով:

Բնության փիլիսոփայությունը բացարձակ գաղափարի այլակեցության վերաբերյալ պարզաբանում է: Հեգելը հիմնավորում է, որ բացարձակ գաղափարը որակական փոփոխություններով հասնելով ինքնաճանաչողության, վերածվում է բնության: Այսինքն, ինքն իրեն օտարում է որպես բնություն: Բնության փիլիսոփայության մեջ Հեգելը շարադրում է մատերիայի, տարածության, ժամանակի, շարժման և այլ հիմնահարցերի վերաբերյալ պարզաբանումներ, ներկայացնում է օրգանական և անօրգանական համակարգերի զարգացման գործընթացները:

Ոգու փիլիսոփայության մեջ բացարձակ գաղափարը նախորդ որակական փոփոխությունների գործընթացի վերջին փուլում վերադառնում է ինքն իրեն՝ դրսևորվելով սուբյեկտիվ ոգու, օբյեկտիվ ոգու, բացարձակ ոգու ձևով:

Սուբյեկտիվ ոգու ըմբռնումներում Հեգելն իմաստավորում է անհատական գիտակցության ոլորտը: Այստեղ հիմնականում քննարկվում են մարդաբանական, հոգեբանական հիմնախնդիրներ:

Օբյեկտիվ ոգու դրսևորումները հասարակական կեցության բնագավառն է՝ մարդկության պատմությունը: Այստեղ հիմնականում վերլուծվում են իրավական և բարոյական հիմնախնդիրներ:

Բացարձակ ոգու բնույթի պարզաբանումները առընչվում են գեղագիտական, կրոնական, փիլիսոփայական հիմնախնդիրներին: Հեգելը պարզաբանում է բացարձակ ոգու աստիճանական զարգացման ուղին: Այդ գործընթացում բացարձակ ոգին հասնում է ինքնագիտակցության բարձրագույն աստիճանի և դրսևորվում է գեղագիտական, կրոնական, փիլիսոփայական գիտելիքների ձևով:

Հեգելի համոզմամբ մարդիկ բացարձակ ոգու գործիքներն են: Մարդկանց միջոցով բացարձակ ոգին իրականացնում է հասարակության պատմության զարգացումը: Ականավոր գործիչները իրականացնում են համաշխարհային ոգու կամքը: Դա բացարձակ գաղափարի կատարելագույն դրսևորումն է: Ֆոյերբախի դիպուկ բնորոշմամբ Հեգելը մարդու էությունը անջատեց նրա եսից և դարձրեց անկախ սուբստանցիա, քանզի հեգելյան բացարձակ ոգին մարդկային ոգու օբյեկտիվացված դրսևորումն է: Հեգելն իր հզոր ինտելեկտով ամբողջացրեց տիեզերական զարգացման ողջ գործընթացը՝ ցույց տալով, թե ինչպես «Մաքուր գաղափարը» եռաստիճան զարգացման ուղիով ի վերջո դրսևորվում է որպես քաղաքացիական հասարակություն և պետություն:

ԳԼՈՒԽ III

ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԿԵՑՈՒԹՅՈՒՆ, ՍՈՒԲՍՏԱՆՑԻԱ, ՄԱՏԵՐԻԱ

ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ փիլիսոփայության մեջ մտածողների կողմից ըմբռնվում է որպես ուսմունք կեցության նախահիմքերի և սկզբնապատճառների մասին:

ԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ինքնուրույն գոյություն ունեցող ռեալություն իմաստավորող փիլիսոփայական հասկացություն է: Հույն իմաստասեր Պարմենիդեսը կեցություն էր անվանում հաստատունը, անշարժը և անփոփոխականը, իսկ Պլատոնի ըմբռնմամբ՝ կեցություն է արտերկրային աննյութական գաղափարը: Փիլիսոփայության այս երկու ռահվիրաների կարծիքների ընդհանրացումով միանշանակ կարելի է եզրակացնել, որ՝ կեցությունը ըմբռնվել է որպես ինքն իրենով պայմանավորված առկա ռեալություն:

ՍՈՒԲՍՏԱՆՑԻԱ (լատիներեն substantia-էություն) փիլիսոփայական կատեգորիան աշխարհի միասնությունը ամբողջացնող վերացարկված հաստատունի, ընդհանուրի իմաստավորումն է: Անտիկ դարաշրջանի փիլիսոփաների աշխատություններում սուբստանցիա և նախահիմք ըմբռնումները գրեթե համատեղվում են չորսը տարրերի, ատոմների, գաղափարների վերաբերյալ պատկերացումներում: Դրանք իմաստավորվել են հավերժական, միասնական, հաստատուն, առաջնահիմք: Արիստոտելը փիլիսոփայության տասը կատեգորիաների դասակարգումը սկսում է էությունից: Իմաստունը էությունը ըմբռնում է ոչ միայն սուբստանցիոնալության իմաստով, այլև գոյություն ունեցող ամեն ինչի կարևորագույն հատկությունները ներկայացնող բովանդակությամբ:

Միջնադարում սկզբունքային տարբերություն է դրվում աստվածային և նյութական սուբստանցիաների միջև: Եկեղեցու հայրերը աշխարհում ամեն ինչ դիտում են հավերժորեն գոյություն ունեցող աստված սուբստանցիայի արարչագործության արդյունք:

Նոր ժամանակներում Դեկարտը քրիստոնեական աստված սուբստանցիայի հետ մեկտեղ ընդունում է տարածական ու մտածող սուբ-

ստանցիաների առկայությունը: Իսկ Սպինոզան սուբստանցիա է համարում ինքն իր պատճառը հանդիսացող բնությունը: Մարքսիզմը սուբստանցիա և մատերիա կատեգորիաները բովանդակային համատեղման և բարձրագույն վերացարկման ենթարկելով, դրանք ներկայացնում է որպես օբյեկտիվ ռեալականություն իմաստավորող փիլիսոփայական կատեգորիա:

ՄԱՏԵՐԻԱՆ (լատիներեն materia-նյութ) փիլիսոփայության պատմության մեջ իմաստավորվել է որպես աշխարհի բազմազան իրերի ու երևույթների ընդհանուր հիմք: Անտիկ դարաշրջանի փիլիսոփաների աշխատություններում մատերիան դիտվում է որպես ամեն ինչի նախանյութ: Հույների մոտ այդպիսի նախանյութ է դիտվել ջուրը (Թարես), օդը (Անաքսիմենես), կրակը (Հերակլիտես): Նոր ժամանակներում մատերիան ըմբռնվում է որպես օբյեկտիվ ռեալականություն (Դիդրո, Հոլբախ, Հելվեցիուս):

2. ԿԵՑՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ

«Կեցություն» կատեգորիան արտահայտում է լինելություն: «Կեցություն» նշանակում է գոյություն ունենալ: Փիլիսոփայությանս մեջ «կեցության» տակ լայն իմաստով ըմբռնվում է ողջ գոյություն ունեցողը՝ մատերիան, գիտակցությունը, գաղափարները, մարդկանց զգայությունները, պատրանքները, իսկ նեղ իմաստով՝ օբյեկտիվ աշխարհը: Կեցությունը որպես օբյեկտիվ ռեալականություն փիլիսոփայության պատմության մեջ անվանվել է «սուբստանցիա», «մատերիա» հասկացությամբ: Առօրյա իմաստով «կեցություն» կատեգորիան իմաստավորում է գոյություն ունենալը, լինելը, առկան, ռեալականությունը: Դրա տակ ըմբռնվում է ողջ տիեզերքը, օրգանական ու անօրգանական աշխարհը, մարդկային հասարակությունը և այլ գոյավիճակներ: Փիլիսոփայական իմաստով կեցություն է դիտվում գոյություն ունեցող ամեն ինչի նախահիմքը՝ սուբստանցիան, սկզբնապատճառը՝ մատերիան:

Դեռևս անտիկ դարաշրջանում փիլիսոփաները տարբերակում էին «էություն» և «կեցություն» կատեգորիաները: Էության տակ ըմբռնվում էր շրջակա աշխարհի իրերի ողջ բազմազանության որակական դրսևորումները, իրերի, օբյեկտների խորքային, հիմնական հատկությունները: Կեցության տակ իմաստավորվում էր այն ընդհանուրը, որը ողջ բազմազանության սկզբնահիմք և սկզբնապատճառ կարող էր դիտվել: Այսինքն, այն, ինչը ընդհանուր է բոլորի համար և կարող է

դառնալ գոյություն ունեցող ամեն ինչի հիմքը: Փիլիսոփայական իմաստով կեցությունը անստեղծելի, անոչնչանալի, ինքն իր պատճառը հանդիսացող լինելություն է:

Փիլիսոփայության մեջ կեցությունը դիտվում է գոյակցության երկու ձևով.

1. Ֆիզիկական գոյավիճակի ձևով, որի տակ ըմբռնվում է նյութական աշխարհի ողջ բազմազանությունը: Դա օբյեկտիվ լինելությունն է:

2. Ոչ նյութական, որի տակ իմաստավորվում է մարդու հոգեկան ներքնաշխարհը՝ գիտակցությունը: Դա սուբյեկտիվ լինելությունն է: Մարդու կեցությունը նյութական մարմնի և ոչ նյութական հոգեկանի հակադրամիասնությունն է: Աննյութական կեցությունը իմաստավորվում է որպես 1.օբյեկտիվ ոգի (դա մարդկանց համատեղ գործունեության արդյունք հանդիսացող լեզուն է, գիտությունը, արվեստը, իրավունքը, կրոնը, հասարակական գիտակցության այլ ձևերը): 2. Սուբյեկտիվ ոգի (մարդու հույզերը, կրքերը, ցանկությունները, երազանքները): Կեցության ըմբռնումներում կարևորվում է «Սուբստանցիա» կատեգորիան:

Սուբստանցիան իմաստավորվել ու մեկնաբանվել է տվյալ դարաշրջանի գիտական մտքի նվաճումներին համապատասխան: Անտիկ մտածողները սուբստանցիայի տակ իմաստավորել են նյութական փոքրագույն մասնիկներ, տարրեր, գաղափարներ և նյութական ու անյութական այլ որակներ: Նրանց համոզմամբ գոյություն ունի առաջնային և անփոփոխ նյութական կամ հոգևոր նախասկիզբ, որը անստեղծելի ու անոչնչանալի է: Դրանից առաջացած իրերը, օբյեկտները առաջանում և քայքայվում են, կարող են կրել տարբեր փոփոխություններ, իսկ սուբստանցիան հավերժ անփոփոխ ու միասեռ է: Մատերիալիստական համոզմունքի դեպքում սուբստանցիան կամ նյութական որակ է, կամ նյութի կոնկրետ հատկություն, իսկ իդեալիստական մտածելակերպում ՝ գաղափար (Պլատոն), անշարժ, հաստատուն, հավիտենական կեցություն, գոյակցություն:

XVII-XVIII դարերում սուբստանցիան դիտվում էր որպես օբյեկտիվորեն գոյություն ունեցող և մեր զգայարանների վրա ինչ որ ձևով ազդեցություն գործող մատերիա: Սպինոզան իր «Էթիկա» աշխատության մեջ հիմնավորում է, որ «Սուբստանցիան այն է, ինչը գոյություն ունի ինքն իրեն, իր ներկայացման համար ուրիշի կարիքը չի զգում, հավերժ նույնական է, անսկիզբ, անվերջ, անբաժանելի, տարածության մեջ անսահման, ինքն իր պատճառը: Սուբստանցիայի էությունը և կե-

ցությունը արտահայտվում է ատրիբուտներում, ճանաչվում է ատրիբուտների միջոցով, իսկ ատրիբուտները՝ առանձին իրերի միջոցով»: Լայբնիցի համոզմամբ սուբստանցիան պարզ, անբաժանելի, անոչնչանալի, հավերժորեն գոյություն ունեցող, միմյանցից տարբեր մոնադները են, որոնք առաջանում են ստեղծային անընդհատ ճառագայթումից: Հեգելը սուբստանցիա էր համարում դատարկ, անբովանդակ, անորոշ կեցությունը (ոչ կեցություն), որն օժտված է ներքին հակասություններով: XX դարում սուբստանցիայի գոյաբանական հարցադրումը հանգում է օբյեկտիվ իրականություն բովանդակող փիլիսոփայական կատեգորիայի, իսկ իմացաբանական հարցադրումը՝ բնական և արարչագործական կեցությունների արժեքավորման:

3. ԿԵՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ

«Կեցություն» կատեգորիան փիլիսոփայական իմաստով առաջին անգամ մեկնաբանել է Պարմենիդեսը: Նրա համոզմամբ կեցությունը այն է, ինչը գոյություն ունի, իսկ ոչ կեցությունը գոյություն չունի: Նա հիմնավորում էր, որ «Կեցությունը կա, իսկ ոչ կեցությունը գոյություն չունի»: Պարմենիդեսը կեցության տակ ըմբռնում էր ոչ թե գոյություն ունեցող իրերը, այլ ողջ մտահասանելի էությունը, մտքի օբյեկտը: Նրա համոզմամբ, եթե մեր զգայարանների և մտքի ըմբռնումների միջև միանշանակություն չի դրսևորվում, առաջնությունը պետք է տալ մտքին: Դա հիմնավորելու համար Պարմենիդեսը բերում է հետևյալ փաստարկը. «շարժվել, նշանակում է մի տեղից կամ վիճակից անցնել մեկ այլի: Իսկ կեցության համար այդ ուրիշը «ոչ կեցություն է», որը գոյություն չունի: Նշանակում է կեցությունը ուրիշ տեղ չունի շարժվելու, քանզի այն միշտ կա և գոյություն ունի»:

Պարմենիդեսը կեցության տակ իմաստավորում էր բազարձակ միտքը [մարդկանց զգայական փորձի հետ չկապված և նրանից անկախ գոյություն ունեցող բանականությունը], որին անվանում է անհրաժեշտություն: Ըստ Պարմենիդեսի «ամեն ինչ տեղի է ունենում անհրաժեշտորեն»: Նա անհրաժեշտությունը անվանում է աստվածություն, ճշմարտություն, ճակատագիր, հավերժ և անոչնչանալի լինելություն: Պարմենիդեսի բնորոշմամբ «կեցությունը այն է, որը առկա է զգայական իրերի աշխարհի հետևում: Այն միշտ է, միասնական է և անփոփոխ, իր ներսում չունի սուբյեկտի և օբյեկտի բաժանվածություն: Այն ամբողջովին հնարավորությունների կատարելություն է, որոնցից կարևորվում

են ճշմարտությունը, լույսը, բարությունը, առաքինությունը: Դա ճշմարիտ էություն է»: Ըստ Պարմենիդեսի այդ կեցությունը ոչ առաջանում և ոչ էլ ոչնչանում է: Այն միակն է, անշարժ, չվերջացող ժամանակի մեջ, զրկված է զգայական որակներից, այդ պատճառով էլ ըմբռնելի է միայն մտքով: Պարմենիդյան կեցությունը տիեզերական բանականություն է, Լոգոս [տեսանելի աշխարհից անդին գտնվող անտեսանելի աշխարհը, որը ներդաշնակ կատարելություն է՝ ամբողջովին լույս, բարիք, առաքինություն]: Նրա ըմբռնմամբ կեցությունը միասնական, անբաժանելի և անշարժ է, նա կախված չէ ոչնչից, բայց ամեն ինչի պատճառ է: Պարմենիդեսի բնորոշմամբ «կեցությունը անշարժ է, չի առաջանում և չի ոչնչանում, այն չի ունեցել անցյալ և չունի ապագա, այն միշտ ներկայում է»: Հիմնավորելով, որ կեցությունը գոյություն ունի, իսկ ոչ կեցությունը գոյություն չունի, նա գրում է. «Լինել շարժման մեջ, շարժվել, նշանակում է մի տեղից (վիճակից) անցում կատարել մեկ այլ տեղ (վիճակի): Եվ քանի որ ոչ կեցությունը գոյություն չունի, ուրեմն կեցությանը շարժվելու ոչ մի տեղ չկա: Կեցությունը միայն կա, միայն գոյություն ունի»:

Հերակլիտեսի համոզմամբ կեցությունը և ոչ կեցությունը անբաժանելի են - «միևնույն բանը և կենդանի է և մահացած, ծեր է և ջահել, քանզի մեկը ծնում է մյուսին, մեկը փոխվում է մյուսի [հողի մահը ջրի ծնունդ է, ջրի ծնունդը հողի մահն է, ջրի մահը օդի ծնունդն է, օդի մահը կրակի ծնունդն է և հակառակը]»: Դեմոկրիտեսը կեցության տակ ըմբռնում է ատոմները և դատարկությունը: Պլատոնի մոտ գերագույն կեցություն է համարվում գաղափարները (դա հավերժ անփոփոխ իդեալական էությունների աշխարհն է): Նրա համոզմամբ մատերիան զրկված է ինքնուրույն կեցությունից: Պլատոնը կեցությունը բաժանում է 3 տեսակի. 1. գաղափարներ, 2. իրեր, 3. մատերիա, որից կազմավորվում են իրերը: Առաջինը իրերի աշխարհին նախորդող գաղափարների աշխարհն է, որը հավերժական անփոփոխ էությունների աշխարհն է: Երկրորդը մեզ շրջապատող ժամանակավոր, անցողիկ իրերի աշխարհն է, որը անկատար կեցություն է: Երրորդը մատերիան է, այն նյութը, որից համաշխարհային դեմիուրգը, Հոգևոր արարիչը, համաշխարհային հոգին ստեղծում է իրերը գաղափարների կերպարներով: Ըստ Պլատոնի՝ մատերիայի կեցությունը ոչ կեցություն է, քանզի այն զրկված է ինքնուրույն գոյությունից և որպես կեցություն է արտահայտվում միայն իրերի ձևերում: Արիստոտելը կեցության տակ հասկանում է նյութականից բացարձակապես ազատ, աննյութական կատարելու-

թյունը՝ ձևը: Այս համոզմունքները միջին դարերում զարգացրեցին եկեղեցու հայրերը: Միջնադարյան կրոնափիլիսոփայական հարցադրումներում իմաստավորվում է արարող և արարվող կեցություններ: Աստծո կեցությունը համարվում է տարածությունից, ժամանակից դուրս գտնվող, բացարձակ արտաբնութենական կեցություն: Իսկ մնացածը Աստծո կողմից արարչագործված բնությունն է: Քրիստոնեությունը աշխարհը բաժանում է կատարյալ (անստեղծելի և անոչնչանալի), և անկատար (ժամանակավոր, անցողիկ) կեցությունների, երկնային և երկրային կեցությունների: Թ. Աքվինացու համոզմամբ միակ ճշմարիտ կեցությունը Աստվածն է: Միջնադարյան նոմինալիզմը աստծուն համարում է արարիչ, իսկ արարչագործությունը՝ աստվածային կամք: Օկկամի համոզմամբ աստված սկզբում իր կամքով ստեղծել է իրերը, իսկ հետո նրա մտքում առաջանում են այդ իրերի գաղափարները: Նոմինալիստների համոզմամբ մարդու բանականությունը Աստծուց, Լոգոսից անկախ, ինքնուրույն ներքին գործունեություն է: Այն սուբյեկտիվ է, քանզի ճանաչող հոգու արդյունք է: Նման մտածելակերպում մտածողությունը զանազանվում է կեցությունից: Այսինքն, եզրակացվում է, որ իրերի մասին պատկերացումից չի կարելի բխեցնել դրանց էությունը, քանզի Աստված իր կամքով կարող է հոգու մեջ ծնել այնպիսի պատկերացումներ, որոնք չունեն նմանակը իրականության մեջ: XVI-XVII դդ. փիլիսոփաները կեցության խնդիրը կապում են մարդու հետ: Միակ ռեալ, անկասկածելի կեցություն է դիտվում մարդը իր գիտակցությամբ և շահերով: Դեկարտը միակ անկասկածելի, ճշմարիտ կեցություն էր դիտում մտածողությունը. «Ես մտածում եմ, հետևաբար ես գոյություն ունեմ»: XVIII դարի ֆրանսիացի մաուերիալիստները (Լամետրի, Հոլբախ, Հելվեցիուս) կեցության տակ իմաստավորում են օբյեկտիվ ռեալականությունը, իսկ իդեալիստները՝ (Բերկլի) մարդու կյանքի և գործունեության հիմք հանդիսացող ինքնուրույն կեցության ըմբռնումը հետին պլան են մղում, տեղը զիջելով սուբյեկտիվիզմին: Բերկլիի համոզմամբ բացի սուբյեկտիվությունից մեզ համար չկա ոչ մի ակնհայտ, հավաստի ռեալականություն: Դրանով կեցության ոլորտը կախվածության մեջ է դրվում մարդու «ես»-ից: Սուբյեկտիվ իդեալիզմը կեցության միակ ռեալականություն է համարում մարդկային զգայությունները: Բերկլիի հայտնի համոզմամբ «լինել՝ նշանակում է լինել ընկալելի»:

Կանտը կեցության տակ ըմբռնում է ինքնին իրը: Նրա մոտ կեցությունը կախման մեջ է դրվում ճանաչողությունից: Կանտի համոզմամբ ճանաչողության մեջ մարդը «արարչագործում» է երևույթների աշ-

Լայբնիցի կեցության տակ: Հեգելը կեցության տակ իմաստավորում է բացարձակ գաղափարը: Նրա մոտ այդ մաքուր գաղափարը («ոչ կեցություն») իրեն հատուկ ներքին հակասությունների շնորհիվ դրսևորվում է եռաստիճան զարգացման գործընթացով:

Մարքսիզմը կեցության տակ իմաստավորում է օբյեկտիվ ռեալականությունը, մատերիան: Այս ուսմունքում աստծո կեցությունը փոխարինվում է բնության և մարդու կեցությամբ: Մարքսը և Էնգելսը կեցության վերաբերյալ զարգացրեցին միանգամայն նոր պատկերացումներ, որոնցում ընդգծվում է հասարակական կեցությունը: Այդ կեցությամբ էլ որոշվում է մարդկանց գիտակցությունը: Դրանով ընդհանրացվում է, որ մարդու էությունը հասարակական հարաբերությունների արդյունք է:

XX դարում Նիկոլայ Հարթմանը «գոյաբանության նոր ուղիներ» աշխատության մեջ հիմնավորում է, որ գոյություն ունեցողը (ինչպես նյութականը, այնպես էլ աննյութականը, իդեալականը) ամբողջականացվում է «ռեալականություն» հասկացությամբ: Հարթմանի կարծիքով գոյություն չունի բարձրագույն կամ ցածրագույն ռեալականություն, չկա մատերիայի կամ գաղափարի առաջնայնություն: Դրանք բոլորն էլ ռեալականություններ են: Նա կեցությունը, ողջ ռեալականությունը բաժանում է 4 շերտի՝ 1. հոգևոր, 2. հոգեկան կեցություններ, որոնք գոյություն ունեն ժամանակի մեջ, բայց տարածությունից դուրս, 3. կենդանի բնություն, 4. անկենդան բնություն: Դրանք գոյություն ունեն ժամանակի և տարածության մեջ:

Ժամանակակից փիլիսոփայական միտքը կեցության տակ իմաստավորում է, ողջ գոյություն ունեցածը, լինի դա մարդ, թե կենդանի, բնություն, թե հասարակություն, երկրագունդը, թե ողջ տիեզերքը, ստեղծագործողի ինտելեկտուալ աշխատանքի արդյունք հանդիսացող բանաստեղծությունը, գիտական տեսությունը, օրենքները, թե կրոնական համոզմունքները:

XX դարի փիլիսոփաների աշխատություններում զգալի տեղ է գբաղեցնում կեցության մարդկայնացման միտումը: Դրանում զգալի ներդրում է կատարել Հայդեգերը, զարգացնելով «լեզուն կեցության տունն է» սկզբունքը:

4. ԿԵՑՈՒԹՅԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հնագարամյակների ընթացքում իմաստուն փիլիսոփաները, փորձելով հասկանալ շրջակա աշխարհի իրադարձությունների ծավալման

ընթացքի հիմքերը, մարդ արարածի տեղն ու դերը այդ իրադարձությունների, ուշադրությունը մեկ հառել են դեպի տիեզերքի անհուն տարածությունները, մերթ օրգանական ու անօրգանական աշխարհի զարմանահրաշ դրսևորումներին, մերթ իր նմանի վարքագծին: Քայլ առ քայլ ճանաչելով բնության գաղտնիքները, իր տեղն ու դերը, մարդը թափանցել է շրջակա աշխարհի գործընթացների պատճառա-հետևանքային կապերի բնույթի մեջ, բացահայտել է դրանց առանձնահատկությունները և համակարգել որոշակի սկզբունքներով: Ի վերջո իմաստուն փիլիսոփաները իրենց դիտարկումների, ուսումնասիրությունների արդյունքներն ընդհանրացրել են բնական և հասարակական կեցության նմանության ու տարբերիչ առանձնահատկությունների խմբավորման հիման վրա: Արդյունքում նրանց կողմից առանձնացվել են կեցության հետևյալ ոլորտները:

1. ԲՆԱԿԱՆ ԿԵՑՈՒԹՅՈՒՆ: Մարդը ձևավորվել է բնական միջավայրում և հանդիսանում է նրա արդյունքը: Բնությունը եղել է ոչ միայն մարդու սնուցող մայրը, այլև ներշնչանքի աղբյուրը: Մեր նախնիները իրենց համարել են բնության հարազատ զավակ և ապրելավայրին ծուլված միասնություն: Բնությունը եղել է մարդու ապաստանը և խորհրդածությունների աղբյուրը: Իմաստունների համար բնությունը եղել է ոչ միայն կատարյալ ներդաշնակության արտահայտություն, այլև հետազոտությունների անծայրածիր դաշտ: Թափանցելով բնության գաղտնիքների ոլորտը մարդը փորձել է հասկանալ դրանց բնույթը, էությունը, պարզել կառուցվածքային յուրահատկությունները:

Կեցության ցանկացած դրսևորում օժտված է բարդ հատկություններով, ներքին ու արտաքին կապերով և բնորոշվում է տվյալ ժամանակաշրջանի գիտության նվաճումների արդյունքներով: XX դարի փիլիսոփաները առանձնացրել են կեցության հետևյալ մակարդակները. 1. անօրգանական նյութ, որի տակ ըմբռնվում է անկենդան աշխարհի կարգավորված օբյեկտներն ու համակարգերը, 2. օրգանական նյութ, որի տակ հասկացվում է բուսական ու կենդանական աշխարհի ողջ բազմազանությունը, 3. սոցիալական համակարգ, որի տակ դիտվում է մարդկանց պատմական հանրույթները, բազմաբնույթ քաղաքական համակարգերը:

Կառուցվածքային հատկանիշների տեսանկյունից առանձնացվում են միկրոմասնիկները, մակրոսկոպիկ օբյեկտները, տիեզերական համակարգերը: Հանգստի մասսայով օժտված համակարգերը իրենցում ընդգրկում են տարրական մասնիկներ, ատոմի միջուկներ, կենդանի

օրգանիզմներ, աստղեր, գալակտիկաներ, ֆիզիկական դաշտեր, մարդու կողմից ստեղծված օբյեկտներ ու համակարգեր:

XX դարի գիտնականների համոզմամբ մակրոսկոպիկ օբյեկտները բաղկացած են մոլեկուլների համակցությունից, որոնց բաղադրատարրերն են ատոմները: Ատոմը ևս բարդ կառուցվածք ունի: Ատոմի տիրույթում առկա են դրական լիցքավորված միջուկ, բացասական լիցքավորված էլեկտրոններ, չեզոք նեյտրոններ, մեզոններ, հիպերոններ և այլ տարրական մասնիկներ:

2. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԵՑՈՒԹՅՈՒՆ: Շփվելով բնության հետ, աստիճանաբար հասկանալով բնական գործընթացների բնույթը, մարդը ձեռք է բերում բնական միջավայրում հարմարվելու, բնությունը իր նպատակներին ծառայեցնելու հմտություն: Այդ գործընթացը նպաստում է նրա անհատականության ձևավորմանը: Բնական միջավայրը, այդ միջավայրում իր նմանների հետ ապրելու, վայելելու և մաքառելու գործոնները մարդու անհատական կեցության ձևավորման կարևոր ազդակներ են հանդիսացել: Իհարկե այդ ազդակների շարքում առաջին հերթին կարևորվում է մարդու գենոտիպում ամրակայված խառնվածքը, բնավորության գծերը, հոգեկան կերտվածքը: Սակայն քիչ դեր չեն կատարել նաև իր նմանների միջավայրում հասունանալու ընթացքում նրանցից ազդվելու, նրանց նմանվելու գործոնները: Ընտանիքը, համայնքը, պետությունը, գիտամշակութային օջախները մարդու սոցիալականացման, անհատականության ձևավորման կարևոր ազդակներ են: Դրանով է պայմանավորված նաև տարբեր ազգերի ներկայացուցիչների բնավորության գծերի, գործելաոճի, բարոյագիտական արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքի զանազանությունը: Երևի դրանցով է պայմանավորված նաև հայերի ու ռուսների պետականության զգացողության զանազանությունը: Ռուսը համայնքային, պետական այրերին հպատակվող վարքագիծ ու հոգեկան կերտվածք ունեցող անհատականություն է: Հայը ընտանիքապաշտ, անձնապաշտ անհատականություն է: Դա պայմանավորված է նաև դարեր շարունակ պետականություն չունենալու, օտարի ենթակայության տակ գտնվելու հայ ազգի կարգավիճակով: Նման պայմաններում ամեն հայ պետք է մտահոգված լիներ սեփական օջախի անվտանգությունը ապահովելու հոգսով: Հայի անհատական կեցությունը որոշակիորեն դրսևորվում է նաև հարևանի և ընկերոջ նկատմամբ նվիրվածություն ցուցաբերելու վերաբերմունքով: Գնացքով երթևեկող ռուսը կարող է միայնակ հանգիստ նախաճաշել: Իսկ հայը անպայման հացը

կկիսի դիմացինի հետ, կհյուրասիրի մյուսներին: Նման վարվելակերպը ոչ թե պետք է արժեքավորվի հայի կամ ռուսի առավելությունների ընդգծման տեսանկյունից, այլ անհատական խառնվածքի զանազանության մատնանշումով: Այս տեսակետից Հայաստանի դեմոկրատականացման գործընթացների նման ձևով իրականացումը չափազանց բացասական ազդեցություն կթողնի նոր ձևավորվող սերնդի անհատական կեցության կազմավորման վրա, քանի որ նրան մատուցվող արժեքները անհարիր են մեր ազգային ինքնակեցությանը: Քաղաքակիրթ վարվելակերպ ու դեմոկրատական քաղաքական համակարգ ունենալու համար պարտադիր չէ ստրկամտորեն ընդօրինակել մեզ պարտադրվող արժեքները, որոնց ազդեցության ներքո էականորեն կփոփոխվի ոչ միայն մեր ազգային ինքնակեցությունը, այլև անհատական կեցությունը:

3. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՑՈՒԹՅՈՒՆ: Հասարակությունը գոյատևելու, բազմանալու, բարգավաճելու համար պետք է ստեղծի կենսամիջոցներ: Կենսամիջոցների արտադրությունը և դրա հետ կապված բոլոր գործընթացները ընդունված է անվանել հասարակական կեցություն:

Անձը ձևավորվում է տվյալ ժողովրդի տնտեսական, սոցիալական, քաղաքական, մշակութային արժեքների միջավայրում: Նրա անհատականության կազմավորման գործընթացում կարևորվում է ոչ միայն ծնողներից ժառանգած հատկությունները, այլև միկրո և մակրո սոցիալական միջավայրը, սեփականատիրական հարաբերությունները, հասարակության դասային շերտավորումը, սպառման և բաշխման հարաբերությունները: Խորհրդային հասարակարգի հանրային սեփականատիրական հարաբերությունների միջավայրում ծնված և կազմավորված անձի բարոյականային հատկությունները էականորեն կտարբերվեն մերօրյա մասնավոր սեփականատիրական հարաբերությունների ոլորտում ձևավորվող մարդու անհատականությունից: Փոդոցային առևտրի արժեքներ բովանդակող հասարակական կեցությունը դժվար թե նպաստի մարդասիրական բարոյականային անհատականության ձևավորմանը:

4. ԱԶԳԱՅԻՆ ԿԵՑՈՒԹՅՈՒՆ: Կենդանական աշխարհի բոլոր օրգանիզմների գենոտիպում ամրակայված են ինքնապահպանման, դիմակայման, բազմացման անփոփոխ բնազդներ: Նման բնազդային գործողությունների գիտակցական կարգավորումն ու կառավարումը դառնում է ազգային կեցության հիմնական բաղադրատարր: Եվ որքան

փոքրաքանակ է ազգը, այնքան առավել այդ բաղադրատարրերը կպահպանվեն: Դա հատկապես ազդու կլինի խոշոր տերությունների աշխարհաքաղաքական շահերի բախման ոլորտում հայտնված ժողովուրդների և ազգերի կացութային հարաբերությունների վրա:

Ազգային ավանդույթների, ինքնակեցության պահպանման և սերնդե-սերունդ փոխանցելու պահանջը XXI դարում դարձել է հրամայական հատկապես այնպիսի ազգերի համար, ինչպիսին հայերն են: Հայտնվելով դեմոկրատականացման համընդգրկուն գործընթացների ոլորտում հայ ազգը վտանգավոր արագությամբ կորցնում է ազգային ավանդույթները, ինքնակեցության անաղարտությունը, նույնիսկ վերածվում է սպառնում լեզվին: Ընդհանուր շուկայական հարաբերություններում հայտնվելու ձգտումը կարևորում է սոցիալ-տնտեսական արժեքները, որոնց ստվերում խամրում է ազգային կեցությունը: Ազգային մշակույթը, ազգային հոգեբանությունը, բարոյագեղագիտական ավանդական արժեքները, որոնք հայ ազգի ինքնակեցությունը անաղարտ պահելու կարևոր գործոններ են հանդիսացել, XXI դարում ծածկվում են արևաբեվրոպական արժեքների խառնուրդի թանձրույթով:

Ազգային ինքնակեցության պահպանման գործում զգալի դեր կարող է խաղալ հավատքը: Հայ ազգի համար քրիստոնեական դավանանքը անգամ ազգապահպան դեր է կատարել:

Ազգայինը չափազանց կարևոր գործոն է, սակայն այն բացասական պահպանողական արժեքի չվերածվելու համար պետք է շփվի համազգային արժեքների հետ, քանզի ազգային մեկուսացումը մեծ դժբախտություն է, առավել ևս XXI դարի դեմոկրատականացման գործընթացներում: Միայն համամարդկային արժեքները ազգայինի վերափոխելու և ազգայինը համազգայինի աստիճանի բարձրացնելու ճանապարհով կարելի է ազգային կեցության համար տեղ զբաղեցնել աշխարհի ժողովուրդների կեցութային համակարգում:

Դարերի ընթացքում ազգերը ձևավորել, հարստացրել ու ամրակայել են իրենց հոգևոր արժեքները, ազգային կերպարը: Այդ կայուն արժեքների շնորհիվ են նրանք հաղթահարել պատմական արհավիրքները և իրենց տեղը զբաղեցրել ժողովուրդների ընտանիքում:Այդ տեղը ամեն ազգ ու ժողովուրդ զբաղեցրել է իր յուրահատուկ կեցությամբ: Ամերիկացիները իրենց ձեռներեցությամբ, անգլիացիները՝ ավանդապաշտությամբ, գերմանացիները՝ մտածելակերպի ճշգրտությամբ: Այդ ինքնակեցությամբ էլ նրանք կշարունակեն ճանապարհը XXI դարում:

5. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՑՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Յուրաքանչյուր էթնոս ձևավորվել է որոշակի աշխարհագրական միջավայրում և որոշակի կերպարով ու հոգեբանությամբ: Այդ գործոնները կազմել են բոլոր ազգերի ինքնակեցության հիմքը: Սակայն յուրաքանչյուր էթնոս անցել է յուրօրինակ զարգացման ուղի, որը զգալի հետք է թողել նրա կեցութային արժեքների ձևավորման վրա: Այս տեսակետից հայ ազգային կեցությունը առանձնանում է իր յուրակերպություններով: Հզոր տերությունների զավթողական շահերի ոլորտում գոյատևելու մաքառումը խորը հետք է թողել հայ էթնոսի ինքնագիտակցության վրա:

Հայ ազգային կեցության յուրահատկությունը պայմանավորված է աշխարհով մեկ սփռված հայ գաղթօջախների առկայությամբ: Տարագիր հայերը զրկվելով հայրենիքից, այլ ազգերի ու ժողովուրդների կեցութային համակարգերում ստեղծել են իրենց համայնքները: Այդ համայնքներում ազգային և օտար արժեքների համատեղման շնորհիվ ձևավորվել է յուրովի էթնոկեցություն: Հայ գաղթօջախները, ինչքան էլ հեռու լինեն հայրենիքից, կլսզմել են հայրենիքի բաղադրատարրը, քանզի ազգային ինքնագիտակցությունը, հայրենիքի կարոտը երբեք չի մարում: Արարատ լեռը զավթված հայրենիքի կարոտի խորհրդանիշ է և սփյուռքի գաղթօջախների հայերի, և մայր հայրենիքի մարդկանց համար:

Հայ ժողովրդի տարածքային միասնության բացակայությունը ազգային ինքնակեցությունը կայունացնող չափազանց մեծ ազդակ է եղել: Սփյուռքի հայ գաղթօջախները ինքնակեցությունը չկորցնելու համար ոչ միայն իրենց ապրելավայրում են անշեղորեն հետևել անցյալի ավանդույթների, բարոյագեղագիտական արժեքների պահպանմանը, այլև իրենց պահվածքով աջակցել են մայր հայրենիքի հզորացմանը:

Հայ ազգային կեցության ձևավորման յուրահատկության վրա զգալի ազդեցություն է թողել քրիստոնեության ընդունումը: Հենց սկզբից հայերը քրիստոնյա մյուս ժողովուրդներից առանձնացել են որոշակի դավանաբանական առանձնահատկություններով: Դա զգալի դեր է խաղացել ազգի բարոյական արժեքները անաղարտ պահելու գործում: Դարեր շարունակ հայ եկեղեցին, իրականացնելով աշխարհիկ և հոգևոր գործառույթներ, դարձել է ազգային ինքնակեցության արժեքների պահպանման ու ամրակայման կարևոր սուբյեկտ:

Հայ ազգային կեցության յուրահատկությունների ձևավորման գործում զգալի ներդրում են ունեցել միջնադարյան հայ փիլիսոփաները, որոնք իրենց աշխատություններում համատեղելով արևելյան և արևմտյան մշակութային արժեքները, ստեղծեցին փիլիսոփայական

յուրովի ժառանգություն, որը դարեր շարունակ ձևավորվող սերնդի աշխարհընկալումներում խորը հետք է թողել:

Հայ ազգային կեցության յուրահատկության դրսևորման գործում քիչ դեր չեն խաղացել ազգային-ազատագրական շարժումների հոգեբանական ներգործությունները: Դրանք միայն անկախանալու և ինքնուրույնություն ձեռք բերելու ձգտումներ չեն եղել: Դրանցում բովանդակվել է և ուծացվելու վտանգի դեմ ազգովին համախմբվելու պահանջը, մշակույթի ցածր արժեքներ ունեցող, բայց ուժեղ ժողովրդի հայաջինջ քաղաքականությանը զոհ չգնալու ձգտումները և այլ հանգամանքներ: Երևի դա էր պատճառը, որ աշխարհի հզորները, XX դարի վերջում, չհասկացան Արցախյան շարժման էությունը և մինչև այժմ էլ զարմանում են, թե հայերն ու ազերիները ինչու հիմնախնդրի լուծման այնպիսի հնարավոր տարբերակներ չեն կարողանում մշակել, որ ընդունելի լինի երկու կողմերի համար էլ: Նրանք չեն կարող հասկանալ, որ պետության տարածքային ամբողջականության ազերիների պահանջը և խլվածը վերադարձնելու հայերի բաղձանքը միատեսակ չափանիշներով հնարավոր չէ գնահատել:

5. ՇԱՐԺՈՒՄԸ, ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԺԱՄԱՆԱԿԸ ԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Տիեզերքում ամեն ինչ գտնվում է անընդհատ շարժման և փոփոխության գործընթացում: Պարզ տեղափոխությունից մինչև մտածողություն շարժման որակական դրսևորումների արդյունք է: Նախահիմքի կարևորագույն հատկությունը, գոյության եղանակը շարժումն է: Այն իրենից ներկայացնում է հակադրությունների փոխներգործության գործընթաց: Շարժումը հավերժ է, անստեղծելի ու անոչնչանալի, բայց դրսևորվում է կոնկրետ, անցողիկ ու միմյանց փոխարինող գործընթացների ձևով: Այսինքն իր բնույթով բացարձակ է, իսկ դրսևորման ձևերով՝ հարաբերական:

Փիլիսոփաների կողմից առանձնացվել է շարժման 5 ձևեր: 1. մեխանիկական շարժումը տարածության ու ժամանակի ընդհատության և անընդհատության միասնության դրսևորում է: Դա օբյեկտների տարածական տեղափոխությունն է միմյանց նկատմամբ: 2. ֆիզիկական շարժումը ջերմային և էլեկտրամագնիսական գործընթացների, կենտրոնախույս և կենտրոնաձիգ ուժերի, միջուկային և գրավիտացիոն դաշտերի, ներմիջուկային տարաբնույթ փոխազդեցությունների դրսևորում

է: 3. քիմիական շարժումը ատոմների և մոլեկուլների միացման ու անջատման բազմաբնույթ փոխազդեցությունների դրսևորում է: 4. կենսաբանական շարժումը կենդանի օրգանիզմների կենսագործունեության, միջավայրի ազդակներին ակտիվորեն պատասխանելու, ներտեսակային և միջտեսակային պայքարի, բնական և արհեստական ընտրության գործընթացների դրսևորում է: 5. սոցիալական շարժումը հասարակության դասերի, խավերի, կուսակցական խմբավորումների տարաբնույթ շահերի բախման, ազգամիջյան ընդհարումների, պետությունների առճակատումների արտահայտություն է: Դրանցում կարևոր տեղ են զբաղեցնում միտինգները, ցույցերը, հանրահավաքները, գործադուլները, հեղափոխությունը, պատերազմները և այլ բնույթի հակամարտություններն ու առճակատումները: Բնության և տիեզերական շրջապտույտում նյութի գոյության ամեն մի վերջավոր ձև անցողիկ է, իսկ նրա շարժումն ու փոխակերպումները՝ հավերժական: Շարժվող նախահիմքը և անընդհատ է, և դիսկրետ: Երևույթներն ու գործընթացները զարգանում են մեկը մյուսի հետ փոխադարձ կապակցության մեջ, տարածության տվյալ տեղում և տվյալ ժամանակում, պահպանում են իրենց հարաբերական կայունությունը: Շարժման մեկնաբանման տարբեր արդյունքները պատմականորեն պայմանավորված են եղել հիմնականում հաշվարկման համակարգով: Արիստոտելը հաշվարկման համակարգ է ընտրել Երկիրը, որին համարել է աշխարհի կենտրոն և բացարձակ անշարժ: Երկրի նկատմամբ տեղի ունեցող ամեն մի շարժում ըստ Արիստոտելի իրական է, իսկ մարմինների միմյանց նկատմամբ տեղի ունեցող շարժումները՝ թվացող: Այս հայտնությունների վրա է հենվում նաև Պտղոմեոսի երկրակենտրոն համակարգը. Կոպեռնիկոսը իր արեգակակենտրոն համակարգում հաշվարկման համակարգը Երկրից տեղափոխեց Արեգակի վրա: Իսկ Ջորդանո Բրունոն հիմնավորեց, որ աշխարհում չկա ոչ մի կենտրոն, որի նկատմամբ կարելի լիներ համեմատել և ուսումնասիրել ցանկացած մարմնի շարժումը: Նյուտոնյան դասական ֆիզիկայում հաշվարկման համակարգ է ընդունվում բացարձակ անշարժ տարածության հետ կապված իներցիալ շարժումը: Հարաբերականության հատուկ տեսության մեջ շարժումը դիտվում է որպես մարմինների փոխադարձ դիրքի փոփոխություն և հաշվարկման իներցիալ համակարգը չի կապվում անշարժ միջավայրի կամ մարմնի հետ: Այստեղ դիտողը հանդես է գալիս իրենից անկախ գոյություն ունեցող ռեալ հարաբերությունների արձանագրողի դերում և ինքն է ընտրում հաշվարկման համակարգը: Շարժման բնույթի և աղբ-

յուրի վերաբերյալ տարբեր դարաշրջանների փիլիսոփաներ միատեսակ մոտեցում չեն դրսևորել: Դեմոկրիտեսի ատոմիստական ուսմունքում շարժումը դիտվում է որպես դատարկության մեջ ատոմների ազատ անկման երևույթ: Հերակլիտեսի համոզմամբ ամեն ինչ գտնվում է անընդհատ փոփոխության, շարժման, զարգացման վիճակում: Էլեաթները հասկացան շարժման բնույթի հակասականությունը, բայց պատմական սահմանափակության պատճառով չկարողացան այն պարզաբանել:

XVIII դարում Նյուտոնը զարգացրեց առաջին հարվածի գաղափարը: Նրա համոզմամբ տիեզերական բոլոր օբյեկտներին շարժում է հաղորդել անշարժ շարժիչը (աստված): Դրանից հետո այդ օբյեկտները պտտվում են իներցիայի շնորհիվ: Դիդրոյի կարծիքով «Մարմինների տեղաշարժը լոկ շարժման գործողություն է: Շարժումը առկա է ինչպես շարժվող, այնպես էլ անշարժ մարմնում: Շարժման աղբյուրը ուժն է, ակտիվությունը, որը բնությունից հատուկ է մատերիային: Ինչպես մատերիան, այնպես էլ շարժման աղբյուրը (ուժը) անստեղծելի ու հավերժ են»: Լամետրիի համոզմամբ մատերիան շարժման ունակություն ունի անգամ այն դեպքում, երբ չի շարժվում: XIX-XX դարերում շարժումն ըմբռնվում է որպես օբյեկտների, գործընթացների ներքին հակասական միտումների, ձգողական ու վանողական ուժերի բարդ փոխազդեցություն: Դիալեկտիկական մատերիալիզմում (էնգելս) հիմնավորվում է ինքնաշարժման գաղափարը: Այստեղ մատերիայի շարժման բոլոր ձևերի աղբյուր է դիտվում ներքին հակադրությունների պայքարը: Էնգելսի համոզմամբ մատերիան առանց շարժման և շարժումն առանց մատերիայի պատկերացնելն անհնարին է: XX դարում էյնշտեյնը հիմնավորեց, որ շարժումը և հանգիստը, կայունությունը և փոփոխականությունը անխզելիորեն կապված են միմյանց հետ, հաստատում և հերքում են միմյանց, փոխակերպվում են մեկը մյուսի: Դրանով էյնշտեյնը հիմնավորեց նաև շարժման, ժամանակի, տարածության անխզելի կապը:

Մեզ շրջապատող աշխարհի օբյեկտները գոյություն ունեն որոշակի ժամանակահատվածում և զբաղեցնում են որոշակի տարածք:

<u>Տարածությունը</u> կեցության գոյության եղանակ է, որը բնութագրում է ցանկացած նյութական օբյեկտի կամ համակարգերի տարածգությունը, կառուցվածքայնությունը: <u>Ժամանակը</u> ցանկացած համակարգի գործընթացի տևողությունը և իրավիճակների հերթափոխման հաջորդականությունը արտահայտող տևականությունն է: Կան մտածողներ,

Ինչպես տարածությունը և ժամանակը դիտում են որպես սուբյեկտիվ ապրումների ձևեր (Բերկլի): Նյուտոնի համոզմամբ տարածությունը և ժամանակը բացարձակ, նյութական գործընթացներից անկախ գոյաձևեր են: Նյուտոնից առաջ Գալիլեյը հիմնավորեց, որ տիեզերքում հաշվարկման բացարձակ անշարժ մարմին գոյություն չունի: Հիմնավորելով շարժման հարաբերականությունը Գալիլեյն ապացուցում է, որ օբյեկտի շարժման արագությունը կախված է հաշվարկման համակարգից:

Հեգելը տարածությունը և ժամանակը համարում է բացարձակ գաղափարի ծնունդ: Ոչ կեցությունից առկա կեցության անցման լինելության գործընթացում սկզբում ի հայտ է գալիս տարածությունը, իսկ հետո՝ ժամանակը:

Շարժման, ժամանակի, տարածության բնույթը պարզաբանվում է էվկլիդյան, Լոբաչևսկու և Ռիմանի երկրաչափությունների սկզբունքների համեմատական վերլուծության շնորհիվ: Էվկլիդյան երկրաչափությունը արտացոլում է մշտական զրոյական կորության տարածության հատկությունները: Լոբաչևսկու երկրաչափությունը արտացոլում է մշտական բացասական կորության տիրույթի օրինաչափությունները: Այդ երկրաչափության մեջ էվկլիդյան երկրաչափության ուղիղների փոխարեն ընդունվում են գեոդեզիական կորերը: Նման տիրույթում եռանկյան ներքին անկյունների գումարը միշտ փոքր կլինի 2d-ից: Ռիմանի երկրաչափությունը արտահայտում է մշտական դրական կորության տարածության հատկությունները: Այստեղ հարթության տակ դիտվում է էվկլիդյան տարածության միավոր շառավղի ոլորտը, իսկ կետը այդ մակերեսի դիամետրի երկու ծայրերն են: Ուղիղը կլինի այդ մակերեսի շրջանի շրջակայքը և հավասար կլինի կ-ի:

Բոլոր երեք երկրաչափություններն էլ օգնում են մարդուն թափանցելու տարածության խորքերը և ըմբռնելու այն խորությամբ: Այդ օրինաչափությունների հիման վրա ապացուցվեց, որ իրական տարածությունը չի կարելի դիտել որպես դատարկ զետեղարան: Տարածության հատկությունները պայմանավորված են նյութական մասսաների տեղաբաշխման վիճակից: Ուստի ռեալ տարածության ուսումնասիրության համար էվկլիդյան երկրաչափությունը բավարար չէ, քանի որ այն չի արտահայտում էներգիայի և մասսայի փոխադարձ կապը:

6. ՇԱՐԺՄԱՆ, ԺԱՄԱՆԱԿԻ, ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Շարժման, ժամանակի, տարածության դասական տեսությունը հիմնվում է նյուտոնյան ֆիզիկայի (դասական մեխանիկա) և էվկլիդյան երկրաչափության հիմնադրույթների վրա, որոնք արտացոլում են միայն օբյեկտների պարզ տարածական հարաբերությունների և սահմանային արագությունների օրինաչափություններ:

Կեցության փոփոխության ու զարգացման համընդհանուր գործընթացում շարժումը, ժամանակը, տարածությունը միաձույլ ամբողջություն են կազմում: Անհնարին է պատկերացնել ինչպես տարածությունից ու ժամանակից դուրս ընթացող գործընթաց, այնպես էլ գործընթացից դուրս դատարկ տարածություն և հոսող ժամանակ: Տարածությունը արտահայտում է միաժամանակ գոյություն ունեցող օբյեկտների դասավորության կարգը, իսկ ժամանակը՝ իրար փոխարինող երևույթների գոյության հաջորդականությունը: Մինչև մեր դարի սկիզբը բնափիլիսոփայական հետազոտություններում իշխում էր ժամանակի և տարածության վերաբերյալ Դեմոկրիտեսի և Էպիկուրի համոզմունքները, ըստ որի տարածությունը ներկայացվում էր որպես միշտ և ամենուրեք միատեսակ, անշարժ, անփոփոխ դատարկություն, իսկ ժամանակը՝ նյութական գործընթացներից անջատ հավասարաչափ հոսք: Այդպիսի ժամանակը գոյություն ունի ինքնին, անկախ բնության մեջ տեղի ունեցող գործընթացներից և օբյեկտների շարժման առանձնահատկություններից: Նյութական գործընթացների հետ առնչություն չունեցող այդ հավասարաչափ հոսքը կամ տևողությունը կոչվում է բացարձակ ժամանակ: Այդ ժամանակի ճշգրիտ կամ փոփոխական, զգայությանը մատչելի և որևէ շարժման միջոցով իրականացվող տևողությունը, որը առօրյա կյանքում օգտագործվում է որպես ժամ, օր, տարի կոչվում է հարաբերական ժամանակ: Նրանց համոզմամբ այդ ժամանակը իրական չէ, իրականը ամեն ինչից անկախ ընթացող բացարձակ ժամանակն է: Դասական ֆիզիկայում իշխող այդ պատկերացումների համաձայն տարածությունն ու ժամանակը իրենք իրենց և գոյություն ունեցող ամեն ինչի զետեղարան են:

Նյուտոնի կարծիքով «բացարձակ, ճշմարիտ, մաթեմատիկական ժամանակը ինքն իրեն, ոչ մի բանի հետ չկապված ընթանում է հավասարաչափ և կոչվում է տևականություն: Բացարձակ տարածությունը

իր էությամբ, ոչ մի բանի հետ չկապված, միշտ մնում է նույնը և անփոփոխ»: Նման ըմբռնմամբ բացարձակ տարածությունը «մաքուր զետեղարան» է, որտեղ լցված են երկնային օբյեկտներ: Հետևաբար տարածությունն ու ժամանակը դիտվում են առանձին ու անկախ՝ օբյեկտների տարածական բաշխումից: Այսինքն, շարժման ընթացքում օբյեկտների ուսումնասիրության ժամանակ նրանց տեղը որոշվում է այլ օբյեկտների հետ փոխադարձ դիրքի, իսկ ժամանակը՝ պարբերական գործընթացների միջոցով: Նյուտոնը բացարձակ տարածության ու ժամանակի հետ մեկտեղ ընդունում է հարաբերական տարածության ու ժամանակի գաղափարը: Սակայն, դրանով բացարձակ և հարաբերական տարածությունն ու ժամանակը փոխպայմանավորված չեն դիտարկվում: Դրանք հակադիր կողմեր են և չեն վերագրվում միևնույն էությանը: Պրակտիկ հետազոտությունների ընթացքում ուսումնասիրողը տեղեկություն է ձեռք բերում հարաբերական տարածության ու ժամանակի մասին, իսկ բացարձակ ժամանակն ու տարածությունը մնում են անմատչելի: Տարածության ու ժամանակի բացարձակության և հարաբերականության նյուտոնյան ըմբռնումը արտահայտում է միայն մեխանիկական գործընթացներում դիտարկվող երևույթները:

Կանտը ևս բացարձակ տարածության և ժամանակի հասկացությունները զրկում է իրենց օբյեկտիվ բովանդակություններից, հիմնավորելով, որ դրանք մարդուն ի ծնե հատուկ հայեցողության ձևեր են: Նրա կարծիքով մարդը համոզվել է, որ իր զգացած օբյեկտները գտնվում են որոշակի տեղում: Եթե այդ տեղի ըմբռնումը մարդուն տրված չլիներ ապրիորի, նա չէր կարող պատկերացնել որևէ փորձ, քանի որ «արտաքին փորձը առաջին անգամ հնարավոր է դառնում տարածության պատկերացման շնորհիվ»: Կանտի համոզմամբ «անհնար է պատկերացնել, որ տարածություն չկա», բայց կարելի է պատկերացնել, որ նրա մեջ ոչ մի առարկա չկա: Նույն հետևողականությամբ Կանտը հիմնավորում է, որ երևույթների և գործընթացների հաջորդականությունը մեր կողմից ընկալվում է այն պատճառով, որ մեզ հատուկ է ժամանակի ապրիորի հասկացությունը: Դրանով Կանտը ժամանակն ու տարածությունը ներկայացնում է որպես մարդու մտքին ապրիորի կերպով հատուկ, փորձից անկախ, տրամաբանորեն անհրաժեշտ կատեգորիաներ:

XX դարում Ա.Էյնշտեյնը հիմնավորեց, որ դասական ֆիզիկայի բացարձակ տարածության, ժամանակի, շարժման վերացարկումները միկրոաշխարհում և գերխիտ համակարգերում չեն գործում: Էյնշտեյնի

կարծիքով «ժամանակը հավասարաչափ չի ընթանում ողջ տիեզերքում: Նրա փոփոխությունները կախված են շարժվող համակարգերի արագությունից և փոխազդեցությունից»: Այդ սկզբունքները ձևավորվեց որպես հարաբերականության տեսություն:

Շարժման, ժամանակի, տարածության հարաբերականության տեսությունը հիմնվում է միջուկային ֆիզիկայի օրինաչափությունների վրա: Մասնագետների կողմից առանձնացվում են հարաբերականության հատուկ և ընդհանուր տեսություններ:

Հարաբերականության հատուկ տեսության համաձայն բնության գործընթացներում ֆիզիկական պատկերման համար բոլոր K և K՛ հաշվարկման մարմինները հավասարազոր են: Այսինքն, ամեն մի շարժում հնարավոր է միայն որպես հարաբերական շարժում: Օրինակ, մեքենան շարժվում է ճանապարհի պաստառի նկատմամբ: Այստեղ հաշվարկման մարմին է դիտվում ճանապարհի պաստառը: Իսկ ճանապարհի պաստառը շարժվում է մեքենայի նկատմամբ օրինակում՝ մեքենան:

Հարաբերականության սկզբունքը. Եթե K՛-ը այնպիսի կոորդինատական համակարգ է, որը K-ի նկատմամբ շարժվում է հավասարաչափ և առանց պտտվելու, ապա բնության երևույթները K՛ համակարգի նկատմամբ տեղի կունենան նույնպիսի ընդհանուր օրենքներով, ինչպես և K-ի նկատմամբ: Նախքան հարաբերականության տեսության ձևավորվելը ֆիզիկայում ընդունվում էր, որ ժամանակը բացարձակ է և կախված չի հաշվարկման մարմնի շարժման վիճակից: Հարաբերականության տեսությունը հիմնավորեց, որ յուրաքանչյուր հաշվարկման համակարգ ունի իր ժամանակը: Ժամանակի նշումը իմաստ ունի միայն այն դեպքում, երբ նշված է հնսմապատասխան հաշվարկման մարմինը, որին վերագրված է այդ ժամանակը: Նույնը վերաբերվում է և շարժմանը: Շարժման և ժամանակի բնույթը բացահայտվում է Լորենցի ձևափոխություններով: Հիմնավորվում է, որ երկու կետերի միջև եղած հեռավորությունը՝ $\ell = \sqrt{1 - \frac{v^2}{c^2}}$, իսկ ժամանակը՝ $t = \frac{1}{\sqrt{1 - \frac{v^2}{c^2}}}$:

Այսինքն, շարժվող պինդ քանոնը ավելի կարճ կլինի անշարժից, և այնքան կարճ կլինի, որքան արագ շարժվի: **Նույնը և ժամացույցի նկատմամբ է:**

Հարաբերական հատուկ տեսությունը հիմնվում է դատարկության մեջ լույսի արագության հաստատունության օրենքի վրա: Այ-

սինքը, հարաբերականության հատուկ տեսության եզրակացությունները ուժ ունեն այնքան ժամանակ, քանի դեռ հաշվի չեն առնվել ձգողական դաշտերի ազդեցությունը երևույթների վրա: Հարաբերականության հատուկ տեսությունը համապատասխանում է գալիլեյան տիրույթներին, որտեղ գոյություն չունի ձգողական դաշտ: Այդ դեպքում որպես հաշվարկման մարմին ծառայում է պինդ մարմինը:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ բացահայտում է 1. թե ինչպես է ձգողական դաշտը ազդում ուսումնասիրվող գործընթացների վրա: 2. Լույսի ճառագայթները ձգողական դաշտում կորանում են՝ տարածվում են կորագծով: 3. ձգողական դաշտի առկայության դեպքում լույսի արագությունը միշտ կախված կլինի կոորդինատներից: Այսինքն, ձգողական դաշտում լույսի տարածման արագությունը հավասար չէ ոչ ձգողական դաշտում տարածման արագությանը: 4. տարածաժամանակային անընդհատությունը էվկլիդյան անընդհատություն չէ: Այսինքն, ձգողական դաշտում չկա էվկլիդյան հատկություններով պինդ մարմիններ: 5. ձգողական դաշտերն ազդում են ժամացույցների ընթացքի վրա այնպես, որ ժամացույցի օգնությամբ ժամանակի ֆիզիկական սահմանումը չունի այն աստիճանի ակներևություն, ինչպես հարաբերականության հատուկ տեսության մեջ [պատկերացնենք իր առանցքի շուրջը պտտվող հսկայական տրամագծով անիվ: Եթե այդ անիվի առանցքի և վերին մասում տեղադրենք ժամացույցներ և անիվը արագ պտտենք, այդ ժամացույցները միատեսակ ցուցմունքներ չեն տա, քանի որ առանցքի մոտ ծանրության դաշտը խիստ փոքրանում է, իսկ դեպի եզրը՝ խիստ կաճի]: ՈՒրեմն անիվի եզրի ժամացույցը ավելի դանդաղ կաշխատի, քան կենտրոնինը: 6. տարածության երկրաչափական հատկությունները պայմանավորված են մատերիայով: 7. ծանր և իներտ մասսաները հավասար են ձգողական դաշտում [ծանրության դաշտում երկաթի և փայտի կտորը կընկնեն նույն արագությամբ]:

Բնագիտության զարգացման և էյնշտեյնի հարաբերականության տեսության շնորհիվ 20-րդ դարում հիմնավորվեց, որ ժամանակի հոսքը ու մարմինների տարածգությունը կախված են այդ մարմինների շարժման արագությունից, իսկ երկրաչափական հատկությունները՝ նյութի մասսաների կուտակման ձգողության դաշտից: Շարժման արագության մեծացման համեմատ աճում է մարմինների մասսան, փոքրանում են գծային չափերը, դանդաղում է գործընթացների ռիթմը, ժամանակի հոսքը: Հետևապես որևէ համակարգից անկախ բացարձակ

մասնիկներ, որոնք ունեն զանգված, էլեկտրական լիցք, սպին, իմպուլս, էներգիա, տարածություն ու ժամանակ գոյություն չունի: Բուտլերովի, Ֆյոդորովի հետազոտությունների շնորհիվ բացահայտվեց, որ տարածական հատկությունները կախված են մարմինների ֆիզիկական բնույթից, իսկ նյութի ֆիզիկաքիմիական հատկությունները պայմանավորված են ատոմների տարածական դասավորությունից: Լոբաչևսկու, Ռիմանի, Գաուսի և այլոց հետազոտությունների շնորհիվ ստեղծված ոչ էվկլիդյան երկրաչափությունը խորացրեց գերխիտ օբյեկտների և գրավիտացիոն դաշտերի վերաբերյալ նախկին պատկերացումները և գիտական հավաստի փաստարկներով հիմնավորեց կեցության, տարածության, շարժման, ժամանակի անխզելի կապը:

ԳԼՈՒԽ IV

ԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐԸ

1. ԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

Կապերի ըմբռնումը: Կապը իրերի, երևույթների, գործընթացների ծագման, զարգացման ու փոփոխության համընդհանուր առընչությունների և բազմակողմանի փոխազդեցությունների հարակցություն է: Բնության և հասարակության օբյեկտների, երևույթների ու գործընթացների առավել ընդհանուր և էական հարաբերություններն ու կապերն արտացոլող հիմնական հասկացությունները՝ պատճառն ու հետևանքը, երևույթն ու էությունը, անհրաժեշտությունն ու պատահականությունը, հնարավորությունն ու իրականությունը, ձևն ու բովանդակությունը որպես փիլիսոփայության կատեգորիաներ ձևավորվել են մարդկային պրակտիկայի ու ճանաչողության գործընթացում: Բնության մեջ ամեն ինչ գտնվում է փոխազդեցության, փոխներգործության և փոխկապվածության վիճակում: Դիդրոյի պատկերավոր արտահայտությամբ «բոլոր երևույթները կապակցված կլինեին, եթե նույնիսկ դրանցից յուրաքանչյուրը չունենար կայուն վիճակ»:Յուրաքանչյուր իր, առարկա, երևույթ ձևավորման ու զարգացման գործընթացում բազմաթիվ կապերով կապված է ինչպես շրջակա, այնպես էլ տարածականորեն հեռավոր իրերի, առարկաների ու երևույթների հետ, կրում է նրանց ազդեցությունը և ազդում է նրանց վրա: Այդ կապերը բազմակողմանի են ու համընդհանուր: Տիեզերքում ամեն ինչ գտնվում է անընդհատ շարժման, փոփոխման, վերակազմության ու զարգացման գործընթացում: Այդ գործընթացն իր բազմաթիվ կապերով գեղարվեստական նուրբ արտահայտչականությամբ է պատկերել Հ. Թումանյանը.

Խայամն ասավ իր սիրուհուն. – Ոտըդ ըզգույշ դիր հողին,
Ով իմանա որ սիրունի բիբն ես կոխում դու հիմի...
Հեյ ջան, մենք էլ ըզգույշ անցնենք, ով իմանա, թե հիմի
Էն սիրուհու բի՞բն ենք կոխում, թե հուր լեզուն Խայամի:

Իրարից խիստ տարբեր երևույթների միջև առկա համընդհանուր կապակցությունների ու կապերի շնորհիվ է, որ գոյություն ունի օրգանական ու անօրգանական աշխարհի ողջ բազմազանությունը, մատե-

րիայի դրսևորման այն հրաշքը, որը կոչվում է կյանք: Քիմիական էլեմենտների միևնույն ստրուկտուրային կառուցվածքի՝ էլեկտրոնի, պրոտոնի, նեյտրոնի, մեզոնի, հիպերոնի և այլ տարրերի տարբեր համակցությունների ու կապերի արդյունք է ողջ տիեզերքն իր անսահման դրսևորումներով: Իսկ այդ դրսևորումների էական, ընդհանուր կողմերի, հարաբերությունների ու կապերի ամբողջականությունը ի հայտ է գալիս որպես կատեգորիա:

ԿԱՏԵԳՈՐԻԱ (kategoria) հունարեն նշանակել է ասույթ, վկայություն: Փիլիսոփայության մեջ այն իմաստավորում է որպես հիմնական հասկացություն, որն արտացոլում է օբյեկտիվ իրականության առավել ընդհանուր ու էական հատկությունները, կողմերը, հարաբերությունները: Կատեգորիաները առաջացել են ճանաչողության պատմական զարգացման գործընթացում որպես վերացական մտածողության ամենաէական դրսևորում: Այն ամենը, ինչ մարդը գիտի իրեն շրջապատող աշխարհի և իր մասին, նա գիտի հասկացությունների ու կատեգորիաների միջոցով: Օրինակ, բույս, ծառ, տուն, կենդանի, ինստիտուտ, ուսանող, դասախոս, գիտելիք, ժամանակ, շարժում, տարածություն և այլն: Իմացության յուրաքանչյուր բնագավառ ունի իր հիմնական կատեգորիաները, որոնք ընդհանրացնում ու արտացոլում են այդ բնագավառի երևույթների ու գործընթացների էական կապերն ու արմատական սկզբունքները: Այդպիսի կատեգորիաներ են կենսաբանության մեջ՝ ժառանգականություն, փոփոխականություն, կյանք, ֆիզիկայում՝ էներգիա, մասսա, ատոմ, փիլիսոփայության մեջ՝ սուբստանցիա, շարժում, ժամանակ, տարածություն, քանակ, որակ և այլն: Կոնկրետ գիտություններն ուսումնասիրում են իրականության տվյալ բնագավառի երևույթների ու գործընթացների էական կապերն ու հարաբերությունները: Իսկ փիլիսոփայության կատեգորիաները արտահայտում են կեցության համընդհանուր հատկությունները, հարաբերությունները ու կապերը և հանդիսանում են մարդկային պրակտիկայի ու ճանաչողության գործընթացում բարձրագույն խտացումներ ու ընդհանրացումներ: Հետևապես կատեգորիաները մարդու գիտակցության մեջ օբյեկտիվ աշխարհի համընդհանուր կապերի ու հարաբերությունների արտացոլման ձևեր են, գիտությունների նվաճման և մարդկային պրակտիկայի ընդհանրացման արդյունք: Բայց փիլիսոփայության պատմության մեջ այս ըմբռնումը միանշանակ չէ: Հեգելը կատեգորիաները դիտում էր որպես համաշխարհային բանականության դրսևորումներ: Նորթոմիստների պատկերացմամբ կատեգորիաները ի սկզբանե գոյություն են ունեցել

աստվածային բանականության մեջ որպես իրերի հատկությունների ու հարաբերությունների նախատիպեր: Իսկ սուբյեկտիվ իդեալիզմը կատեգորիաները դիտում է որպես մարդու գիտակցական գործունեության արդյունք՝ չկապելով դրանք ռեալ աշխարհի հետ: Իրականում կատեգորիաները իրենց մեջ խտացնում են գիտությունների զարգացման նվաճումները և որպես նախահիմքի դրսևորման բազմազանությունը իմաստավորող բանականության ճառագում՝ արտացոլում են կեցության տարբեր կապերն ու հարաբերությունները: Աշխարհում ամեն ինչ փոխադարձաբար կապված են և գտնվում են համընդհանուր փոխներգործության գործընթացում: Փոխադարձ կապի այդ շղթայի ուսումնասիրության գործում կարևորվում է ԵԶԱԿԻՆ, ՀԱՏԿԱԿԱՆԸ և ԸՆԴՀԱՆՈՒՐԸ:

Եզակին իմաստավորում է իրերի, օբյեկտների անհատականությունը, յուրակերպությունը և որակական առանձնահատկությունները: Յուրաքանչյուր առանձին օբյեկտ ըմբռնվում է իբրև եզակի, բայց օբյեկտների մեջ կրկնվող հատկանիշների շնորհիվ եզակին օժտվում է նաև ընդհանուր գծերով:

Ընդհանուրը ամբողջի կազմում եզակի իրերի, երևույթների, գործընթացների փոխկապակցության օրինաչափ ձևն ու կեցության սկզբունքն է: Այն արտահայտում է առարկաների տվյալ դասին բնորոշ հատկանիշներն ու հարաբերությունները: Եզակին և ընդհանուրը մի ամբողջության մեջ միավորող միջանկյալ օղակը կոչվում է հատկական: Եթե իրերի ու օբյեկտների մեջ կրկնվող ընդհանուր գծերն ու հատկությունները հատուկ են նեղ խմբերի, գործ ունենք հատկականի հետ, իսկ եթե հատուկ են բոլոր առարկաներին ու օբյեկտներին՝ գործ ունենք ընդհանուրի հետ: Օրինակ, ծաղիկ կովը տվյալ անասնագոմում առկա միևնույն ցեղախմբի մի քանի տասնյակ կովերի նախրում հանդես է գալիս որպես եզակի: Այդ ցեղախմբի բոլոր եզակիների ամբողջությունը հատկականն է, իսկ շվից, սիմենթալ և այլ ցեղախումբ հատկականների ամբողջություն կազմող խոշոր եղջերավոր կենդանիների դասը՝ ընդհանուր: Եզակին, հատկականը և ընդհանուրը գտնվում են անխզելի կապի մեջ: Ընդհանուրը իր մեջ ամփոփում է հատկականի և եզակիի ընդհանուր գծերն ու առանձնահատկությունները: Ոչ մի իր կամ առարկա գոյություն չունի ինքնին, այլ առարկաներից ու օբյեկտներից անկախ: Այն չի կարող ծագել ու պահպանվել այլ իրերի ու երևույթների կապակցությունից դուրս: Ուստի ընդհանուրը գոյություն ունի եզակիի մեջ և եզակիների միջոցով: Այս տեսակետից դժվար է հա-

մածայնվել Պլատոնի և Հեգելի այն ըմբռնման հետ, ըստ որի ընդհանուրը նախորդում է եզակիին և արարում է այն: Հարցի միակողմանի մոտեցում նկատվում է նաև միջնադարյան նոմինալիստների մոտ, որոնց համոզմամբ ռեալ կերպով գոյություն ունեն միայն եզակի իրերն իրենց հատկություններով ու հարաբերություններով, իսկ ընդհանուրը ռեալ գոյություն չունեցող անուն է: Այստեղ անտեսվում է այն հանգամանքը, որ իր գոյության կոնկրետ ձևով եզակի իրը պարտական է օրինաչափորեն ձևավորված այն կապերի համակարգին, որոնց ներսում նա ծագում և գոյատևում է իր որակական որոշակիությամբ: Եզակիի, հատկականի և ընդհանուրի այս դիալեկտիկական համամասնության խախտումը կործանիչ կարող է լինել բոլորի համար: Օրինակ, Կարմիր գրքում հայտնված բուսական ու կենդանական աշխարհի տեսակների հետագա գոյության և որակական ու քանակական համամասնության պահպանմանը սպառնում է այն վտանգը, որ ընդհանուրի կրճատումը հանգեցնում է նաև եզակիի կործանմանը: Ասվածը վկայում է, որ ընդհանուրը գոյություն չունի եզակիից դուրս, ինչպես որ, եզակին էլ գոյություն չունի ընդհանուրից դուրս: Եզակիի հատկականի և ընդհանուրի դիալեկտիկական միասնությունը ունի ճանաչողական և պրակտիկ մեծ նշանակություն: Յուրաքանչյուր օրգանիզմ ունի իր ֆիզիոլոգիական և հոգեկան առանձնահատկությունները, բնավորության անհատական կերտվածքը, զգացմունքները: Միաժամանակ այն արտացոլում է նաև իր նմանների խմբավորում կազմող հատկականի և ընդհանուրի յուրահատուկ ընդհանրությունները, օրինաչափությունները, բազմազանության ընդհանուր գծերը: Եզակիի հատկականի և ընդհանուրի կատեգորիաները սերտորեն առնչվում են էության և երևույթի կատեգորիաների հետ: Մեզ շրջապատող աշխարհի երևույթները էության եզակի դրսևորումներ են, իսկ բազմաթիվ երևույթների հիմքում ընկած էությունը տվյալ երևույթը այլ կարգի երևույթից որակապես տարբերող ընդհանուրն է:

ԷՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹ: էությունը իրերի, առարկաների, գործընթացների ներքին կառուցվածքի, խորքային կապերի օրինաչափությունների որակական ամբողջականությունն է, իսկ Երևույթը այդ որակական ամբողջականության կոնկրետ հատկությունների և հատկանիշների արտաքին դրսևորումն է: էության և երևույթի կատեգորիաներն արտահայտում են մարդու ճանաչողության զարգացումն ու խորացումը, երևույթի զգայական ընկալումից, մտածողության օգնությամբ, խորանալով իրերի ու գործընթացների էության մեջ: Օրվա ընթացքում մեր

զգայարանների միջոցով մենք բախվում ենք հազարավոր երևույթների, հիմնում ենք շրջակա միջավայրի բազմերանգությամբ, որոնք բոլորն էլ կոնկրետ էությունների դրսևորում են կոնկրետ պայմաններում: Յուրաքանչյուր երևույթ օժտված է բազմաթիվ մանրամասնություններով, ինքնատիպ հատկություններով, որոնք էության տարբեր որակների ու կողմերի դրսևորումներ են, չնայած էությանն տեսակետից նրանք կարող է և պատահական ու անցողիկ լինեն: Հետևապես երևույթը, լինելով էության դրսևորում, հարուստ է տվյալ արտացոլմանը հատուկ և տվյալ պայմաններով որոշվող մանրամասնություններով: Իսկ էությունը հարուստ է իր ներքին բովանդակությամբ, որը կարող է առկա լինել ոչ միայն տվյալ երևույթի մեջ, այլև տվյալ էությանը հատուկ ու բնորոշ այլ երևույթներում: Տարբեր երևույթների մեջ էությունը կարող է տարբեր արտահայտչականությամբ դրսևորվել: Դա հիմնականում պայմանավորված է երևույթի զարգացման աստիճանով: Զարգացման բարձր փուլ ներկայացնող երևույթներում էությունը առավել բազմակողմանիորեն է դրսևորվում: Բայց երևույթի և էության համընկնումը միանշանակ ընթացող ու զարգացող գործընթաց չէ: Հաճախ երևույթը ոչ միայն սքողում, աղավաղում է էությունը, այլև սխալ լրատվություն է տալիս նրա մասին: Դրանով է պայմանավորված գիտական հետազոտությունների ու հայտնագործությունների դժվարին ուղին: Օրինակ, 19-րդ դարում ֆիզիկոսները լույսի ճառագայթը պատկերացնում էին մասնիկների հոսքի ձևով, իսկ դարավերջին բացահայտվեց նաև նրա ալիքային հատկությունը: Այդ գործընթացում իհարկե, մասնիկային հատկությունը չդադարեց էական լինելուց: Այն էական է առաջին մոտեցմամբ՝ որպես պակաս խոր կարգի էություն և իր բացատրությունը ստանում է լույսի ճառագայթի հատկության միջոցով: Հետևապես էության և երևույթի միջև սկզբունքային տարբերություն ու սահման գոյություն չունի: Երևույթը բուն էության դրսևորումն է, այսինքն էությունը ներթափանցվում է երևույթի մեջ և կոնկրետ հատկությունների ու հատկանիշների ձևով մատչելի, հասանելի է դառնում մարդկային իմացությանը: Այս գործընթացում իհարկե, նախնական ծանոթությունը տեղի է ունենում երևույթի հետ, իսկ հետո վերացարկման զորությամբ պարզաբանվում է էությունը: Բայց չպետք է մոռանալ, որ ցանկացած երևույթում առկա է էության այս կամ այն որակական համամասնությունը: Այս ճշմարտությանը մասամբ հասու էին դեռևս հին հունական փիլիսոփաները, որոնք էության տակ հասկանում էին կոնկրետ իրերն ու երևույթները, և ընդհանուր հասկացությունները: Արիստոտելը ֆիզիկական իրերն ու առարկաներն

անվանում էր առաջին գոյացություններ, իսկ այդ իրերի մասին հասկացությունները՝ երկրորդ գոյացություն: Բայց Պլատոնը, հարազատ մնալով իդեալիստական համոզմունքներին, պնդում էր, որ ռեալ գոյություն ունեն ընդհանուր հասկացությունները, գաղափարը, իսկ իրերն ու առարկաները այդ գաղափարների ստվերներն են: Երևույթի և էության ըմբռնման խնդրի շուրջը լուրջ պայքար ծավալվեց միջնադարում, որը դրսևորվեց նոմինալիզմի և ռեալիզմի փիլիսոփայական հոսանքների ձևով: Ըստ նոմինալիզմի ռեալ գոյեր են առանձին իրերը, առարկաները, իսկ ընդհանուրը, հասկացությունը իրականության մեջ գոյություն չունի, այն գոյություն ունի միայն մեր մտքում որպես անուն:

Նոմինալիզմից գրեթե չէր տարբերվում նաև միջնադարյան կոնցեպտուալիզմը, որը ժխտելով ընդհանուրի ռեալ գոյությունը իրականության մեջ, հիմնավորում էր, որ այն գոյություն ունի մտքի մեջ: Իսկ կրոնական փիլիսոփայության տեսական հոսանքներից մեկը՝ միջնադարյան ռեալիզմը՝ հիմնավորելով ընդհանուրի օբյեկտիվ գոյությունը, միակ ռեալ գոյ էր ընդունում ընդհանուր հասկացությունները (ունիվերսալիաները), որոնք, նրանց կարծիքով, նախորդում են եզակի իրերի գոյությանը: Այս տեսանկյունից որոշակի ծայրահեղության է հանգում նաև սուբյեկտիվ իդեալիզմը: Բերկլին պնդում էր, որ ընդհանուր և վերացական հասկացությունները իմաստ չունեցող, մտքի արգասիք են, որովհետև զգայաբար ընկալելի է կոնկրետ առարկան, կոնկրետ անձը, կոնկրետ օբյեկտը, իսկ ասենք պտուղ հասկացությունը մտքի պատրանք է: Բերկլիի կարծիքով երևույթների էությունը նրանց զգայական գոյությունն է: Իսկ Հյումը ընդհանրապես մերժում էր երևույթի ռեալ գոյություն ունենալու և մարդու զգայարանների ծնունդ հանդիսանալու ճշգրտման հնարավորությունը: Նրա կարծիքով երևույթների էության հարցն անլուծելի է, որովհետև մարդկային մտածողությունը երևույթից այն կողմ խորանալ չի կարող: Երևույթի և էության ճանաչողության հարցում Կանտը ևս հանգում էր նման տեսակետի: Նրա համոզմամբ զգայական ճանաչողությանը հասու են սոսկ երևույթները, իսկ էությունը գոյություն ունի մեր զգայություններից դուրս, որն անհիմանալի ու անճանաչելի է: Հանդես գալով երևույթի և էության ըմբռնման ավանդական հակադրման դեմ Հեգելը հիմնավորեց, որ բնությունը և երևույթ է, և էություն: Երևույթը և էությունը, ըստ Հեգելի, միասնություն են կազմում, որովհետև բնությունը բացարձակ գաղափարի նյութական մարմնավորումն է, որն իր մեջ պոտենցիալ ձևով պարունակում է երևույթների բազմազանության մեջ դրսևորվող էությունը: Ըստ Հեգելի էությունը

իրականություն է դառնում երևույթների մեջ: Էությունը, որպես մատերիայի շարժման ու զարգացման գործընթացի ներքին կողմ, ընդգրկում է երևույթների ընդերքի օրինաչափ կապերը: Հետևապես էությանն ճանաչումը տանում է դեպի երևույթների ներքին կառուցվածքի օրինաչափ կապակցությունների ճանաչում: Այս տեսակետից երևույթի և էության կատեգորիաները ընդարձակում են ձևի և բովանդակության կատեգորիաների իմացության շրջանակները, որովհետև էությունը կարելի է դիտել որպես երևույթի ներքին բովանդակություն, իսկ երևույթը՝ էության դրսևորման ձև:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՎ: Բովանդակությունը իրերի, առարկաների, օբյեկտների կառուցվածքային, բաղկացուցիչ տարրերի, հատկությունների ու կապերի միասնությունն է: Ձևը կառուցվածքային կապերի ու հիմնատարրերի արտահայտչականությունն է: Բովանդակությունն առարկաների ու օբյեկտների ներքին կողմն է, անհատականությունը, որակական ու քանակական համամասնությունը: Ձևը այդ առարկաների ու օբյեկտների բովանդակության կառուցվածքի արտահայտման, դրսևորման եղանակն է: Այսինքն, բովանդակությունը տվյալ առարկայի բաղկացուցիչ տարրերի ամբողջությունն է, իսկ ձևը՝ այդ նույն տարրերի տեղաբաշխման որոշակի կարգն է: Բովանդակության և ձևի փոխհարաբերության հարցը փիլիսոփայության պատմության մեջ միանշանակ լուծում չի ստացել: Հույն մեծ մտածող Արիստոտելը զգայական աշխարհում մատերիան ու ձևը համարելով անխզելի միաժամանակ հիմնավորում էր, որ կոնկրետ իրերի նախահիմք հանդիսացող մատերիան ինքնին չեզոք է, ակտիվությունից զուրկ, իսկ ձևը ակտիվ, ստեղծագործող գոյ է: Ձևի շնորհիվ է, որ մատերիան ձեռք է բերում իր անհատականությունը, իր կյանքի էներգիան, ամբողջականությունը, առարկայացումը: Միաժամանակ Արիստոտելն ընդունում էր բովանդակությունից առաջ և նրանից անկախ գոյություն ունեցող ձևերի ձևի՝ հավիտենական ձևի գոյությունը: Այս մտայնությունը հետագայում լայն տարածում գտավ քրիստոնեության աստվածաբանների մոտ, այդ թվում և Հայաստանում: Բայց արդեն վերածնության դարաշրջանում այն լուրջ քննադատության է ենթարկվում բնագետների կողմից: Ջորդանո Բրունոն պնդում էր, որ ձևը մատերիային ներհատուկ ձևն է և նրանից անջատ գտնվել չի կարող: Ըստ Բրունոյի ոչ թե ձևն է մատերիային ակտիվություն հաղորդում, այլ մատերիան ինքն է ձևավորվում, նոր ձևեր ընդունում իրեն ներհատուկ օրինաչափության համաձայն: Բայց որոշ տեղերում Բրունոն ևս զիջումներ է կատարում ձևին, նրան

վրջնականապես չզրկելով ինքնուրույն նախահիմք լինելու հնարավորությունից: 17-րդ դարի անգլիացի բնափիլիսոփա Ֆր.Բեկոնը խորացնելով բովանդակության ու ձևի քննարկման հարցը հիմնավորեց, որ չի կարելի ձևն անջատել մատերիայից, որովհետև մատերիան միշտ ձևավորված է, իսկ ամեն մի ձև ունի իր կոնկրետ բովանդակությունը: Ընդգծելով ձևի օբյեկտիվությունը Բեկոնը այն բարձրացրեց մինչև օրենքի աստիճանի: Խորացնելով ձևի ու բովանդակության անխզելիության գաղափարը Հեգելը հիմնավորում էր, որ առանց բովանդակության ձև լինել չի կարող: Բովանդակությունը միշտ մարմնավորված է որևէ ձևի մեջ, իսկ ձևն էլ միշտ պետք է նյութականացված լինի: Իմացության գործընթացում և արվեստում ձևի և բովանդակության համապատասխանության խախտումը, ձևի անջատումը բովանդակությունից հանգեցնում է ֆորմալիզմի, ըստ որի ձևը առաջնակարգ է և բովանդակությունից անկախ: Այդ համոզմունքի համաձայն արվեստը պետք է լինի բովանդակությունից վեր կանգնած գեղեցիկ ձև, իսկ արվեստի զարգացումը՝ բովանդակությունից անկախ, իր ներքին օրենքների համաձայն տեղի ունեցող ձևի փոփոխման գործընթաց: Ֆորմալիստներն անտեսում են այն հանգամանքը, որ առանց գաղափարի արվեստի գործ, կամ գեղարվեստական երկի ձև չկա: Գաղափարը միաժամանակ և ձևի բովանդակությունն է, և նրա տարրերը կապակցող ուժ: Ձևը բացարձակապես դատարկ տեղում առաջանալ չի կարող: Այն բովանդակության փոփոխման հետևանքով համապատասխանաբար մեկ ձևից մյուսին անցնելու գործընթաց է: Արվեստում ևս նոր ձևերն առաջանում են որպես նախորդ ձևերի օրինաչափ զարգացման, նախորդ ժանրերի ու արժեքների իմաստավորման ու օգտագործման հիման վրա: Օրինակ, իմպրեսիոնիզմը, որպես դասական արվեստի ձևերի արմատական բեկման արդյունք, ոչ թե դասականի միանշանակ մերժում է, այլ նրա էության հարստացման ու զարգացման մի նոր աստիճան է: Նույն օրինաչափությունը կարելի է դիտել էքսպրեսիոնիզմի ու իմպրեսիոնիզմի միջև: Ինչպես բնության մեջ, այնպես էլ հասարակական կյանքում ու արվեստում ամեն մի անցում նախապատրաստվում է նախորդի քանակական փոփոխությամբ և ավարտվում է նոր որակական առանձնահատկություններով: Նոր ձևը միշտ ծագում է հին ձևի հիմքի վրա և նրանից ինչ-որ բան էլ ժառանգում է: Այս օրինաչափության բացահայտման կարևոր մեթոդաբանական ուղեցույց կարող է հանդիսանալ պատճառականության սկզբունքը:

ՊԱՏՃԱՌ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔ: Երևույթների ու գործընթացների շարժ-

ման, փոփոխության, փոխկախվածության ու համընդհանուր կապի դրսևորումը իմաստավորվում է պատճառականության կատեգորիայում: Պատճառը երևույթների ու գործընթացների համընդհանուր գենետիկական կապի ակտիվության այնպիսի դրսևորումն է, որի շնորհիվ պետք է ծնվի, առաջանա մի նոր երևույթ: Այդ կապի մեջ ձևավորվող, առաջացող նորը կոչվում է հետևանք: Պատճառն ու հետևանքը հարաբերակից կատեգորիաներ են, որոնց միջև գոյություն ունի ներքին, օրգանական, գենետիկ կապ: Օրինակ, թեր սնված օրգանիզմի դիմադրողականության անկման հետ մեկտեղ ակտիվանում է ախտածին բակտերիաների կենսագործունեությունը և համապատասխանաբար ի հայտ են գալիս մի շարք հիվանդություններ ու ֆունկցիոնալ խանգարումներ: Յուրաքանչյուր կոնկրետ պատճառից անհրաժեշտորեն և անխուսափելիորեն բխում, ծնվում է կոնկրետ հետևանք: Հեգելի դիպուկ արտահայտությամբ «պատճառը իր մեջ չի բովանդակում ոչ մի այնպիսի բան, որ չլինի նրա գործողության մեջ»: Այսինքն, հետևանքը հանդիսանում է պատճառի դրսևորումը, արտահայտությունը, օրգանական, օրինաչափ կապը, ինչ որ նոր որակ: Միևնույն տարածքում, բայց ստվերում և լուսաշող միջավայրում աճող ելակի պտուղների մեծությունը, գույնը, համային հատկությունները զգալիորեն կտարբերվեն միմյանցից: Մարդկանց կենսափորձի, արտադրական պրակտիկ գործունեության շնորհիվ անընդհատ ընդլայնվում ու խորանում է պատճառականության սկզբունքի մասին գիտելիքների համակարգը: 16-18-րդ դարերում բնագիտության մեջ զգալիորեն իշխում էր պատճառականության մեխանիստական ըմբռնումը, ըստ որի աշխարհի բոլոր երևույթները տեսականորեն ենթակա են մաթեմատիկական ճշգրիտ հաշվումների և դրանք կարելի է բացահայտել մեխանիկական պատճառականության օրինաչափություններով: Ըստ նյուտոնյան մեխանիկայի օրինաչափության, եթե հայտնի է օբյեկտի վրա ազդող նախնական բոլոր ուժերը, ապա մաթեմատիկական ճշգրտությամբ կարելի է որոշել այդ օբյեկտի հետագա շարժման վիճակները: Սակայն 19-րդ դարում քվանտային մեխանիկայի բնագավառում կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ ատոմի նախնական վիճակը բնորոշող ֆիզիկական մեծությունների միջոցով հնարավոր չէ ճշգրիտ որոշել ատոմի շարժման պարամետրերը և ուղղությունը, կանխատեսել շեղման պատճառները: Այս երևույթը որոշ բնագետների և ֆիզիկոսների շրջանում նպաստեց ինդետերմինիստական համոզմունքների ձեվավորմանը, ըստ որի միկրոգործընթացներում պատճառականության

սկզբունքը չի գործում: Բայց բնագետների և փիլիսոփաների հիմնական մասը, լինելով հետևողական դետերմինիստներ, հիմնավորում էին, որ երևույթների պատճառականությունը գոյություն ունի մարդու գիտակցությունից անկախ, օբյեկտիվորեն: Նրանց համոզմամբ աշխարհում ամեն երևույթ ունի իր պատճառը և իր հետևանքը: Իսկ եթե կան երևույթներ, որոնց պատճառը դեռևս հայտնի չէ, ապա դա չի նշանակում, որ դրանցում չի գործում պատճառականության սկզբունքը: Պատճառականության շղթայում յուրաքանչյուր երևույթ հանդիսանում է նախորդ երևույթի հետևանքը և հաջորդ երևույթի պատճառը: Կապերի այդ անսահման բազմազանությունը, մատերիայի հավերժական շարժումը պատճառական շղթաների անվերջ գործընթաց է: Այդ շղթայում պատճառը ժամանակի մեջ միշտ նախորդում է իր հետևանքին, թեև պատճառի և հետևանքի միջև ժամանակամիջոց չի կարող լինել, որովհետև պատճառի վերջը և հետևանքի սկիզբը համընկնում են միևնույն ժամանակահատվածում: Հետևանքի տևողությունը որոշվում է պատճառի տևողությամբ: Այն մի հարաբերության մեջ պատճառ է, իսկ մի այլ հարաբերության մեջ հետևանք է: Եթե մետաֆիզիկի պատկերացմամբ պատճառն ու հետևանքը անփոփոխ, յուրաքանչյուրը իր տեղում հաստատուն կատեգորիա է, ապա դիալեկտիկական մատերիալիզմը հիմնավորում է, որ պատճառահետևանքային կապակցությունը հարափոփոխ, ակտիվ փոխազդող գործընթաց է: Այդ գործընթացում պատճառական կապերը կարող են տարբեր դեր խաղալ և ըստ այդմ էլ դրսևորվել որպես գլխավոր կամ երկրորդական պատճառներ: Գլխավոր պատճառն այն է, առանց որի տվյալ երևույթը ոչ միայն չի կարող առաջանալ, այլև նրանով է պայմանավորված այդ երևույթի որակական կողմերն ու էական հատկանիշները: Իսկ երկրորդական պատճառն այն է, առանց որի գուցեև կարող է առաջանալ տվյալ երևույթը, բայց այդ երևույթի որոշ առանձնահատկություններ, էական կողմեր պայմանավորված են հենց դրանով: Օրինակ, մարդու մահվան պատճառները բազմաթիվ են՝ թունավորվածությունը, տարբեր հիվանդություններ, ֆիզիոլոգիական ծերություն, սթրեսներ և այլն: Կոնկրետ անհատի նրկատմամբ մահվան պատճառը կարող է լինել այդ երևույթներից մեկը, բայց կարող են զարգացվել մի քանիսը, որոնցից ոչ բոլորը միանշանակ դեր կխաղան նրա մահվան գործում: Այդ դեպքում մարդու մահը կունենա գլխավոր և երկրորդական պատճառներ: Գիտական պրակտիկայում հաճախ գլխավոր և երկրորդական պատճառների զանազանության գործը կարող է խնդրական նշանակություն ունենալ, ինչպես

հետազոտական աշխատանքների համար, այնպես էլ պրակտիկ գործունեության ընթացքում: Միաժամանակ գլխավոր և երկրորդական կարող է լինել նաև հետևանքը, որովհետև զարգացման գործընթացում ի հայտ է գալիս և բազմակի պատճառներով հետևանքներ, և բազմակի հետևանքներով պատճառներ: Պատճառները կարող են լինել նաև ներքին ու արտաքին: Ներքին պատճառն այն է, որը բխում է տվյալ երևույթի էությունից, զարգացման օրինաչափությունից, բնականոն ընթացքից և կրում է անխուսափելի բնույթ: Իսկ արտաքին պատճառը չի բխում երևույթի զարգացման օրինաչափությունից, դրսևորվում է արտաքին ազդակների շնորհիվ և ունի պատահական բնույթ: Արցախյան ճգնաժամը և իրադարձությունների ծավալման ընթացքը ներքին ու արտաքին պատճառների համակցություն էր: Ընդ որում արտաքին պատճառները գործում էին ներքին պատճառների հետ միասին: Ամեն մի երևույթ ունի իր ձևավորման, առաջացման, զարգացման և ձևափոխման ընթացքն ու տևողությունը: Այդ գործընթացում երևույթը կարող է չառաջացնել տվյալ հետևանքը այնքան ժամանակ, մինչև որ ինչ-որ բան ավելանալով մեծացնի նրա ակտիվությունը և առաջ բերի այդ հետևանքը: Այդ ավելացող ինչ-որ բանը կոչվում է առիթ: Առիթը երևույթի պատճառական մեխանիզմի այն փոքրիկ, բայց ինքնուրույն մասնիկն է, որի առկայության դեպքում ակտիվանում է երևույթի զարգացման գործընթացը և ի հայտ է գալիս հետևանքը: Առիթը պատճառի ուղղությամբ գործող և նրա փոքրագույն մասը հանդիսացող ռեալ ուժն է և հետևանքի առաջացումն արագացնող գործոնը: Ծաղկուն հասակում հանկարծամահ եղած անձնավորության մահվան պատճառում քիչ դեր չի խաղում նաև առիթը: Գիտության կարևորագույն խնդիրներից մեկն էլ պետք է հանդիսանա երևույթների միջև պատճառական կապերի բացահայտումը և մարդուն օգնելը խուսափելու անցանկալի հետևանքներից: Զարգացման գործընթացում փոխազդող երևույթների պատահական կապերը կարող է չդառնան պատճառական կապեր, բայց պատճառականությունը անհրաժեշտության և պատահականության միասնության հիմքն է:

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Աշխարհում բոլոր երևույթներն ու գործընթացները փոխադարձաբար կապված են միմյանց հետ, բայց բոլոր կապերն ու հարաբերությունները չէ, որ միատեսակ դեր են խաղում զարգացման գործընթացում: Որոշ կապեր ունեն էական, վճռական նշանակություն շարժման ու զարգացման համընդհանուր գործընթացում, իսկ որոշն էլ ժամանակավոր, անցողիկ

են և երկրորդական դեր են խաղում: Երևույթների ու գործընթացների այդ էականը, ընդհանուրը, որն իրականանում է պարտադիր կերպով ու անխուսափելիորեն անհրաժեշտությունն է: Անհրաժեշտությունը տվյալ կապակցությունից պարտադիր բխող և համապատասխան պայմանների առկայության դեպքում անխուսափելիորեն տեղի ունեցող երևույթն է: Երևույթի զարգացումը ծավալվում է ներքին անհրաժեշտությամբ, իսկ փոխազդեցությունը՝ օրինաչափ ու անխուսափելի ընթացքով: Այդ գործընթացում փոխներգործության և դրսևորման ոչ էական, ոչ պարտադիր, անկայուն կապը կոչվում է պատահականություն: Պատահականությունը զարգացող երևույթի ու գործընթացի օրինաչափությունը խախտող և օրենքից շեղող կապերի դրսևորումն է: Հետևաբար անհրաժեշտությունը և պատահականությունը բնության և հասարակության երևույթների ու գործընթացների օբյեկտիվ կապերն ու փոխազդեցություններն արտահայտող կատեգորիաներ են: Բնության ողջ բազմազանությունը անհրաժեշտության ու պատահականության դիալեկտիկական միասնության արդյունք է: Հեգելի պատկերավոր արտահայտությամբ «անհրաժեշտության որոշակիությունը նրանումն է, որ նա իր մեջ պարունակում է իր բացասումը՝ պատահականությունը»: Անհրաժեշտությունն ու պատահականությունը միմյանց մեջ փոխներթափանցող հակադրություններ են: Տվյալ կապի ու հարաբերության մեջ հանդես եկող պատահականը այլ կապի ու հարաբերության մեջ կարող է հանդես գալ որպես անհրաժեշտություն: Տվյալ երևույթը կարող է պատահական լինել այնքանով, որքանով որ ընդհանուր կապակցության մեջ անխուսափելի օրինաչափ չէ: Բայց պատահականությունը միաժամանակ հանդիսանում է անհրաժեշտության ձևավորման խթանիչ: Հեգելի բնորոշմամբ պատահականը անհրաժեշտ է, իսկ անհրաժեշտությունն ինքն է իրեն բնորոշում իբրև պատահականություն: Պատահականը ունի որոշ հիմք, որովհետև նա պատահական է, բայց ճիշտ նմանապես էլ չունի հիմք, որովհետև պատահական է: Հեգելի այս խորհրդատությունը անհրաժեշտությունը ներկայացնում է որպես բնության ներքին օրինաչափություն: Կեցության շարժման, փոփոխության, զարգացման անվերջ շղթայում անխուսափելի երևույթը դրսևորվում է տարբեր գործընթացների կապակցությունների զուգադիպումով, որը կարող է պատահական լինել, բայց այդ պատահականությունը անհրաժեշտության իրականացումն է տվյալ պայմաններում ու ժամանակահատվածում: Բեղմնավորված ձվաբջիջը, ավարտելով հասունացման փուլը, պետք է աշխարհ գա անատոմիական կառուցվածքով և

ֆիզիոլոգիական գործընթացով ապահովված, ամբողջական օրգանիզմ: Բայց սաղմնային շրջանի սննդի ռեժիմի խախտման, ռադիոակտիվ տարրերի քիմիական նյութերի և տարբեր սթրեսային ազդակների ներգործության հետևանքով ծնվող էակը կարող է աշխարհ գալ անհամար պակասություններով ու խեղանդամված: Հետևապես զարգացման օբյեկտիվ անհրաժեշտությունը չի բացառում պատահականության դրսևորումը: Կեցության ներքին զարգացման օրինաչափությունն ու անհրաժեշտությունը իրականանում է բազմաթիվ երևույթների ու գործընթացների փոխազդեցության շնորհիվ, որի ընթացքում պատահական փոփոխությունները հանգեցնում են անհրաժեշտության դրսևորմանը: Ռուստի զարգացման շղթայում անհրաժեշտությունը դրսևորվում է որպես ներքին, օբյեկտիվ օրենք ու տիրապետող տենդենց, որն ի հայտ է գալիս բազմաթիվ պատահականությունների հետ բախվելու ճանապարհով: Դարվինը «Տեսակների ծագումը...» աշխատության մեջ, բացահայտելով էվոլյուցիոն տեսության հիմնական դրույթները, ցույց տվեց, որ առանձին տեսակների ներսում անհատների մոտ նկատվող բազմաթիվ պատահական տարբերությունների դրսևորումը կարող է խախտել տեսակային հատկանիշի էական հատկությունները և նոր տեսակի առաջացման հիմք հանդիսանալ: Հետևաբար պատահականությունը ոչ միայն զուրկ չէ հիմքից, այլև նրա ետևում թաքնված է անհրաժեշտությունը: Այս ճշմարտության անտեսումը հանգեցնում է մետաֆիզիկական մտածելակերպի, ըստ որի օրգանական աշխարհի բոլոր տեսակները մեկընդմիշտ ձևավորված, անփոփոխ գոյեր են, իսկ պատահականությունը պատճառից զուրկ երևույթ է: Հոլբախի համոզմամբ «Մարդիկ գործածում են պատահականություն բառը նրա համար, որպեսզի թաքցնեն իսկական պատճառների իրենց անգիտությունը»: Պատահականությունը թերագնահատվում և անտեսվում է նաև ֆատալիստների կողմից, որոնց համոզմամբ դեպքերի և իրադարձությունների զարգացման ընթացքը անողոք անհրաժեշտություն է և ոչ մի պատահականություն այն շեղել չի կարող: Իրականության ուշադիր հետազոտության շնորհիվ դժվար չէ համոզվել, որ այսօր անհրաժեշտություն համարվող շատ երևույթներ գոյացել են զուտ պատահականություններից: Զարգացման շղթայում անհրաժեշտությունն իր մեջ պարունակում է նաև հնարավորության և իրականության բազմաթիվ կապեր: Իրականի մեջ գոյություն ունեցող հնարավորությունը հասունանալով ինքն է դառնում իրական՝ իրենում պարունակելով հնարավորության բազմաթիվ կապեր:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Իրականությունը օբյեկտիվորեն գոյություն ունեցող ու զարգացող նախահիմքի կոնկրետ դրսևորումների բազմազանությունն է: Նախահիմքի յուրաքանչյուր կոնկրետ դրսևորում ժամանակավոր է, անցողիկ, բայց որոշակի ժամանակահատվածում նրա առարկայացված, ձևավորված գոյածևը հանդես է գալիս որպես իրականություն, իսկ այդ գոյածևի լինելիության ունակությունը, ձևավորման, իրականացման, առարկայացման կարողությունները՝ հնարավորություն: Տիեզերքում և աշխարհում նախանյութը գտնվում է անընդհատ փոփոխության ու զարգացման վիճակում: Այդ գործընթացի յուրաքանչյուր կոնկրետ դրսևորումը, առարկայացումը իրականություն է, որը ծագել է նախորդից և ինքն էլ հիմք է հանդիսանալու հաջորդի իրականանալու համար: Դա որոշակի օրենքների ու օրինաչափությունների դրսևորման արդյունք է: Հեգելի բնորոշմամբ իրականությունն իր ծավալման մեջ հանդես է գալիս որպես անհրաժեշտություն: Իսկ ենգելսի մեկնաբանմամբ իրականության զարգացումը բնապատմական գործընթաց է, որի անհրաժեշտության հիմքը պետք է փնտրել նրանում կյանքի կոչվող օբյեկտիվ հանգամանքների ու պայմանների մեջ: Հասարակության պատմության յուրաքանչյուր դարաշրջանի դեպքերն ու իրադարձությունները օբյեկտիվ հիմք ունեցող իրականություն են, որովհետև ձևավորվել ու զարգացել են տվյալ դարաշրջանի տնտեսական օրենքների գործունեության ու դրսևորման հիման վրա: Ժամանակի ընթացքում կոնկրետ իրականություն հանդիսացող այժմյան դարաշրջանի ընդերքում կհասունանան գործող կենսունակ ուժեր, հակասության մեջ կմտնեն գործող հարաբերությունների հիմք հանդիսացող ուժերի հետ, կծնեն նոր հարաբերություններով հարուստ իրականություն: Այդ գործընթացը դիալեկտիկական բացասման անվերջ շղթա է օրգանական, անօրգանական աշխարհում և հասարակության պատմության մեջ: Միայն տարբերությունը կայանում է նրանում, որ եթե անօրգանական աշխարհում հնարավորությունից իրականության վերածվող ամեն ինչ օրինաչափ ու տրամաբանական է, ապա մարդկային հասարակության մեջ քիչ չեն անբնական իրականության դրսևորումները: Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի, Խոջալուի արյունոտ նախաճիրը և արցախյան ողջ իրադարձությունները ամոթալի իրականություն են և դաջված կմնան այն կյանքի կոչող քաղաքական ուժերի ճակատին: Բանական էակների գործունեության արդյունք համարվող պատմության մեջ քիչ չեն նաև այնպիսի դեպքեր, երբ կենսունակ, առաջադեմ իրականության մեջ ձևավորվում և իրականություն

է դառնում նաև ռեակցիոնը, անմարդկայինը: Իհարկե տվյալ պատմական իրականությունը կոնկրետ է, բայց նրա դրսևորման հնարավորությունների մեխանիզմը կապված է նաև անցյալի հետ: Իրականությունը ձևավորվում է աստիճանաբար, ունի իր զարգացման փուլերը և նորի կողքին միշտ էլ առկա է հինը, որի իրական լինելն էլ անժխտելի է: Հետևապես իրականությունը որպես իրականացված հնարավորություն ներքնապես հակասական տենդենցների միասնություն է, զարգանում է իրեն հատուկ օրենքներով և անսպառ է իր դրսևորումների մեջ: Իրականության հիմքի վրա ծագում են նրա բացատման օբյեկտիվ հնարավորությունները, որոնք համապատասխան պայմանների առկայության շնորհիվ դառնում են նոր իրականություն: Հնարավորությունն ու իրականությունը և միասնություն են և հակադրություն: Հեգելի բնորոշմամբ հնարավորության հիմքը բարդ կոմպլեքս է, որի մեջ մտնում են տվյալ օբյեկտի ներքին առանձնահատկություններն ու զարգացման տենդենցները: Հնարավորությունը բխում է երևույթների բուն էությունից, շարժումից ու զարգացումից: Զարգացման գործընթացում որոշ հնարավորություններ դառնում են ռեալ հնարավորություն, իսկ որոշն էլ, կորցնելով իրենց օբյեկտիվ հիմքը, մնում են անիրականանալի: Հնարավորության և իրականության իմաստավորման հարցում զգալի դեր է խաղում հավանականությունը, որը կապված է նույն օբյեկտիվ հիմքի վրա ծավալվող բազմաթիվ խաչածև պատահականությունների հետ: Իրականության փոփոխության և զարգացման օրինաչափությունը պայմանավորված է նաև կենսունակ նորի, որպես ռեալ հնարավորության իրականություն դառնալով: Ռեալ հնարավորությունը դեռևս չիրականացված իրականությունն է իր պոտենցիայի, զարգացման ընթացքի մեջ: Յուրաքանչյուր ռեալ հնարավորություն գոյություն ունի իր պայմանների հիման վրա և դրսևորման տենդենցի շնորհիվ, որոնք էական դեր են խաղում այն իրականության վերածվելու գործում: Ընդ որում, եթե բնության մեջ նրա իրականանալը տարերային ուժերի փոխազդեցության ու օրենքների դրսևորման արդյունք է, ապա հասարակական կյանքում դրան գումարվում է նաև սոցիալ-դասակարգային էթնիկական, ազգային և այլ շահերի բախումն ու մարդկանց նպատակաուղղված գործունեությունը: Հասարակական իրադարձության հասունացման գործընթացը կախված է ոչ միայն օբյեկտիվ տենդենցի զարգացումից, այլև սոցիալական խմբերի, առաջնորդների, ազգամիջյան ու միջազգային հարաբերությունների և այլ պատահական սուբյեկտիվ գործոնների նպատակաուղղվածությունից: Միաժամանակ օբյեկտիվ

պայմանների փոփոխության հետևանքով ռեալ հնարավորությունը տվյալ ժամանակահատվածում կարող է չվերածվել պրակտիկ իրականացման գործընթացի, բայց և չկորցնել հետագայում իրականության վերածվելու այդ ունակությունը: Օրինակ, որոշ միկրոբների սպորներ աննպաստ պայմաններում կարող են ամիսներով, անգամ տարիներով մնալ որպես ռեալ հնարավորություն և համապատասխան նպաստավոր պայմանների առկայության դեպքում ավարտել զարգացման փուլը և վերածվել իրականության: Հետևապես զարգացման ընդհանուր գծին չհանգարող ռեալ հնարավորությունները անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում միշտ էլ իրականություն կդառնան: Այդ գործընթացի դանդաղումն ու երկարաձգումը վկայում է այն մասին, որ տվյալ ռեալ հնարավորությունը դեռ չի մտել պրակտիկ ռեալ հնարավորության փուլ, որից էլ պետք է սկսվի իրականացման ուղին: Ուրեմն, հնարավորությունը իրականության էական կողմերից մեկն է, որն իրականանում է զարգացման գործընթացի ընդհանուր դրսևորման շնորհիվ և այդ գործընթացի հակասականության հետևանքով կարող է բազմատեսակ հնարավորությունների ծագման հիմք հանդիսանալ: Այն հնարավորությունները, որոնց իրականացման պայմանները տվյալ պատմական պայմաններում հասունացած չեն, կոչվում են վերացական հնարավորություն: Այդպիսի հնարավորություններից նրանք, որոնք պայմանավորված չեն զարգացման օբյեկտիվ ընթացքով անհնարինություն են, իսկ որոնք օբյեկտիվ հիմք ունեն կարող են ժամանակի ընթացքում հասունանալ և վերածվել իրականության: Օրինակ, հինգ հազար տարի առաջ մարդու տիեզերք թռչելու ցանկությունը և երազանքը վերացական հնարավորություն էր, իսկ այժմ այն իրականություն է դարձել:

2. ԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԵՆՔՆԵՐԸ

ՕՐԵՆՔ: Օրենքը արտահայտում է անօրգանական և օրգանական աշխարհի, բնության ու հասարակության երևույթների ու գործընթացների էական, անհրաժեշտ, ընդհանուր, կայուն, կրկնվող կապերն ու հարաբերությունները: Այն նյութական օբյեկտների հատկությունների պատճառական, անհրաժեշտ ու կայուն կապերի էական ու կարգավորված համամասնությունների ամբողջություն է: Օրենքը, որպես նյութական օբյեկտների զարգացման ու փոփոխության անհրաժեշտ, էական հարաբերությունների արտահայտություն, օբյեկտիվ է և կախված չէ մարդկանց ցանկությունից ու գիտակցությունից: Հին հունական ու չինական մտածողների մոտ իշխում էր այն կարծիքը, որ աշխարհը ղե-

կավարում են համապարփակ օրենքները: Լաո-Ցզիի ուսմունքում դաոն դիտվում է որպես իրերի քաոսում կարգ ու կանոն մտցնող համընդհանուր օրենք և ուղի, որին պետք է հետևի յուրաքանչյուր բանական էակ: Հերակլիտի մոտ Լոգոսը հանդես է գալիս որպես համաշխարհային օրենք, ճակատագիր, որին ենթարկվում են մարդկանց և իրերի զարգացումը: Միջնադարյան քրիստոնեական փիլիսոփայության մեջ օրենքը դիտվում է որպես աստվածային կամքի արտահայտություն: 18-րդ դարի ֆրանսիական մատերիալիստների մոտ օրենքը ի հայտ է գալիս որպես երևույթների միջև անհրաժեշտ, էական կապի դրսևորում: Սուբյեկտիվ իդեալիզմը հիմնավորում է, որ բնության երևույթների միջև օրինաչափ կապերի մասին պատկերացումը մարդկանց մոտ առաջանում է միայն մեկը մյուսին հաջորդող երևույթները անհրաժեշտորեն փոխկապակցված համարելու սովորույթի հետևանքով: Օբյեկտիվ իդեալիզմը օրենքը կապում է մարդուց անկախ գոյություն ունեցող գաղափարի հետ: Հեգելի մոտ բնությունն և հասարակության մեջ գործող օրենքները ինքնազարգացող գաղափարի օրենքներն են: Ըստ մարքսիզմի՝ օրենքը երևույթի միջև ներքին և անհրաժեշտ կապն է: Փիլիսոփայությունը առանձնացնում է օրենքների երեք խումբ. 1. Հատուկ, կամ մասնավոր օրենքներ, որոնք արտահայտում են կեցության մասնավոր հատկությունների միջև եղած հարաբերությունները: Օրինակ, արտադրողական ուժերի զարգացման բնույթին ու մակարդակին արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքը: 2. Ընդհանուր օրենքներ, որոնք բնութագրում են օբյեկտների ու երևույթների մեծ համախմբերի ընդհանուր հատկությունների միջև եղած հարաբերությունները: Օրինակ, բնական ընտրության օրենքը կենսաբանության մեջ: 3. Համընդհանուր օրենքներ, որոնք արտահայտում են կեցության զարգացման ու փոփոխության համընդհանուր հարաբերություններն ու օրինաչափությունները:

Այդ օրենքներն են՝ հակադրությունների պայքարի ու միասնության օրենքը, քանակական փոփոխություններից որակական փոփոխությունների անցման օրենքը, բացասման բացասումի օրենքը:

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ բացահայտում է իրերի, օբյեկտների երևույթների ու գործընթացների ներքին հակադրությունների, հակասությունների էությունն ու զարգացման շարժիչ ուժը: Իրերի, երևույթների ու գործընթացների մեջ անընդհատ տեղի է ունենում հակադիր կողմերի, ուժերի, ակտիվ փո-

խազդեցություն, բախում ու պայքար, որն էլ ընկած է ինքնաշարժման սկզբունքի հիմքում: Հեգելի բնորոշմամբ զարգացման ներքին բովանդակությունը հակադրությունների պայքարն է: Չնայած Հեգելի մոտ ինքնաշարժման կենսունակությամբ օժտված է միայն ակտիվորեն զարգացող գաղափարը, բայց և այնպես հասկացությունների դիալեկտիկայի ձևով նա հանճարեղորեն կռահեց իրերի դիալեկտիկան: Այդ դիալեկտիկան էլ հենց կազմում է հակադրությունների պայքարի ու միասնության օրենքի էությունը, ըստ որի հակադրությունների պայքարը և միասնությունը փոխպայմանավորված են: Որպես օրինակ կարելի է քննարկել ասիմիլյացիոն և դիսիմիլյացիոն գործընթացների փոխպայմանավորվածությունը: Յուրաքանչյուր հակասություն փոխհարաբերության արդյունք է, իսկ ամեն մի փոխհարաբերություն տարբերության և նմանության միասնություն է: Յուրաքանչյուր տարբերության մեջ անխուսափելիորեն առկա է հակասության որոշակի դրսևորում: Ուրեմն հակասությունը նույնության և տարբերության դիալեկտիկական միասնություն է: Նույնությունը առարկայի, երևույթի, գործընթացի միատեսակության, ինքն իր հետ ունեցած հավասարության դրսևորում է: Այն որպես զարգացման գործընթացի որոշակի օղակի կոնկրետ արտահայտություն, ժամանակավոր է, անցողիկ, հարաբերական և պարունակում է ներքին տարբերություններ: Տարբերությունը առարկայի, երևույթի, գործընթացի նույնության համակարգում ձևավորվող առանձնահատկությունն է, որի շնորհիվ տվյալ առարկան, երևույթն ու գործընթացը որոշ չափով փոփոխվում, դառնում է ուրիշ, բայց չի կորցնում իր էական հատկությունները: Օրինակ մարդու օրգանիզմում կենսակւսս գործընթացների և նյութափոխանակության շնորհիվ տեղի են ունենում հսկայական փոփոխություններ, բայց պահպանվում է նրա անհատականությունն ու էական հատկանիշները: Հետևապես տարբերությունը դեռևս չծավալված, չզարգացած հակասություն է: Իսկ հակասությունը նույնության և տարբերության հակադիր կողմերի զարգացումն ու ծավալումն է, շարժման աղբյուրը: Այն տվյալ առարկայի հակադիր, փոխբացառող հատկությունների միասնական գոյությունն է: Հակասության էությունը հակադրությունների այնպիսի փոխհարաբերություն է, երբ դրանք փոխադարձաբար հաստատում և բացասում են միմյանց, իսկ դրանց միջև եղած պայքարը հանդես է գալիս որպես փոփոխության, շարժման ու զարգացման շարժիչ ուժ: Այդ պատճառով էլ այս օրենքը կոչվում է հակադրությունների պայքարի և միասնության օրենք: Օրենքի բովանդակությունից բխում է, որ աշխարհում տեղի

ունեցող ամեն ինչ ինքնաշարժման, ինքնազարգացման արդյունք է: Այսինքն, իրերի, երևույթների, գործընթացների շարժման փոփոխության ու զարգացման ընթացքը, պատճառական մեխանիզմը պայմանավորված է նշված նյութական օբյեկտների ներքին օրենքներով ու օրինաչափություններով, իսկ նրանց ներքին հակասությունները բնության և հասարակության ինքնաշարժման ու զարգացման շարժիչ ուժն են: Տվյալ օբյեկտում ծավալվող հակասությունը զարգացման սկզբում դրսևորվում է որպես հակադիր կողմերի ու ընթացքների տարբերության ծնով, որը խորանալով ու ծավալվելով փոխարկվում է հակադրության, խախտում է առկա հակադիր տենդենցների միասնության շրջանակներն, որով ի հայտ է բերում արմատական որակական փոփոխություններ և ավարտում է տվյալ հակադրությունների զարգացման ու պայքարի գործընթացը՝ սկիզբ դնելով նոր գործընթացի: Առարկաների, երևույթների ու գործընթացների մեջ շարժման ու զարգացման ընթացքում հակասությունների ծնավորման, հասունացման և լուծման դրսևորումը անընդհատ գործընթաց է: Շարժման և զարգացման յուրաքանչյուր փուլի նախադրյալն ու արդյունքը պայմանավորված է օբյեկտների ներսում ծավալվող հակասական դրսևորումների փոխհարաբերության ու բախման ընթացքով: Այդ շղթայում ի հայտ են գալիս ներքին և արտաքին, հիմնական և ոչ հիմնական, հակամարտ և ոչ հակամարտ հակասություններ: Ներքին հակասությունը օբյեկտի ներսում առկա հակադիր ուժերի փոխներգործության արդյունք է: Օրինակ. օրգանիզմի ներսում նյութափոխանակության բարդ գործընթացը: Բայց տվյալ օրգանիզմը գտնվում է արտաքին միջավայրի տարբեր օբյեկտների ազդեցության ոլորտում: Այդ օբյեկտների հակադիր կողմերի ու ծավալումների փոխազդեցությունը դրսևորվում է որպես արտաքին հակասություն: Օրինակ օրգանիզմի և միջավայրի փոխներգործությունը: Հակասությունների համախմբության մեջ օբյեկտների փոփոխության ու զարգացման գործում վճռական դեր խաղացող հակասությունը դիտվում է որպես հիմնական հակասություն: Այդպիսին է մեր հասարակության զարգացման արդի փուլում ժողովրդավարական և պահպանողական ուժերի միջև ծավալվող հակասությունը: Իսկ անցյալ դարաշրջանում սեփականատերերի և ունեզուրկների միջև ծավալված անհաշտելի թշնամական պայքարը պետք է դիտել որպես հակամարտ հակասությունների ծավալման շղթա: Հասարակության դասակարգերի և սոցիալական տարբեր շերտերի միջև միշտ էլ գոյություն է ունեցել և դեռ ունի շահերի անզիջում բախում: Քաղաքակիրթ հասարակության

ներսում սոցիալական անհավասարության և դասակարգային շահերի բախման արդյունք հանդիսացող շարժումները հիմնականում ոչ հակամարտ հակասությունների արդյունք են: Ներկա ժամանակաշրջանում ազգերի և ժողովուրդների կյանքում կարևոր դեր են խաղում հասարակության և բնության, սպառման և բաշխման, կեցության և գիտակցության, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև ծավալվող հակասությունները: Այդ հակասությունների ծավալման պատճառների իմացումը և մեկնաբանությունը ճանաչողական մեծ նշանակություն ունի սոցիալական խնդիրների հաղթահարման ուղղությամբ: Դա մարդկությանը հնարավորություն է ընձեռում իմաստավորելու բնության հավասարակշռության խախտման հետևանքները: Հասարակական կյանքը փոթորկող գործընթացների ու աղետների հետևանքները պարզելու շնորհիվ մարդը հնարավորություն է ստանում համապատասխան ներգործություններ ձեռնարկելու միջոցով կանխելու հակասությունների հասունացումը: Իրերի, երևույթների ու գործընթացների մեջ հակադիր կողմերի, ծավալման փոխազդեցությունը, հակասությունների հասունացումն ու պայքարը խախտում են տվյալ քանակական համամասնությունը և նպաստում են նոր որակի առաջացմանը: Շարժման ու փոփոխությունների այդ ընթացքը և նորի առաջացման մեխանիզմը բացահայտում է քանակական փոփոխությունների որակական փոփոխություններից անցնելու օրենքը:

ՔԱՆԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈՐԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՕՐԵՆՔԸ ցույց է տալիս, թե ինչպես է ընթանում իրերի, երևույթների ու գործընթացների փոփոխությունն ու զարգացումը, նորի առաջացումը: Բացահայտելով զարգացման մեխանիզմը այդ օրենքը հիմնավորում է, որ նոր որակի առաջացումը աստիճանական քանակական փոփոխությունների արդյունք է: Նշված օրենքի բովանդակությունը պարզաբանվում է քանակ, որակ և չափ կատեգորիաների միջոցով: Քանակը նախահիմքի ձևավորված բազմազանության թվային արտահայտությունն է: Նախահիմքը հավերժ փոփոխության ու զարգացման գործընթացում առաջացնում է անվերջ թվով իրեր ու երևույթներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր քանակական առանձնահատկությունները, թվային արտահայտությունը: Այդ արտահայտությունների դրսևորման ձևերը խիստ բազմազան են, բայց դրանք բոլորն էլ կարելի է չափել տարբեր եղանակներով և արտահայտել թվերի միջոցով: Տիեզերքում ամեն ինչ բնութագրվում է որոշակի քա-

նակական սահմաններով: Հետևապես քանակը առարկաներին, օբյեկտներին ու երևույթներին հատուկ այնպիսի որոշակիություն է, որը որոշ սահմաններում փոփոխվելու դեպքում դրանց որակական հատկությունները դեռևս չեն փոփոխվում: Քանի դեռ քանակական փոփոխությունները դուրս չեն գալիս այդ սահմաններից, այնքան ժամանակ առարկաներն ու երևույթները պահպանում են իրենց հիմնական որակական հատկությունները և չեն ենթարկվում արմատական փոփոխության: Օրինակ. մի տարի օտարության մեջ գտնվող անձնավորությանը հանդիպելիս հարազատները իսկույն կճանաչեն նրան, չնայած այդ ընթացքում նրա օրգանիզմում տեղի են ունեցել զգալի կենսաբանական և ֆիզիոլոգիական փոփոխություններ: Ուրեմն քանակական այդ փոփոխությունները դեռևս չեն հանգեցրել արմատական որակական փոփոխությունների և տվյալ անձնավորությունը պահպանել է իր որակական ամբողջականությունը: Մեզ շրջապատող իրականության մեջ ամեն ինչ գտնվում է շարժման, զարգացման գործընթացում: Իրերն ու երևույթները մշտապես առաջանում, փոփոխվում ու ոչնչանում են, բայց մի որոշ ժամանակահատվածում նրանք պահպանում են իրենց հիմնական հատկություններն ու որակական որոշակիությունը: Որակը տվյալ իրի, օբյեկտի հատկությունների այն ամբողջությունն է, որի շնորհիվ դրսևորվում է նրա ինքնուրույնությունն ու անհատականությունը: Առարկայի որակը ոչ թե նրա առանձին հատկություններն է, այլ այդ հատկությունների համակարգված ամբողջականությունը: Տվյալ առարկայի այլ առարկաների հետ ունեցած հարաբերությունների մեջ կարող են դրսևորվել նրա տարբեր հատկությունները, որը բազմորակության վկայություն է: Օրինակ, տվյալ անհատը, որպես բանական էակ, կարող է նաև օժտված լինել ինտելեկտուալ այնպիսի կարողություններով, որը բացակայում է հազարավոր մարդկանց մոտ: Հետևապես, առանձին հատկություններ կարող են բացակայել, կամ բազմապատկվել, բայց բանական էակ հանդիսանալու որակական համամասնությունը չի կորցնի իր ինքնությունը, անհատականությունը: Այսինքն՝ որակը ոչ թե սոսկ իրի հատկությունների մեխանիկական միագումար է, այլ այդ հատկությունների այնպիսի համակարգություն, որը էական ու բնորոշ է հենց տվյալ առարկային, որով այդ առարկան չի դադարում ինքը լինելուց: Այդ անհատականության ու որոշակիության շնորհիվ էլ իրերը տարբերվում են միմյանցից: Առարկաների որակական որոշակիությունը ենթադրում է նաև նրանց միատեսակություն, որոնք տարբերվելով իրենց որոշ հատկություններով և որակապես լինելով նույնական, միմ-

յանցից տարբերվում են լոկ քանակապես՝ ծավալով, մեծությամբ և այլն: Այսինքն, առարկաների միասեռությունը, նույնությունը ըստ որակի համապատասխանաբար ենթադրում է դրանց քանակական համամասնությունը, որովհետև իրի որակն անխզելիորեն կապված է որոշակի քանակի հետ: Որակի և քանակի այդ փոխկախվածությունը կոչվում է չափ: Չափը որակի և քանակի օրգանական միասնությունն է, այն սահմանը, մինչև որը պահպանվում է առարկայի, երևույթի առկա որակական ու քանակական համամասնությունը: Զարգացման գործընթացում աստիճանական քանակական փոփոխությունները ի վերջո հանգեցնում են այդ համամասնության խախտմանը, որի շնորհիվ խախտվում է հին որակական ու քանակական ներդաշնակությունը ապահովող չափի սահմանը և ստեղծվում է նոր չափի որակական ու քանակական համամասնություն, այսինքն առաջանում է նոր որակ: Հին որակից նոր որակի առաջացման այդ անցումային գործընթացը կարող է կատարվել զգալիորեն դանդաղ կամ թռիչքածև: Դանդաղ կամ աստիճանական անցումը տիպիկ է օրգանական աշխարհի զարգացմանը: Բուսական ու կենդանական աշխարհում տեսակների որակական փոփոխությունը ուղեկցվում է հարյուրամյակների, երբեմն էլ հազարամյակների աստիճանական քանակական փոփոխությամբ: Իսկ տիեզերական որոշ օբյեկտներում որակական փոփոխությունը ի հայտ է գալիս միլիարդավոր տարիների աստիճանական քանակական փոփոխությունների շնորհիվ: Հին որակից նոր որակի թռիչքածև անցումը ևանընդհատության ընդհատումն է: Զարգացման գործընթացը հենց անընդհատության և ընդհատության դիալեկտիկական միասնություն է: Օբյեկտներում ու գործընթացներում անընդհատ տեղի է ունենում անշան քանակական փոփոխություններ, որոնք ընդգրկելով դրանց էական հատկություններն ու հիմնական հակասությունները ի վերջո պայթեցնում են հին որակական ու քանակական համամասնությունը և ստեղծվում է նոր որակ՝ իրեն համապատասխան քանակական համամասնությամբ: Քանակական փոփոխություններից որակական փոփոխությունների անցման օրինաչափությունը պատկերավոր կարելի է ցույց տալ մեթանի հոմոլոգ շարքում: Սահմանային ածխաջրածինների այդ հոմոլոգ շարքում որոշակի քանակական փոփոխությունը [CH_2] առաջացնում է համապատասխան որակական փոփոխություն: Օրինակ. մեթանը՝ CH_4 վերածվում է էթանի՝ C_2H_6, որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն յուրահատուկ քիմիական հատկություններ: Իսկ 16 ածխածնի ատոմ պարունակող ածխաջրածինը՝ $C_{16}H_{34}$ արդեն դառնում է պինդ

նյութ: Քանակական փոփոխություններից որակական փոփոխությունների անցման օրենքի իմացությունը հսկայական դեր կարող է խաղալ մարդու տեսական ու պրակտիկ գործունեության մեջ: Ֆերմայում հետևելով կովերի ամենօրյա կաթնատվության ընթացքին կարելի է կերաբաժնի համամասնության որոշ փոփոխություններով զգալիորեն բարձրացնել յուրաքանչյուր կովի կաթնատվությունը և կաթի յուղայնությունը: Իսկ որքա՞ն հաջողությունների կարելի է հասնել ընտրասերման բնագավառում: Մեկ դար առաջ Ամերիկայի պրերիաներում մարդիկ անմիտ ձևով բնաջնջեցին կերի նկատմամբ քիչ պահանջկոտ միլիոնավոր բիզոնների նախիրները, որոնք այսօր կլուծեին մսի խնդիրը աշխարհում: Հասուն բիզոնի քաշը գրեթե հիսուն տոկոսով ավելի է հասուն ցուլի քաշից, միսը, համային հատկություններով նման լինելով տավարի մսին, քսանհինգ տոկոս ավելի շատ պրոթեին, քսան տոկոս ավելի քիչ խոլեստերին է պարունակում և չի առաջացնում ալերգիկ երևույթներ: Եթե գիտնականները կարողանային զուգակցել բիզոնի և տավարի գենոտիպերի որակական ու քանակական համամասնությունները, երևի այսօր աշխարհը լիովի բավարարված կլիներ մսի պահանջարկով:

ԲԱՑԱՍՄԱՆ ԲԱՑԱՍՈՒՄԻ ՕՐԵՆՔԸ ցույց է տալիս զարգացման ուղղությունը, որակական փոփոխությունների ընդհանուր շղթայի օրինաչափություններն ու ժառանգական կապը: Կեցության շարժման, փոփոխության ու զարգացման ընդհանուր շղթան բացասման բացասումի անընդհատ գործընթաց է: Բացասումը զարգացման անհրաժեշտ պահն է ու կարևոր գծերից մեկը: Իրականության մեջ յուրաքանչյուր երևույթ հանդիսանալով նախորդի բացասման արդյունք և օժտված լինելով ներքին հակասականությամբ, իր մեջ պարունակում է սեփական բացասման հնարավորություն: Ներքին հակասությունները հանգեցնում են դիալեկտիկական բացասման, հին որակական ու քանակական համամասնությունը նորով փոխարինելու անհրաժեշտությանը: Զարգացման մեկ փուլից մյուսին անցումը հնի և նորի պայքար է ու յուրահատուկ կապ: Այդ կապի մեխանիզմով էլ իրականանում է հնի ընդերքում ձևավորված դրականն ու առաջադիմականը: Այդ գործընթացը ընդհատության և անընդհատության դիալեկտիկական միասնություն է, հին որակի որոշ կողմերի ոչնչացում և որոշ կողմերի ժառանգորդում ու զարգացում: Որպես այդ օրինաչափության ցայտուն օրինակ կարելի է ներկայացնել սերնդափոխության գործընթացը: Երեխան, որպես ձևա-

վորված ամբողջական օրգանիզմ ժառանգում և իր մեջ կրում է ծնողների շատ որակական առանձնահատկություններ: Սակայն նա ոչ թե ծնողների որակական համամասնությունների պատճենահանված գոյն է, այլ քանակական ու որակական միանգամայն նոր համամասնություն: Նա իր մեջ կրում է հոր և մոր քանակական ու որակական համամասնությունների հիմնական առանձնահատկությունները ու էական գծերը, բայց միաժամանակ նոր էակ է, նոր որակական ամբողջականություն, ինչի և նորի կապի անհրաժեշտ օղակ: Այդ գոյը ոչ ծնողների հասարակ կրկնությունն է և ոչ էլ նրանց հատկությունների ու հատկանիշների մեխանիկական գումար: Նա հոր և մոր որակական ու քանակական համամասնությունների դիալեկտիկական միասնությունն է, բացասումն ու ժառանգումը: Բացասման բացատումի շղթայում օրինաչափորեն ձևավորված նորը փոփոխության ու զարգացման հերթական օղակներից մեկն է, որն իր կենսունակությամբ գերազանցում, բացասում է հինը, ինքն էլ պատրաստվելով բացասվելու հաջորդի կողմից: Իր ձևավորման հենց սկզբից նորի մեջ անընդհատ տեղի են ունենում քանակական ու որակական փոփոխություններ, աճում, հասունանում, ձեռք է բերում կենսական ուժ, զուգահեռաբար իր մեջ հասունացնելով նաև իրեն բացասողին: Նորը և հինը միասնական գործընթացի հակադիր կողմեր են, բայց օրինաչափորեն փոխկապակցված են միմյանց հետ: Նոր որակի առաջացումը հնի հաղթահարում, ժխտում է, և պահպանում: Բացասման բացատումը հանդիսանալով տվյալ քանակական ու որակական համամասնության զարգացման վերջնական աստիճանը, միաժամանակ դառնում է հաջորդ աստիճանի սկիզբը, ժառանգած քանակականն ու որակական համամասնությունը դարձնելով հետագա զարգացման նոր ելակետ: Փոփոխությունների ծավալման այդ ընթացքում հին որակի մասնակի ժխտման և նրա մյուս կողմերի ու հատկությունների ծավալման ու վերաորակավորվելու գործընթացը քանակական փոփոխություններից որակական փոփոխությունների անցման և հակադրությունների պայքարի ու միասնության դիալեկտիկական միասնություն է: Բացասման մեխանիզմի հիմքում անշեղորեն գործում է հակադրությունների պայքարի ու միասնության օրինաչափությունը: Հետևապես բացասման բացատումի օրենքը մարմնավորում է օբյեկտիվ իրականության իրերի, երևույթների, գործընթացների շարժման փոփոխության ու զարգացման ներքին մեխանիզմի օրինաչափությունները: Այս տեսակետից բացասման բացատումի օրենքի մետաֆիզիկական ըմբռնումը, ըստ որի զարգացումը դիտվում է որպես նա-

խորդի մասնակի ժխտում, ոչնչացում կամ էլ քանակական համամասնության անփոփոխ կրկնություն, հնարավորություն չի տալիս բացահայտելու նորի առաջացման մեխանիզմը,ըմբռնելու, որ ինի բացասումն ու նորի ծնունդը տեղի է ունենում զարգացման ներքին օրինաչափությամբ: Իսկ դա մարդու տեսական ու պրակտիկ գործունեության մեջ մեծ դեր կարող է խաղալ: Այն մարդկանց հեռու կապահի բնության ու հասարակական կյանքի երևույթների վրա անխոհեմ ներգործելու գործողություններից, գիտնականներին հնարավորություն կտա իմաստավորելու բնության հավասարակշռության խախտման աղետալի հետևանքները:

ԳԼՈՒԽ V

ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Տիեզերքի անծայրածիր տարածության մեր փոքրիկ հողագնդում զգացող նյութի առաջացման երևույթը բնության առեծվածային ձևափոխությունների հրաշք-իրականության գոյերից մեկն է: Բոլոր ժամանակներում աշխարհի մտածողները ջանք չեն խնայել պարզելու անկենդան նյութից կենդանի նյութի առաջանալու հրաշքը: Մտածողների մի մասը հակված է եղել այն կարծիքին, որ կյանքը բնությունից վեր կանգնած և նրա զարգացումը որոշող ոչ նյութական գոյի արարչագործություն է: Գենետիկայի զարգացման հետ մեկտեղ ձևավորվեց նաև մի համոզմունք, ըստ որի օրգանիզմները կազմված են մահկանացու մարմնից և անմահ ժառանգական նյութից: Ի սկզբանե գոյություն ունեցող այդ կենսական նախասկիզբն էլ ղեկավարում է մարմնի զարգացումը: Մատերիալիստ մտածողների համոզմամբ զգայություն և մտածողություն չունեցող անօրգանական մատերիան իրեն հատուկ հատկությունների շնորհիվ, որոշ պայմանների առկայության դեպքում ինքնազարգանում ու ձևափոխվում է օրգանական, զգացող մատերիայի: Նյութի բաղադրության մեջ առկա է, համապատասխան պայմանների միջավայրում, զգայող և մտածող օրգանիզմների զարգացմանը հասնելու հատկություններ: Հետևապես զգայությամբ օժտված են մատերիայի բարձրագույն ձևագոյացությունները: Թեև մատերիայի դրսևորման բոլոր ձևերը չէ, որ օժտված են զգայության հատկությամբ, բայց ամբողջ մատերիային հատուկ է արտացոլման հատկությունը: Անօրգանական մատերիան օրգանականի ձևափոխության պատմական գործընթացում արտացոլման այդ հատկությունները վերածվում են զգայության: Այս համոզմունքների համար փաստացի ապացույց են ծառայում ժամանակակից քիմիայի և կենսաքիմիայի բնագավառում ձեռք բերված արդյունքները, ըստ որի անօրգանական աշխարհի իրերի ու օբյեկտների և օրգանական աշխարհի օրգանիզմների նյութական հիմքը կազմում են նույն ածխածին, ջրածին, թվածին, ազոտ, ֆոսֆոր, ծծումբ, կալցիում, նատրիում, երկաթ և այլ էլեմենտներ, որոնք երկրագնդի վրա գոյություն են ունեցել ի սկզբանե, կյանքի ծագումից առաջ: Բայց, եթե մետաֆիզիկական մատերիալիզմի տեսանկյունից կյանքը ֆիզիկական ու քի-

միական երևույթների պարզ գումար է, ապա դիալեկտիկական մատերիալիզմը օրգանիզմը դիտում է որպես մեխանիկական, ֆիզիկական, քիմիական գործընթացները մեկ ամբողջության մեջ շաղկապող սպիտակուցային, ինքնանորոգվող մարմինների միասնություն: Օպարինի բնորոշմամբ Երկրի կազմավորման գործընթացի ավարտից հետո, բարենպաստ քիմիական պայմանների առկայության շնորհիվ գոյացել է կենդանի պրոտոպլազման և հազարամյակների ընթացքում այդ անձև սպիտակուցից, միջուկի և թաղանթի գոյացման շնորհիվ առաջացել է առաջին բջիջը, որով դրվել է օրգանական աշխարհի ձևագոյացման հիմքը: Կենդանի սպիտակուցի մեջ սնման և արտաթորման գործընթացում դրսևորվում է գրգռելիությունը, որը բջջի կենսագործունեության հիմքն է կազմում: Գրգռելիությունը օրգանիզմների ֆիզիկաքիմիական գործընթացների վրա հիմնված ֆիզիոլոգիական բարդ գործընթաց է և հատուկ է բոլոր կենդանի էակներին: Զարգացման բարձր աստիճանի կենդանիները, օժտված լինելով նյարդային զարգացած համակարգով, արտաքին աշխարհի գրգիռներն ընկալում են զգայարաններով: Կենդանիների նյարդային համակարգի զարգացման բարձր աստիճանում նյարդային միավորման ճանապարհով կազմավորվում է կենտրոնական նյարդային համակարգը, որի շնորհիվ նյարդային համակարգի բոլոր առանձին մասերի գործունեությունը կարգավորվում է միասնական կենտրոնից՝ գլխուղեղից: Մարդու գլխուղեղը իրենից ներկայացնում է զանազան մեծություն, ձև և դասավորություն ունեցող միլիարդավոր բջիջների՝ իրար հետ իրենց անհամար հավելվածային ճյուղավորումներով միացած ամբողջական զանգված, որի կեղևում ստացվում և համապատասխան վերլուծության են ենթարկվում արտաքին աշխարհից ու ներքին օրգաններից հաղորդված ազդանշանները: Ուղեղի մեծ կիսագնդերի ֆիզիոլոգիական բարդ գործունեությունը հոգեկանի դրսևորման նյութական հիմքն է: Ըստ Պավլովի՝ հոգեկան գործունեությունը գլխուղեղի որոշ զանգվածի ֆիզիոլոգիական գործունեության արդյունք է: Շարադրվածից բխում է, որ մարդու գիտակցությունը ձևավորվել է նախանյութի պատմական զարգացման գործընթացում կենդանի էակների զգայարանների կատարելագործման, ուղեղի լրատվություն ստանալու, պահելու և վերարտադրելու գործառույթի զարգացման շնորհիվ:

Աշխատանքի շնորհիվ ընդլայնվում է մարդու մտահորիզոնը, շրջակա միջավայրը ուսումնասիրելու կարողությունը, հասունանում է

միմյանց հետ հաղորդակից լինելու պահանջը: Այդ պահանջը աստիճանաբար կատարելագործեց բերանի օրգանները և օժտեց նրանց հոդաբաշխ հնչյուններ արտասանելու գործառույթով: Աշխատանքն ու հոդաբաշխ խոսքը հզոր ազդակներ հանդիսացան ուղեղը մտածողության օրգան դառնալու գործընթացում: Այդ ընթացքում զարգանում և կատարելագործվում է որակապես նոր ազդանշանային համակարգը՝ խոսքը, որի շնորհիվ սկսվում է վերացարկված մտածողության դարաշրջանը: Մարդկային հասարակության կենսագործունեության այդ բանական դարաշրջանի գոյության ու զարգացման հիմնական հատկանիշը դառնում է լեզուն, որը օգնում է մարդկանց և տարբեր ժողովուրդներին հաղորդակցվելու միմյանց հետ, փոխանցելու սերունդների ու իրենց գիտության ու հոգևոր մշակույթի գանձերը, կերտել իրենց պատմությունը և այն ժառանգություն թողնել ապագա սերունդներին: Հնչյունային լեզվի և մտածողության շնորհիվ մարդը իմաստավորում է իր տեղն ու դերը աշխարհում, մշակում է գործողությունների ծրագիր, ստեղծում է հոգևոր ու նյութական արժեքներ և թափանցում է տիեզերքի անհուն տարածությունները:

2. ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Գիտակցությունը՝ աշխարհը, իրեն ու իր շրջապատն ըմբռնելու, հասկանալու, բացատրելու, մարդու յուրահատուկ ինտելեկտուալ գործունեություն է: Դա մարդու հուզական, զգացմունքային, ճանաչողական և այլ բնույթի ինտելեկտուալ գործառույթների արտահայտություն է, ուղեղի այնպիսի գործունեություն, որի շնորհիվ մարդը ճանաչում է ինչպես արտաքին աշխարհը, այնպես էլ ինքն իրեն, իմաստավորում և արժեքավորում է իր և ուրիշների գործունեությունը: Գիտակցությունը նուրբ նյութական կառուցվածք ունեցող ինքնագիտակցությամբ օժտված գլխուղեղի հատկություն և գործառութային գործունեության արդյունք է, հոգեկան արտացոլման բարձրագույն ձև:

Գլխուղեղի կեղևը բաղկացած է 15 միլիարդից ավել նյարդային բջիջներից (նեյրոններ), որոնցից յուրաքանչյուրը ելուստներով հաղորդակցության մեջ է գտնվում մյուս բջիջների հետ: Բոլոր բջիջները նյարդային թելերով կապված են զգայարանների նյարդային վերջույթների հետ, որոնք ուղեղի յուրատեսակ շոշափուկներն են:

Գլխուղեղի կեղևի ծոծրակային մասում գտնվում է տեսողական անալիզատորի կեղևային բաժինը, գագաթային մասում՝ մաշկայինը, քունքային մասում՝ լսողականը: Այդ տեղամասերը ընդունում, վերա-

մշակում և պահեստավորում են ստացված լրատվությունը: Ուղեղի առջևի բաժինները՝ ճակատային մասը ապահովում է գործունեության ծրագրավորումը, հոգեկան գործընթացների կարգավորումը և հսկողությունը: Հետևի կեղևը վերամշակում է լրատվությունը, իսկ առջևինը՝ հրահանգները: Զ. Կոսենկոն և Ա. Ռեմեզովան «Պատմվածք ուղեղի կյանքի մասին» գրքում նշում են, որ «1913 թ. ծնվել էր մի երեխա, որը չուներ ուղեղի մեծ կիսագնդեր: Նա անընդհատ քնում էր: Նրան ստիպողաբար արթնացնում և կերակրում էին: Երեխան ոչինչ չէր զգում և անկանոն շարժում էր ձեռքերն ու ոտքերը: Այդպես էլ նրան ոչինչ չհաջողվեց սովորեցնել»:

Գիտակցությունը մարդուն հատուկ հոգեկանի բարձրագույն ձև է, որը դրսևորվում է որպես իրականության իդեալական վերարտադրության, իմաստավորման, սեփական կեցության ըմբռնում: Գիտակցությունը նյութականի բարձրագույն կազմակերպվածության արդյունք է:

Գիտակցության ըմբռնման հարցում փիլիսոփայության պատմության մեջ հստակորեն ձևավորվել է 3 հիմնական տեսակետ. 1. իդեալիստական համոզմունքների տեսանկյունից գիտակցությունը դիտվել է որպես արտերկրյա նախահիմք, որը գոյություն է ունեցել բնությունից առաջ և ոչնչից ստեղծել է բնությունը: Նման պատկերացումներում գիտակցությունը դիտվում է որպես աստծո ատրիբուտ, որն ընդգրկում է մարդու հոգեկանի բոլոր գործընթացները: Իսկ զգայությունն ու ակտիվությունը դիտվում է որպես անմահ հոգու ակտիվության դրսևորում: Մարմնականը համարվում է ժամանակավոր, անցողիկ, իսկ հոգին՝ աննյութական, անոչնչանալի, անմահ: Հոգեկանը այդպիսի գերզգայական ուժի դրսևորում է: Նման համոզմունքներ զարգացրել են Պլատոնը, Թ. Աքվինացին, Հեգելը: 2. Գիտակցության դուալիստական ըմբռնման համաձայն, ի սկզբանե գոյություն են ունեցել միմյանցից անկախ, տարբեր աշխարհների պատկանող ու տարբեր օրինաչափություններով դրսևորվող նախահիմքեր՝ մարմնականը և հոգեկանը: Դրանք զարգանում են առանձին-առանձին և ներդաշնակորեն համապատասխանում են միմյանց: Այդ ներդաշնակությունը ի վերուստ պայմանավորված է նախախնամությամբ: Նման համոզմունքներ զարգացրել է Ռ.Դեկարտը՝ բնածին գաղափարների մասին իր տեսության մեջ: 3. Գիտակցության մատերիալիստական ըմբռնումներում դրսևորվում են երեք սկզբունքային դիրքորոշումներ: 1. պարզունակ մատերիալիզմի տեսանկյունից հոգեկանը դիտվում է սոսկ ֆիզիկաքիմիական գործընթացի արտահայտություն, արդյունք: XVIII դարի ֆրանսիացի բժիշկ,

փիլիսոփա Կաբանիսը մտածողությունը դիտելով սոսկ ֆիզիկաքիմիական գործընթացների արդյունք, հիմնավորում էր, թե «ինչպես լարդն է արտադրում լեղի, այնպես էլ ուղեղն է արտադրում մտքեր»: Նման համոզմունքներ XIX դարում զարգացրել են Մոլեշոտը, Ֆոգտը, Բյուխները: 2. մետաֆիզիկական համոզմունքների տեսանկյունից հոգեկանի հիմքում դրվում է նյութականը՝ ուղեղի վրա արտաքին աշխարհի ազդակները: Նման համոզմունքներում անտեսվում է հոգեկանի և նյութականի որակական տարբերությունները: Լամետրին հիմնավորում էր, որ «ինչպես կենդանիները, այնպես էլ մարդիկ ունեն զգայունակության միանման հատկություն: Մարդը մեքենա է, բարդ, ինքնուրույն լարվող ժամացույցային մեխանիզմ: Մարդկային բանականությունը ևս մեխանիկական երևույթ է»: Համակարգիչը արտակարգ խելոք ինտելեկտուալ գործողություններ կարող է իրականացնել, սակայն երբեք մարդու նման չի զգա ծաղկի բուրմունքը և սիրած աղջկա թովչանքը: 3. դիալեկտիկական մատերիալիզմը հոգեկանը դիտում է որպես մատերիայի որակական փոփոխության յուրահատուկ դրսևորում, որը պայմանավորված է ոչ միայն ֆիզիոլոգիական գործընթացներով, այլև հանդիսանում է հասարակական-պատմական զարգացման արդյունք: Նման ըմբռնումներում հոգեկանը ներկայացվում է որպես իմացականի, զգացմունքայինի և կամայինի միասնություն: Հոգեկանի իմացական կողմը արտաքին աշխարհը ճանաչելու, դրա մասին պատկերացումներ ունենալու մարդու ընդունակությունն է: Հոգեկանի զգացմունքային կողմը մարդու ապրումների բարդ ներքնաշխարհն է՝ ուրախանալու, տխրելու, ատելու, զմայլվելու և այլ հոգեվիճակները: Հոգեկանի կամային կողմը մարդու ձգտումների, նպատակների, երազանքների իրւսկանացման ուղղությամբ դրսևորվող սկզբունքայնությունն է:

Դիալեկտիկական մատերիալիզմում գիտակցությունը դիտվում է որպես արտաքին ազդակներն ակտիվորեն արտացոլող ուղեղի գործառույթ, որը կարող է ընդունել, մշակել և պահպանել լրատվություն, կառավարել գործողություններ:

Ընդհանրացնելով շարադրված համոզմունքները տեսնում ենք, որ գիտակցության բնույթի և էության հիմնավորումներում դրսևորվել է տիեզերակենտրոն [կոսմոցենտրիստական], աստվածաբանական [թեոցենտրիստական], մարդաբանական [անտրոպոլոգիական] մեկնաբանություններ:

Գիտակցության տիեզերակենտրոն ըմբռնումը բանականությունը

դիտում է արտերկրայինի, տիեզերականի դրսևորում (Հերակլիտեսի լոգոսը)։ Դեմոկրիտեսի և էպիկուրի համոզմամբ գիտակցությունը օբյեկտի և սուբյեկտի միջև համընդհանուր կապի արդյունք է։ Առարկաներից անջատվում են նրանց կերպարների նման մասնիկներ, որոնք ընկնելով մարդու զգայարանների վրա առաջացնում են համապատասխան գիտելիք։ Պլատոնի և Արիստոտելի կարծիքով ինչպես տառերն են պատճենվում տախտակի վրա, այդպես էլ իրականության օբյեկտներն են պատճենվում բանականության մեջ։ Հույների համոզմամբ առարկան և բանականությունը գոյություն ունեն ինքնուրույն, միմյանցից անկախ։ Պլատոնի համոզմամբ գաղափարները տիեզերական տարածության մեջ գոյություն ունեցող անստեղծելի, ևնոչնչանալի, անյութական որակներ են, իսկ առարկաները այդ գաղափարների լոկ պատկերներն են։

Գիտակցության աստվածաբանական մեկնաբանությունը մարդու հոգեկան, մտածողության դրսևորումը իմաստավորում է գերագույն աստծո արարչագործությամբ։ Դա անկատար մարմնում ժամանակավոր տեղավորված կատարյալ հոգու մենաշնորհն է։ Նման համոզմունքներ զարգացրել են Պլոտինը, Օգոստինոս Երանելին, Թ. Աքվինացին։ Եկեղեցու հայրերը գիտակցությունը համարում են աստվածային հայտնություն, աստծո հետ հաղորդակցվելու, հոգևոր ապրումների վերարտադրության անհատական ակտ։

Գիտակցության մարդաբանական համոզմունքներում մտածողությունը դիտվում է ուղեղի գործառույթ և արտաքին ազդեցության արդյունք հանդիսացող արտացոլում, որը կարող է ձևավորվել միայն համապատասխան սոցիալական միջավայրում [Լոկ. Հելվեցիուս, Ռուսո], մարդը դառնում է բնության տիրակալ, իսկ մտածողությունը դիտվում է գոյություն ունենալը հաստատելու միակ հավաստելիություն [Դեկարտ]։ Միաժամանակ հիմնավորվում է, որ գիտակցությունը գիտակցված կեցություն է [Մարքս, Էնգելս]։

3. ԱՆՊԱՅՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՈԵՖԼԵՔՍՆԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ

Ուղեղում կատարվող ֆիզիկաքիմիական բարդ գործընթացները կախված են զգայարանների վրա ներգործող գրգռիչների բնույթից։ Բացահայտելով ներվային համակարգի ակտիվության մեխանիզմը, Պավլովը նշում է, որ «օրգանիզմը ինքն իրեն, առանց շրջապատի նյութակսն գրգռիչների ակտիվանալ չի կարող»։ Այսինքն, ուղեղում ընթա-

ցող ֆիզիոլոգիական բոլոր գործընթացները արտաքին և ներքին ազդակների համատեղ գործունեության արդյունք են: Պավլովի բնորոշմամբ «արտաքին աշխարհից և օրգանիզմի միջավայրից անընդհատ ուղեղի մեծ կիսագնդեր են հասնում տարբեր որակի և ինտենսիվության գրգիռներ, որոնց մի մասը հետազոտվում է կողմնորոշիչ ռեֆլեքսի միջոցով, իսկ մյուսները հանդես են գալիս որպես պայմանական ու անպայման ռեֆլեքսների արտահայտություն»: Անպայման ռեֆլեքսը ներվային համակարգի միջոցով տրվող օրգանիզմի պատասխանն է արտաքին ազդակներին: Միջավայրին հարմարվելու հազարավոր տարիների գոյության պայքարի հետևանքով ձեռք բերված և սերնդից սերունդ փոխանցվող մինչև այն ֆիզիոլոգիական մեխանիզմները որակավորվում են որպես անպայման ռեֆլեքս: Պավլովի բնորոշմամբ «օրգանիզմի մշտական կապը նրան շրջապատող միջավայրի հետ կոչվում է անպայման ռեֆլեքս»: Անպայման ռեֆլեքսների ֆիզիոլոգիական մեխանիզմները գործունեության համար պատրաստ վիճակում են գտնվում կենդանու ծնվելու օրից: Դրանք կայուն են և մի սերնդի կյանքում գրեթե փոփոխությունների չեն ենթարկվում: Անպայման ռեֆլեքսների մեխանիզմները գտնվում են գլխուղեղի ենթակեղևային շերտերում և կեղևում: Է. Հասրաթյանը հեռացնելով շների գլխուղեղի կիսագնդերը, հիմնավորեց, որ վիրահատված կենդանիների վարքի խորը փոփոխությունները վերաբերվում են նաև անպայման ռեֆլեքսներին:

Պայմանական ռեֆլեքսները ձեռք են բերվում կենդանու կյանքի ընթացքում: Դրանք բնածին, ժառանգական չեն: Այդ ռեֆլեքսները մշակվում են ներվային համակարգի ներսում որոշակի վերակառուցումների շնորհիվ, որով իրար հետ են կապվում մինչ այդ անջատ գտնվող մի շարք ներվային կենտրոններ: Պավլովը անպայման ռեֆլեքսները անվանել է առաջին ազդարարային համակարգ, որը հատուկ է և կենդանիներին և մարդուն, իսկ խոսքը՝ երկրորդ ազդարարային համակարգ, որը հատուկ է միայն մարդկանց: Այս համակարգի միակ ազդարարը մարդկային լեզուն է իր բառերով ու քերականական կառուցվածքով, որի մշակումը հասարակական արտադրական գործունեության արդյունք է: Էնգելսի ամենակերավոր արտահայտությամբ աշխատանքի գործիքներ պատրաստելու շնորհիվ մարդու ձեռքերը հասան այնպիսի կատարելության, որ ստեղծեցին Թորվալդսենի արձանները, Պագանինիի երաժշտությունը, Ռաֆայելի նկարները:

Պատմական զարգացման գործընթացում կենդանական աշխարհից մարդու զատվելուն և կատարելագործվելուն նպաստել է և խոսակ-

ցական լեզուն: Բառ հասկացությունները յուրահատուկ ազդարար են, որոնցում տվյալ ազգի լեզվի ձևավորման ու զարգացման ընթացքում դրվել է ռեալ իմաստ, որն ըմբռնվել է այդ լեզվով խոսող բոլոր մարդկանց կողմից: Բառ ազդարարները հնարավորություն են ստեղծում մարդուն ճանաչելու իր շրջապատի աշխարհը, բացահայտելու նրանում դրսևորվող տարաբնույթ պատճառահետևանքային կապակցությունները:

4. ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ձևավորվող անձի գիտակցության կազմավորման կարևոր աղբյուր կարող են լինել 1. արտաքին առարկայական աշխարհը: Արտաքին աշխարհից մարդու ուղեղ հասնող տարաբնույթ ազդակ-տեղեկությունները զգայական կերպարներ են: Թոթովել սկսող երեխան հասկանալու, ճանաչելու և ըմբռնածն արտահայտելու մեծ պահանջ է զգում: Ձևավորվող նրա գիտակցությունը, զգայարանների միջոցով, արտաքին աշխարհից ստացած տարաբնույթ տեղեկությունների իմաստավորման արդյունք է: Զգայարանների միջոցով ուղեղ հասնող ազդակներն առեծվածային ձևով գրանցվում են ուղեղի նուրբ բջիջներում, իսկ հետագայում համապատասխան գրգռման դեպքում վերարտադրվում են գիտելիքի ձևով: Աշխարհը ճանաչելու երեխայի իմացությունը սկըսվում է շրջապատի հետ շփվելու միջոցով, որը շարունակվում է նրա ողջ կյանքի ընթացքում: Սկզբում նա արտաքին աշխարհը ճանաչում է հաճելիի կամ տհաճի, տաքի կամ սառի և այլ զգացողությունների ձևով: Աստիճանաբար այդ զգացողությունները դառնում են բառ հասկացություններով արտահայտվող ըմբռնումներ: Այդ գործընթացն առարկայական ճանաչողությունից վերացարկված մտածողության անցնելու յուրահատուկ զարգացում է, որը շարունակվում է մարդու ողջ կյանքի ընթացքում:

2.Գիտակցության կարևոր աղբյուրներ են համարվում սոցիոկուլտուր միջավայրը, գաղափարները, իրավական, բարոյական նորմերը, գեղագիտական և այլ բնույթի արժեքները: Անձի բանական հասունացման գործընթացում չափազանց կարևորվում են մշակույթի օջախները: Թանգարաններով, համերգասրահներով, կինոթատրոններով, գրադարաններով, զբոսայգիներով հարուստ քաղաքներում և գյուղական մեկուսացված միջավայրում ձևավորվող անձերի ինտելեկտուալ հասունացման և զարգացման գործընթացը զգալիորեն կզանազանվի մի-

յանցից: Տարբերիչ առանձնահատկություններ կդրսևորվեն նաև ավան-դապահ գյուղ ական և քաղ աքային ժխորի միջավայրում ձևավորվող անձերի վարվելակերպում, բնավորության գծերում, մարդկանց հետ փոխհարաբերություններում: Անձի գիտակցության ձևավորման վրա մեծ է գաղ ափարների ազդեցությունը: Քաղ աքական գործիչների, չի-նով նիկների, գործարարների, արվ եստագետների ընտանիքներում ձևավորված երեխաները կունենան ինտելեկտուալ զարգացման տար-բեր հակվածություններ, միջավայրում կդրսևորեն տարբեր պահվածք-ներ: 3. Գիտակցության աղբյուր է նաև անձի հոգևոր ներքնաշխարհը, կենսափորձը: Երեխան ծնվում է որոշակի հոգեկան կերտվածքով, որը նրա կյանքի ընթացքում կարող է և առաջնորդող դեր կատարել: Դա կարևորվում է հատկապես կյանքի կտրուկ շրջադարձերի փուլերում: Մարդը հասունանում, սովորում է ողջ կյանքի ընթացքում: Հայտնվելով տարբեր միջավայրերում նա ձեռք է բերում փորձ ու հմտություն, ունե-նում է կորուստներ ու նվաճումներ: Նման կենսափորձը անձի հետագա գործողությունների համար չափազանց մեծ կողմնորոշիչ դեր կարող է կատարել:

Մտածողությունը իրականանում է ուղեղում, հետևաբար ուղեղի ռեֆլեկտոր և կենսա քիմիական գործընթացները ևս պետք է դիտել գի-տակցության աղբյուր:

Որոշ մտածողներ գիտակցության աղբյուր են դիտում նաև կենսո-լորտի հետ ուղեղի էներգետիկ և տեղեկատվական կապերը: Դուբ-րովի, Պուլկինի կարծիքով մահացած սերունդների ազդակները հա- ջորդ սերունդների վրա զգալի հետք կարող են թողնել:

Վերջին շրջանի հետազոտությունները վկայում են, որ գեներն են որոշում մարդու ինտելեկտուալ գործունեության ուղղվածությունը: Կարծիք կա, որ մարդու սաղմի ձևավորման ընթացքում կոդավորվում է նրա հետաքրքրասիրությունների շրջանակը: Վարկածը կարելի է փաստարկել Լամարկի օրինակով: Պատմում են, որ հանճարեղ կեն-սաբանը փոքրիկ հասակում շատ լացկան է եղել: Սակայն լացն ան-միջապես կտրվում էր, երբ նրան մատուցում էին ծաղիկ կամ կանաչ ընձյուղ:

Գիտակցության աղբյուրների հիմնավորման հարցում կարելի է ավելացնել հայազգի ակադեմիկոս Իգնատ Աղաջանյանի առաջադրած վարկածը: Ուսումնասիրելով կենսաբանական տեսակների ծննդյան և մահվան հանգամանքները նա ձևակերպել և մաթեմատիկական բանա-

ձևերով արտահայտել է մի օրինաչափություն, ըստ որի 1. մահվան պահին կենսաբանական էակը իր նմաններին ուղարկում է ազդանշան՝ նրանց կոչելով բազմանալու: Գիտնականի համոզմամբ այդ ազդանշանները ընկալվում են և մարդկանց, և անգամ սաղմի կողմից: Կարծիք է հայտնվում, որ այդ ազդանշանները տեսակի ակտիվությունը բւսրծրացնելու խթանիչ են հանդիսանում: Որպես ապացույց փաստարկվում է երկարատև պատերազմներից հետո կորուստներ կրող ժողովրդի մոտ նկատվող բուռն աճը: Ընդ որում, որքան պակաս է տվյալ սեռը, նույնքան էլ այն ավելանում է: Նկատվում է նաև զույգերի ծնելիության բարձրացում: Օրինակը հաստատվում է նաև գյուղատնտեսության բնագավառում: Թունաքիմիկատների օգտագործման շնորհիվ միջատները հսկայական չափով ոչնչանում են, բայց նույնքան էլ բազմանում են: 2. բնական ազդանշանի թուլացման կամ բացակայության դեպքում տվյալ տեսակը աստիճանաբար կմահանա:

5. ՆՅՈՒԹԱԿԱՆԸ ԵՎ ԻԴԵԱԼԱԿԱՆԸ

Մտածող ուղեղի բջիջները կազմված են որոշակի էլեմենտներից: Կարելի է բավականին ճշգրտությամբ որոշել ուղեղի նյութի քիմիական բաղադրությունը: Բայց հնարավոր չէ պարզել, թե ինչպես է տեղի ունենում մտածողությունը այդ բջիջներում: Ուղեղը նյութական է: Իսկ նրա գործունեության արդյունք համարվող միտքը՝ ոչ նյութական:

Իդեալականը օբյեկտիվ ռեալականության սուբյեկտիվ պատկերն է: Այն մարդկային գլուխ տեղափոխված և այնտեղ ձևափոխված նյութականն է: Իդեալականը մինչև XVIII դարը ըմբռնվել է տարբեր իմաստներով: Պլատոնի կողմից այն ներկայացվել է որպես հատուկ նախահիմք: Դեկարտը, Սպինոզան, Դիդրոն, Ֆոյերբախը իդեալականը դիտել են որպես հատուկ ձևով կազմակերպված մատերիայի հատկություն, մի նյութական մարմնի արտացոլում մեկ այլ նյութական մարմնում: Ֆոգտը, Բյուխները, Մոլեշոտը իդեալականը նույնացնում էին նյութականի հետ: Նրանք ուղեղի ներվային ֆիզիոլոգիական կառուցվածքի և դրա արտադրություն հանդիսացող մտքի միջև ոչ մի էական, որակական տարբերություն չէին դնում: XX դարի մտածողները իդեալականը դիտում են որպես հասարակական մարդու զգայական առարկայական գործունեության արդյունք, մտածող օրգանում առաջացած արտաքին աշխարհի կերպար: Այս համոզմունքի տեսանկյունից իդեալականը գոյություն ունի միայն որպես մարդու գործունեության ձև:

Իդեալականը չի կարելի հանգեցնել այն նյութի վիճակին, որը գտնվում է մարդու ուղեղի կեղևի տակ: Մտածում, գործում է ոչ թե ուղեղը, այլ ուղեղով օժտված մարդը, արտաքին աշխարհի և իր նմաններ հետ միասնական մարդը: Իդեալականը՝ իրի, առարկայի ձևն է մարդու ուղեղի մեջ առանց այդ առարկայի: Բնության մեջ, այդ թվում և որպես կենսաբանական էակ, մարդու բնույթում, պատրաստի իդեալական չկա: Մարդու մարմնի համեմատ իդեալականը ունի նույնպիսի «արտաքին» բնույթ, ինչպես որ այն նյութի համեմատությամբ, որում այն առարկայացվում է զգայական ընկալելի իրի տեսքով: Օրինակ, քանդակագործի ձեռքի տակից դուրս եկած արձանի ձևը նախապես չէր գտնվում ոչ քարի բեկորում, ոչ էլ քանդակագործի անատոմո-ֆիզիոլոգիական կառուցվածքում: Հանճարեղ քանդակագործ Ռոդենը մի առիթով ասել է, «ես վերցնում եմ մարմարի բեկորը, նրանից հեռացնում եմ ավելորդ մասերը և տակը մնում է կատարյալ ձևը»: Այդ կատարյալ ձևը Ռոդենի վարպետության մարմնացումն է, որը ոչ թե գտնվում էր մարմարի բեկորում, այլ քանդակելուց առաջ ձևավորվել էր նրա ուղեղում:

Իհարկե իդեալականը, այսինքն մարդու հասարակական-արտադրական գործունեության ձևը, անմիջականորեն մարմնավորված, կոդավորված է ուղեղի կեղևում՝ ներվային կառուցվածքի ձևով: Այսինքն, միանգամայն նյութական է: Սակայն իդեալականի այդ նյութական կեցությունը բուն իդեալականը չէ, այլ միայն նրա արտացոլման ձևն է անձի կենսաբանական կառուցվածքում: Այդ իսկ պատճառով էլ իդեալականը միանշանակ հնարավոր չէ բացատրել մարդու ուղեղի անատոմո-ֆիզիոլոգիական կառուցվածքի հատկությամբ: Իդեալականը առաջանում է և գոյություն ունի մարդու գլխում՝ նրա հասարակական-արտադրական գործունեության շնորհիվ: Սպինոզայի պատկերավոր արտահայտությամբ մտածողությունը մտածող մարմնի գործունեություն է: Իդեալականը այն է, ինչ գոյություն չունի զգայական ընկալելի իրերի տեսքով, այլ մարդու ինտելեկտուալ գործունեության արդյունք է: Հեգելի բնորոշմամբ դա «ոչ կեցությունն» է, որը կարող է վերածվել «առկա կեցության»: Բառը և այդ բառը ներկայացնող իրը միմյանցից որակապես տարբեր են:

Իհարկե, այն ինչ ասվեց իդեալականի վերաբերյալ, աւվեց Երկիր մոլորակի տիրույթի նկատմամբ: Ո՞վ գիտե, թե անծայրածիր տիեզերքում ինչպիսի որակներ կլինեն: Իսկ Երկրագնդի տարածքում իդեալականը այնտեղ է, որտեղ գործող, ստեղծագործող մարդն է: Իդեալա-

կանը մարդու մտային գործունեության, աշխատանքի ծնև արդյունք է: Մտածողությունը, գիտակցությունը նյութականի յուրահատուկ գործունեության արդյունք է, բայց նյութական չէ: Մտածողության օրգան ուղեղը կազմված է միլիարդավոր բջիջներից, զբաղեցնում է որոշակի տարածություն, ունի ծավալ, կշիռ, բայց նրանում առաջացած մտքերը, գիտակցությունը աննյութական են, անտարածական, անչափելի և անկշռելի: Զգայությունը, գիտակցությունը, հոգեկան երևույթների բարդ ներքնաշխարհը Սեչենովի արտահայտությամբ «ծնվում է» գլխուղեղի գործունեությունից: Գիտակցությունը, միտքը ծագում և կազմավորվում է գլխուղեղի կիսագնդերում և լեզվի միջոցով ստանում է հնչյունային, բառային կերպարանք: Դրանք նյութական իրերի երևույթների ու հատկությունների իդեալական արտացոլումներ են, բայց գոյանում են նյութական օրգանների գործունեության հետևանքով: Մտածողության և գիտակցության ձևավորման հիմքում ընկած են ֆիզիոլոգիական և սոցիալական գործոններ: Գիտակցությունը և Մտածողությունը որպես պայմանական ռեֆլեքսների նոր ազդանշանային համակարգ մշակվում է մարդու ծննդից հետո անհատական կյանքի ընթացքում. Այն որպես ուղեղի գործառույթ իրենից ներկայացնում է բնական գործընթաց, բայց հասարակությունից, մարդկության կուտակած գիտելիքներից, լեզվական, տրամաբանական, մաթեմատիկական գիտելիքներից դուրս գոյություն ունենալ չի կարող, որովհետև յուրաքանչյուր անձի մտածողությունը հասարակական պատմական պրակտիկայի զարգացման արդյունք համարվող հասկացությունների, լեզվի, տրամաբանական կատեգորիաների տիրապետում է: Միաժամանակ մտածողությունը, որպես օբյեկտիվ իրականության արտացոլման գործընթաց զգալիորեն զանազանվում է գիտակցությունից: Գիտակցությունը անմիջականորեն պայմանավորված է կեցությամբ, սոցիալական միջավայրով և ունի դասային բովանդակություն: Մտածողությունը հավասարապես պատկանում է հասարակության բոլոր անդամներին, համամարդկային է, մարդկանց մտածելու բնական ունակությունը պայմանավորված չէ սոցիալական ծագմամբ: Մարդկային մտածողության տրամաբանական կառուցվածքի մեխանիզմն ու օրինաչափությունները կախված չեն ազգային, ռասսայական, դասակարգային և այլ կարգի հատկանիշներից: Հասկացությունների, դատողությունների, մտահանգումների մտքի ձևերը և նույնության, հակասության, երրորդի բացառման և այլ օրենքները համընդհանուր են բոլոր ազգերի ու ժողովուրդների համար էլ: Էնգելսի բնորոշմամբ մարդու բանականությունը զար-

գացել է բնությունը վերափոխելու նրա հմտությանը համապատասխան: Մտածողության գործընթացի այդ ընդհանրության շնորհիվ հնարավոր դարձավ 20-րդ դարում մոդելավորել նրա որոշ դրսևորումները և տեխնիկական միջոցներով ուսումնասիրելու առարկա դարձնել: Ժամանակակից էլեկտրոնային հաշվիչ մեքենաները, համակարգիչները կատարում են մտածական այնպիսի բարդ գործողություններ, որոնք արագությամբ և ճշգրտությամբ գերազանցում են մարդկային ուղեղի հնարավորությունները: Բայց մեքենան կարող է կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք տեխնիզացվել են մարդու մտածողության միջոցով: Իհարկե այդպիսի մեքենաների հնարավորությունները գիտության զարգացման հետ կաճեն, բայց ապագան ցույց կտա թե մտածող մեքենան կունենա՞ արդյոք զգացողության. ապրումների այն հրաշք ունակությունը, որի շնորհիվ հույզերի ու բերկրանքի արարիչ է դառնում հասարակ մահկանացու մարդը:

6. ԳԻՏԱԿՑԱԿԱՆԸ, ԵՆԹԱԳԻՏԱԿՑԱԿԱՆԸ, ԱՆԳԻՏԱԿՑԱԿԱՆԸ

ԳԻՏԱԿՑԱԿԱՆԸ մարդու կողմից իր և այլոց աշխատանքային բազմաբնույթ գործունեության ըմբռնման, իմաստավորման մտային գործողությունն է: Պավլովի բնորոշմամբ «գիտակցությունը կապված է գլխուղեղի մեծ կիսագնդերի որոշ տեղամասերի ներվային գործունեության հետ, որոնք գտնվում են ակտիվ գրգռված վիճակում»:

ԵՆԹԱԳԻՏԱԿՑԱԿԱՆԸ հոգեկան գործընթացների այն բովանդակությունն է, որը անմիջականորեն չի գտնվում ակտիվության դաշտում և չի գիտակցվում մտածող սուբյեկտի կողմից: Ենթագիտակցականի ոլորտն ընդգրկում է գիտակցության կիզակետից դուրս ընթացող զգայությունները, հուզական բնույթի մտորումները, բնազդային գործողությունները, ինտուիցիան և այլն:

ԱՆԳԻՏԱԿՑԱԿԱՆԸ ուղեղի չգրգռված տեղամասերում բովանդակված հոգեկանն է: Այն ակտիվության շեմ չի հասնում, բայց զգալի հետք կարող է թողնել մարդու հոգեկան կերտվածքի վրա: Ֆրոյդի բնորոշմամբ «գիտակցությունը դետերմինացված է գիտակցության վորձում առկա չգտնվող օբյեկտիվ գործոններով», այդ պատճառով էլ անգիտակցական է: Հոգեկան և կենսաբանական գործոնները անգիտակցական ապրումների խթանիչ են հանդիսանում: Ըստ Ֆրոյդի «ես»ը սեփական տանը տեր չէ, քանզի «մարդու գիտակցությունը հարկադրված է բավարարվելու իր հոգեկան աշխարհում անգիտակցակա-

նորեն դրսևորվող կցկտուր տվյալներով»:

Գիտակցությունը հոգեկան բարդ գործընթաց է: Բոլոր դարաշրջանների փիլիսոփաներին հետաքրքրել է գիտակցության առեղծվածը: Լայբնիցի պատկերավոր բնորոշմամբ «հոգեկան դատարկություն գոյություն չունի... Գիտակցությունը հանդես է գալիս տարբեր ակտիվությամբ և բոլոր դրսևորումները ծագում են անգիտակցական կյանքից: Արթմնի վիճակում հստակ մտապատկերների հետ մեկտեղ գոյություն ունեն և խամրած մտապատկերներ: Մեր մտքում չկա ոչինչ, որը նախապես մտապատկերների տեսքով նիրհած չլիներ խավար հոգում»: Հարթմանը անգիտակցականը համարում է կեցության հիմք և համաշխարհային գործընթացի պատճառ հանդիսացող գերզգայական հոգևոր գործոն: Նրա ըմբռնմամբ «անգիտակցականում հաշտություն են գտնում սուբյեկտի և օբյեկտի, ռեալականի և իդեալականի, նյութականի և հոգու հակասությունները»: Հարթմանի համոզմամբ մարդու հոգեկանում առկա անգիտակցականը հստակորեն նշմարվում է նրա զգացմունքներում, գեղարվեստական ստեղծագործություններում:

Կանտը անգիտակցականը ներկայացնում է որպես փորձի գիտակցական բովանդակությանը նախորդող ապրիորի սինթեզ: Նրա համոզմամբ «մարդու մոտ առկա են«մութ մտապատկերներ», որոնք չեն վերահսկվում բանականության կողմից»: Այդ չգիտակցված պատկերացումների ոլորտը ավելի շատ է, քան գիտակցության ոլորտը: Կանտի համոզմամբ մարդու «հոգու քարտեզում լուսավորված են միայն շատ քիչ օջախներ»:

Ֆեխների համոզմամբ «գիտակցության ընդհատությունը կապված է այն բանի հետ, որ հոգեկան գործունեությունը որոշ պահերին ընկնում է գիտակցության շեմից ցածր»: Մարդու կողմից օբյեկտիվ իրականության և իր սեփական կեցության հիմաստավորման, զգայական-կամային ու տեսական-պրակտիկ գործունեության ամբողջականացման հոգեկան գործընթացը գիտակցականի դրսևորման արդյունք է: Գիտակցականը մարդու կողմից իր և այլոց աշխատանքային, հասարակական-արտադրական գործունեության ըմբռնման ու իմաստավորման մտային գործընթաց է: Ծնվելիս մարդը հայտնվում է նախորդ սերունդների ստեղծած իրերի ու առարկաների աշխարհում և փորձում է հասկանալ իր նախորդների անցած պատմական ուղին, արժեքավորել շրջապատի երևույթներն ու գործընթացները: Իրականության նկատմամբ նրա հարաբերության եղանակը որոշվում է մարդկանց հետ հաղորդակցվելու միջոցով, որի ընթացքում մարդը փորձում է բացատրել

շրջապատի երևույթներն ու համապատասխան վճիռներ կայացնել: Գիտակցությունը այդ ամենը հասկանալու, ըմբռնելու, վերլուծելու, արծագանքելու ակտիվ մտային գործողությունն է: Բայց շատ հոգեկան ապրումներ, զգայություններ ու տպավորություններ միշտ չէ, որ գտնըվում են ակտիվ մտածողության ու գիտակցության տեսադաշտում: Այդ հոգեկան գործընթացները, որոնք անմիջականորեն չեն գտնվում գիտակցականի տեսադաշտում և չեն գիտակցվում տվյալ անձի կողմից, ենթագիտակցականի դրսևորում են: Ենթագիտակցականը սկզբունքորեն հայտնի է տվյալ անձին, զուգորդման կարգով կապված է նրա մտքի առարկայի հետ, որպես իմաստային ենթատեքստ ազդում է նրա մտքի ընթացքի վրա, բայց տվյալ պահին անմիջականորեն չի մտածվում, չի գիտակցվում: Մարդու գիտակցական վարքագծում միշտ էլ առկա է իրադրության, շրջապատող պարագաների, ավտոմատացված գործողությունների ազդեցության ենթագիտակցական գործոնը: Հետևապես միանշանակ ձևով չի կարելի գիտակցականն ու ենթագիտակցականը սահմանազատել ու հակադրել միմյանց: Օրինակ, Հերբարտի և Ֆրոյդի պատկերացմամբ հոգեկանը բաղկացած է երեք շերտից՝ անգիտակցականը, ենթագիտակցականը, գիտակցականը: Անգիտակցականը նրանց համոզմամբ հոգեկանի խոր հիմքն է, զգացմունքների ու ապրումների իմաստային առանցքը և որոշում է մարդկանց գիտակցական կյանքն ու ժողովուրդների ճակատագիրը:

Ենթագիտակցականը գիտակցության և անգիտակցականի միջև ընկած սահմանային ոլորտն է, որտեղ ներխուժած անգիտակցական հակումներին խիստ վերահսկման է ենթարկում մարդու հասարակական կյանքից ծնված խիղճը: Գիտակցականը հոգեկանի մակերեսային դրսևորումն է արտաքին աշխարհի հետ նրա շփման կետում և կախված է անգիտակցական ուժերից: Իհարկե անգիտակցականի և ենթագիտակցականի էությունն ու գործողության մեխանիզմը դեռևս լրիվ պարզաբանված չէ և գիտությունն ու հոգեբանությունը այդ գործում դեռ շատ անելիքներ ունեն: Երբեմն մարդու հոգեկան խռովքի, տրամադրության զվարթության կամ անկման պատճառները բոլորովին կապված չեն լինում տվյալ պահին նրան շրջապատող երևույթների ու իրավիճակների հետ: Մարդու ներքնաշխարհը փոթորկվում է երջանկության ծփանքից, իսկ ինքը եթերային թեթևությամբ մխրճվում է առօրյա հոգսերի ամպամշուշի մեջ: Տիեզերքի անհուն տարածություններն ուսումնասիրող էակը դեռևս չի թափանցել իր հոգու անհուն տարածությունները:

7. ՄԱՐԴՈՒ ՀՈԳԵԿԱՆԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՖՐՈՅԴՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

1923 թվականին Ֆրոյդը «Ես և նա» աշխատության մեջ մարդու հոգևոր բնագավառը բաժանում է 3 մակարդակների՝ «Ես», «Նա», «գեր Ես»: «Ես»-ը (էգո) անձի գիտակցությունը և ինքնագիտակցությունն է: «Ես»-ի գլխավոր գործառույթն է. միջնորդ լինել մարդու հակումների և դրանց բավարարման միջև, զգացմունքների և արտաքին աշխարհի իրադարձությունների միջև: «Նա»-ն հոգեկան խորքային, չգիտակցված բնագավառն է: Այս բնագավառն, Ֆրոյդի համոզմամբ, ինքնուրույն է և արտաքին իրադարձությունների հետ ոչ մի կապ չունի: «Գեր Ես»-ը անձի հասունացման զուգընթաց ընտանիքից, սոցիալական միջավայրից կրած արգելքների, սահմանափակումների ամբողջությունն է, որը խորը հետք կարող է թողնել մարդու հոգեկանի վրա և չգիտակցված վերահսկիչի դեր կատարել: Ֆրոյդը հիմնավորում է, որ «նա»-ի և «գեր Ես»-ի պահանջների անհամապատասխանությունը կարող է ծնել վախի, սարսափի, մեղսունակության, անլիարժեքության զգացողություններ: «Նա»-ին կառավարում է լիբիդոն (սեքսուալ ցանկությունների հոգեկան էներգիան): Մարդու հոգեկանի վրա ազդում և հետք է թողնում նաև «գեր Ես»-ը: «Գեր Ես»-ը առաջացնում է սոցիալական զտիչների համակարգ, որի շնորհիվ արգելված նորմերն ու համոզմունքները մղվում են անգիտակցականի ոլորտը, որը կարող է հոգեկան խանգարումների պատճառ հանդիսանալ: Եթե սեքսուալ հակումների ազատ արտահայտությունը ճնշվում կամ սահմանափակվում է սոցիալական միջավայրի կողմից ընդունված բարոյական արգելքներով, արգելված ցանկությունները, ամոթի զգացողությունը, կրքերը, տենչանքը մղվում են անգիտակցականի ոլորտը, սակայն շարունակում են ազդել անձի վարքագծի և տրամադրության վրա: Ֆրոյդի համոզմամբ սեռական հակման՝ լիբիդոյի աստիճանաբար կուտակվող էներգիան անձի մոտ կարող է հանգեցնել հոգեկան և այլ բնույթի խանգարումների: Այդպիսի շեղումները որոշ դեպքերում կանխվում է օրգանիզմի պաշտպանական մեխանիզմով: Անձը սկսում է դրսևորել սպորտով կամ ստեղծագործական աշխատանքով զբաղվելու հակումներ: Լիբիդոյի կուտակված էներգիան լիցքաթափոխ այդ հակումներն ու մղումները Ֆրոյդն անվանում է սուբլիմացիա: Սուբլիմացիան արդյունավետ լինելու համար Ֆրոյդն առաջարկում է սահմանափակել «գեր Ես»-ի ներգործության լծակները «Նա»-ի (մարդու հոգեկան ներքնաշ-

խարիհի) վրա: «Գեր ես»-ի խստացումները կարող են նպաստել անլիարժեք անձնավորությունների ձևավորմանը: Ֆրոյդի համոզմամբ «քաղաքակրթության զարգացման հետ մեկտեղ «Նա»-ն ճնշվում, հետին պլան է մղվում, բայց չի անհետանում: Ճնշված անգիտակցական բնազդները վառոդի տակառի նման կարող են հասնկարծակի պայթել» մասսաների ընդվզումների, ցույցերի, միտինգների, հեղափոխության ձևով:

8. ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ: ԼԵԶՈՒՆ ՈՐՊԵՍ ԻՄԱՍՏԱՎՈՐՎԱԾ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Ուղեղի աշխատանքի վերջնական դրսևորումների արդյունքը խոսքն է, մարդու կողմից գործողության մեջ դրվող լեզուն: Լեզվի մեջ ընդհանրացված ու բյուրեղացած ձևով պահպանվում է մարդկային մտածողության արդյունքները: Լեզուն ազգի, ժողովրդի հոգեբանության, կերպարի հայելին է: Նրա միջոցով սերունդներին է հաղորդվում էթնոսի, ժողովրդի փորձը և ինտելեկտուալ նվաճումները: Պավլովի արտահայտությամբ «խոսքը մարդու վրա ազդող ֆիզիկական բազմաբնույթ գրգռիչներից ամենաազդեցիկն է», որը կապված է մեծ կիսագնդերում կատարվող բոլոր գործընթացների հետ և մարդու գիտակցության վրա ակտիվորեն ներգործելու, նրան գործողությունների մղելու անփոխարինելի միջոց է հանդիսանում:

Բանավոր և գրավոր խոսքը հանդես է գալիս մտածողության հետ միասին և հանդիսանում է իրականությունն ու մարդու պրակտիկան ընդհանրացված ձևով արտացոլող միակ հնարավորությունը: Խոսքը նշանների, բառերի, հնչյունների օգնությամբ արտահայտում և արտացոլում է մարդու հոգեկան վիճակը:

Նշանը տեղեկատվության ստացման, պահպանման, վերափոխման և հաղորդման նյութականացված դրսևորում է: Բովանդակության տեսանկյունից նշանները կարող են լինել 1. պատճեն-նշաններ (լուսանկարները, բրածո կենդանիների դրոշմը), 2. հատկանիշ- նշաններ (ամալը՝ անձրևելու նշան, դողը՝ հիվանդության), 3. ազդանշան-նշան (ծափահարությունը՝ գոհունակության արտահայտություն, մեքենայի սուլիչը՝ զգուշացում), 4. հաղորդիչ-նշաններ (բնական և արհեստական լեզուները):

Խոսքը շրջակա աշխարհը ըմբռնելու և այն հնչյունների միջոցով իմաստավորելու հնար է: Խոսքը կարող է լինել բանավոր, գրավոր և

ներքին: Բանավոր խոսքը լսողին կապում է իրականության հետ: Խոսողի դիմախաղերի, ժեստերի, շեշտադրման շնորհիվ ընդգծվում է ասվածի իմաստը, հիմնական առանձնահատկությունները, զգացմունքային բովանդակությունը: Գրավոր խոսքը մտածողության արտահայտման և լրատվության հաղորդման հիմնական միջոց է: Այն պահանջում է մտքի երևակայության կենտրոնացում, շարադրանքը արժեքավորելու հմտություն: Ներքին խոսքը դրսևորվում է մտածողության գործընթացում: Ինքն իր հետ խոսելու գործընթացում զգալիորեն կրճատվում է բառերի օգտագործման անհրաժեշտությունը, սահմանափակվում է մտքի շարադրման շրջանակները: Այդ պատճառով էլ հաճախ մեզ համար պարզ թվացող մտքերի բանավոր և գրավոր արտահայտությունները հնարավոր են դառնում միայն բազմաթիվ նախադասությունների միջոցով:

Մարդկային հասարակության կազմավորման հետ ձևավորված ու զարգացած լեզուն ընդունված է անվանել բնական: Բնական լեզուն ինքնազարգացող երևույթ է: Այն փոփոխվում է իր ներքին օրինաչափություններով, այլ լեզուների հետ ունեցած շփումներով ու փոխազդեցությամբ: Բնական լեզուները կարող են դրսևորվել նաև տարածական բարբառների ձևով: Որքան միասնական է հասարակությունը, այնքան կայուն ու միասնական կլինի և լեզուն: Արհեստական լեզուները ձևավորվում են մարդկանց որոշ խմբերի ջանքերով՝ միմյանց հետ ընդհանուր լեզվով հաղորդակցվելու պահանջով: Այդպիսի լեզուները ստեղծվում են հանրախոսության և հանրագրության նպատակով: Հանրախոսության նպատակով ստեղծված լեզուն կառուցվում է հին ու նոր լեզուների արմատներից, միջազգային տերմիններից՝ քերականական պարզ կանոններով: Դրա նպատակը մարդկանց միմյանց հետ հեշտ հաղորդակցվելն է: Այդպիսի լեզվի ստեղծման փորձ առաջին անգամ կատարել է Ռ.Դեկարտը 1629 թվականին:

Արհեստական լեզուների ստեղծման գործընթացն ակտիվացավ հատկապես XIX-XX դարերում: 1880 թվականին գերմանացի հոգևորական Ի.Մ.Շլայերը ստեղծեց վոլապյուկ լեզուն: Այնուհետև բժիշկ Մոլենարը ստեղծեց ունիվերսալը, իսկ Զամենհոֆը՝ էսպերանտոն: Սորբոնի համալսարանի դասախոս Մարտինեն 1947 թվականին ստեղծեց՝ իալան: Հանրագրության նպատակով ստեղծվող լեզուն իրենից ներկայացնում է մաթեմատիկական նշանների նման համակարգ: Այդպիսի լեզուն օգտագործողը կամ պետք է ծանոթ լինի նշաններին, կամ էլ օգտվի դրանց բովանդակությունը մեկնաբանող բառարանից: 1797

թվականին այդպիսի լեզու փորձեց ստեղծել Մեմիյոն: Նման փորձ է ձեռնարկել 1907 թվականին Աթանաս Տիրոյանը: Սակայն դրանք տարածում չստացան:

ԳԼՈՒԽ VI

ԻՄԱՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԱԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Մարդկային ճանաչողությունը իրականության ստացման ու վերարտադրման բարդ ու հևսկասական գործընթաց է: Այդ գործընթացն սկսվում է կենդանի հայեցողությամբ: Դա ճանաչողության սկզբնական, առարկայական մտածողության աստիճանն է, երբ մարդն իր զգայարանների միջոցով շփվում է շրջակա աշխարհի օբյեկտների, երևույթների հետ և դրանց վերաբերյալ ձեռք է բերում տեղեկություններ: Ճանաչողության այս աստիճանում ճանաչող սուբյեկտի և ճանաչվող օբյեկտի միջև կապն անմիջական է: Ուստի ստացված տեղեկություններն էլ ունեն առարկայական բնույթ: Սակայն մարդն աշխարհը ճանաչում է նաև հասկացությունների, տրամաբանական հնարների միջոցով: Դա վերացարկված ճանաչողության աստիճանն է: Ճանաչողության այս աստիճանում մարդը ձեռք է բերում բազմաբովանդակ գիտելիքներ, որոնք օգտագործում է իր տարաբնույթ պահանջները բավարարելու համար:

Մարդկային ճանաչողության հնարավորությունների հարցը մտահոգել է բոլոր դարաշրջանների մտածողներին: Փիլիսոփաներից ոմանք զարգացրել են այն կարծիքը, որ մարդու ճանաչողության հնարավորությունները գիտության զարգացման հետ մեկտեղ ընդարձակվում է: Նա իր ինտելեկտով կարող է թափանցել իրերի, երևույթների խորքային հատկությունների ոլորտը և հասկանալ, ըմբռնել դրանց էությունը: Որոշ փիլիսոփաներ էլ մարդու ճանաչողական հնարավորությունները սահմանափակում են զգայական ճանաչողության ոլորտների սահմաններում: Եղել են նաև մտածողներ, որոնք կասկածել են աշխարհը ճանաչելու մարդու կարողությունների վրա:

Մարդու ճանաչողական հնարավորությունները խիստ սահմանափակող մտածելակերպը փիլիսոփայության մեջ անվանվել է Ագնոստիցիզմ: Հիմնավորվում է, որ իմացության միակ օբյեկտը կարող է լինել մարդու ընկալումները: Ուստի էմպիրիկ (փորձի) տվյալներից հնարավոր չէ ընդհանրացումներ կատարել զգայությունների աղբյուրի վերաբերյալ: Ագնոստիկը ճանաչելի է համարում միայն այն, ինչը մատչելի է

զգայություններին: Նման համոզմունքի համաձայն գգայություններից դուրս ոչինչ չի կարելի համարել հավաստի: Միակ իրական համարվում է զգայությունների աշխարհը: Այդպիսի մտածելակերպը ի վերջո ժխտում է իրերի խորքային հատկությունների, համակարգերի օրինաչափությունների, օրենքների ճանաչողության հնարավորությունը, քանզի դրանք մատչելի չեն մարդու զգայություններին:

Ագնոստիկական մտածելակերպի զարգացնողներ են եղել Հեքսլին, Դ.Հյումը, Ի.Կանտը և այլոք: Հեքսլին հիմնավորում է, որ հնարավոր չէ հավաստիորեն իմանալ մեր զգայությունների իսկական պատճառը: Իսկ Հյումը իրականությունը դիտելով որպես տպավորությունների հոսք, դրանց պատճառները համարում է անճանաչելի: Նրա համոզմամբ պատճառի և հետևանքի հարաբերությունը հնարավոր չէ բխեցնել ո՛չ ինտուիցիայից, ոչ էլ տրամաբանական վերլուծման ու ապացուցման միջոցով: Հյումի կարծիքով ժամանակի մեջ «իրար նախորդող դեպքերի կապի կրկնությունը» գիտելիք չի տալիս թաքնված պատճառի մասին: Կանտը «Զուտ բանականության քննադատություն» աշխատության մեջ հիմնավորելով, որ իրերի բնույթը անմատչելի է մարդու ճանաչողությանը, թեքվում է դեպի ագնոստիցիզմ:

Մարդկային ճանաչողության հնարավորությունների քննարկման հարցում ՍԿԵՊՏԻՑԻԶՄԸ ընդգծում է մարդու ձեռք բերած գիտելիքների հարաբերական բնույթը: Նման համոզմունքում ոչ միայն կասկածի է ենթարկվում մարդու ճանաչողական ունակությունները, այլև մերժվում է գիտելիքի հավաստիության ստուգման հնարավորությունը:

Սկեպտիկական մտածելակերպը ծևավորվել է անտիկ դարաշրջանում և դրսևորվել է գրեթե բոլոր ժամանակների առանձին մտածողների հայացքներում: Անտիկ Հունաստանում սկեպտիկական մտածելակերպ զարգացրել են Պիհոնը, Արկեսիլայոսը, Կառնեադեսը, Էնեսիդեմուսը և այլ մտածողներ: Նրանց համոզմամբ ճշմարիտ համարվող ցանկացած դրույթի հավաստիությունը հիմնավորելու ժամանակ միշտ էլ կարելի է գտնել նրա բովանդակությունը հերքող համապատասխան դրույթ: Եվ քանի որ այդ երկու դրույթներն էլ միմյանց հավասարազոր կլինեն, ուրեմն դրանցից որևէ մեկին նախապատվություն տալու համար ոչ մի հիմք չենք ունենա: Սկեպտիկների կարծիքով այդպիսի հիմքի փնտրումը զուր ջանք է: Դա ավելի շատ կարող է խախտել մարդու հոգու անխռով վիճակը: Այդ պատճառով էլ անիմաստ է զբաղվել տեսական ու փիլիսոփայական խնդիրներով: Նման եզրահանգումները պատճառաբանվում են այն փաստարկով, որ զգայական և տրամաբա-

նական միջոցները իրականության ճանաչման հուսալի միջոց լինել չեն կարող, քանի որ դրանք չեն բացահայտում իրերի էությունը:

Սկեպտիկները թերագնահատում են և՛ էմպիրիկական, և՛ ռացիոնալիստական ճանաչողության հնարավորությունները, բայց ի վերջո նախապատվությունը տալիս են զգայական ճանաչողությանը:

Սկեպտիցիզմի կասկածամտությունը միանշանակ բացասական դեր չի խաղացել աշխարհի ճանաչողության հարցադրումներում: XI-XVII դարերում սկեպտիկական մտածելակերպը նպաստել է կրոնափիլիսոփայական սխոլաստիկական մտածելակերպի թուլացմանը: Շառոնը, Բեյլը, Մոնտենը կասկածանքի ենթարկելով աստվածաբանական փաստարկները զգալի լումա ներդրեցին բնափիլիսոփայական մտքի զարգացման գործում: Մոնտենի համոզմամբ մարդը պետք է երջանկություն որոնի ոչ թե կրոնավորների խոստացած երկնքում, այլ երկրի վրա:

2. ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ ԵՎ ՕԲՅԵԿՏ

Գիտական ճանաչողության գործընթացում ուսումնասիրողը անմիջականորեն առնչվում է ոչ միայն հետազոտվող օբյեկտի, այլև դրա արտացոլման արդյունք հանդիսացող ընկալումների հետ: Այստեղ կարևորվում է և՛ ուսումնասիրվող օբյեկտի վերաբերյալ ըմբռնումները, և՛ սարքերի ցուցմունքները, և՛ փորձի տվյալները: Հետևաբար այդպիսի տվյալներ ձեռք բերելու գործառույթ իրականացնող անձը կհամարվի իմացության սուբյեկտ: Այդ սուբյեկտը ճանաչող, պրակտիկ գործունեություն իրականացնող օբյեկտիվ ռեալականություն է: Այդպիսին կարող են դառնալ գիտնականը, հետազոտողների խումբը, գիտական կոլեկտիվը:

Իմացության օբյեկտը արտաքին աշխարհի այն մասն է, որն ընդգրկվում է սուբյեկտի ճանաչողական գործունեության ոլորտում: Երբեմն ճանաչողության օբյեկտի տակ ըմբռնվում է այն ամենը, ինչը կարող է ճանաչվել սուբյեկտի կողմից: Այդպիսի դեպքում իմացության օբյեկտ կարող են դիտվել ոչ միայն առարկաները, իրերը, այլև դրանց հատկությունները՝ կառուցվածքը, գոյավիճակը, շարժումը և այլ գործոններ:

Իմացության գործընթացում ճանաչողության օբյեկտ կարող են դառնալ իրերը, երևույթները, համակարգեր իմաստավորող բառերը, նշանները, խորհրդանշանները:

3. ԱՌՕՐԵԱԿԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ, ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդն իր զգայարանների միջոցով շրջապատից ւսնընդհատ ստանում է բազմաթիվ ու բազմաբնույթ տեղեկություններ: Հախուռն տեղեկությունների այդ հոսքի շնորհիվ նա կողմնորոշվում է շրջակա աշխարհի իրադարձություններում, զգում է իր տեղը մադկանց միջավայրում, կատարում է բազմաբնույթ գործողություններ, ըմբռնում է դրանց իմաստը: Ամենօրյա հախուռն տեղեկությունների բովանդակային համակարգվածությունը դրսևորվում է որպես առօրյա ճանաչողություն:

ԱՌՕՐՅԱ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆԸ հավաստի տեղեկությունների, թվացող պատրանքների, անկանխակալ մոլորությունների ամբողջականացված գիտելիքների համակարգ է: Այդպիսի ճանաչողությունը մասամբ նպատակաուղղված, մասամբ տարերային բնույթ ունի: Ամենօրյա զգայությունները, ըմբռնումները, պատկերացումները ճանաչող սուբյեկտի ինտելեկտում դրսևորվում են չհամակարգված աշխարհազգացողության, աշխարհըմբռնման ձևով: Շրջակա իրադարձությունների հետ շփվելու միջոցով ստացված բազմաբնույթ ու բազմաբովանդակ այդ տեղեկությունների ամբողջությունը առօրյա ճանաչողությանն չհամակարգված դրսևորում է: Դրանք մասամբ հավաստի, մասամբ իմաստավորված, մասամբ չգիտակցված, մասամբ պատրանքային գիտելիքների ամբողջություն են: Գիտելիքների այդ բազմույթում կարող են լինել և՝ հավաստի ճշմարտություններ, և՝ սնոտիապաշտական ըմբռնումներ, և՝ փիլիսոփայական խորհրդածություններ:

ԿՐՈՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆԸ հիմնվում է գերբնականի նկատմամբ հավատի վրա: Մարդը ծնվելով, մեծանալով և ապրելով բնության օբյեկտների ու երևույթների միջավայրում փորձում է հասկանալ դրանց բնույթը, էությունը և դրանց ծառայեցնել իր կարիքներին: Շրջակա աշխարհը դիտելիս, զննելիս նա բւսխվում է նաև շատ խորհրդավոր երևույթների հետ, որոնց իմաստը չըմբռնելով, էությունը չհասկանալով, դրանց նկատմամբ սկսում է տածել զարմանքի ու վախի զգացողություն: Չկարողանալով բացատրել այդ երևույթները, նա արտերկրային կապերով ու գերբնական հատկություններով է օժտում դրանց: Վերացարկվելով առարկայական իրականությունից մարդը դրանց վերագրում է ինքնուրույն գոյություն ունենալու հնարավորություն և սուբստանցիոնալ հատկանիշ: Այդ խորհրդավոր երևույթների էությունը չհասկանալու պատճառով մարդը գիտակցում է իր անզորությունը և սարսափ է զգում դրանց հանդեպ: Նմւսն զգացմունքները հա-

վատացյալի մոտ ծևավորում են սեփական անձի անկատարության, մեղավորության համոզմունքներ: Թաղվելով իր առօրեական հոգսերի մեջ, կրելով տարաբնույթ զրկանքներ, չկարողանալով իրականացնել իր երազանքները, մարդը խորհրդավոր ուժերին, երևույթներին օժտում է ամենակարողության, արդարության, բարության հատկանիշներով և հույս է փայփայում, որ դրանք կօգնեն իրեն՝ հասնելու իր նպատակներին: Նման համոզմունքներով օժտված անձնավորությունը աշխարհիկ հոգսերից, տառապանքներից, զրկանքներից ազատվելու հույսը կապում է արտերկրային ուժերի հետ: Նա կարող է հավատով ներշնչվել ոչ միայն եկեղեցում աղոթելիս, մոմ վառելիս, այլև սուրճի բաժակի հուսադրող պատկերները դիտելիս:

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆԸ ընդհանրական պատկերացում է տալիս աշխարհի, հասարակության, մարդու բնույթի վերաբերյալ և դրսևորվում է որոշակի աշխարհայացքային համոզմունքների ծևով: Այս տեսակետից որոշակի ընդհանրություններ ու զանազանություններ է դիտվում կրոնական և փիլիսոփայական ճանաչողության միջև: Ե՛վ փիլիսոփայական, և՛ կրոնական ճանաչողությունը երկրայինի և երկնայինի վերաբերյալ համընդգրկուն հայացքների համակարգ են: Սակայն, եթե կրոնական ճանաչողությունը աչքի է ընկնում առավելապես զգացմունքային, հուզական, երևակայական, ավանդապահական, դավանաբանական հարցալուծումներով, ապա փիլիսոփայական ճանաչողությունը տեսական հիմնախնդիրների ոլորտ է: Նման հարցալուծումներով փիլիսոփայական ճանաչողությունը մոտենում է գիտական ճանաչողությանը, բայց միաժամանակ զգալիորեն զանազանվում է իր աշխարհայացքային և մեթոդաբանական գործառույթներով:

ԳԻՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆԸ աշխարհի տարբեր ոլորտների երևույթների ու գործընթացների վերաբերյալ հետազոտությունների, մեկնաբանումների, բացատրությունների, կանխատեսումների հիմնավորված, ճշգրտված, ապացուցված գիտելիքների համակարգ է: Գիտական ճանաչողության կարևոր առանձնահատկությունը համակարգվածությունն է: Այսպիսի ճանաչողության միջոցով փաստական գիտելիքները կարգավորվում են որոշակի տեսական սկզբունքներով: Գիտական ճանաչողության միջոցով բացահայտվում, ընդհանրացվում և տեսականորեն իմաստավորվում է փաստը: Նման ճանաչողությունը հնարավորություն է ընձեռում ոչ միայն նկարագրել, այլև բացատրել աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների, գործընթացների պատճառահետևանքային կապերի բնույթն ու էությունը: Գիտական

ճանաչողության շնորհիվ իրականացվում է շրջակա աշխարհի պրակտիկ վերափոխման և յուրացման գործընթացներ: Դրա շնորհիվ մարդը ձեռք է բերում նաև նոր գիտելիքներ, քանզի գիտական ճանաչողությունը բնության պրակտիկ հետազոտության և տեսական ընդհանրացումների զուգորդություն է:

Գիտական ճանաչողությունը իրականանում է գիտական տեսությունների կառուցման, փորձի ու տեսության չափանիշներով, իսկ փիլիսոփայական ճանաչողությունը դրսևորվում է միջնորդավորված ձեվով: Այսինքն, կոնկրետ գիտական տեսությունների միջոցով: Իմացաբանական հարցալուծումներում փիլիսոփայությունը ճանաչողության ընթացքը միջոցներն ու եղանակները հիմնավորում է տարբեր գիտությունների տվյալներով: Փիլիսոփայությունը հետապնդելով աշխարհի էության, մարդու տեղի ու դերի բացահայտումներ, դրսևորվում է որպես աշխարհայացք և իմացության մեթոդաբանություն: Դրանով հանդերձ փիլիսոփայական ճանաչողությունը էականորեն տարբերվում է գիտական ճանաչողությունից: Փիլիսոփայական որոշ ուսմունքներ փորձում են աշխարհայացքային հիմնախնդիրներից ազատվելու ճանապարհով փիլիսոփայությունը բարձրացնել գիտության աստիճանի: Նման դիրքորոշում ցուցաբերել է նոր պոզիտիվիզմը: Իսկ գիտությունը շփվելով փիլիսոփայության և հասարակական գիտակցության մյուս ձևերի հետ ձեռք է բերում գաղափարախոսական, քաղաքական միտվածություն:

4. ԶԳԱՅԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Արտաքին աշխարհի հետ մարդու բոլոր տեսակի առնչությունները իրականանում են ևնմիջական և միջնորդավորված կապերի բարդ համակարգի օգնությամբ: Անմիջական կապի կարևոր օղակներից մեկը զգայությունն է, որի շնորհիվ արտաքին աշխարհի իրերի, երևույթների ու գործընթացների մարդու վրա ներգործող էներգիան փոխարկվում է գիտակցության փաստի և հասկացությունների, դատողությունների ու մտահանգումների ձևով վերածվում է համապատասխան լրատվության ու գիտելիքի:

ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆԸ շրջակա աշխարհի ու երևույթների առանձին հատկությունների ու որակների արտացոլումն է մեր գիտակցության մեջ,օբյեկտիվ աշխարհի սուբյեկտիվ պատկերը: Փաստորեն զգայությունը օրգանիզմի արտաքին պայմաններին կենսաբանորեն հարմարվելու համակարգի կենսագործունեությունն է: Շրջակա միջավայրում

հարմարվելու համար ինչպես ցածրակարգ, այնպես էլ բարձրակարգ օրգանիզմները օժտված են զգացող և հաղորդիչ օրգաններով: Օրգանիզմին շրջապատող օբյեկտներից առկայծող ու տարածվող էլեկտրամագնիսական տատանումներն ու քիմիական մոլեկուլները գրգռում են զգացող օրգան անալիզատորի ծայրամասը՝ ռեցեպտորը, որում առաջացած գրգիռը իմպուլսների ձևով նյարդային թելիկներով հաղորդվում է կենտրոնական անալիզատորի համապատասխան մասը և առաջացնում է զգայություն: Այսինքն, շրջակա աշխարհի ճանաչողության գործընթացն սկսվում է զգայությունից: Օրգանիզմի և շրջապատի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների ընթացքում ներվային համակարգի համապատասխան բաժինները մասնագիտացել են արտաքին աշխարհի որոշ ազդակներ ընդունելու ուղղությամբ, որի շնորհիվ յուրաքանչյուր անալիզատոր ակտիվանում է իրեն յուրահատուկ գրգռիչի ազդեցության հետևանքով: Ի.Պ. Պավլովը բազմաթիվ փորձերով ապացուցել է, որ օրգանիզմի յուրաքանչյուր անալիզատոր կենսականորեն հարմարեցված է կոնկրետ տիպի էներգիայի փոխանցմանը զգայության: Յուրաքանչյուր զգայարան արտացոլում է առարկաների բազմազան հատկանիշներից միայն իրեն համապատասխան հատկանիշը: Իսկ իրականության ճանաչումը բոլոր զգայարանների կապակցված ու միասնական գործունեության արդյունք է: Զգայարանների այդ գործունեության ֆիզիոլոգիական մեխանիզմը գլխուղեղի կեղևում առաջացնում է համապատասխան կապակցություններ, որոնք հետագայում համապատասխան գրգռիչի դեպքում կառաջացնեն համապատասխան երևույթ: Այսինքն, իբրև հոգեկան գործընթաց զգայությունը գլխուղեղի յուրահատուկ ռեֆլեքս է, որը ձևավորվում և ամրակայվում է մարդու պրակտիկ գործունեության ընթացքում: Առանց զգայարաններից հաղորդվող տվյալների ոչ միայն հնարավոր չէ մտածողություն, այլև այդ տեղեկատվության դադարեցման դեպքում ուղեղը կկորցնի մտածելու և գիտակցելու ընդունակությունը: Արտաքին միջավայրից ստացված տեղեկատվության շնորհիվ օրգանիզմը մշակում է համապատասխան վարքագիծ և պատասխան ռեակցիաների համակարգ: Մարդու աշխատանքային և ինտելեկտուալ գործունեության ողջ նվաճումները պայմանավորված են նաև զգայարանների աննախադեպ զարգացման ընթացքով: Օրգանիզմի ակտիվ և նպատակահարմար գործունեությունը կախված է նրա զգայական օրգանների կատարելագործման աստիճանից և ստացվող տեղեկությունների համապարփակությունից: Մարդու և կենդանիների արմատական տարբերությունը

պայմանավորված է նաև նրանով, որ եթե օրգանական աշխարհի մյուս տեսակների մոտ խիստ զարգացած են այն առանձին զգայարանները, որոնք կարևոր են տվյալ տեսակի գոյության համար, ապա մարդու մոտ զարգացած է ամբողջ զգայական համակարգը, որի շնորհիվ մարդը զգայում է մտածելով: Բայց զգայության գործընթացը միշտ ընդգրկում է տվյալ օբյեկտի առանձին հատկություններն ու հատկանիշները: Այդ առանձին հատկանիշների ամբողջական զգայումն ու իմաստավորումը արտացոլման որակական նոր գործողություն է և իմացության նոր աստիճան: Օբյեկտի տարբեր հատկությունների ամբողջական արտացոլման այդ աստիճանը կոչվում է ընկալում :

Ընկալումը զգայական գործողության շնորհիվ օբյեկտի հատկությունների խորացված հայեցումն է: Այն ներգրավվում է զգայական գործընթացում որպես նպատակաուղղված զգայություն: Զգայության ժամանակ զգայական տեսադաշտում գտնվող օբյեկտների վրա դիֆերենցված ուշադրություն չի դարձվում, որի պատճառով բոլոր օբյեկտներն ու նրանց հատկությունները ենթարկվում են իպանցիկ ուշադրության և արտաքին, երևութական, սահմանափակ ըմբռնման: Ընկալման ժամանակ օբյեկտները հայտնվում են ընկալողի ուշադրության կենտրոնում, որն ակտիվացնելով զգայարանների գործունեությունը փորձում է իմաստավորել զգայական ազդակներն ու արտացոլվող տեղեկությունը: Ասվածից հետևում է, որ ընկալումը զգայական իմացության խորացված և բարդ ձևն է: Զգայությունը պատկերացում է տալիս օբյեկտի որոշ կողմերի ու հատկությունների մասին, իսկ ընկալումը՝ հատկությունների ամբողջության մասին: Ընկալումը ձևավորվում է զգայելու ունակության հիմքի վրա, բայց զգալիորեն տարբերվում է նրանից: Իհարկե և զգայությունը, և ընկալումը դրսևորվում են զգայարանների վրա արտացոլվող օբյեկտի համապատասխան գրգիռների անմիջական ներգործության շնորհիվ: Սակայն զգայության ընթացքում տեղեկություն է ստացվում օբյեկտի որևէ կողմի հատկության մասին, իսկ ընկալման ժամանակ բացահայտվում է օբյեկտի զգայական բոլոր կողմերն ու հատկությունները: Որոշ իմաստով ընկալումը կարելի է ներկայացնել որպես մտասևեռ զգայություն: Օրինակ, միշտ չէ, որ մարդը ակտիվորեն ընկալում է իր զգայական տեսադաշտում գտնվող օբյեկտները: Երբեմն նա անտարբեր անցնում է վաղեմի ծանոթի կողքով, զարմանք պատճառելով նրան ցուցաբերվող անուշադրության ու անտարբերության համար: Այդպիսի պահերին թեև զգայությունը մարդու մոտ շարունակվում է, բայց զգալիորեն թուլացած ձևով և զգա-

յական տեսադաշտում գտնվող օբյեկտները չեն ընկալվում: Նման պահերին, զգայական ակտիվության թուլացման պատճառով, մարդու մոտ չափազանց նվազում է շրջապատի որոշ իրերն ու երևույթներն ընկալելու ակտիվությունը և դրանց մասին կենտրոնական անալիզատորի համապատասխան բաժնին ռեցեպտորների հաղորդած թույլ իմպուլսը համապատասխան ազդեցություն չգործելով անհետք մարում է: Նման երևույթը օրգանիզմի պաշտպանական ռեֆլեքսի գործունեության արդյունք է, որի գործառույթներից մեկն էլ ներվային համակարգի պահպանումն է գերծանրաբեռնվածությունից և գերլարվածությունից: Մարդու մոտ ընկալման ունակությունը զարգանալով զգայելու ունակության հիմքի վրա, զգալիորեն տարբերվում է կենդանական աշխարհի էակների ընկալման ունակությունից: Յուրաքանչյուր կենդանական տեսակի մոտ զարգանում և ամրակայվում է նրա կենսապահպանման համար խիստ անհրաժեշտ ընկալման այն ունակությունը, որն ակտիվանում է միայն սահմանափակ օբյեկտների առկայության պայմաններում: Իսկ մարդը որպես բանական և սոցիալական էակ ունի ընկալունակության հսկայական չափերի ընդգրկում, որի մի մասը ամրակայված է կենսաբանական հիմքի վրա, մյուս մասը սոցիալական կենսագործունեության արդյունք է: Հետևապես մարդու մոտ ընկալումը մի շարք անալիզատորների միասնական ակտիվացման և ստացված ազդակները ամբողջացնող ուղեղի գործունեության բարդ գործընթաց է: Եթե անալիզատորները շրջապատի բոլոր օբյեկտներից ստացված ազդակները ուղեղ հասցնեին, այն ի զորու չէր լինի ընկալել, իմաստավորել և պատասխան ռեակցիա հրահանգել: Այդ իսկ պատճառով անալիզատորները ազդակներ ստանալու և հաղորդելու գործընթացում կատարում են նաև ընտրության ու կարգավորման գործառույթ: Եթե կենդանական աշխարհի մյուս տեսակների մոտ ընկալումը սահմանափակվում է առաջին ազդարարային համակարգով, մարդու մոտ դրան ավելանում է և երկրորդ ազդարարային համակարգը, որի շնորհիվ այն կապվում է անցյալի փորձի ու հմտության հետ և իմաստավորված բնույթ է կրում: Այդ անալիզատորների համատեղ գործունեության շնորհիվ շրջակա միջավայրի օբյեկտների զգայական պատկերները ամրակայվելով մարդու գիտակցության մեջ ուղի են հարթում բարդ ճանաչողական գործընթացների համար: Այդ շարքում մեծ է նաև մտապատկերների դերը:

ՄՏԱՊԱՏԿԵՐԸ մեզ վրա նախկինում ներգործած առարկայի, երևույթի ընդհանրացված պատկերի արթնացումն է գիտակցության

մեջ, այդ առարկայի, երևույթի բացակայության պայմաններում: Այն ձևավորվում և ծագում է զգայական ընկալումների շնորհիվ, բայց իրականության արտացոլման նոր որակ է: Զգայությունը հասանելի դարձնելով առարկայի ու երևույթների առանձին կողմերն ու հատկություններն իմացության գործընթացից դուրս է թողնում դրանց մյուս հատկությունները, այլ առարկաների ու երևույթների հետ ունեցած կապակցությունները: Այս բացը որոշ չափով լրացվում է ընկալման միջոցով: Բայց ընկալումը տալիս է միայն առարկայի մեր զգայարանների վրա ներգործելու պահի պատկերը, իսկ մյուս բազմաթիվ հնարավորությունները կարող է մնալ ստվերում: Առօրյա, աշխատանքային գործունեության և մտավոր ստեղծագործության ընթացքում մարդը բազմաթիվ անգամներ առնչվելով միևնույն իրերին ու երևույթներին թափանցում է դրանց էության խորքը, բացահայտում է նորանոր հատկություններ, կողմեր ու հարաբերություններ, որով ամբողջացվում է տվյալ առարկայի կամ երևույթի մասին ձեռք բերված տեղեկությունը: Այդ գործընթացում մտապատկերը մի կողմից միջնորդ օղակ է դառնում զգայական ընկալման և վերացարկված մտածողության միջև, մյուս կողմից էլ հիշողությունը, երևակայությունը, մտահանգումը և հոգեկան այլ գործընթացները կապում է իրականության հետ: Այսինքն, այն յուրօրինակ կամուրջ է դառնում զգայությունից ու ընկալումից դեպի միտքը և մտքից դեպի կենդանի հայեցողություն: Իր էությամբ մտապատկերը կապված լինելով զգայական իմացության հետ միաժամանակ զգալիորեն նրա սահմաններից դուրս է գտնվում: Ուղեղի կողմից մտապատկերների վերարտադրման ընթացքում զգայարանները անմիջապես չեն առնչվում զգայված իրերի ու երևույթների հետ: Զգայության առաջացման համար անհրաժեշտ է, որ ֆիզիկական օբյեկտները ակտիվ ներգործություն ունենան մարդու զգայարանների վրա: Իսկ մտապատկերի առաջացման համար այդ ֆիզիկական օբյեկտների ներկայությունը պարտադիր չէ, չնայած առանց այդ օբյեկտներից ստացվող զգայական ներգործությունների ու տպավորությունների ոչ մի մտապատկեր ձևավորվել չի կարող: Մտապատկերներն առաջանալով զգայություններից չեն նույնանում դրանց հետ: Մտապատկերների մեջ զգայվող օբյեկտներից ստացվող զգայական ակնառու, պայծառ, անհատական հատկանիշների հաշվին զորեղանում են ընդհանուր հատկանիշները: Այս գործընթացի շնորհիվ գիտակցությանը հնարավորություն է ընձեռվում կտրվելու իր անմիջական աղբյուրից և դառնալու հարաբերականորեն ինքնուրույն սուբյեկտիվ երևույթ: Իմացության այդպիսի դրսևորումը

իրականությունը պատկերում է իր գունագեղությամբ, թարմությամբ և կոնկրետությամբ: Սակայն իմացության այդ աստիճանը դեռևս չի թափանցում իրերի ու երևույթների խորքային հատկությունների, կապերի ու հարաբերությունների մեջ, լայնորեն չի ընդգրկում դրանց էությունը: Ամեն ինչ չէ, որ կարելի է զգալ, ընկալել, մտապատկերել: Իրերի ու երևույթների շատ կապեր ու փոխազդեցություններ բացահայտվում են զգայական իմացության տվյալների վրա, դրանց մշակումներից և որպես միջնորդավորված իմացություն ընդգրկում են ընդհանրացումների ու վերացարկումների որակական նոր աստիճանը, որի շնորհիվ միտքը զգայական կոնկրետից անցնում է ընդհանուրին: Մտապատկերների ձևավորման ժամանակ մեր գիտակցության մեջ վերարտադրվում են օբյեկտների այն հատկությունները, որոնք զգայվելու ժամանակ ուժեղ տպավորություն են թողել մեզ վրա: Այդ գործընթացն իր մեջ պարունակում է նաև վերացարկման և ընդհանրացման տարրեր, որի շնորհիվ հաճախ տարբեր ժամանակ ընկալված զանազան իրերի ու երևույթների առանձին հատկություններ ուղեղում իրար հետ միանալով կերպավորվում են որպես նոր մտապատկերներ: Օրինակ, իրականության մեջ ոչ մի գոյություն չունեցող սֆինքսի մտապատկերը մեր նախահայրերի մտածողության մեջ սինթեզվել է որպես ուժ և իմաստություն մարմնավորող կենդանիների հավաքական կերպար: Մարդուն շրջապատող աշխարհում կան նաև բազմաթիվ երևույթներ, որոնք հասու չեն զգայական իմացությանը և եթե մեր գիտելիքները սահմանափակվեին միայն զգայարանների միջոցով ձեռք բերվածով, մենք շատ քիչ բան կիմանայինք մեզ շրջապատող իրականության մասին:

5. ՌԱՑԻՈՆԱԼ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՉԵՎԵՐԸ

Մեր մտածողությունը ընդհանրացումների, վերացարկումների և տրամաբանական գործողությունների միջոցով զգայական կոնկրետից թռիչք է կատարում դեպի ընդհանուրը, երևույթների իմացությունից դեպի էության բացահայտումը: Վերացարկված մտածողության այդ բարդ համակարգը՝ իրողություն է դառնում իմաստավորված հնչյունային համակարգի շնորհիվ: Ռացիոնալ իմացության այդ աստիճանի կարևոր օղակներն են հասկացությունը, դատողությունը և մտահանգումը:

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ միևնույն դասին պատկանող իրերի, երևույթների, գործընթացների էական, համընդհանուր, կրկնվող հատկանիշներն արտացոլող ու ամփոփող մտքի ձև է: Մարդու՝ որպես բանական էակ ձևավորվելու ընթացքում միտքը շրջակա իրերից զանազանել է

տեսքով, մեծությամբ, գույնով, հատկությամբ, օգտակարությամբ իրար հիշեցնող որոշակի օբյեկտներ և դրանց նկատմամբ կիրառել է միևնույն անվանումը: Այդ անվանում-հասկացության ձևավորման ընթացքը իր մեջ ընդգրկում է տարբերակման, միավորման, վերացարկման, ընդհանրացման բարդ ու հակասական մտային գործողություններ: Այդ ճանապարհով են ձևավորվել խոսակցական լեզվում գործածվող ողջ հասկացությունները՝ տուն, սար, քար, կենդանի, տաբու, միրգ և այլն:

Յուրաքանչյուր լեզվում օգտագործվող հասկացություններով կարելի է գաղափար կազմել այդ լեզվի հարստության մասին և այն ստեղծող ժողովրդի պատմական ուղու մասին: Իրականության ռեալ հարաբերություններն արտահայտող ընդհանրացումների ու վերացարկումների խորության աստիճանով էլ պայմանավորված է տվյալ ժողովրդի զարգացման աստիճանը և նրա բառապաշարում առկա հասկացությունների հարստությունը: Լեզվում օգտագործվող հասկացությունները մարդկանց ճանաչողական, դարավոր պրակտիկ գործունեության արդյունք են: Աշխատանքային պրակտիկ գործունեության ընթացքում մարդիկ աստիճանաբար գիտակցում են շրջակա իրերի, երևույթների հատկություններն ու կապերը, զանազանում են դրանց էական հատկանիշները և ի վերջո ձեռք բերվածը ձևավորվում է որպես կոնկրետ հասկացություն: Այն դարերի ընթացքում անընդհատ հղկվում և ճշգրտվում է: Գիտության զարգացման հետ մեկտեղ բացահայտվում են երևույթների նորանոր հատկություններ ու հարաբերություններ, որի հիման վրա էլ ձևավորվում են նոր հասկացություններ: Իհարկե բոլոր հասկացությունները միևնույն ընդհանրությունը չունեն: Լինելով վերացարկման տարբեր աստիճանի արդյունք և եզակիի, հատկականի, համընդհանուրի դիալեկտիկական միասնություն, հասկացությունները մարդու իմացությունը կոնկրետ, զգայական մակարդակից մղում են դեպի տեսական բարդ ընդհանրացումները, սահմանափակից դեպի անսահման, իրերի, երևույթների առանձին, կոնկրետ հատկությունների ճանաչումից դեպի խորքային, էական հատկանիշների բացահայտումը: Գիտության զարգացման հետ մեկտեղ ընդարձակվում է մարդու ճանաչողության սահմանները և համապատասխանաբար հարստանում ու փոփոխվում է հասկացությունների բովանդակությունը: Հին Հունաստանում «ատոմ» հասկացության բովանդակության մեջ իմաստավորում էին նյութի ամենամանրագույն, այլևս չբաժանվող մասնիկի մասին պատկերացումը: Այժմյան ըմբռնմամբ ատոմը տարրական մասնիկներից բազկացած բարդ համակարգ է:

Հասկացությունների բովանդակության մասին այդպիսի որակական փոփոխությունները պայմանավորված են այդ առարկաների մասին մեր իմացության սահմանների ընդարձակմամբ, իրականությունը ավելի խորությամբ ճանաչելու ունակությամբ: Հասկացությունների կազմավորման մեջ դրսևորվում է ոչ միայն մարդկության զարգացման աստիճանը, այլև մարդկային մտածողության ակտիվությունն ու ստեղծագործական բնույթը: Իհարկե, օգտագործվող յուրաքանչյուր հասկացություն, որպես վերացարկման արդյունք, ինչ որ չափով իրականությունից հեռացման թվացողություն է ստեղծում: Բայց ըստ էության հասկացությունների օգնությամբ մարդը ավելի է խորացնում իրականության ուսումնասիրությունն ու հետազոտությունը, բազմակողմանիորեն է բացահայտում նրա էական կողմերը: Գիտական հասկացությունները, որպես իրականության բազմակողմանի արտացոլման դրսևորումներ, ընդհանրացվող իրերի ու երևույթների նման շարժուն ու ճկուն են: Այդ իսկ պատճառով առարկաների ու երևույթների նախկինում թվացող ոչ էական հատկությունները զարգացման ընթացքում կարող են դառնալ էական: Հետևապես իրերի ու երևույթների հատկությունների բաժանումը էականի և ոչ էականի մեկընդմիշտ տրված, վերջնական ճշմարտություններ չի կարելի համարել: Այս տեսակետից տեսական անճշտություն պետք է համարել միջնադարյան նոմինալիզմի այն դրույթը, որ հասկացությունները սոսկ նշաններ են և ընդհանուր ոչինչ չունեն առարկաների էության հետ: Սխալ է նաև հասկացության էության միջնադարյան ռեալիզմի մեկնաբանությունը, ըստ որի հասկացությունները գոյություն ունեն զգայական իրերից առաջ և դրանից անկախ: Հասկացությունները սկիզբ ու վերջ չունեցող տիեզերքի մեզ շրջապատող ռեալականության իրերի, երևույթների, գործընթացների, դրանց փոխհարաբերությունների արտացոլումն են մարդու գիտակցության մեջ, նրանում ձևավորված իդեալական արտահայտությունները: Այդ իդեալական արտահայտությունները ունեն միանգամայն իրական հիմք, կոնկրետ իմաստ և արտացոլում են օբյեկտիվ իրականության էական հատկություններն ու հարաբերությունները: Ճանաչողության ընթացքը ոչ միայն հասկացությունների միջոցով իմաստավորվող մտային գործողություն է, այլև դատողությունների ու մտահանգումների բարդ համակարգ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆԸ հասկացություններում արտացոլված բովանդակության իմաստավորումն է հաստատման կամ ժխտման ձևով: Մարդկային միտքը ունի կոնկրետ բովանդակություն, ուղղվածություն,

նպատակադրվածություն, որը հաստատական կամ ժխտական նախադասությունների ձևով դրսևորվում է որպես դատողություն: Գրավոր և բանավոր խոսքում օգտագործված նախադասությունների շարքը, որոնցում իմաստավորվում են օբյեկտիվ իրականության իրերի, երևույթների, գործընթացների բովանդակությունն ու նրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունները, հաստատական կամ ժխտական դատողությունների շարք է: Օրինակ, «Գյուղատնտեսության մեջ օգտագործվող թունաքիմիկատները չափազանց մեծ վնաս են պատճառում մարդկանց առողջությանը», դատողություն-նախադասության մեջ մարդկանց առողջության նկատմամբ հաստատվում է թունաքիմիկատների վնասաբեր լինելու հատկությունը: Ըստ գործածվող նախադասություններում արտահայտված մտքի հավաստիության, դատողությունները պատմականորեն դասակարգվել են իրականության դատողություն, անհրաժեշտության դատողություն, հավանականության դատողություն: Իրականության դատողության բովանդակության մեջ արտացոլվում է ակնառու փաստը, իրադարձությունը կամ գործողությունը: Օրինակ, «Ծիրանի հայրենիքը Հայաստանն է»: Անհրաժեշտության դատողությունը հավաստում է իրերի, երևույթների բնույթից բխող գործողությունը: Այդպիսի դատողություններ են օրենք ու օրինաչափություն իմաստավորող նախադասությունները: Օրինակ, «Ֆիզիկական օբյեկտների փոխազդեցությունը ուղիղ համեմատական է նրանց մասսաներին և հակադարձ համեմատական է նրանց հեռավորության քառակուսուն»: Հավանականության դատողության մեջ նշվում է երևույթների, դեպքերի, իրադարձությունների գոյության ու ծավալման հավանականությունը: Օրինակ, «Սեփականաշնորհման գործընթացը սկզբնական էտապում կնպաստի սոցիալական անհավասարության խորացմանը»: Մտածողությունը ակտիվ, ստեղծագործական գործընթաց է, որում մարդը տարբեր դատողություններով իմաստավորում է իրականության բազմազանությունը, թափանցում է երևույթների ու գործընթացների խորքը, բացահայտում է նորանոր օրինաչափություններ, հաստատման ու ժխտման միջոցով ցուցաբերում է իր վերաբերմունքը: Մտքի շարժման այս ընթացքը առանձին փաստերից անցնում է էական, ընդհանրական հարաբերությունների պարզաբանմանը, հավանականից՝ հավաստիի ըմբռնմանը, էմպիրիկից՝ տեսականի խորացմանը: Յուրաքանչյուր դատողություն եզակիի և ընդհանուրի, էականի և ոչ էականի, անհրաժեշտի և պատահականի, նույնության և տարբերության, սահմանափակի և անսահմանի դիալեկտիկական միասնություն

է, որի շնորհիվ առանձին առարկաների ու երևույթների կոնկրետ հատկությունների ըմբռնումից միտքը անցում է կատարում դրանց ընդհանրական կապերի ու հարաբերությունների պարզաբանմանը: Դատողությունների այդ յուրահատուկ միահյուսման և նոր եզրահանգման մարմնացումը մտահանգումն է:

ՄՏԱՀԱՆԳՈՒՄԸ մտածողության այն ձևն է, երբ մեկից ավել դատողություն-նախադրյալներից բխեցվում է նոր դատողություն-եզրակացություն: Մտածողությունը հասկացություններ, դատողություններ ընտելծելու և դրանցով գործառնելու բարդ գործընթաց է: Զգայական ընկալումներից վերացական ընդհանրացումներ կատարելու ճանապարհով ուղեղում ձևավորվում են հասկացությունները, այդ հասկացությունների իմաստավորված համակցությունը հանդես է գալիս որպես դատողություն, իսկ դատողությունների հիման վրա արված եզրակացությունը՝ որպես մտահանգում: Այս ճանապարհով էլ մտածողության օրգանը առարկայական պարզ հայեցողությունից հասնում է մինչև փիլիսոփայական բարդ ընդհանրացումները, իրերի ու երևույթների էության ըմբռնումից մինչև հոգևոր արժեքների ստեղծումը: Ճանաչողության այդ գործընթացում ձեռք բերված գիտելիքների մի մասը արտաքին աշխարհի առարկաների ու երևույթների մեր զգայարանների վրա ունեցած անմիջական ներգործության արդյունք է, կենդանի հայեցողության միջոցով ստացված տեղեկություն, իսկ մյուս մասը այդ անմիջական գիտելիքների հիմքի վրա ձևավորված վերացական իմացություն՝ միջնորդավորված գիտելիքների համակարգ: Այդպիսի գիտելիքները մտահանգման արդյունք են և հիմնականում ընդգրկում են իրերի ու երևույթների բուն էությունը, խորքային կապերն ու հարաբերությունները: Որպես մտքի ձև մտահանգումը դրսևորվում է դատողությունների կապակցության տեսքով՝ մեկ կամ մի քանի դատողություն-նախադրյալներից բխեցվում է այնպիսի նոր գիտելիք պարունակող դատողություն-եզրակացություն, որը առկա չէ առանձին նախադրյալների մեջ:

Օրինակ.

Բնապահպանական հիմնախնդիրներին պատշաճ ուշադրություն չդարձնող երկրները բախվում են էկոլոգիական աղետի: (1)

Հայաստանում անտեսվում են բնապահպանական հիմնախնդիրները: (1)

Հայաստանը կբախվի էկոլոգիական աղետների: (3)

Բերված օրինակում ընդհանուր դատողությունից կատարվել է

մասնավոր եզրակացություն: Հիմնվելով ընդհանուր դրույթում (1) պարունակվող օրինաչափության վրա մենք այն ընդհանրացրել ենք նաև Հայաստանի նկատմամբ (3): Ընդհանուր դատողություններից նույն ընդհանրության կամ պակաս ընդհանրություն ունեցող եզրակացության բխեցումը դեդուկտիվ մտահանգման ձև է: Դեդուկտիվ մտահանգման օգնությամբ մարդը օգտագործում է նախորդ սերունդների ձեռք բերած գիտելիքները և բացահայտում է նոր ճշմարտություններ: Այդպիսի գիտելիքների ճանաչողական նշանակությունը կարևորվում է նրանով, որ այն շրջապատող աշխարհի իրերի, երևույթների ու հարաբերությունների ըմբռնման ու իմաստավորման տեսական գործողություն է: Դեդուկտիվ մտահանգումը վերացարկված մտածողության արժեքավոր նվաճումներից մեկն է: Իմացության գործընթացում մարդը միաժամանակ առանձին փաստերի, կոնկրետ հետազոտությունների արդյունքներից անցում է կատարում ընդհանուր դրույթների, եզրակացությունների: Պակաս ընդհանուր գիտելիք պարունակող այդ հետազոտություն-նախադրյալներից ավելի ընդհանուր գիտելիք պարունակող եզրակացության հանգման տրամաբանական գործողությունը կոչվում է ինդուկտիվ մտահանգում: Այդպիսի մտահանգման դասական օրինակների շարք կարելի է համարել դիտումների հիման վրա, բնական ընտրության ճանապարհով տեսակների առաջացման ու զարգացման վերաբերյալ Դարվինի կատարած ընդհանրացումները, որն ամբողջացվեց որպես էվոլյուցիոն տեսություն: Դիտումները, համեմատությունները, կշռադատություններն ու ապացուցումները Դարվինի աշխատություններում հանդես են գալիս որպես մտահանգումների շղթա, որում նախորդ մտահանգման եզրակացությունը հանդես է գալիս որպես հաջորդ մտահանգման նախադրյալ: Ընդհանրացնելով, կարելի է եզրակացնել, որ մտահանգումը որպես մտածողության ձև օգնում է ճանաչելու արտաքին աշխարհը վերացական մտածողության աստիճանում:

ԳԼՈՒԽ VII

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

1. ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԷՄՊԻՐԻԿ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Գիտական իմացության էմպիրիկ մակարդակում դիտարկումների, գիտափորձի միջոցով ձեռք են բերվում փաստեր, տեղեկություններ, որոնք արտահայտում են առարկաների, օբյեկտների, երևույթների, գործընթացների քանակական ու որակական առանձնահատկությունները: Հետազոտության այս մակարդակում օգտագործվում են չափումներ, համեմատություններ, վերլուծություններ, համադրություններ: Մարդն իր կյանքի ընթացքում ձեռք է բերում տարաբնույթ տեղեկություններ ու գիտելիքներ: Շփվելով իրականության, շրջակա աշխարհի օբյեկտների, երևույթների հետ մարդը դրանց մասին ձեռք է բերում բազմաբնույթ տեղեկություններ: Այդ գիտելիքները կազմում են որոշակի նախադասություններ, որոնց բովանդակությունը հանդիսանում է գիտական հետազոտության էմպիրիկ հիմք: Էմպիրիկ հետազոտության հիմքում գտնվում են էմպիրիկ գիտելիքները: Այդ գիտելիքների բովանդակության մեջ արտացոլվում են ճանաչող սուբյեկտի զգայական ընկալումները: Դրանք արտահայտվում են հասկացություններում: Այդպիսի հասկացությունների միջոցով է մպիրիկ գիտելիքի մեջ ներդրվում է որոշակի իմաստ: Այդ իմաստը գալիս է ոչ միայն հետազոտվող օբյեկտից, այլև նախկինում ձեռք բերված գիտելիքներից: Այդ գիտելիքները կարող են լինել առօրեական, գիտական, փիլիսոփայական և այլ բնույթի: Այդ պատճառով էլ էմպիրիկ հետազոտությունը իր մեջ ընդգրկում է ոչ միայն հետազոտողի զգայական ընկալումների լեզվական արտահայտությունները, այլև փորձի տվյալների մաթեմատիկական և տրամաբանական մշակումներ:

Էմպիրիկ հետազոտությունը կարող է դրսևորվել 3 փուլերով: Էմպիրիկ հետազոտության առաջին փուլը գիտական փորձերն են: Այս փուլում ձեռք է բերվում օբյեկտների դիտման վերաբերյալ տվյալներ: Էմպիրիկ հետազոտության երկրորդ փուլում կատարվում է փորձի տվյալների տրամաբանական և մաթեմատիկական մշակումներ: Այդ գործողությունների շնորհիվ ստացվում է ավելի բարդ էմպիրիկ գիտե-

լիք: Այսինքն, վերլուծության և համադրության միջոցով բացահայտվում է փորձի տվյալների փոխկապակցվածությունը, որի շնորհիվ փորձի տվյալները բաժանվում են խմբերի, դասակարգվում և համակարգվում են: Հետազոտության այս փուլի նպատակը՝ ուսումնասիրվող օբյեկտի հիմնական, էական հատկությունների պարզելն է: Էմպիրիկ հետազոտության երրորդ փուլում ընդհանրացվում են փորձի տվյալները յուրաքանչյուր խմբի ներսում: Այդ ընդհանրացման միջոցով կատարվում է եզակի փաստերից, տվյալներից անսահման տվյալներին անցման ընդհանրացումներ: Դա հնարավորություն է ստեղծում, ուսումնասիրությունների վերաբերյալ ընդհանրություններ մշակելու միջոցով, հասնել օրինաչափությունների հաստատման: Հետազոտության այս փուլի հիմնական նպատակն է բացահայտել յուրաքանչյուր խմբի երևույթների էությունը: Այդ նպատակին հասնելու համար պետք է յուրաքանչյուր խմբի ներսում հայտնաբերել երևույթների միջև առկա փոխադարձ կապերը, որոնք խորքային են և անմիջական դիտման չեն ենթարկվում: Այսինքն, էմպիրիկ հետազոտության երրորդ փուլի հիմնական նպատակը խորքային կապերի հայտնաբերումն է:

Գիտական իմացության տեսական մակարդակում փաստերի իդեալականացված նկարագրությամբ ստեղծվում են վերլուսցական օբյեկտներ և դրանք միավորող սկզբունքներ: Այս մակարդակը գիտությանը հնարավորություն է ընձեռում զարգանալու ներքին տրամաբանությամբ, առանց փորձնական նյութին դիմելու: Դրա շնորհիվ հնարավոր է դառնում շատ գիտելիքներ արտածել ընդհանուր սկզբունքներից: Այդպիսի գիտելիքները հետագայում, պրակտիկ կիրառության ընթացքում՝ վերացական օբյեկտների առարկայական մեկնաբանության շնորհիվ կարող են կոնկրետ նյութական բովանդակություն ստանալ:

Գիտական հետազոտության տեսական ուսումնասիրությունները կենտրոնանում են ընդհանրացված գաղափարների, վարկածների, օրենքների, սկզբունքների վրա: Գիտական տեսությունը հասկացությունների, սկզբունքների, օրենքների և օրինաչափությունների համակարգ է: Այդպիսի համակարգի միջոցով կարելի է նկարագրել և բացատրել երևույթների որոշակի դաս և ուրվագծել նրանց փոփոխման ընթացքը:

Գիտական իմացությունը էմպիրիկ և տեսական հետազոտությունների միասնական գործընթաց է: Բազմաթիվ և բազմաբնույթ ուսումնասիրությունների արդյունք հանդիսացող գիտելիքը ձեռք է բերվում տարբեր մեթոդներով:

2. ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ հասարակության զարգացման պրակտիկ պահանջմունքներից բխող իրականության երևույթների ու գործընթացների էության, զարգացման օրենքների ու օրինաչափությունների բացահայտման, որոնումների, ենթադրությունների, կանխատեսումների, ստուգումների ապացուցումների ամբողջական համակարգ է: Այն տրամաբանական մտածողության հնարներով ընդհանրացնում և իմաստավորում է նախորդ սերունդների ձեռքբերումները, կուտակված փաստական տվյալները, մշակում է համապատասխան հասկացությունների, կատեգորիաների համակարգ: Յուրաքանչյուր դարաշրջանի հասարակություն ոչ միայն օգտագործում է գիտության պատրաստի նվաճումները, այլև նոր գիտելիքների կարիք է զգում: Այդ պահանջի շնորհիվ մշակվում է նաև գիտելիքների այնպիսի համակարգ, որը գործադրվում է նոր գիտելիքներ ձեռք բերելու համար: Գիտական հետազոտության այդ մեթոդները իրականության արտացոլման արգասիք են և իմաստավորում ու բացահայտում են հետազոտվող բնագավառի օրինաչափությունները:

ՄԵԹՈԴԸ հետազոտության նպատակակետին ուղղված ճանաչողական հնար է, գիտելիք ձեռք բերելու կարգավորված գործունեություն: Յուրաքանչյուր գիտություն ունի հետազոտության իր մեթոդները, իրականության իր բնագավառի օրինաչափությունները պարզաբանելու հնարները: Փիլիսոփայության պատմության մեջ գիտական ճանաչողության այդ հնարների կարևորությունը առանձնակի խորությամբ պարզաբանվել է Արիստոտելի աշխատություններում, իսկ 16-17-րդ դարերում (բնագիտական հայտնագործությունների բուռն ժամանակաշրջանում) Ֆրենսիս Բեկոնի և Ռենե Դեկարտի կողմից: Ընդգծելով մեթոդի կարևորությունը գիտական հետազոտությունների բնագավառում Բեկոնը հիմնավորում էր, որ այն կատարելագործելու համար պետք է մտածողությունը մաքրել որոշ մոլորություններից (կուռքերից): Ըստ Բեկոնի մարդկային ցեղին բնորոշ մտքի հակումները, առանձին գիտնականներին բնորոշ հակումները, լեզվի անկատարությունը, այլոց կարծիքներին կուրորեն հետևելը լուրջ խոչընդոտներ են գիտական հետազոտության ճանապարհին: Միայն այդ խոչընդոտների հաղթահարումից հետո հնարավոր է անցումը փորձի փաստերի արդյունավետ վերամշակման վրա հիմնված նոր գիտության ճշմարիտ մեթոդին: Իհարկե այդ մեթոդները բազմազան են, բայց գիտական հետազոտու-

թյունը սկսվում է դիտարկումից:

ԴԻՏԱՐԿՈՒՄԸ երևույթների օբյեկտիվ ընթացքին հետևելու նպատակաուղղված իմացական գործընթաց է՝ պարզելու համար դրանց առանձնահատկությունները, էությունը, ծագման պատճառներն ու ծավալման ուղղությունը: Իրերն ու երևույթները որոշ տեսանկյունով դիտելու գործողությունը իր մեջ ընդգրկում է դիտարկման պլանի կազմումը, զննման ընթացքը, ստացված տեղեկությունների կոնկրետացումը և իմաստավորումը: Այլ խոսքով դիտարկումը մարդու հոգեկան աշխարհի, հասարակական կյանքի իրադարձությունների, բնության երևույթների բուն էությունը պարզելու ճանաչողական հնար ու մեթոդ է: Այն արտահայտում է մարդու ճանաչողական ակտիվ հնարավորությունը, ընտրելու կարողությունը, իմաստավորելու հմտությունը: Կյանքի ընթացքում ձեռք բերած մեր բոլոր գիտելիքների աղբյուրը զգայական ընկալումներն են: Իսկ այդ ընկալումների ընտրովի, նպատակաուղղված գործողությունը դիտարկումն է, գիտնականի հաջողությունների առաջին գրավականը: Դիտելու կարողությունը հնարավորություն է տալիս գիտնականին երևույթների շարքում զատել էականը ոչ էականից, անհրաժեշտը պատահականից և թափանցել պատճառական կապերի ամենաթաքուն ոլորտները: Այս գործում անմիջական դիտարկման սահմանափակությունները հաղթահարվում են միջնորդավորված դիտարկման հնարավորություններով: Օգտագործելով մանրադիտակի, հեռադիտակի և այլ գործիքների հնարավորությունները մարդը ուսումնասիրում է տիեզերական անհուն հեռուները, միկրոաշխարհի՝ տեսողությանը անմատչելի գործընթացները և անտեսանելին դարձնում է տեսանելի, անմատչելին՝ մատչելի: Գիտության և արվեստի բնագավառում ծնված նորը խորաթափանց ստեղծագործական դիտարկման և ինքնատիպ վերլուծության արդյունք է:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Դիտարկման ընթացքում մարդը սկզբում զգայում է իր տեսադաշտում գտնվող օբյեկտների ընդհանուր պատկերը, որոնց մասին տեղեկությունը որոշակի ազդեցություն է թողնում գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևում: Մարդու պրակտիկ կենսագործունեության ընթացքում աստիճանաբար ամրակայվող այդ տեղեկությունը հանդես է գալիս որպես վերլուծության ու համադրության արդյունք հանդիսացող մտավոր գործողություն: Առօրյա աշխատանքային գործունեության ընթացքում տարբեր առարկաները բաժանելով իրենց բաղկացուցիչ մասերի, մարդը նաև առարկաները մտովի բաժանելու հմտություն է ձեռք բերում:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ հետազոտվող օբյեկտը բաղկացուցիչ մասերի բաժանելու մտային գործողություն է և նոր գիտելիքների ստացման եղանակ: Օբյեկտը բաղկացուցիչ մասերի բաժանելու մտային գործողության շնորհիվ բացահայտվում է նրա կառուցվածքն ու հատկությունները: Իսկ այդ կառուցվածքի ու հատկությունների իմացումը տանում է դեպի օբյեկտի համակողմանի ճանաչմանը: Բայց մինչև այդ համակողմանի ճանաչման փուլին հասնելը օբյեկտը մեր մտքում դեռևս հանդես է գալիս որպես չբացահայտված, վերացական միասնություն: Այսինքն, վերլուծության շնորհիվ ստացվում է իր դրսևորման կոնկրետ ձևերի հետ չկապված էություն: Ուստի անհրաժեշտ է այդ բաժանված տարրերը մտովի միացնել և կազմել մեկ միասնական ամբողջություն:

ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ վերլուծության միջոցով առանձնացված, բաղկացուցիչ մասերի բաժանված հատկությունների ու հարաբերությունների մտովի միացումն ու միասնական ամբողջություն կազմելն է: Աշխարհը հետազոտելու ընթացքում գիտնականը ուսումնասիրության ենթակա օբյեկտը մտովի բաժանում է բաղկացուցիչ մասերի, որպեսզի պարզաբանի թե ինչից է կազմված ամբողջը, իսկ հետո նրա հետազոտված մասերը ի մի բերելով բացահայտում է այդ ամբողջության էությունը: Մարդկային մտածողությունը վերլուծության և համադրության անընդհատ գործընթաց է, որում բովանդակալից ամբողջություն են կազմում եզակին ու ընդհանուրը, միասնությունն ու բազմազանությունը: Սակայն այդ ամբողջությունը ճանաչելու համար անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել նրա կողմերից մեկի վրա և վերանալ մյուսներից:

ՎԵՐԱՑԱՐԿՈՒՄԸ ճանաչողական այնպիսի գործողություն է, որի դեպքում մտովի վերանում ենք ուսումնասիրվող օբյեկտների որոշ հատկություններից և ուշադրությունը կենտրոնացնում ենք որևէ կողմի վրա: Ինչպես գիտական հետազոտությունը, այնպես էլ առօրյա ճանաչողությունը մշտապես վերացարկման գործողությունների կարիք է զգում: Առանց վերացարկման հնարավոր չէ պարզաբանել ու բացահայտել երևույթների էությունը: Ընդ որում վերացարկման բնույթը և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում մտային վերացարկման նպատակայնությունն ու ուղղվածությունը որոշվում է ինչպես ուսումնասիրվող օբյեկտի բնույթով, այնպես էլ հետազոտության ծրագրերով: Այն ինքնանպատակ չէ: Աշխատանքային գործունեության և առօրյա կենսագործունեության ընթացքում մարդը չի կարող բավարարվել զգայական ի-

մացության շրջանակներով: Նրա հետաքրքրասիրությունների բնագավառը առանձին օբյեկտների հայումից տարածվում է դրանց խորքային կապերի պարզաբանման վրա, կոնկրետից անցնում է դեպի վերացականը: Այս ճանապարհով են առաջացել մեր լեզվում գործածվող բոլոր հասկացություններն ու կատեգորիաները: Օրինակ, «տուն» հասկացությունը առաջացել է տարբեր մեծության, տեսքի, չափերի, կառուցվածքի, հարկայնության շինությունների առանձին, կոնկրետ հատկություններից ու ձևերից վերացարկվելու և որպես ապրելու կացարան ընդհանրացվելու ճանապարհով: Այն դեպքում, երբ այդ համամասնությունների ամբողջությունը զգայական ակնառու հետազոտության համար մնում է անմատչելի գիտնականը ստեղծում է համապատասխան մոդել, որի ուսումնասիրության արդյունքների հիման վրա ընդհանրացումներ է կատարում բնօրինակի մասին:

ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ հետազոտվող օբյեկտի բնութագծերի առարկայացված մանրակերտը կամ մտածական կերպավորումն է, որի ուսումնասիրության հիման վրա եզրակացություն է արվում բուն օբյեկտի մասին: Նման պահանջարկ առաջանում է այն ժամանակ, երբ հետազոտության նթակա օբյեկտի կամ երևույթի անմիջական ուսումնասիրությունը անհնարին է, դժվարամատչելի. կապված է նյութական կամ հոգևոր արժեքների կորուստի հետ: Օրինակ, նախքան տիեզերք թռչելը պետք է ճշտել թե գերծայնային արագությունը և տիեզերական միջավայրը ինչպիսի ազդեցություն կգործեն մարդկային օրգանիզմի վրա: Այդ նպատակով երկրի վրա կառուցում են հատուկ մոդել, որում ապագա տիեզերագնացը ենթարկվում է բազմակողմանի ուսումնասիրության: Ստացված արդյունքների հիման վրա ստեղծվում է տիեզերագնացի հանդերձանքն ու տիեզերանավի միկրոկլիման: Գիտության մեջ մոդելների օգտագործման շրջանակները չափազանց բազմազան են: Ֆիզիկայում լայն կիրառություն ունեն ատոմի միջուկի մոդելները, քիմիայում՝ մոլեկուլի մոդելը, բժշկության մեջ՝ էլեկտրոնային մոդելները, ճարտարապետության մեջ՝ կառույցների մոդելները: Մտածողության ուսումնասիրության համար արժեքավոր մոդելի դեր կարող են կատարել ժամանակակից բարդ համակարգերը: Ալեհավաքի ստեղծման գործում կենդանի մոդել է ծառայել չղջիկը: Մոդել կարող են դառնալ այն օբյեկտները, որոնց կառուցվածքը, հատկությունները, գործառույթները ապագա մտահղացումների լուծման բանալի կարող են հանդիսանալ: Սակայն հետազոտության ընթացքում հաճախ այդ օբյեկտները որոշակի պայմանների մեջ դնելու, որոշակի տեսանկյունից ուսումնասիրելու,

այսինքն, փորձարարության ենթարկելու անհրաժեշտություն է առաջանում:

ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ (էքսպերիմենտ) օբյեկտների ու երևույթների ծավալման ընթացքի և բնույթի վրա նախանշված տեսանկյունից ներգործելու, նպատակադրված ուղղությամբ փոփոխելու հետազոտական հնարների համակարգ է: Այն արդի գիտությունների զարգացման անհրաժեշտ միջոց և նոր գիտելիքների ձեռքբերման աղբյուր է: Գիտության յուրաքանչյուր բնագավառի փորձարար ստեղծում է անհրաժեշտ պայմաններ, մեկուսացնում է ուսումնասիրությանը խանգարող գործոնները, կիրառում է համապատասխան տեխնիկական հարմարանքներ, որոնց շնորհիվ բացահայտում է հետազոտվող օբյեկտի նորանոր հատկություններ և խորացնում է դրանց մասին ըմբռնումների շրջանակը: Փորձարարական հետազոտությունները խորացնում ու ընդարձակում են գիտական ուսումնասիրությունների շրջանակները, արտադրությունը զինում են նոր տեխնոլոգիայով, հիմք են դնում ինժեներական նոր մտահղացումների: Մարդկության զարգացման հետ մեկտեղ մեծանում է փորձարարության դերն ու նշանակությունը ինչպես տեսական գիտությունների, այնպես էլ նյութական արտադրության բնագավառում: Տեսության կապը փորձարարության հետ կարող է դրսևորվել անմիջական, եթե այն ուղղակիորեն բխեցվում է փորձերից, և միջնորդավորված, եթե այն բխեցվում է փորձարարությամբ բացահայտված օրինաչափությունների վերլուծությունից: Հետևապես փորձարարությունը ճանաչողության գործընթացի կարևոր օղակներից մեկն է, որի միջոցով մարդը ոչ միայն ստուգում է ձեռք բերած գիտելիքների հավաստիությունը, նոր ծագած գաղափարների ճշմարտացիությունը, այլև մշակում է իր մտահղացումների պրակտիկ իրականացման ուղիներ, կատարում է կանխատեսումներ:

ԳԻՏԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ տեսության և փորձարարության տվյալների ընդհանրացման հիման վրա նոր երևույթների նախագուշակման հնար է: Շրջակա աշխարհի իրերի ու երևույթների բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա մտածողը կարող է կանխագուշակել իրադարձությունների ծավալման ուղղությունը, նոր գյուտերի ու որակների հավանական դրսևորումները: Եթե ուշադիր վերլուծենք գիտության պատմության հազարամյա նվաճումները կարող ենք համոզվել, որ այն շատ կողմերով կանխատեսումների պատմություն է: Այդ կանխատեսումները հիմնականում եղել են երկու բնույթի: 1) Դեռևս չբացահայտված, բայց գոյություն ունեցող օբյեկտների ու երևույթների

վերաբերյալ: Օրինակ, ատոմի և տարրական մասնիկների վերաբերյալ գիտական կանխատեսումներն ու հայտնագործությունները: 2) Նոր ձևավորվող և ապագայում դրսևորվող երևույթների վերաբերյալ: Օրինակ, Արցախյան շարժման սկզբնական փուլում, երբ հանրային սեփականության վրա հիմնված քաղաքական համակարգը դեռևս բավականին ամուր էր, շարժման որոշ գործիչներ կանխագուշակեցին այդ համակարգի մոտալուտ փլուզման հնարավորությունը: Այստեղից կարելի է բխեցնել և գիտական կանխատեսման նշանակությունը: Այն հնարավորություն է ստեղծում կանխատեսելու երևույթների զարգացման ընթացքը և խելամիտ ձևով միջամտելու այդ գործընթացին: Եթե քաղաքական գործիչները ժամանակին չանտեսեին հասարակական կյանքի հակասությունների զարգացման վերաբերյալ փիլիսոփաների վերլուծությունները, կանխատեսումներն ու առաջարկությունները, այսօր բնական ռեսուրսների հարստությամբ կապիտալիստական զարգացած երկրներին չզիջող Ռուսաստանը չէր հայտնվի ծայրահեղ աղքատության այս վիճակում: Ապացույց՝ Ֆինլանդիայի ոչ հեռավոր աղքատիկ անցյալն ու բարգավաճող ներկան: Գիտական կանխատեսման դերը կարևորվում է նրանով, որ այն բնության ու հասարակության ճանաչված օրենքները տարածում է անհայտ, բայց արդեն ձևավորվող երևույթների վրա: Իհարկե նրանում պարունակվում են նաև հավանական ենթադրությունների տարրեր, որովհետև զարգացման ընթացքում, մարդկանց ակտիվ գործունեության շնորհիվ, առաջանում են նախկինում չդիտված նոր պատճառական կապեր, որոնք կարող են հանգեցնել անսպասելի, չկանխատեսված իրադրությունների առաջացմանը:

ՁԵՎԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԸ կարևորվում է գիտական ճանաչողության տեսական ընդհանրացումներում: Հաճախ բանաձևերը, արհեստական լեզուները կարող են դառնալ ճանաչողության գործիք: Դրանք նույնպիսի դեր կարող են կատարել տեսական ճանաչողության գործում, ինչպես մանրադիտակը և հեռադիտակը էմպիրիկ ճանաչողության ոլորտում: Գիտական հետազոտության գործընթացում արհեստական լեզվով արտահայտված տեղեկությունը միանշանակ է, իսկ բնական լեզուն բազմիմաստ է: Այդ պատճառով ձևականացումը արհեստական լեզվի առավելությունը օգտագործելու հնարավորություն է ընձեռում: Ձևականացման շնորհիվ հետազոտվող օբյեկտի վերաբերյալ մտքերը կարելի է արտահայտել բանաձևերի տեսքով և կատարել մաթեմատիկական գործողություններ: Ստացված արդյունքների վեր-

լուծության հիման վրա տեղեկություն կստացվի ուսումնասիրվող օբյեկտի հատկությունների մասին:

ՀԻՊՈԹԵՏԻԿ-ԴԵԴՈՒԿՏԻՎ ՄԵԹՈԴԻ օգնությամբ վարկածներից բխեցվում են եզրակացություններ: Այս մեթոդով էմպիրիկ փաստերից՝ դեդուկտիվ մտահանգման կանոններով, բխեցվում է եզրակացություն: Իհարկե նման եզրակացությունները կարող են հավանական բնույթ ունենալ: Սակայն այս մեթոդն ունի նաև առավելություններ, քանի որ վարկածի ստուգման լավագույն արդյունք է դասռնում տեսությունը: Հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդը գիտական գիտելիքների կառուցման և հիմնավորման մեթոդ է, քանզի այն ցույց է տալիս, թե ինչ ուղիով կարելի է հանգել նոր վւսրկածի:

3. ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՆԵՐՀԱՅԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ, ԲԱՆԱՎԵՃ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ նյութական և հոգևոր արժեքներ ստեղծելու մարդու ինտելեկտուալ գործունեության այնպիսի դրսևորում է, որը բավարարում է հասարակական բազմազան պահանջմունքներ: Ստեղծագործելիս մարդը շրջակա աշխարհի իրերը, երևույթները զգում, ըմբռնում, հայում է մինչ այդ ոչ ոքի կողմից չդրսեվորած յուրահատկությամբ: Մարդու միտքը միշտ կողմնորոշված է դեպի բազմաբնույթ որոնումներ: Սակայն, ստեղծագործող է դառնում այն ասնձնավորությունը, որն ունի դիտելու, զննելու, ըմբռնելու սուր և նուրբ զգացողություն: Նման հակումների շնորհիվ գիտնականը, արվեստագետը, ուրիշների համար սովորական թվացող իրադարձությունների ոլորտում ըմբռնում և հմաստավորում է արտասովորն ու անհասանելին: Դա մասամբ խորաթափանցության, մասամբ ներհայեցողության գերզգայական դրսևորման արդյունք է:

ՆԵՐՀԱՅԵՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ գիտակւսն հետազոտության և այլ բնույթի գործընթացներում դրսևորվում է որպես կենդանի հայեցողության միջնորդավորված իմացության ինտելեկտուալ ճառագում: Մտածողի ինտելեկտում երբեմն հասունացող եզրահանգումները այնպես են ձգձգվում, որ թվում է թե այն գրեթե անլուծելի է: Բայց հանկարծ, առանց նախնական տրամաբանական կշռադատությունների խնդիրը լուծում է ստանում: Նման պահերը խորհող ինտելեկտի մտքի ճառագման, պայծառացման արդյունք են: Ներհոգեկան այդ գործընթացն իրականանում է առանց ուսումնասիրվող օբյեկտի անմիջական ընկալման: Դա ներհոգեկան բարդ գործընթացների ծավալման այնպիսի դրսևորում է, երբ ակնթարթային մտաճառագման շնորհիվ հանգուցալուծվում

է խնդիրը: Գիտակցության այդպիսի փայլատակումները երկար ժամանակ ուսումնասիրվող խնդրի ենթագիտակցական մշակումների արդյունք են: Հարուստ կենսափորձի շնորհիվ ճանաչող սուբյեկտի ինտելեկտում կուտակված գիտելիքները, առանց նախնական տրամաբանական կշռադատության, բացահայտում են խնդրի էությունը: Դա ոչ թե ստեղծագործության սովորական ուղուց շեղվող գործընթաց է, այլ նախկինում ձեռք բերած գիտելիքների, կուտակած փորձի հիման վրա իրականացվող արագ մտաճառագում: Մինչ այդ մտածողի ինտելեկտում կատարվել է ուսումնասիրվող հարցալուծումների բազմաթիվ զուգորդումներ, որոնց արդյունքն էլ դրսևորվում է հրաշքային թռիչքի ձևով: Մտքի այդպիսի փայլատակումների շնորհիվ է արվեստում ստեղծվում գլուխգործոցներ, գիտության մեջ՝ դարակազմիկ հայտնագործություններ: Այդպիսի պահերին արվեստագետը, գիտնականը, առանց տրամաբանական փաստարկումների, միանգամից հասնում է երկարատև խորհրդածությունների հարցալուծմանը: Ոգեշնչման հորդման, մտաճառագման այդ գործընթացը թեև իրականանում է ակնթարթորեն, սակայն դա խորհող ստեղծագործողի երկարատև մտորումների արդյունք է: Ցանկացած հիմնախնդրի լուծումը տվյալ բնագավառի հետազոտողների մտորումների, վերլուծությունների, կռահումների ամբողջականացված դրսևորում է: Նյուտոնի մտքի փայլատակման արդյունք հանդիսացող տիեզերական ձգողության օրենքի հիմնավորումը Կեպլերի, Հյուգենսի, Բորելիի և այլոց ուսումնասիրությունների ընդհանրացում էր: Իհարկե դա կարող էր իրականացվել և տրամաբանական բխեցումների միջոցով: Սակայն այդպիսի բխեցումները զգալիորեն տարբերվում են մտաճառագման հրաշքային դրսևորումից: Նման գերզգայական հոգեվիճակներում ուսումնասիրողը ամբողջովին կլանվում է հիմնախնդրի լուծումով այն աստիճան, որ անգամ քնած վիճակում նրա ուղեղում շարունակվում են մտորումների զուգորդումները և ակնթարթային պայծառացման շնորհիվ դրսևորվում են որպես հիմնախնդրի լուծում: Նման հարցալուծումը ստեղծագործական մտորումների այնպիսի յուրահատուկ դրսևորում է, որում տեղեկությունների որոշ զուգորդումներ կատարվում են անգիտակցաբար: Զգայությունները, մտապատկերները, մտածողությունը ինտելեկտուալ ուժգին մղման շնորհիվ ակնթարթորեն դառնում են գիտական հայտնագործություն:

Ստեղծագործական հայտնագործությունը հիմնավորելու, հաստատելու գործում չափազանց կարևորվում է փաստարկման և բանավեճի

դերը:

ՓԱՍՏԱՐԿՈՒՄԸ համապատասխան դատողությունների միջոցով մտքի, կարծիքի, համոզմունքի ճշմարտացիությունը հիմնավորելու, ապացուցելու հնար է: Որպես ապացուցվող թեզիս առաջադրվում է կոնկրետ դրույթ, դիտարկվում է այդ դրույթի հավաստիությունը հաստատող հիմնավորումները և հերքող ապացուցումները: Այստեղ հիմնավորվող դրույթի հավաստիությունը ապացուցելու համար կարևորվում է ոչ միայն տրամաբանական ապացուցման գործոնները, այլև արտատրամաբանական հնարները: Հիմնավորվող դրույթի կարևորությունը ընդգծելու և հավաստիությունը ապացուցելու գործում կարող է օգտագործվել հռետորական ներգործության ուժը, մարդու զգացմունքների վրա ազդելու հմտությունը:

ԲԱՆԱՎԵՃԸ քննարկվող հիմնախնդրի շուրջը կարծիքների բախման միջոցով հավաստի լուծում փնտրելու հնար է: Բանավեճի ժամանակ վիճող կողմերը փորձում են որոշակի սկզբունքներով հիմնավորել իրենց տեսակետը և դիմացինին համոզել, փաստարկներով ապացուցել իր իրավացիությունը: Գիտական, փիլիսոփայական և այլ բնույթի բանավեճերը օգնում են բացահայտելու վիճահարույց խնդրի վերաբերյալ դրսևորվող տարակարծիք ըմբռնումների հիմքերը:

Բանավեճը կարող է ծագել ցանկացած բնագավառի մասնագետների դիրքորոշումների անհամատեղելիության պատճառով: Գիտական տեսությունը ձևավորվում է նախորդ սերունդների և տվյալ դարաշրջանի հետազոտությունների արդյունքների համատեղման շնորհիվ: Ձևավորված տեսությունը անընդհատ լրացվում, խորացվում, ճշգրտվում, հիմնավորվում է նոր հայտնագործությունների միջոցով: Համոզմունքների, պատկերացումների, աշխարհայացքային դիրքորոշումների բախման, բանավեճի մղման միջոցով ամրապնդվում են տեսության հիմնադրույթները:

Վիճահարույց հիմնախնդիրների շուրջը ծավալվող կարծիքների բախումը անխուսափելի է կյանքի բոլոր բնագավառներում: Սակայն դրանց շարժառիթները կարող են փոփոխվել հասարակության սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ հիմնախնդիրների բովանդակությանը համապատասխան: Հասարակության տարբեր դասերի, խավերի, դրանց շահերն արտահայտող կուսակցությունների միջև գաղափարական առճակատումների պատճառով բանավեճերը քաղաքական բնագավառից կարող են տեղափոխվել նաև տնտեսական, մշակութային և այլ ոլորտներ: Այդ պատճառով էլ ինչպես գիտական, այն-

պես էլ քաղաքական և այլ բնույթի բանավեճերի ծավալման դեպքում վիճող կողմերը պետք է պահպանեն կիրթ վարվելակերպ, չդիմեն փաստերի խեղաթյուրման, հարգեն դիմացինի կարծիքը: Բանավիճելու ժամանակ գաղափարների, համոզմունքների, դիրքորոշումների բախումը չպետք է նպատակաուղղվի անձնական արժանապատվության նսեմացմանը: Գաղափարների վեճը չպետք է վերածվի անձնական վիճաբանության:

4. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԻ ԱՐԺԵՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

XIX-XX դարերում գիտության զարգացումը ստացավ բազմաբնույթ ուղղվածություն և չափազանց մեծ ազդեցություն թողեց հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա: Մարդու ինտելեկտուալ կարողությունները ստացան բազմակողմանիորեն ծավալվելու հնարավորություն: Գիտնականները իրենց մտքի թռիչքով ու սարքերի ընձեռած հնարավորությամբ թափանցեցին օրգանական և անօրգանական աշխարհի մինչ այդ անհայտ օրինաչափությունների ոլորտը: Գիտական միտքը ստեղծեց կատարելագործված աշխատանքի գործիքներ և նոր տեխնոլոգիաներ: Գիտության զարգացման բուռն վերելքի շնորհիվ էականորեն փոխվեց հասարակության և բնության փոխազդեցության գործընթացները: Բնական օրինաչափությունների իմացության շնորհիվ մարդը խիզախեց դրանք ծառայեցնելու իր շահերին: Այդ գործընթացները զգալի հետք թողեցին փիլիսոփայական մտքի զարգացման վրա:

Փիլիսոփայության ոլորտում գիտության դերի և նշանակության արժեքավորումը հանգեցրեց սցիենտիստական և հակասցիենտիստական համոզմունքների ձևավորմանը:

ՍՑԻԵՆՏԻԶՄԸ որպես գիտության դերի ու նշանակության վերաբերյալ համոզմունքների դրսևորում ծևավորվեց XIX դարում և զգալի տարածում ունեցավ հետագայում: Այդ համոզմունքները սոցիոլոգիական հետազոտությունները նպատակաուղղեցին բնական գիտությունների չափանիշներով արժեքավորմանը: Սկզբնական շրջանում այդպիսի նպատակ էին հետապնդում Կոնտը և Սպենսերը: Սոցիոլոգիան դրական գիտություն դարձնելու ջանք են գործադրել Թարդը, Հումպլովիչը, Ոհորդը և այլոք:

XX դարում սցիենտիզմը ուշադրությունը բևեռեց սոցիալական գիտելիքների կիրառական, ինժեներական գործառույթի վրա: Այդ սկզբունքի համաձայն պահանջվում էր որպեսզի 1. հետազոտության

հիմնախնդիրները և նպատակները որոշեն ոչ թե սոցիոլոգները, այլ քաղաքական գործիչները, 2. հասարակության առաջնորդները սոցիոլոգներից պետք է ստանան տվյալներ, առաջարկություններ, խորհուրդներ, որը նրանք կարող են օգտագործել իրենց հայեցողությամբ, 3. այդ առաջարկությունները մշակելիս սոցիոլոգները պետք է հրաժարվեն հասարակության վերաբերյալ փիլիսոփայական հայացքներից և հասարակության զարգացման ուղղվածությունը ինքնուրույն որոշելուց:

Սցիենտիստական համոզմունքներ զարգացնողները հիմնավորում են, որ գիտության շնորհիվ հնարավոր է արմատապես բարելավել արտադրությունը, կենցաղը, քաղաքականությունը: Քաղաքագետները ստանալով բազմակողմանի և բազմաբնույթ տեղեկություններ, կարող են թուլացնել հասարակության տարբեր ոլորտներում դրսևորվող հակասությունները, կանխել բախումները, հանցագործությունները, գործազրկությունը: Դա միտված էր կառավարողների պատվերը կատարող սոցիոլոգիան հասարակության գիտական զարգացման ուժ դարձնելուն:

Սցիենտիզմը միանշանակ բացարձակացնում է բանականության և գիտության դերը հասարակական կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ: Հիմնավորվում է, որ գիտական նվաճումների, հայտնագործությունների շնորհիվ բարելավվում է մարդկանց կենսամակարդակը, լուծվում են սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները: Անգամ հումանիտար գիտությունների զարգացման գործում շեշտադրվում է բնական գիտությունների առաջնայնությունը: Կարևորվում է մաթեմատիկայի, համակարգչային տեխնիկայի դերը հասարակական կյանքի տարբեր ոլորտների հետազոտության գործում: Սցիենտիզմում գիտության զարգացումը դիտվում է միաժամանակ սոցիալ-քաղաքական հիմնախնդիրների լուծման երաշխիք: Հիմնավորվում է, որ գիտական առաջընթացի շնորհիվ կլուծվեն ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև բարոյա-քաղաքական հիմնախնդիրներ: Նման համոզմունքներում գիտության զարգացումը միանշանակ դիտվում է համընդհանուր բարեկեցության երաշխիք:

ՀԱԿԱՍՑԻԵՆՏԻԶՄԸ, փաստարկելով բնության նկատմամբ մարդու կիրառած վնասաբեր գործողությունները, հիմնավորում է, որ մարդկային հասարակության զարգացման ընթացքում գիտատեխնիկական առաջընթացը նպաստելով հանդերձ մարդկանց կենսամակարդակի բարելավմանը, խիստ վնասաբեր ազդեցություն է թողել նաև

շրջակա միջավայրի վրա: Հիմնավորվում է, որ աշխատանքի գործիքների կատարելագործման, բարդ տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ մարդը խախտում է բնական հավասարակշռվածությունը և անշրջելի վնասներ է պատճառում բուսական և կենդանական աշխարհին: Հիմնվելով նման իրավիճակների վերլուծության, արժեքավորման վրա, հակասցիենտիզմը գիտությունը դիտում է որպես մարդուն թշնամի ուժ և մերժում է գիտական առաջընթացի միջոցով սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ բնույթի հիմնախնդիրների լուծման հնարավորությունը: Բացատրվում է, որ արդի դարաշրջանի գիտատեխնիկական նվաճումները ոչ միայն չնպաստեցին հարթելու մարդ-իշխանություն հարաբերակցության հակասականությունը, այլև կենսամիջոցների առատության պայմաններում գնալով ավելի է խորանում գերհարուստ և ծայրահեղ աղքատ խավերի միջև դրսևորվող սոցիալ-տնտեսական, իրավա-քաղաքական անհավասարությունը: Հակասցիենտիստական համոզմունքներում պարզաբանվում է, որ բանականությունը և գիտությունը ի զորու չեն լուծելու մարդկային կեցության հակասությունները: Գիտության զարգացումը չի նպաստում մարդու անհատականության դրսևորմանը: Օտարվելով ինքն-իրենից ու հասարակությունից, մարդն անտարբերություն է ցուցաբերում ոչ միայն իր, այլև ապագայի նկատմամբ:

Հակասցիենտիստական գաղափարներ զարգացրել են՝ Նիցշեն, Հայդեգերը, Օրտեգա-ի-Գասետը, Բերդյաևը և այլոք: Մեկնաբանվում է, որ մարդն անզոր է պայքարելու իրեն թշնամի աշխարհի դեմ: Թշնամի ուժ է դիտվում և գիտությունը: Օ.Շպենգլերի պատկերավոր արտահայտությամբ՝ աշխարհի տիրակալ մարդը դարձել է մեքենայի ստրուկը:

ԳԼՈՒԽ VIII

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

1. ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ

Փիլիսոփայության պատմության մեջ ճշմարտության հիմնախնդրին միանշանակ իմաստավորում չի տրվել: Ի սկզբանե փիլիսոփայության երկու հիմնական ուղղությունները՝ մատերիալիզմը և իդեալիզմը հարցին մոտեցել են տարբեր տեսանկյունից: Անտիկ դարաշրջանում մատերիալիստ մտածողներ Դեմոկրիտեսը, Էպիկուրը և այլոք ճշմարտությունը դիտել են գիտելիքների համապատասխանությունը իրերի բնույթին: Իսկ իդեալիստ մտածողներ Պարմենիդեսը, Պլատոնը ճշմարտությունը համարում էին վերզգայական հավերժ գաղափար: Մարդկային հոգում առկա իդեալական որակ:

Պարմենիդեսի համոզմամբ մարդու համար աշխարհի բովանդակությունը բացահայտվում է տիեզերական բանականության [լոգոսի] միջոցով: Ոչ թե մարդն է բացահայտում կեցության ճշմարտացիությունը, այլ, ընդհակառակը, կեցության ճշմարտացիությունը անմիջնորդավորված ձևով ինքն է բացահայտվում մարդուն: Մարդկային մտածողությունը գիտելիք ձեռք բերում անմիջականորեն շփվելով «տիեզերական բանականության հետ»: Պարմենիդեսի կարծիքով առանձին մարդկանց կողմից օգտագործվող տրամաբանական ապացուցումները վճռորոշ նշանակություն չունեն ոչ նրանց մտածողության գործընթացի, ոչ էլ գիտելիքի ճշմարտացիության գնահատման համար: Մարդու կողմից օգտագործվող բառերը պատկանում են ոչ թե նրան, այլ աստվածությանը [տիեզերական բանականությանը]: Այդ պատճառով էլ ճշմարտությունը բացահայտվում է ոչ թե մարդկային մտքի տրամաբանական հնարներով, այլ ինքն է տրվում մարդուն: Մարդկանց մտքի հզորության աղբյուրը ոչ թե բուն մտքում է, այլ նրա ունակությունները գերազանցող տիեզերական բանականության մեջ է:

Պլատոնը ճշմարտությունը համարում է վերզգայական հավերժ գաղափար, մարդկային հոգում առկա իդեալական որակ: Նրա կարծիքով «ինքնին գոյություն ունեցող գաղափարների աշխարհին» վերաբերող հասկացությունների և դրույթների իսկությունն ըմբռնելու համար

մարդը պետք է անջատվի, վերանա զգայական, արտաքին աշխարհից և խորասուզվի գաղափարների աշխարհի մեջ:

Արիստոտելը ճշմարտություն էր դիտում իդեալական ծևերի հետ մտածողության համապատասխանությունը: Այդպիսի ճշմարտություն մարդը ձեռք է բերում գոյություն ունեցող իրերն ընկալելու միջոցով: Այսինքն, մարդու զգայությունների, պատկերացումների, մտքերի համապատասխանությունը առարկաների հատկություններին դրսևորվում է որպես ճշմարտություն: Արիստոտելը մի կողմից ճշմարտություն էր համարում իրականի հավաստի արտապատկերումը գիտելիքում, իրերի նույնական արտացոլումը, մյուս կողմից էլ իդեալական ծևերի հետ մտածողության համապատասխանությունը: Սակայն գիտելիքի իդեալական բովանդակությունը ինչպե՞ս համեմատել իրերի հատկությունների հետ: Դրա համար պետք է լիներ մարդուց տարբեր այլ դիտորդ, որը կարողանար իրերը տեսնել այնպիսին, ինչպիսին դրանք կան իրականում և ոչ թե այն, ինչ մարդ պատկերացնում է իր զգայարաններով: Բայց մարդուն այդ հնարավորությունը տրված չէ, քանզի նա համեմատում է գիտելիքները փաստերի հետ, իսկ փաստերն արտահայտվում են պնդումներում: Այսինքն, մարդը հաստատում է մի պնդման համապատասխանությունը մեկ այլ պնդման հետ: Արիստոտելի համոզմամբ ճշմարտությունը և կեղծությունը գտնվում են ոչ թե իրերի մեջ, այլ մըտքում:

Միջին դարերում ավարտուն, անհերքելի ճշմարտություն է համարվում կրոնական դոգմաների բովանդակությունը, աստծո բնույթի և էության վերաբերյալ եկեղեցու հայրերի պատկերացումները, սուրբ գրքերի շարադրանքը: Թ. Աքվինացու, Օգոստինոսի համոզմամբ այդպիսի ճշմարտությունները բնածին են և անկասկածելի: Աքվինացու կարծիքով ճշմարտությունը իրերի բովանդակության համապատասխանությունն է աստվածային բանականության հետ: Իսկ հավատը համարվում է գերբնական ճշմարտություն, աստվածային հայտնություն:

Ճշմարտության ըմբռնման հարցում զգալի զանազանություն է նկատվում օբյեկտիվ և սուբյեկտիվ իդեալիզմի դիրքորոշումներում: Օբյեկտիվ իդեալիստների համոզմամբ ճշմարտությունը իդեալական գոյերի հավերժ, անփոփոխ, ժամանակից դուրս գտնվող հատկություն է: Այդպիսի ըմբռնման տեսանկյունից ճշմարտությունը դիտվում է որպես ճանաչողությունից անկախ գոյություն ունեցող իդեալական գոյերի հատկություն: Այստեղ ճշմարտության դատողությունները համարվում են բնածին գաղափարներ: Նման համոզմունքներ զարգացրել են Պլա-

տոնը, Օգոստինոսը, Հեգելը և այլոք:

Սուբյեկտիվ իդեալիստները (Բերկլի, Հյում, Կանտ) ճշմարտությունը դիտում են որպես ինքն իր մտածողության հետ համաձայնության մեջ գտնվող անձի հատկություն: Նման համոզմունքներում ճշմարտություն է դիտվում մտածողության համապատասխանությունը անձի զգայություններին:

XVII-XVIII դարերում սենսուալիստ մտածողները (Ֆ. Բեկոն, Ջ. Լոկ, Հելվեցիուս) ճշմարտությունը նույնացնում էին մարդկային զգայությունների բովանդակության հետ: Նման համոզմունքում ճշմարտությունը և զգայարանների տվյալները համատեղվում են: Իսկ ռացիոնալիստ մտածողների (Դեկարտ, Սպինոզա, Լայբնից) հայացքներում ճշմարտություն էր դիտվում ինտելեկտուալ ինտուիցիայի միջոցով ձեռք բերած գիտելիքը:

Ճշմարտության հիմնախնդրին յուրահատուկ մոտեցում են ցուցաբերում պրագմատիկները (Ջեյմս, Դյուի, Պիրս): Պիրսի համոզմամբ ճշմարտությունը գաղափարների և գործողությունների համապատասխանությունն է անձի զգայություններին: Ճշմարիտ է համարվում այն, ինչ «առաջ է տանում»: Նման պատկերացումների համաձայն ճշմարտությունը՝ զգայությունների, մտքերի, գաղափարների օգտակարությունն է՝ ցանկալի նպատակին հասնելու գործում:

Նոր պոզիտիվիզմի գաղափարակիրները (Շլիկ, Նոյրաթ, Պոպեր և այլոք) ճշմարտություն են համարում գիտության դրույթների և զգայական փորձի համապատասխանությունը: Նրանց համոզմամբ տեսական դատողությունները լոկ ճշմարտանման են, քանի որ դրանց ճշմարտությունը կամ կեղծությունը ապացուցել հնարավոր չէ:

Անտիկ, միջնադարյան ըմբռնումներում ճշմարտությունը դիտվում էր որպես ավարտուն գիտելիք: Այդ մտայնության մեջ զգալի փոփոխություն մտցրեց Հեգելը՝ ճշմարտությունը համարելով բացարձակ գաղափարի ինքնաճանաչողության աստիճանական զարգացման գործընթաց:

Ընդհանրացնելով նշված համոզմունքները, ճշմարտությունը կարելի է դիտել որպես օբյեկտիվ ռեալականության նույնական արտացոլում ճանաչող սուբյեկտի կողմից: Ճանաչվող օբյեկտի, երևույթի հատկությունների բովանդակության վերարտադրումը այնպես, ինչպես այն գոյություն ունի գիտակցությունից անկախ: Ճշմարտությունը՝ մարդկային զգայությունների, պատկերացումների, ըմբռնումների, դատողությունների բովանդակության փորձով, հասարակական պրակտիկայով

ստուգված, ճշգրտված, հիմնավորված գիտելիքն է: Այդ գիտելիքները որպես մարդու բանական գործունեության արդյունք սուբյեկտիվ են, իսկ բովանդակությամբ՝ օբյեկտիվ:

2. ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՑԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ տակ իմաստավորվում է գիտելիքների ու գաղափարների բովանդակության անկախությունը ճանաչող սուբյեկտից: Արտաքին աշխարհի և իր մասին մարդու ձեռք բերած գիտելիքների բովանդակությունը կախված չէ ճանաչող սուբյեկտից: Ճշմարտությունը միտք է, գիտելիք է մարդուց անկախ գոյություն ունեցող օբյեկտների հատկությունների վերաբերյալ: Ոչ բոլոր ճշմարիտ են համարվում այն գիտելիքները, որոնց բովանդակության օբյեկտները օբյեկտիվ ռեալականության տարբեր դրսևորումներ են: Այսինքն, մեր գիտելիքներում պարունակվող տեղեկությունը առաջին հերթին ունի օբյեկտիվ բովանդակություն: Իհարկե դա չի նշանակում, թե ճշմարտությունը գոյություն ունի գիտակցությունից դուրս: Այն մտքի արգասիք է: Բայց մտքի այդ արգասիքը մեզանից անկախ և մեզանից դուրս գոյություն ունեցող աշխարհի իրերի ու երևույթների մասին է: Գաղափարները ծնավորվում են մեր ուղեղում, բայց դրանց բովանդակությունը մեզանից կախված չէ: Օրինակ, յուրաքանչյուր գիտական հետազոտություն վերջին հաշվով տվյալ մտածողի զգացմունքների, ապրումների, պատկերացումների, ըմբռնումների, երևակայության հանրագումար է, նրա հոգեկան աշխարհի տեսագրությունը, որի ծնավորման և մտրմնավորման սկզբնաղբյուր են հանդիսացել զգայարանների միջոցով արտաքին աշխարհից ձեռք բերված զգայությունները: Բայց այդ հետազոտությունների վրա որոշակի հետք են թողնում ինչպես պատմական պայմանները, դարաշրջանը, այնպես էլ հասարակական պահանջմունքները: Այսինքն, յուրաքանչյուր գիտական հետազոտություն իմացության շղթայի մի օղակ է, իսկ ճշմարտությունը՝ նորանոր օղակներ բացահայտող գործընթաց: Այդ գործընթացի յուրաքանչյուր օղակ հանդես է գալիս որպես հարաբերական ճշմարտություն:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ տակ իմաստավորվում է այն իրողությունը, որ օբյեկտի վերաբերյալ ձեռք բերված գիտելիքը հետագայում ենթակա է խորացման, ճշգրտման, անգամ մասնակի փոփոխման: Յուրաքանչյուր պատմական դարաշրջանում գիտության,

տեխնիկայի, արտադրության զարգացման հետ մեկտեղ մարդկության ձեռք բերած գիտելիքները խորանում, հարստանում ու ճշգրտվում են: Իրերի, երևույթների ու գործընթացների մասին ձեռք բերված գիտելիքները միանգամից սպառիչ ու ավարտուն լինել չեն կարող, որովհետև դրանք գտնվում են անընդհատ փոփոխության ու զարգացման ընթացքում: Ընդ որում անընդհատ փոփոխվում ու ընդլայնվում է նաև մարդու ճանաչողական ունակությունները: Հետևաբար, գիտական հաջորդ սերունդը անխուսափելիորեն կանդրադառնա նախորդի նվաճումներին, կամփոփի, կընդլայնի ու կխորացնի այն, և ուղի կհարթի հետագա ուսումնասիրությունների համար: Հետազոտությունների այդ ընթացքում ձեռք բերված գիտելիքները հարաբերական ճշմարտությունների շարք են: Օրինակ, ատոմի մասին մինչև այժմ պատկերացումների շարքը: Յուրաքանչյուր դարաշրջանի մտածողին թվացել է, թե իր պարզաբանած ճշմարտությունը ավարտուն է: Բայց դեռ շատ չլուսաբանված հարցեր սպասում են իրենց հետազոտողին: Կոհենի կարծիքով իմացության գործընթացում մարդը քայլ առ քայլ բացահայտում է հետազոտվող օբյեկտի նորանոր կողմեր ու հատկություններ, սակայն այդ գործընթացը անավարտ է: Նա ճանաչողության անավարտության գաղափարից բխեցնում է ճշմարտության հարաբերականության սկզբունքը: Հիմնավորվում է, որ ճանաչողությունը անվերջ գործընթաց է և հնարավոր չէ սպառել հետազոտվող օբյեկտի իմացությունը: Ցանկացած գիտական տեսություն հարաբերական և ավարտուն գիտելիքների համակարգ է: Այդ համակարգը հետագայում կարող է ընդարձակվել, խորացվել, լրացվել նորանոր տեղեկություններով, որի շնորհիվ կստացվի համապարփակ, ավարտուն գիտելիք՝ բացարձակ ճշմարտություն:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՐՁԱԿՈՒԹՅԱՆ տակ հասկացվում է օբյեկտի վերաբերյալ լրիվ, սպառիչ, երբեք չլրացվող ու չհերքվող գիտելիքը: Նման կարգի ճշմարտություններ են՝ դեպքերի, իրադարձությունների փաստարկումները, գիտության հազարամյա զարգացման այնպիսի արդյունքները, որոնք վերջնականապես ճշգրտված են և հետագայում դրանց բովանդակության ոչ մի փոփոխություն հնարավոր չէ: Ամեն մի հարաբերական ճշմարտություն կարող է պարունակել բացարձակ ճշմարտության տարրեր: Իհարկե գիտության պատմության մեջ դիտվել են նաև դեպքեր, երբ գիտական նոր հայտնագործությունները հեղաշրջել են դարերով ամրակայված բացարձակ ճշմարտության ըմբռնումները: Օրինակ, էվկլիդյան երկրաչափության հինգերորդ պոստու-

լատի ապացուցման ուղղությամբ 19-րդ դարում Լոբաչևսկու և Ռիմանի հետազոտությունների արդյունքները: Այդ արդյունքների շնորհիվ ոչ թե հերքվեց կամ կասկածի տակ դրվեց բացարձակ ճշմարտություն համարվող նախկին դրույթները, այլ առավել ևս ճշգրտվեց էվկլիդյան երկրաչափության աքսիոմաների ու պոստուլատների գործողության ոլորտը, ընդարձակվեց մեր պատկերացումների շրջանակը: Ճանաչողության ընթացքը հարաբերական և բացարձակ ճշմարտությունների բացահայտման անընդհատ շարժում է: Այդ ընթացքում ձևավորվում են գիտելիքներ, որոնց բովանդակությունը հետագայում ենթակա չէ ճշգրտման, փոփոխման, հերքման: Օրինակ, անձնավորության ծննդյան և մահվան տարեթվերի, պետությունների միջև նախկինում տված ճակատամարտերի և այլնի մասին տեղեկությունները: Սակայն ձևավորվում են նաև գիտելիքներ, որոնց բովանդակությունը ենթակա է հետագա ճշգրտման և խորացման: Ճշմարտության հարաբերականությունը և բացարձակությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ իմացությունը անընդհատ խորացող և ընդլայնվող գործընթաց է, այլև նրանով, որ անընդհատ փոփոխվում է նաև մեր իմացության օբյեկտը՝ իրականության ողջ բազմազանությունը: Հետազոտության ընթացքում ճշմարտության բացարձակության գերագնահատումը և հարաբերականության թերագնահատումը հանգեցնում է դոգմատիզմի, իսկ հարաբերականության գերագնահատումը և բացարձակության թերագնահատումը՝ ռելյատիվիզմի: Հետևաբար, ճշմարտությունը չի կարելի դիտել տեղից, ժամանակից, իրավիճակից կտրված: Այն միշտ կոնկրետ է:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿՈՆԿՐԵՏՈՒԹՅԱՆ տակ իմաստավորվում է այն հանգամանքը, որ գիտելիքը որոշակի ժամանակահատվածում, որոշակի պայմաններում և պատճառահետևանքային կապերի մեջ գտնվող որոշակի օբյեկտի մասին է: Ողջ իրականությունը անընդհատ փոփոխվող գործընթաց է: Հետևապես ճշմարտությունն էլ պետք է դիտել որպես գործընթաց, օբյեկտների գոյավիճակների կոնկրետ կողմերի ու հատկությունների հետազոտություն: Այսինքն, գիտելիքի կամ դրույթի ճշմարտացիությունը որոշելիս պետք է նկատի ունենալ տեղը, իրավիճակը և ժամանակը: Վերը բերված օրինակում Լոբաչևսկու և Ռիմանի երկրաչափության դրույթներն ու պոստուլատները անհամեմատելի են զրոյական կորության համակարգում և դրանց ճշմարտացիության կամ կեղծության հարցի դրումը երկրի կոորդինատական համակարգում պարզապես անիմաստ է: Այդ համակարգում գործում են միայն էվկլիդյան երկրաչափության դրույթներն ու պոստուլատները,

իսկ բացասական և դրական կորություն ունեցող տիեզերական օբյեկտների համակարգերում կգործեն Ռիմանի և Լոբաչևսկու երկրաչափության դրույթներն ու պոստուլատները: Ճշմարտության կոնկրետության հարցադրումը տեղի և ժամանակի տեսանկյունից առավել ևս կարևորվում է հասարակական կյանքի դեպքերի ու իրադարձությունների ուսումնասիրման ժամանակ: Անտիկ աշխարհի իրադարձությունները չի կարելի քննարկել, առավել ևս իմաստավորել մեր ժամանակաշրջանի հասարակական նորմերի ու հարաբերությունների բովանդակության չափանիշներով:

3. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆ, ԿԵՂԾԻՔ

Ճշմարտությունը մարդու գիտակցության մեջ օբյեկտիվ իրականության հավաստի արտացոլման շնորհիվ ձևավորված անժխտելի գիտելիք է: Զգայական կոնկրետ և հասկացութային պատկերացումների բովանդակության համապատասխանությունը օբյեկտին: Բանականության մեջ ձևավորված մտքերի բովանդակության համապատասխանությունը այդ մտքերի իրական օբյեկտների ռեալ հատկություններին: Ճշմարտությունը այնպիսի տեղեկություն, գիտելիք է, որի բովանդակությունը բոլոր ժամանակներում կմնա հավաստի: Նախկին սերունդների տարաբնույթ ուսումնասիրությունների, հետազոտությունների արդյունքները ժամանակի ընթացքում կոնկրետանալով, հղկվելով, հիմնավորվելով, ճշգրտվելով, ստուգվելով ամբողջանում է որպես համապատասխան օբյեկտների, երևույթների, գործընթացների վերաբերյալ հավաստի գիտելիքների համակարգ: Այդպիսի գիտելիքները միշտ և ամենուր կդիտվեն որպես ճշմարտություն: Ճշմարտությունը, մարդու բանականության թռիչքի արդյունքն է մարմնավորված գիտելիքների տեսքով: Հենց այդ թռիչքի շնորհիվ է մարդը դարձել բնության տիրակալ: Հեգելի պատկերավոր արտահայտությամբ՝ «եթե մարդու հոգին առողջ է, ճշմարտություն բառի հնչման ժամանակ նրա կուրծքը պետք է բաբախի»:

Բոլոր բնագավառների գիտական հետազոտության արդյունքների ամփոփումը և ընդհանրացումը դրսևորվում է որպես հավաստի գիտելիք: Սակայն ուսումնասիրության, հետազոտության ընթացքում մտածողը կարող է նաև շեղվել ճիշտ ուղուց, մոլորվել և թվացողը իրականի տեղ ընդունել:

Մոլորությունը բարեխիղճ սխալն է: Իմացության ընթացքում ոչ մի-

տումնավոր շեղումները, որոնք ի հայտ են գալիս մարդու ճանաչողական ընդունակությունների սահմանափակության հետևանքով: Հեգելը ողջ զարգացումը դիտելով որպես բացարձակ գաղափարի եռաստիճան փոփոխության ընթացք և՝ ճշմարտությունը, և՝ մոլորությունը համարում է ոգու հատկություններ, գիտակցության ձևեր: Նա մոլորությունը ոչ թե հակադրում է ճշմարտությանը, այլ դիտում է որպես դեպի ճշմարտություն գիտության շարժման դրսևորման ձևերից մեկը: Հայդեգերի համոզմամբ մարդը միանգամից չի շեղվում ճիշտ ուղուց: Մոլորությունը «... ծգվում է մարդու կողքին որպես փոս, որի մեջ նա երբեմն ընկնում է»: Այսինքն, մոլորությունը հետազոտության շրջադարձի այն տարածքն է, որում ուսումնասիրողը կարող է կորցնել իրեն: Եթե սխալը դրսևորվում է չտեսնելուց, կարևոր վճիռներում բացթողումներ կատարելուց, ապա մոլորությունը իշխում է մարդու վրա և կարող է նրան շեղել ճիշտ ուղուց:

Գիտական հետազոտությունը բարդ, հակասական, ճշմարտությունների, մոլորությունների, սխալների ամբողջական ու շարունակական գործընթաց է: Այդ գործընթացում հետազոտողի ուսումնասիրությունները սահմանափակվում են տվյալ դարաշրջանի գիտական մտքի շրջանակներում: Երբեմն բարդ հիմնախնդիրների լուծումը հնարավոր չի լինում իրականացնել պարզապես պատմական սահմանափակության պատճառով: Այդ սահմանափակությունների ոլորտում մոլորությունը իր ուրույն տեղն ունի: Հնդկական առածում միտվում է, որ «եթե բոլոր մոլորությունների դեմ ամուր փակվեին դռները, ապա մարդկանց գիտակցության մեջ երբեք չէր կարող մտնել նաև ճշմարտությունը»: Հետևաբար, մոլորությունը ոչ թե պատրանք է, այլ ուսումնասիրվող օբյեկտի խորությամբ չբացահայտվող հատկությունների վերաբերյալ որոշակի մտորումների, խորհրդածությունների արդյունք: 1924 թվականին հանճարեղ գիտնական Լորենցն ափսոսանք էր հայտնում, որ ինքը չի մահացել «հինգ տարի առաջ, երբ դեռ չէր նկատվել ատոմի քվանտային և էլեկտրոնային տեսությունների հակասականությունը»: Չնայած մոլորությունը ուղեկցում է մարդուն նրա բազմաբնույթ ու բազմաբովանդակ գործունեության ընթացքում, այնուամենայնիվ գիտական հավատի փոքր ինչ սասանման դեպքում հետազոտողը կարող է և հիասթափություն ապրել:

Կեղծիքը նախապես անճիշտ պատկերացումների կանխամտածված առաջադրումն ու դրա հավաստիության պնդումն է: Դա կարող է կատարվել տարբեր նպատակամղումներով (շահադիտական, կուսակ-

ցական սկզբունքներից դրդված, սեփական վարկանիշը բարձրացնելու և այլ միտումներով): Բերդյաևի պատկերավոր արտահայտությամբ՝ «կա սոցիալականորեն օգտակար կեղծիք, որն էլ կառավարում է աշխարհը»:

Կեղծիքը իրերի իսկական վիճակի աղավաղումն է: Դեռևս Արիստոտելն է նկատել, որ կեղծիքն այն է, ինչը հակասության մեջ է գտնվում իրականության հետ: Նրա կարծիքով, եթե մարդն իր արտահայտություններում իրականության մեջ բաժանվածը փորձում է ցույց տալ միացած, իսկ միացածը՝ բաժանված, դիմում է կեղծիքի:

Մոլորությունը և կեղծիքը դրսևորվում են տարբեր հիմքերի վրա: Մոլորությունը ի հայտ է գալիս օրինաչափորեն, քանզի աշխարհի բազմազանությունը անսահման է, իսկ ամեն մի սերնդի ճանաչողական հնարավորությունները սահմանափակվում են տվյալ դարաշրջանի գիտության զարգացման աստիճանով: Ուրեմն միշտ էլ չիմացվածը ավելի շատ կլինի, քան իմացվածը: Իմացվածով չիմացվածի վերաբերյալ պատկերացումներ կազմելիս կարող է դրսևորվել և ոչ ճիշտ պատկերացում, որը ի հայտ կգա որպես մոլորություն: Իսկ կեղծիքի դրսևորումը զարգացման աստիճանի հետ բացարձակապես կապ չունի: Այն կարող է դրսևորվել նաև փաստերի միտումնավոր խեղաթյուրման միջոցով: Կեղծիքի դեպքում գիտական զարգացվածությունը պարզապես կարող է նպաստել խեղաթյուրումների նուրբ ձևերի, հնարամտությունների մշակմանը:

4. ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇԻ տակ ըմբռնվում է գիտելիքի, դրույթի, տեսության, վարկածի կեղծության կամ ճշմարտության ստուգման միջոցը: Այդ ստուգումները կարող են իրականանալ փորձարկմամբ, տրամաբանական դրույթներով հիմնավորմամբ, հավաստի գիտելիքներով ճշգրտմամբ և այլն: Որպես ճշմարտության ստուգման հավաստի միջոցներ մարդը միշտ օգտագործել է իր և սերունդների կենսաապրոնքը, նյութական արտադրական գործունեության կազմակերպման և իրականացման պահանջներից բխող հմտություններն ու եզրահանգումները: Կյանքի անմիջական պահանջներից բխող այդ ստուգումները հաճախ եղել են տարերային, չիմաստավորված, բայց խոր արմատներ են ունեցել սերունդների կենսագործունեության մեջ: Ճշմարտության չափանիշի դեր կարող են ծառայել պատմական փորձի և կենսափորձի լայն ընդգրկում ունեցող գիտական տեսությունների

դրույթները, սերունդների աշխատանքային գործունեության արդյունքներն ամփոփող պրակտիկան:

Անտիկ դարաշրջանում հույն իմաստունները գիտելիքի հավաստիության ստուգման չափանիշ էին համապատում զգայությունները և զգայական փորձը: Նման համոզմունքներ զարգացրել են նաև XVII-XVIII դարերի մտածողներ Ֆ.Բեկոնը, Ջ.Լոկը, Հելվեցիուսը, Ֆոյերբախը և այլոք: Այդ դարաշրջանում գիտելիքի հավաստիության չափանիշ է դիտվել նաև ինքնաակնհայտությունը: Հիմնավորվում էր, որ ճշմարիտ են համարվում այն դրույթները, որոնք ակնհայտորեն այդպիսին են թվում: Սակայն երբեմն ակնհայտն էլ կարող է բովանդակային տարբեր հիմնավորումներ ստանալ: Օրինակ, Լոբաչևսկու և Ռիմանի երկրաչափության սկզբունքներն ու դրույթները կառուցված են էվկլիդյան երկրաչափության հինգերորդ պոստուլատի ակնհայտ ճշմարտացիության կասկածանքի վրա:

XIX-XX դարերում ճշմարտության ստուգման կարևոր չափանիշ է դիտվել նաև Պրակտիկան: Պրակտիկան ընդունվել է որպես բնական գործընթացների շարունակություն, որն իրենում կարող է ընդգրկել այնպիսի հմտություններ, որոնք ոչ միայն ուսումնասիրությունների արդյունքները ստուգելու, այլև նոր գիտելիքների բխեցման հիմք կարող են հանդիսանալ:

Գիտելիքի հավաստիության ստուգման կարևոր չափանիշ է դիտվում արդեն հիմնավորված, ճշգրտված, ապացուցված գիտական տեսությունը: Այդպիսի տեսության դրույթները հավաստի և անկասկածելի ճշմարտություններ են: Այդ պատճառով էլ դրանք ոչ միայն նոր արդյունքների հավաստիության ստուգման կարևոր չափանիշ կարող են լինել, այլև դրանցից՝ տրամաբանական հիմնավորումներով կարելի է բխեցնել նոր գիտելիքներ ու դրույթներ:

Պրագմատիզմը ճշմարտության չափանիշ է դիտում՝ օգտակարությունը, իսկ հոգևորականությունը ճշմարտության չափանիշ է դիտում կրոնական դոգմաները, սուրբ գրքերի բովանդակային սկզբունքները, աստվածաշունչը:

ԳԼՈՒԽ IX

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՍԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՄԱՐԴՈՒ ԲՆՈՒՅԹԸ

Տիեզերական անհուն տարածքում մարդը կանգնած է երկու անդունդի՝ անսահմանության և ոչնչի միջև: Նա զերհզոր և միաժամանակ անկարող ոչնչություն է այդ անհունում: Սակայն այդ առեծվածային էակն ունի զարմանահրաշ հատկություն՝ մտածելու, ճանաչելու ունակություն և ինքնագիտակցություն: Երկիր մոլորակի վրա մարդը միակ կենդանին է բաց ծրագրով: Գազանների միջավայրում ծնվելիս կդառնա գազան, մարդկանց միջավայրում՝ բանական էակ: Այդ հատկությունը նրա մոտ կարող է զարգանալ ու դրսևորվել միայն համապատասխան հասարակական միջավայրում:

Մարդը նշաններ ստեղծող և դրանցով առաջնորդվող կենդանի է: Նա միակ արարածն է եղել, որ որսից առաջ պարտադիր կատարել է որոշակի ծիսակատարություններ:

Բարձրակարգ մյուս կենդանիներից մարդը տարբերվում է նաև իր անելիքը նախապես ծրագրելու և այն ի կատար ածելու հմտությամբ: Նա ունի երկու կյանք: Մեկը սովորական ապրելակերպն է, որով նմանվում է իր նմաններին և կատարում է համապատասխան գործողություններ՝ սովորում, ամուսնանում, աշխատում և իրեն փոխարինող է պատրաստում: Երկրորդը առանձին պահերի և օրերի այն ընթացքն է, երբ նա ստեղծագործում է, հուզվում, սիրում ու տառապում: Դա անբացատրելի ու խորհրդավոր գործընթաց է:

Մարդը անսահմանին, կատարյալին ձգտող, բայց դրանց չհասնող էակ է: Իհարկե, որոշ անհատներ հասնում են առաքինության, բարության, կատարյալի, վեհի ըմբռնմանը: Դրանք փիլիսոփաներն են, հանճարները, արվեստագետները, գիտնականները: Իսկ մարդկանց հիմնական մասը պարզապես գոյատևում է մինչև իր վախճանը: Նրանց հոգում երբեմն առկայծում է սիրելու, ստեղծագործելու, ապրելու հմայքը, հաճույքը, կիրքը: Սակայն այդպիսի ապրումները նրանց համար կարող են լինել լոկ ակնթարթներ, կամ պահեր, օրեր: Միայն հազվագյուտ երջանիկներին է հաջողվում զմայլելի, էքստազային իրավիճակում գտնվել ամիսների, առավել ևս տարիների ընթացքում: Մարդու

ապրած տարիները միշտ էլ չի բավականացնում հասկանալու իր էությունը, կյանքի իմաստը: Մեծամասնությունն անգամ չեն գտնում իրենց սեփական ուղին: Նրանք լոկ կրկնում են ուրիշների արածը և քայլում են մյուսների անցած ճանապարհով: Միայն քչերին է հաջողվում կյանքում գտնել իր արահետը և հանճարեղ Սահյանի բնորոշմամբ հասնել «լեռան գագաթին»:

Մարդիկ ապրում են համատեղ՝ իրենց ազգի, ժողովրդի մշակույթի և քաղաքական համակարգի ոլորտում, բայց բոլորն էլ տարբերվում են միմյանցից: Անգամ ընտանիքում են երեխաները տարբերվում իրարից: Դա պայմանավորված է գենոտիպում ամրակայված խառնվածքով, բնավորության գծերով, ընկալունակությամբ, հոգեկան կերտվածքով: Մարդու վրա ուրույն ազդեցություն է թողնում մանկության փորձը: Մայրական սիրո, գուրգուրանք զգացած և դրանից զրկված անձանց վստահությունը, հմտությունը, ցանկացածին ձգտելու և դրան հասնելու համոզվածությունը նույնը չեն կարող լինել:

Ամեն մարդ ունի մի քանի դեմք: Նա իր ընտանիքում, ուրիշների միջավայրում, պաշտոնական անձանց հետ շփվելիս միատեսակ վարքագիծ չի դրսևորի: 3-4 տարեկան հասակում երեխայի մոտ ձևավորվում է սեփական եսի ըմբռնում, որը բոլոր իրավիճակներում միատեսակ չի դրսևորվում: Ընտանիքում, հասարակական միջավայրում, կրթական, մշակույթի օջախներում երևում է նրա եսի այսբերգի միայն գագաթը, իսկ ձգտումների, ցանկությունների, երազանքների աշխարհը խորասուզված է նրա հոգու օվկիանում: Արվեստագետների ստեղծագործությունները երևի հենց այդ խորքերի մասնակի լուսավորումն է: Մարդը զարմանալի էակ է: Նա կարող է թափանցել բնության գաղտնիքների խորքը, բայց չի կարող պարզել, թե քիչ հետո ինչպիսի՞ ապրումներ կունենա:

Մարդու հոգեկանի դասակարգման առաջին հաջողված փորձը կատարել է Կ.Գալենը: Նա առանձնացրել է մարդու խոլերիկ, սանգվինիկ, ֆլեգմատիկ, մելանխոլիկ խառնվածքները:

Խոլերիկը ներվային, շուտ բռնկվող, ամեն ինչի նկատմամբ սուր ապրումներ դրսևորող մարդն է: Մելանխոլիկը միշտ տխուր է, մռայլ: Նրան թվում է, թե բոլորն իր նկատմամբ անարդարացի են վարվում: Ֆլեգմատիկն ինքնամփոփ է, իր շրջապատի նկատմամբ անտարբեր: Սանգվինիկը հոգեպես հավասարակշռված անձ է: Նրա մոտ թախիծը և ուրախությունը գրեթե հավասարակշռված են:

Պավլովը մարդկանց բաժանում էր գիտնականների և գեղագետ-

ների: Գիտնականը ինքնամփոփ է, չշփվող, դժվար է ծանոթություն հաստատում: Գեղագետը կենսախինդ, շփվող, զգացմունքային, ընկերասեր անձ է:

Յունգը բոլոր մարդկանց բաժանում է երկու խմբերի՝ էքստրավերտների և ինտրովերտների: Էքստրավերտը շուտ է հարմարվում շրջապատին, ոչնչից չի վախենում, միայնակություն չի սիրում, ընկերասեր է, գաղտնապահ, նվիրվում է շրջապատին: Ինտրովերտը մտազբաղ է, ամոթխած, մռայլ, մենակյաց, սիրում է մտածել և ամեն ինչ անել ինքնուրույն:

Պարզաբանված խառնվածքները մարդու բնույթի, հոգեկան ներքնաշխարհի լաբիրինթոսի լոկ մի անկյունը լուսավորող փորձ է, քանզի ինչպես կասեր Օգոստինոս Երանելին «Մարդը մեծագույն գաղտնիք է: Նա չգիտե, թե իր մեջ հրեշավորն է շատ, թե աստվածայինը»: Մարդը զմայլվում է աստղերի փայլով, ծովի ալեկոծությամբ, ծաղկի գեղեցկությամբ՝ բոլորովին չզարմանալով, թե ինչու են դրանք այդպես: Սակայն առավել զարմանալին այն է, որ նա չգիտե, թե ով է ինքը, որտեղից է եկել և ինչ է անում իրեն ծնող ու սնող բնության հետ: Այսպիսով, ընդհանրացնելով ասվածը կարելի է բնորոշել, որ մարդը կատարյալի և անկատարի, գեղեցիկի և տգեղի, բարու և չարի հակադրամիասնություն կազմող, գիտակցությամբ և ինքնագիտակցությամբ օժտված բանական էակ է:

2. ՄԱՐԴՈՒ ԿԵՐՊԱՐԸ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մարդու բնույթի, էության, կեցության և գոյության իմաստային վերլուծությունները տեղ են գտել բոլոր ժողովուրդների առասպելներում, փիլիսոփայական բնույթի ստեղծագործություններում: Հին հընդկական վեդաներում, հատկապես ուպանիշադաներում մարդը դիտվում է որպես համաշխարհային հոգու՝ բրահմանի մաս: Հիմնավորվում է, որ մարդու անհատական հոգին (աթմանը), ենթարկվելով կարմայի օրենքին, գտնվում է վերաբնակեցման տարբեր դրսևորումների մեջ: Հին հնդիկները հավատում էին, որ բույսերը, կենդանիները, մարդը օժտված են հոգով: Սանսարայի (կյանքի շրջապտույտի տեսության) օրինաչափությամբ մարդու հոգին ընդգրկված է անընդհատ վերածննդի գործընթացում: Ծնված յուրաքանչյուր մարդ իր վարքագծով նախասահմանում է հաջորդի ծնունդը: Եթե մարդն իր կյանքում դրսևորում է արատավոր, սանձարձակ կյանք, մահվանից հետո նրա հոգին

(աթմանը) կզետեղվի ավելի ցածրակարգ կենդանիների մեջ: Իսկ եթե կատարել է բարի գործեր, դրսևորել է առաքինի վարքագիծ, մահվանից հետո նրա հոգին կզետեղվի ավելի բարձր դասի պատկանող անձի մարմնում: Միայն նման առաքինությունների և կատարելությունների շրջապտույտով մարդու հոգին ի վերջո կարող է հասնել նիրվանայի [հավերժական հանգստի, երանության վիճակի]: Նման համոզմունքները մարդու բնույթի, վարքագծի կատարելագործման կարևոր ազդակներ են հանդիսացել:

Հին չինական փիլիսոփայության մեջ մարդու էության կարևոր հատկանիշ էր դիտվում ծնողների, ավագների նկատմամբ հարգանքի դրսևորումը, իր նմանի հետ արժանավայել վարվելու անհրաժեշտությունը, որը Կոնֆուցիոսն ընդհանրացնում է «Մի անի մարդկանց այն, ինչ չես ցանկանում քեզ» սկզբունքով:

Անտիկ Հունաստանի փիլիսոփաներից մարդու բնույթի խնդիրը խորությամբ քննարկման նյութ է դարձրել Սոկրատեսը: Ուշադրությունը բևեռելով մարդու ներաշխարհի, բարոյականային հատկությունների ուսումնասիրության վրա Սոկրատեսը հիմնավորում է, որ «առաքինությունը գիտելիք է»: Մարդը միայն բարոյական կատարելությամբ կարող է հատու լինել ճշմարտությանը:

Մարդու բնույթի և էության պարզաբանումներում մ.թ.ա. IV դարում կարևոր ներդրում կատարեցին սոփեստները: Նրանք, «Մարդը բոլոր իրերի չափանիշն է» սկզբունքի առաջադրումով մարդուն դարձրեցին գլխավոր գործող անձ: Խորությամբ տիրապետելով փիլիսոփայական գիտելիքներին մարդը կարող է հասնել բանական այնպիսի կատարելության, որ ի զորու կլինի հիմնավորելու իր իրավացիությունը բոլոր իրավիճակներում:

Հոգու և մարմնի հակադրամիասնության ընդգծումով Պլատոնը ընդհուպ մոտեցավ մարդու էության հավիտենական ողբերգության հիմնախնդրին: Մարդու մարմինը համարելով անկատար նյութականի ժամանակավոր ու անցողիկ գոյակցություն, Պլատոնը հիմնավորում է, որ այդ անկատար նյութականը միայն աննյութական հոգու միջոցով կարող է հասնել կատարելության: Մտքով և բանականությամբ օժտված այդպիսի կատարելությունը Արիստոտելի համոզմամբ էականորեն տարբերվում է կենդանական աշխարհի մյուս էակներից և դառնում է քաղաքական կենդանի:

Միջնադարյան կրոնաաստվածաբանական փիլիսոփայությունը մարդուն դիտում էր որպես անկատար, մեղսունակ, ողորմելի արարած,

որն իր ողջ կյանքում պետք է ապաշխարի և թողություն խնդրի գերագույն արարչից՝ մահվանից հետո դրախտ ընկնելու և աստծո հաճությանը արժանանալու համար: Իսկ մինչ այդ որպես անկատար մարմնի և կատարյալ հոգու հակադրամիասնություն, մարդը պետք է մաքրագործվելով ձգտի կատարելության: Օգոստինոս Երանելու համոզմամբ մարդը հոգու շնորհիվ աշխարհիկ կյանքում կարող է հասնել բարոյական կատարելության:

XV-XVI դարերի հումանիզմը աստվածայինը զուգակցելով աշխարհիկի հետ, աստվածային նախախնամությունը փոխարինեց կամքի ազատության հարցադրումով: Կամքի ազատությամբ օժտված մարդը դառնում է իր երջանկության կերտողը: Այս դարաշրջանում Միրանդոլան, Կուզանացին մարդու բնույթում ընդգծում են ստեղծագործելու կարողությունը, ազատատենչությունը, բնության հետ ներդաշնակ լինելու ձգտումը: Մարդը դիտվում է գեղեցիկին ձգտող և բարությամբ տոգորված էակ: Նա երազում է իր նմանների հետ վարվել արդարության և հավասարության սկզբունքով: Սակայն մասնավոր սեփականատիրական հարաբերությունների ձևավորման և ներդրման գործընթացը առաջին պլան մղեց անձնական շահը: Իսկ հարստանալու մոլուցքը նպաստեց անհատապաշտական հոգեբանության ձևավորմանը:

Մարդու բնույթի և էության յուրովի մեկնաբանություն է դրսևորում XVII դարի ֆրանսիացի մտածող Բլեզ Պասկալը: Սկսելով մարդու ճանաչողական ունակությունների վերլուծությունից, նա հիմնավորում է, որ մարդը ճանաչում է ոչ միայն բանականության, այլև սրտի միջոցով: Ճշմարտությունը ձեռք է բերվում մտքով, սրտով և զգացմունքներով, քանզի իմացությունը միշտ շահախնդիր է և ուղեկցվում է համոզելու, ապացուցելու գործոնով: Պասկալի բնորոշմամբ մարդը հավատի և գիտելիքի, հոգու և մարմնի, բանականության և զգայության հակադրամիասնություն է: Այդպիսի առեծվածային էակը՝ որպես բանական էակ մեծություն է, սակայն հենց ինտելեկտուալ ունակության շնորհիվ էլ նա ըմբռնում է իր ոչնչությունը տիեզերքի համեմատ և այլանդակությունը իր նմանի հետ հարաբերություններում: Ողբերգական այդ իրավիճակներից ելքի փնտրումը հանգեցնում է աստծուն ապավինելուն:

Մարդու բնույթի և էության անհատապաշտական վարքագծի դասական հիմնավորում հանդիսացավ Հոբսի «Մարդը մարդուն գայլ է» արտահայտությունը: Հարստանալու մոլուցքով տարված մարդկանց վարքագիծը Հոբսը բնորոշում է որպես «բոլորի պատերազմ բոլորի

դեմ»: Հոբսի կարծիքով բնական վիճակում մարդիկ ձգտում են հոգ տանել յուրաքանչյուրը իր գոյության անվտանգության մասին: Նման իրավիճակում «Մարդը մարդուն գայլ է», քանզի յուրաքանչյուրը գործում է իր օգուտի տեսանկյունից: Սակայն եղան նաև մտածողներ, որոնք փորձեցին հակառակվել այդ սկզբունքին: Այդ մտածողներից էր Դեկարտը: Նա փորձում է մարդու բնությում շեշտադրել ոչ թե գայլայինը, այլ բանականը: Դեկարտը մարդու էությունը փնտրում է նրա մտածողության մեջ: Կասկածանքը դիտելով որպես ճշմարտության հասնելու միակ ուղի, նա ձևակերպեց մարդու էության «Մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ» սկզբունքը: Մտածողությունը համարելով մարդու գոյության երաշխիք, Դեկարտը մարդուն դիտում է որպես մտածող, կասկածող, բանական էակ:

XVIII դարում Կանտը մարդուն դիտելով որպես չարի և բարու միասնություն, հարցալուծումը փորձում է նպատակաուղղել բարոյականի հաղթանակին: Նրա համոզմամբ բարոյական դաստիարակության միջոցով մարդը կարող է հաղթել չարին: Դա կարող է իրականանալ «կատեգորիկ իմպերատիվի» [անպայմանական պահանջի] միջոցով: Մարդն իր վարքագծով չպետք է շեղվի հանրության կողմից ընդունված նորմերից:

Մարդու էության կարևոր հատկանիշ դարձնելով մտածողությունն ու բանականությունը Հեգելը հիմնավորում է, որ մարդը համաշխարհային ոգու կրողն է: Մարդու անհատականությունը դրսևորվում է քաղաքացիական հասարակության լիարժեք անդամ դառնալու մեջ:

XIX դարում Մարքսը և Էնգելսը զգալիորեն ընդարձակելով մարդու բնույթի ըմբռնման շրջանակները, նրան դիտում են որպես համաշխարհային պատմական գործընթացի և՛ սուբյեկտ, և՛ օբյեկտ: Մարքսիզմի գաղափարախոսության մեջ մարդը դառնում է համաշխարհային պատմության գործընթացի կերտողը և դրա արդյունքը: Այստեղ մարդու էությունը դիտարկվում է նրա կեցության մեջ: Մարդը դիտվում է որպես հասարակական միջավայրի արդյունք, նյութական և հոգևոր արտադրության իրականացնող անձ:

XX դարում էկզիստենցիալիզմը տարանջատեց մարդու հասարակական էությունը նրա ռեալ գոյությունից: Սարտրի կարծիքով մարդու էությունը շարունակական գործընթաց է, իսկ գոյությունը՝ վերջավոր: Միայն այդ վերջավորին հասնելիս է մարդը գիտակցում իր էությունը:

Մարդու բնույթի և էության հիմնախնդրի լուծման հարցում զգալի ներդրում է կատարել Զ. Ֆրոյդը: Նրա համոզմամբ մարդու բնույթը

պայմանավորված է էրոսի (սիրո) և թանատոսի (մահվան) անհաշտ պայքարով: Դա գիտակցականի և անգիտակցականի, կյանքի և մահվան բնազդների հակադրամիասնության դրսևորում է: Այստեղ կենսաբանականը (անգիտակցականը) գերիշխում է հասարակականի (գիտակցականի) վրա: Ֆրոյդի կարծիքով մարդուն կառավարում են նևրոտիկ-հոգեկան մղումները:

է. Ֆրոմի համոզմամբ մարդու բնույթը երկակի է: Որպես կենսաբանական էակ մարդը բնության անբաժան մասն է և ենթարկվում է նրա օրենքներին: Իսկ որպես բանականությամբ օժտված հասարակական էակ, նա ղեկավարվում է իր գիտակցությամբ: Սակայն Ֆրոմը այդ գիտակցությունը միշտ առաջնորդող չի դիտում:

Այսպիսով, հազարամյակների ընթացքում իմաստունները մարդու բնույթի և էության պարզաբանումների հարցում այդպես էլ ընդհանուր եզրահանգման չհանգեցին, քանզի մարդը առեծվածային էակ է:

3. ՄԱՐԴԸ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆԻ, ՀՈԳԵԿԱՆԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆԻ ԱՄԲՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Կենդանական աշխարհի մյուս տեսակների հետ մարդը ևս բնության արգասիքն է: Նա ձևավորվել և զարգացել է բնական միջավայրում, սակայն միակ արարածն է որ օժտված է մտածելու ունակությամբ, զգում, ճանաչում և իմաստավորում է ինքն իրեն և շրջակա միջավայրը: Իր էությամբ մարդը բնական և հոգևոր կեցությունների միասնություն է: Կենսաբանականի և հասարակականի միասնություն: Այսինքը երկակի բնույթ ունի: Մի կողմից նա բնական, կենսական, բնազդներով օժտված օրգանիզմ է, մյուս կողմից՝ մտածող գործող հասարակական էակ: Այս տեսակետից մարդուն բնորոշ են կենդանական աշխարհի մյուս տեսակների բոլոր հատկությունները: Նրա մարմնական կառուցվածքը, օրգանիզմի ֆիզիոլոգիական գործընթացները, տեսակի պահպանման և բազմացման կենսաբանական օրինաչափությունների արտահայտություն է: Սակայն մարդը նաև հասարակական էակ է:

XX դարում գերմանացի մտածողներ Մաքս Շելերը, Հելմուտ Պլեսները, Ա. Գելենը ընդհանրացնելով մարդու մասին բնագիտական, կրոնական և փիլիսոփայական գիտելիքները, մարդու բնույթում առանձնացրեցին կենդանականը և ոգեղենը: Շելերի բնորոշմամբ մարդը կենդանուց տարբերվում է միայն իր կենսաբանական միջավայրը փոխելու հատկությամբ, որը կյանքի ուղու սխալ ընթացքի արդյունք է: Նրա կարծիքով շրջակա միջավայրի փոփոխման ընթացքում զարգա-

ցող բանականությունը լոկ կենդանական բնազդի փոխարինիչ է: Մարդու բանականությունը դիտվում է որպես անլիարժեք բնազդի փոխարինիչ, իսկ աշխատանքի գործիքը՝ չզարգացող օրգանի հավելուկ: Սակայն, Շելերն ընդունում է նաև, որ մարդուն մարդ դարձնողը արտակենսական ոգին է: Դրանով է պայմանավորված մարդու անհատականությունը, բարձրագույն հոգևոր արժեքներ ստեղծելու ունակությունը:

Ա. Գելենը մերժելով ոգու արտակենսականության շելերյան գաղափարը, հիմնավորում էր, որ մարդու ոգեղենությունը դրսևորվել է կենսաբանական զարգացման գործընթացում: Այդ ընթացքում կենդանին մնացել է կապված իր կենսաշխարհի հետ, իսկ մարդը փոփոխել է իր միջավայրը:

Է. Ռուտհակերի, Մ. Լանդմանի կարծիքով մարդը կենսաբանական և հոգևոր հատկությունների միասնություն է: Մարդը կենդանուց տարբերվում է ոգու շնորհիվ: Ոգու օժտվածությամբ մարդը տարբերվում է կենսաբանական բոլոր տեսակներից և հանդես է գալիս որպես կատարյալ, անկրկնելի էակ: Ֆիխտեի կարծիքով, քանի դեռ մարդը գտնվում է իր բնազդների, կրքերի, բնական և կենսաբանական տարբեր բնույթի ձգտումների իշխանության տակ չի կարող ազատ լինել: Ազատ լինելու համար մարդը պետք է կամքով իշխի իր զգայական հակումների վրա: Հետևաբար, բոլորի ազատությունը ապահովելու համար մարդկային հարաբերությունները պետք է կարգավորվեն ոչ միայն բարոյական, այլև իրավական օրենքներով:

Շոպենհաուերի կարծիքով, մարդկանց կյանքը դժբախտությունների, տառապանքների, մոլորությունների գործընթաց է: Մարդը երբեք չի բավարարվում ձեռք բերածով, քանզի նա անսահման ցանկությունների, կարիքների, պահանջների ամբողջություն է: Եվ քանի որ մարդու ցանկությունները բավարարվում է տանջանքների, չարչարանքների գնով, ցանկության բավարարումը ծնում է նոր ցանկություններ, հետևաբար նա չի կարող ունենալ վերջնական նպատակ: Մարդը տառապանքներից կարող է փրկվել միայն իր մեջ մեռցնելով կյանքը: Սյորեն Կիերկեգորի կարծիքով մարդը ձգտում է հագուրդ տալ իր ցանկություններին, սակայն հաճույքները միշտ կարճատև ու անցողիկ են: Նպատակադրվածին հասնելուց հետո կյանքը դառնում է անիմաստ:

Մարքսի համոզմամբ մարդու և հասարակության էությունը ըմբռնելու համար պետք է քննարկել արտադրական, տնտեսական հարաբերությունները, քանզի հասարակական կեցությունն է որոշում հասարակական գիտակցությունը:

Անձի ձևավորման ու զարգացման բարդ գործընթացում կարևորվում է նրա անատոմիական և ֆիզիոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված զգացմունքների դրսևորման ուժի, արագության և կայունության ամրապնդումը: Ծնողները, մանկավարժները այս գործում չափազանց մեծ նրբանկատություն և զգուշություն պետք է ցուցաբերեն, քանզի երեխաները հոգեկան կերտվածքով միատեսակ չեն: Նրանք միատեսակ չեն արձագանքում արտաքին ազդակներին: Աշխույժ, կենսախինդ, բարեհոգի սանգվինիկի, ինքնամփոփ, թախծոտ, մտազբաղ մելանխոլիկի, դյուրագրգիռ, կրքոտ, բորբոքվող խոլերիկի, զուսպ, համբերատար, ծանրաշարժ ֆլեգմատիկի նկատմամբ նույնաբնույթ մոտեցում ցուցաբերելը դժվար թե հաջողության երաշխիք լինի ուսումնադաստիարակչական գործում:

Ներվային բջիջների գրգռման և արգելակման գործընթացները բոլոր խառնվածքների մոտ նույն ձևով չեն դրսևորվում: Մելանխոլիկը դանդաղ է մտածում, շուտ է կորցնում վստահությունը իր ուժերի նկատմամբ, իսկ սանգվինիկը ուժեղ, հավասարակշռված բովանդակություն է ցուցաբերում: Կյանքում դիտվող անհարթությունները, անկազմակերպվածությունը, ընչաքաղցությունը, վհատամոլությունը այս խառնվածքների վրա միատեսակ ազդեցություն չեն թողնի, բայց խորը հետք կթողնեն նոր ձևավորվող անձի հոգեկանում: Դա մղվելով անգիտակցականի ոլորտը կարող է նրա ողջ կյանքում խթանիչ կամ արգելակիչ ազդակների դեր կատարել: Հետագայում նա դառնալով անվանի գիտնական, քաղաքական գործիչ կամ հաջողակ ձեռներեց, իր վարքագծով ու բնավորության գծերով կարող է դրական, կամ բացասական դեր խաղալ ծավալվող իրադարձությունների գործընթացում: Դժվար է չհամաձայնել Ֆ.Բաուդի այն պնդման հետ, որ «Ժողովրդի դժբախտությունների, աղքատացման, տանջանքների պատճառը պետք է փնտրել կառավարողների բնավորությունների արատավոր կողմերի մեջ»: Անձի անհատականությունը, հոգեկան կերտվածքը նրա ողջ կյանքի ուղեկիցները կլինեն: Սակայն դրանց դրսևորման ակտիվությունը, բնույթը, ուղղվածությունը կախված կլինի նաև այն միջավայրի արժեքներից, որում ձևավորվել ու դաստիարակվել է նա: Եթե անձի խառնվածքը, հոգեկան կերտվածքը պայմանավորված է նրա ներվային համակարգի տիպական առանձնահատկություններով և կայուն ու անփոփոխ է, ապա բնավորության գծերը ձևավորվում ու կայունանում են ընտանիքի, կրթական, մշակութային օջախների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներգործիչ ազդեցության ո-

լորտներում: Անձի վարվելակերպի, բնավորության գծերի ձևավորման վրա զգալի ազդեցություն կարող են թողնել ընտանիքի կենսամակարդակը, սոցիալական պատկանելիությունը, լրատվական միջոցները և այլ գործոններ:

Երեխայից հասարակության լիարժեք անդամ ձևավորելու համար առաջին հերթին հասարակության, պետության համապատասխան կառույցները ընտանիքի հետ համատեղ պետք է իրականացնեն երիտասարդ սերնդի ձևավորման ու դաստիարակության համընդգրկուն ծրագրեր: Երեխայի ընդունակությունները, օժտվածությունը բազմակողմանիորեն զարգացնելու համար առաջին հերթին պետք է լինի հասարակական պահանջմունք, քանզի պահանջմունքի բացակայության դեպքում անձի բնածին հատկությունները երբեք լիարժեք չեն դրսևորվի: Ազատ ձեռներեցության համար պետք է լինի ձեռներեցության դրսևորման ոլորտ և արդյունքների պահանջարկ, քանզի տաղանդը զարգանում է ոչ միայն սիրած գործով զբաղվելու, այլև դրա արդյունքները իրեն ու մարդկանց օգտակար դարձնելու շնորհիվ:

Մարդու մեջ կենսաբանականը արտահայտվում է գեներում, նրա օրգանիզմի ֆիզիոլոգիական, էլեկտրաքիմիական, ուղեղաներևային գործընթացներով: Ծնվելիս երեխան օժտված է կենսաբանական ժառանգականությամբ, որոշակի գենոտիպով: Դրանով էլ պայմանավորված է նրա հոգեկան կերտվածքը, բնավորության գծերը, զգացմունքայնությունը, հակումները: Այդ ունակությունները կյանքի կոչելու և ամրակայելու գործում չափազանց կարևորվում է անձի սոցիալականացման կազմակերպումը:

Մարդու սոցիալականացման գործընթացը սոցիակուլտուր արժեքների հետ շփվելու միջոցով հասարակության լիարժեք անդամ ձևավորելն է: Երեխան ձևավորվում, հասունանում և կյանքում զբաղեցնում է իր տեղը յուրացնելով իր նախորդների թողած բազմաբովանդակ ժառանգությունը: Անձը ձևավորվում է մարդկանց միջավայրում, անհատականություն է դառնում հասարակական միջավայրի տարաբնույթ ազդակների շնորհիվ:

Մարդու սոցիալականացման գործընթացն սկսվում է ընտանիքում: Ընտանիքն ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված մարդկանց փոքրագույն հասրույթ է, որի անդամները միմյանց հետ

կապված են զգացմունքայնության, բարոյական պատասխանատվության, կենցաղային ընդհանրության, փոխադարձ օգնության և այլ սկզբունքներով: Ընտանիքը հասարակական կյանքի վրա ներգործում է երեխաների ծնունդով, նրանց ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, հոգևոր դաստիարակության սկզբունքներով: Ծնողները և ընտանիքի մյուս անդամները իրենց ծագումով, հասարակության մեջ զբաղեցրած դիրքով, ապահովվածության աստիճանով ընդգրկվում են հասարակության որոշակի խավերի, դասերի մեջ: Նրանց շահերը, պահանջմունքները, քաղաքական համոզմունքները և կողմնորոշումները նշանակալի ազդեցություն կարող են թողնել այդ միջավայրում ձևավորվող երեխայի վարքագծի, հոգեկան կերտվածքի և բարոյականային սկզբունքների վրա: Միտը հիմնավորում է, որ մարդն այն սոցիալական ամբողջի արդյունքն է, որին նա պատկանում է: Երեխայի ձևավորման և հասունացման ընթացքում նրա վրա ազդում են ընտանիքը, հարազատներն ու բարեկամները, ընկերներն ու ծանոթները, դպրոցը, բուհը, աշխատանքային կոլեկտիվը, զանգվածային տեղեկատվության աղբյուրները, պետության բազմաբնույթ կառույցներն ու քաղաքական վարչակարգը: Կազմավորված մարդու բարոյականային հատկությունները, հոգեկան կերտվածքը, համոզմունքները, պատկերացումները, սկզբունքները, աշխարհայացքային դիրքորոշումները, քաղաքական կողմնորոշվածությունը ոչ միայն պայմանավորված են նրա կենսաբանական խառնվածքով, այլև սոցիալականացման արդյունք են և հասարակությունը պետք է պատասխանատվություն կրի իր ներսում ձևավորվող ու դրսևորվող չարիքների, դժբախտությունների, սոցիալական աղետների պատճառ հանդիսացող քաղաքական գործիչներ ձևավորելու և դրանց ասպարեզ տալու համար:

5. ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԱԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Ամեն մարդ իր անհատական կյանքը փորձում է կառուցել իր ըմբռնումների, նպատակների, ձգտումների տեսանկյունից: Սակայն դրանց իրականացումը նա պետք է համապատասխանեցնի իր նմաններին ձգտումներին ու նպատակներին: Այսինքն, անձնականը զուգակցի հասարակականի հետ և չհակառակվի ընդհանուրի շահերին: Դրա համար մարդը պետք է հանդես գա որպես բարոյա-քաղաքական նորմերով առաջնորդվող էակ: Ապրի և աշխատի այնպես, որպեսզի անձնական կյանքը իմաստավորվի հանրության գոյատևման, բազմացման և

բարգավաճման արժքներով: Երևի կյանքի իմաստը հենց սրանում է: Այսինքն երջանկանալ իր նմանների հետ, նպաստելով բոլորի երջանկությանը: Կյանքի իմաստը երևի կարելի է փնտրել նրանում, թե ինչով և ինչպես է մարդը նպաստում իր և հարազատների, մերձավորների, հանրության առօրյան իմաստալից դարձնելուն: Սակայն այս հանգամանքը կյանքի իմաստի վերջնական հարցադրումը չէ:

Կյանքի իմաստն ընբռնելու համար մարդ պետք է կարողանա ճանաչել առաջին հերթին ինքն իրեն, որը այնքան էլ հեշտ գործ չէ: Այդ խորհրդավորությունը ընբռնող Նիցշեն կասեր, որ «ինքն իրեն ճանաչողը սեփական դահիճ է»: Սեփական դահիճ չդառնալու համար մարդը որոնում է տարբեր զբաղմունքներ: Սիրած գործից գրկվելը ճակատագրական կարող է լինել մարդու համար: Աշխարհահռչակ գիտնական Գոլոդրիկը 1987 թվականին իր մառանում ինքնասպան եղավ՝ (գորբաչովյան վերակառուցման գործընթացի պատճառով, նրան թույլ չէին տվել շարունակել իր ղեկավարած գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի գործունեությունը), ներողություն խնդրելով իր հարազատներից, որ այդպես շարունակել ու ապրել չի կարող:

Մարդն իր էությամբ հասարակական էակ է և եթե նրա գործունեությունը ըստ արժանվույն չի գնահատվում մերձավորների, շրջապատի, հասարակության կողմից, նրա համար ապրելը կդառնա անիմաստ: Կյանքի իմաստը բազմակողմանիորեն արտահայտել են անտիկ իմաստունները, նշելով, որ մարդ դառնալու համար պետք է «տուն կառուցել, գիրք գրել, ծառ տնկել»: Իսկ հնդիկ իմաստունը շարունակել է. «ով գեթ մեկ ծառ է տնկել իր կյանքում, իզուր չի ապրել»: Իհարկե, կյանքի իմաստը դրանով չի բացահայտվում, բայց դա լուսավորում է նրա մութ խորշերից մեկը:

ԳԼՈՒԽ X

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

1. ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱ

Հերմենևտիկան որպես մեկնության արվեստ ձևավորվել է անտիկ դարաշրջանում: Հոսանքի անվանումը կապված է հունական դիցաբանության Հերմես աստծո անվան հետ: Դիցաբանական պատկերացումների համաձայն Հերմեսը համարվում էր Օլիմպոսյան աստվածների լրաբերն ու Զևսի մունետիկը: Նա մարդկանց մեկնաբանում էր աստվածների խոսքը և աստվածներին էր հաղորդում մարդկանց խնդրանքը: Աստվածային խոսքի, ավանդույթների, դիցաբանական տեքստերի բովանդակության մեկնաբանությունն էլ իմաստավորվեց որպես հերմենևտիկա:

Միջին դարերում հերմենևտիկայի խնդիրն էր մատչելի ձևով բացատրել աստվածաշնչի, ավետարանների, կրոնական գրվածքների, դոգմաների, առակների, ասացվածքների, այլաբանական արտահայտությունների բովանդակությունը:

Վերածննդի դարաշրջանում փիլիսոփաների, արվեստագետների հայացքը բևեռվում է անտիկ մշակույթի արժեքների վրա: Չափազանց կարևորվում է անտիկ գրականության, փիլիսոփաների աշխատությունների թարգմանությունը: Այդ գործերի, դրանցում տեղ գտած այլաբանական բնույթի շարադրանքների բովանդակային վերլուծությամբ էլ պետք է զբաղվեր հերմենևտիկան:

XIX դարում գերմանացի մտածող Ֆ. Շլայերմահերը հերմենևտիկան իմաստավորեց որպես հումանիտար գիտությունների այնպիսի մեթոդ, որով մտածողը հոգեբանական վերապրման միջոցով պետք է ըմբռներ հին տեքստերի հեղինակների մտածելակերպը և այդ տեսանկյունից վերլուծեր նրանց ստեղծագործությունների բովանդակությունը: Դրանով հերմենևտիկան դարձավ ուրիշի ներաշխարհը թափանցելու և ըմբռնելու արվեստ: Նման համոզմունքներ զարգացրել է նաև Գ. Դիլթայը: Նրա կարծիքով պատմաբանի խնդիրը պետք է լինի անցյալի մասին կանխակալ պատկերացումների, նախապաշարումների հաղթահարման ուղիով մտովի վերապրել այդ դարաշրջանների

իրադարձութիւնները և մեկնաբանել այդ վերապրումները:

XX դարում մտածողները հերմենևտիկան զարգացրեցին 3 ուղղություններով: Հայդեգերը, Գադամերը հիմնավորեցին գոյաբանական հերմենևտիկան, Ռիկյորը՝ իմացաբանական, Բետտին՝ մեթոդաբանական հերմենևտիկան:

Գադամերը «Ճշմարտություն և մեթոդ: Փիլիսոփայական հերմենևտիկայի հիմունքներ» աշխատության մեջ հիմնավորում է, որ մարդու մտածողությունը միշտ միջնորդավորված է պատմական իրողություններով: Ուստի ցանկացած տեքստ կամ պատմական իրադարձություն ըմբռնելու, հասկանալու համար առաջին հերթին պետք է մեկնաբանել: Իսկ մեկնաբանելու համար նախապատկերացում պետք է ունենալ մեկնաբանվող առարկայի վերաբերյալ: Մեկնաբանությունը պետք է լինի ոչ թե տեքստի բովանդակության վերարտադրություն, այլ իմաստի ստեղծում: Գադամերի կարծիքով հասկանալ, նշանակում է ստեղծել տեքստի իմաստը: Եվ քանի որ ցանկացած հասկացում մեկնաբանություն է, միևնույն տեքստը կարող է ունենալ տարբեր մեկնաբանություններ: Հասկացումը տեքստի իմաստի որոնում է: Իսկ դա անընդհատ գործընթաց է: Երբեմն մեկնաբանողը կարող է ավելի շատ հասկանալ տեքստի իմաստը, քան հեղինակը:

Գադամերը հասկացման խնդիրը հանգեցրեց լեզվի խնդրին: Նրա համոզմամբ լեզուն այն միջավայրն է, որում իրագործվում է հասկացումը, քանզի լեզվի միջոցով են մարդիկ հաղորդակցվում միմյանց հետ: Աշխարհի ըմբռնումը մարդն իրականացնում է լեզվի միջոցով: Լեզվում ներդրված է փորձի ձևավորման հիմնական մեխանիզմները: Մարդկային փորձը ունի լեզվական բնույթ: Այդ պատճառով էլ հերմենևտիկայի ելակետը մտածողության լեզվական ձևերի արտահայտությունն է: Նոր հայացքների հետ ծնվում և ձևավորվում են նոր խոսքեր: Փոփոխվող կյանքի հիման վրա ձևավորվում են և նոր լեզվական արտահայտություններ: Գադամերի հիմնավորումով «լեզվի կյանքում մշտապես տեղի է ունենում աննշան փոփոխություններ: Առաջանում են նոր հասկացություններ և արտահայտություններ»: Այդ պատճառով էլ դարաշրջանի ճգնաժամային իրավիճակը, հասարակության բեկումնային փոփոխությունները խորությամբ ըմբռնելու և ճիշտ արտահայտելու համար պետք է հետևել տվյալ լեզվի փոփոխությանը, քանզի լեզուն այն միջավայրն է, որում ընթանում է փոխըմբռնման գործընթացը:

Գադամերը «Գեղեցիկի արդիականությունը» աշխատության մեջ հիմնավորում է, որ «ճշմարտությունը չի կարող ճանաչել և հաղորդել

ինչ-որ մեկը միայնակ: Հերմենևտիկայի խնդիրն է աջակցել երկխոսություններին, հնարավորություն տալ արտահայտվելու և ուրիշներին, այլախոհներին, ըմբռնել նրանց արտահայտությունները»: Նրա կարծիքով, աշխարհի գիտատեսական ըմբռնումը մարդկային կեցության հիմնարավոր դիրքորոշումներից մեկն է: Ճշմարտությունը իմացվում է ոչ միայն գիտական մեթոդի օգնությամբ, այլև արտագիտական միջոցներով (արվեստի, պատմության, փիլիսոփայության):

Գադամերի համոզմամբ տեքստի մեկնաբանությունը պետք է լինի ոչ թե հեղինակի մտքի վերարտադրություն, այլ մտքի նորովի կառուցում: Հետևաբար, ըմբռնումը կարող է դուրս գալ հեղինակի սուբյեկտիվ մտքերի շրջանակից: Ըմբռնումը ուրիշի հոգեբանական աշխարհի մեջ ընկղմվելն է: Փիլիսոփաների խնդիրը պետք է լինի խորությամբ ըմբռնել շրջակա աշխարհի իրադարձությունների իմաստը և բացատրել դա մարդկանց: Գադամերի կարծիքով ըմբռնման նպատակը պետք է լինի ներթափանցել մարդկանց, իրերի, երևույթների, տեխնիկական կառույցների, գրքերի, թատերական ներկայացումների, գիտական, պատմական, քաղաքական և այլ բնույթի ստեղծագործությունների հեղինակների հոգեկանի մեջ և հասկանալ, թե ինչպես և ինչու է այդպիսի լուծումներ զարգացրել մտածողը, ստեղծագործողը:

Պոլ Ռիկյորը «Իմացաբանական հերմենևտիկա» աշխատության մեջ մեկնաբանությունը դիտում է որպես իմաստի կամ սիմվոլի վերծանում: Նրա համոզմամբ հասկացումը նպատակաուղղված մեկնաբանություն է, որն իրականանում է սեմանտիկական, ռեֆլեքսային, էկզիստենցիալ մակարդակներով:

Հասկացման սեմանտիկական գործընթացում պարզաբանվում, բացահայտվում է տեքստի նշանների, սիմվոլների իմաստը:

Ռեֆլեքսային մակարդակը մեկնաբանողի ինքնագիտակցության դրսևորումն է: Այս փուլում մեկնաբանողը, հաղթահարելով ստեղծագործողի անցյալի հեռավորությունը, դառնում է տեքստի ժամանակակիցը և հեղինակին հասկանալու միջոցով հասնում է ինքնահասկացման:

Հասկացման էկզիստենցիալ մակարդակում մեկնաբանողը ինքնահասկացման միջոցով բացահայտում է անձի գոյություն ունենալու ցանկության և ջանքի իմաստը, քանզի տեքստի տարբեր մեկնաբանությունների հնարավորությունը պայմանավորված է գոյության տարբեր եղանակներով:

Լեզուն դարձնելով ճանաչողության հիմնական նախադրյալ, Հեր-

մենալտիկան փորձում է գիտական գիտելիքները ներգրավել պրակտիկ գիտակցության ոլորտում:

2. ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱ

Ֆենոմենոլոգիան ուսմունք է ֆենոմենների մասին: Հոսանքի հիմնադիրը Հուսեռլն է: Նա ֆենոմենի տակ ըմբռնում էր զգայական փորձում ճանաչվող երևույթը: Դա գիտակցության մեջ առաջացող առարկաների իմաստն է: Հուսեռլը պահանջում է, որպեսզի փիլիսոփայությունը գործ ունենա ֆենոմենների հետևողական վերլուծության հետ, քանզի գիտակցությունը միշտ ուղղված է դեպի առարկան: Նրա կարծիքով արտաքին աշխարհը մարդուն տրվում է ֆենոմենների հոսքով:Դրանից էլ հետևություն է արվում, որ իրերի էությունը բացահայտելու համար պետք է ի մի բերել դրանց մասին ապրումների բազմազանությունը: Դրա նպատակն է հասկանալ արտաքին աշխարհի օբյեկտների վերաբերյալ մարդու գիտակցության մեջ առաջացած պատկերացումները և վերլուծել այդ ըմբռնումները:

Հուսեռլը «Տրամաբանական հետազոտություններ» աշխատությունով փորձեց ստեղծել գիտություն գիտության մասին: Նրա կարծիքով շրջակա աշխարհի ճանաչողությունը կախված է ճանաչող սուբյեկտի գիտակցության հատկություններից: Դրանից ելնելով, նա հիմնավորում է, որ «փիլիսոփայությունը պետք է ուսումնասիրության հարց դարձնի մտածողության ընթացքը, գիտակցության կառուցվածքի վերլուծությունը»: Դրանով նա ձգտում էր ֆենոմենոլոգիան դարձնել գիտություն գիտելիքի մասին, իսկ փիլիսոփայությունը՝ գիտաբանություն: Փիլիսոփայությունը պետք է ուսումնասիրեր մտքի ուղղվածությունը ճանաչվող օբյեկտի նկատմամբ: Փիլիսոփան ինտուիցիայի, ինքնահայեցողության միջոցով պետք է հասներ գիտակցության ֆենոմենների ըմբռնմանը, ուշադրությունը կենտրոնացներ բուն գիտակցության վրա և այն մաքրեր փորձնական ծագում ունեցող գաղափարներից:

Հուսեռլի համոզմամբ գիտությունը տեսություններ է կառուցում, իսկ փիլիսոփայության խնդիրը պետք է լինի իրերի էությունը պարզելը: Այդ պատճառով էլ փիլիսոփայության մեջ հետազոտության հիմնական օբյեկտ պետք է դառնար գիտակցությունը: Հուսեռլի կարծիքով գիտակցությունը ապրումների հոսք է՝ ընկալում, մտապատկեր, հիշողություն, երևակայություն, որոնց տարրերը՝ ֆենոմենները գիտակցության մեջ ճշմարտության ապրման հոսքի այն մասն են, որոնք անմիջականորեն կապված են էության հետ:

Հուսեռլը հիմնավորում էր, որ շրջակա աշխարհի օբյեկտների ճանաչողության ժամանակ մարդը դրանք մարդկայնացնում է: Դրանցում որոշակի իմաստ է ներդնում: Այդ պատճառով էլ գիտակցության բնույթը բացահայտելու համար պետք է առարկաների կոնկրետ հատկությունների քննարկումից անցում կատարել նրանց մաքուր էության վերլուծությանը: Կարևոր է պարզել, թե ինչպես են մարդուն տրվում այդ առարկաները:

Ֆենոմենոլոգիայի ձևավորման և զարգացման գործում մեծ ներդրում են կատարել Բրետանոն, Ֆինկը, Յանդգրեբեն, Շելլերը, Հայդեգերը, Մեռլո-Պոնտին և այլոք: Շելլերը հիմնավորում է, որ աշխարհի, գիտության հետազոտությունը պետք է սկսել գիտակցության ուսումնասիրությամբ: Քանի որ շրջակա աշխարհը մարդկանց տրվում է գիտակցության միջոցով, փիլիսոփայի խնդիրը պետք է լինի պարզել, թե դա ինչպես է ընկալվում մարդու կողմից: Հուսեռլի կարծիքով հասկացությունների ծագումը հասկանալու և մաքուր գիտակցության բնույթը բացահայտելու համար պետք է կոնկրետ առարկաների քննարկումից անցնել նրանց մաքուր էության վերլուծությանը: Ուշադրությունը պետք է կենտրոնացնել ոչ թե առարկայի վրա, այլ կարևոր է պարզել, թե ինչպես է այն տրվում մարդուն: Մարդը կարծում է, թե ճանաչում է իր և ուրիշների գիտակցությունից անկախ գոյություն ունեցող օբյեկտները, մինչդեռ իրականում նա է այդ օբյեկտներում ներդնում որոշակի իմաստ: Հուսեռլի կարծիքով «ընկալման բնորոշ առանձնահատկությունը» այն է, որ միշտ էլ լինում է միմյանց հաջորդող ընկալումների շարք»: Այդ պատճառով էլ ընկալումները վերլուծելիս մարդը պետք է չանջատվի գիտակցության հոսքից: Այսպիսի տրամաբանությամբ մոտենալով նաև պատմության ուսումնասիրության խնդրին, Հուսեռլն այն դիտում է որպես բանական նպատակների բացահայտում: Նրա պատկերավոր արտահայտությամբ «պատմական զարգացումը ի սկզբանե թաքնված բանականության անվերջ ծավալումն է»:

Պոզիտիվիզմը [լատիներեն պոզիտիվ նշանակում է դրական] ձևավորվել է XIX դարի 30-40-ական թվականներին և դրսևորվել է տարբեր փուլերով ու հարցալուծումների տարաբնույթ պահանջներով: Առաջին փուլում Օ.Կոնտը, Հ. Սպենսերը, է. Լիտրեն, Միլը, ձգտելով ազատվել փիլիսոփայության ավանդական աշխարհայացքային հիմնախնդիրներից, փորձում էին փիլիսոփայությունը բարձրացնել բնական

գիտությունների հավաստիության աստիճանի: Կոնտի համոզմամբ փիլիսոփայությունը պետք է հրաժարվի նախկին մտահայեցողական հիմնախնդիրներից, զբաղվի բնական գիտությունների կողմից բացահայտված օրինաչափությունների վերլուծությամբ և ընդհանրացումով: Նման մոտեցմամբ տեսությունը միացնելով պրակտիկայի հետ, խնդիր էր դրվում փիլիսոփայությունը, տեսական գիտելիքները ծառայեցնել մարդկանց բարեկեցության բարձրացմանը:

XX դարի սկզբում, Վիեննայի համալսարանում, Մ. Շլիկը, Ռ. Կառնապը, Օ. Նոյրաթը, Հ. Ռայխենբախը, հարազատ մնալով պոզիտիվիզմի հիմնական սկզբունքներին [ավանդական փիլիսոփայության հարցերը դիտելով կեղծ, անիմաստ, մտացածին, անլուծելի), փիլիսոփայության դերը նպատակառաղեցին լեզվի տրամաբանական վերլուծությունների խնդրին: Դրանով ձևավորվեց պոզիտիվիզմի երկրորդ փուլը: Հիմնավորվում էր, որ փիլիսոփայության խնդիրը պետք է լինի լեզվի տրամաբանական վերլուծության միջոցով իմաստավորված նախադասությունները զատել իմաստազուրկ և արտագիտական նախադասություններից: Նորպոզիտիվիստները հիմնավորում էին, որ աշխարհի մասին մարդու բոլոր գիտելիքների աղբյուրը էմպիրիկ [փորձի տվյալների հիման վրա կառուցված կամ փորձից բխող] գիտություններն են: Փիլիսոփայությունը միայն պետք է զբաղվի այդ գիտելիքների տրամաբանական վերլուծությամբ և պարզաբանմամբ:

Ջարգացնելով Վիտգենշտայնի այն հիմնավորումը, որ ավանդական փիլիսոփայության խնդիրները հեռվում են լեզվի ոչ ճիշտ օգտագործման վրա, Կառնապն եզրակացնում է, որ փիլիսոփայությունը պետք է զբաղվի գիտական լեզվի տրամաբանական վերլուծությամբ: Այդ վերլուծության օգնությամբ իմաստ ունեցող նախադասությունները պետք է զատվեն գիտական տեսակետից իմաստազուրկ նախադասություններից: Նախադասության իմաստը որոշող նորպոզիտիվիստական մեթոդը վերիֆիկացիայի (ստուգելիության) սկզբունքն է, որը պետք է պարզեր նախադասության իմաստը և ճշմարտացիությունը: Ըստ Կառնապի՝ նախադասության նշանակությունը նրա ստուգման մեթոդի մեջ է: Իսկ Շլիկն ընդհանրացնում է, որ նախադասությունն իմաստ ունի միայն այն ժամանակ, երբ հնարավոր է ցույց տալ նրա ճշմարիտ կամ կեղծ լինելու հանգամանքը: Այդ սկզբունքի համաձայն փորձով կամ կենսափորձով ստուգվող նախադասությունները իմաստավորված են, որովհետև հնարավոր է ցույց տալ նրա ստուգման մեթոդը: Օրինակ, «ռադիոակտիվությունը խախտում է գենոտիպը» նա-

խադասությունը կարելի է փորձով ստուգել: Իսկ մետաֆիզիկական բնույթ ունեցող նախադասությունները, բարոյագիտական ու գեղագիտական դատողությունները ըստ նորպոզիտիվիստների անիմաստ են, որովհետև չկա նրանց էմպիրիկ ստուգման ոչ մի մեթոդ:

Վերիֆիկացիայի սկզբունքի համաձայն իմաստավոր, այսինքն ճշմարիտ կամ կեղծ կարող են լինել միայն կոնկրետ փաստերով հաստատված դատողությունները: Անշուշտ այս սկզբունքը զգալի դեր խաղաց իմաստավոր և անիմաստ, գիտական և արտագիտական դատողությունները միմյանցից զատելու գործում: Սակայն, նման մոտեցման դեպքում փիլիսոփայության աշխարհայացքային հարցալուծումները, բարոյագիտական, գեղագիտական ասույթները, ապագայի վերաբերյալ կանխատեսումները դիտվում են անիմաստ, քանի որ դրանք հնարավոր չէ ստուգել փորձով կամ զգայական տվյալներով:

Ստեղծված իրավիճակից ելք փնտրելու ճանապարհին Պոպերն առաջարկեց ֆալսիֆիկացիայի [ժխտվելիության] սկզբունքը: Այդ սկզբունքի համաձայն եթե «տեսական հասկացություններ պարունակող ասույթները վերիֆիկացման ենթակա չեն, սակայն դրանք ենթակա են ֆալսիֆիկացման»: Նրա կարծիքով տեսության հավաստիությունը պետք է որոնել հերքվելիության մեջ: Պոպերի համոզմամբ չհերքվող տեսությունը դեռևս գիտական համարել չի կարելի: Եթե այն չի հերքվել փորձով, դա չի նշանակում, թե այն հավաստի է: Պոպերը ոչ գիտական էր համարում այն տեսությունը, որը դեռևս չի հերքվել: Նրա կարծիքով անհերքվելիությունը տեսության ոչ թե առավելությունն է, այլ թերությունը: Տեսությունը ստուգելու համար պետք է փնտրել այն հերքող փաստեր, քանզի չհերքվող տեսությունը հեքիաթ կամ առասպել է:

XX դարի 50-60-ական թվականներին Լ.Վիտգենշտայնը, Ջ. Ռիխդոմը, Հ. Ռայլը, Ջ. Օսթինը առաջ քաշեցին բնական լեզվի վերլուծության խնդիրը: Նրանց կարծիքով փիլիսոփայությունը պետք է զբաղվի խոսակցական լեզվի իմաստային վերլուծությամբ, քանզի կյանքում և գիտության մեջ մոլորությունների պատճառը լեզվի բառերի, արտահայտությունների ոչ ճիշտ օգտագործումն է: Լեզվական մոլորություններից ազատվելու միջոցով կարելի է զերծ մնալ փիլիսոփայական կեղծ հարցադրումներից: Վիտգենշտայնի համոզմամբ լեզվի նախադասությունների իմաստային վերլուծության շնորհիվ կարելի է պարզել օգտագործվող բառերի, լեզվական արտահայտությունների իմաստը, կիրառման ոլորտը և հնարավոր սահմանները:

Ցանկացած լեզվում բառերի նշանակությունը ի հայտ է գալիս գոր-

ծածության մեջ: Բառերը նշանակություն են ստանում այն դեպքում, երբ այլ բառերի միջոցով սահմանափակվում է դրանց նշանակությունը: Այդ սկզբունքի համաձայն այն բառը, որը չունի իր բովանդակությունը սահմանափակող բառ իմաստազուրկ է:

XX դարի 60-ական թվականներին Կ. Պոպերը, Թ.Կունը, Ի. Լակատոսը, է. Թուլմինը, Կ. Ֆեյերաբենդը, կարևորելով փիլիսոփայական հետազոտության նշանակությունը գիտության զարգացման տրամաբանական վերլուծության գործում, շեշտադրեցին սոցիալ-պատմական և մշակութային համատեքստը: Կունի կարծիքով գիտատեխնիկական հեղափոխությունը տեղի է ունենում որոշակի սոցիալ-պատմական և մշակութային նախադրյալների առկայության պայմաններում: Լակատոսի պատկերավոր արտահայտությամբ գիտական զարգացումը տրամաբանորեն միմյանց հետ կապված գիտահետազոտական ծրագրերի հաջորդափոխության գործընթաց է: Տվյալ դարաշրջանի գիտահետազոտական ծրագիրը լուծելով կարևոր հիմնախնդիրներ ի վերջո կորցնում է գիտության նոր փաստերն իմաստավորելու կարողությունը: Գիտական հայեցությունների այդ գործընթացում ձևավորվող գիտահետազոտական նոր ծրագիրը կլուծի գիտության առջև ծառացած խընդիրներն այնքան ժամանակ, մինչև կընկնի անլուծելի հակասությունների մեջ և կփոխարինվի նորով: Ֆեյերաբենդի համոզմամբ գիտական հետազոտության ընթացքում միակ հավաստի մեթոդ չի կարող լինել: Կարող են օգտագործվել բոլոր այն մեթոդները, որոնք կնպաստեն հիմնախնդրի լուծմանը: Երբեմն արտագիտական գաղափարները, դասական տեսությունից շեղումները զգալիորեն նպաստում են գիտության զարգացմանը:

20-րդ դարի 30-ական թվականներից Անգլիայում ձևավորվեց նորպոզիտիվիզմի լեզվաբանական փիլիսոփայության տարատեսակը, որը փիլիսոփայության հիմնական խնդիրը համարում էր խոսակցական լեզվի, բառերի, արտահայտությունների օգտագործման ձևերի ու եղանակների հետազոտությունը: Դրա հիմնական նպատակն էր պարզել լեզվական թյուրիմացությունները և դրանով վերացնել փիլիսոփայական խնդիրները: Նրանց համոզմամբ պատերազմների, քաղաքական պայքարի, դասակարգային բախումների հիմնական պատճառը բառերի ոչ ճիշտ գործածումն է: Օգտագործելով «կապիտալ», «դասակարգային պայքար», «շահագործում» իմաստազուրկ բառերը մարդիկ իրենց համար ստեղծում են մշտական հուզմունքների, հակասությունների ու երկպառակությունների աղբյուր:

4. ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄ

Էկզիստենցիալիզմը (գոյության փիլիսոփայություն) ձևավորվել է առաջին համաշխարհային պատերազմից հետո Մ. Հայդեգերի, Կ. Յասպերսի (Գերմանիա), Գ.Մարսելի, Սարտրի, Ա. Կամյուի (Ֆրանսիա), Ն.Աբանյանոյի (Իտալիա), Ռ. Բարետի (ԱՄՆ) և այլոց միջոցով՝ որպես կյանքի իմաստի, մարդու ճակատագրի, անձնական պատասխանատվության և այլ հիմնախնդիրների իմաստավորման արդյունք: Նրանց ստեղծագործություններում հիմնական ուսումնասիրության օբյեկտ է համարվում կեցությունը՝ մարդու սեփական գոյությունը: Բայց մարդն ի վիճակի չէ իրեն կողքից դիտելու, հետևապես իր գոյությանը հասու լինելու միակ հնարավորությունն է ապրել ու նկարագրել այդ գոյությունը այնպես, ինչպես անմիջական ապրումների մեջ այն բացահայտվում է ներքին զգացմանը: Էկզիստենցիալիստների համոզմամբ գոյությունը առավել լրիվ բացահայտվում է սարսափում: Սարսափն ամբողջ գոյության հիմքում ընկած «նախաապրումն» է՝ արտաքին, օտար, թշնամի աշխարհի, ոչնչի, մահվան հանդեպ: Ըստ Հայդեգերի «սարսափին ի հայտ է բերում ոչինչը»: Սարտրի պնդմամբ մարդու հետ աշխարհ է գալիս ոչինչը: Ոչնչի էության բազմիմաստությունը արտացոլված է նաև Ա. Իսահակյանի «Այդ ոչինչը ես եմ» արևելյան զրույցում:

Գիտակցելով իր ոչնչությունը մարդը բախվում է սարսափին և սարսափի մեջ էլ ըմբռնում է իր գոյությունը: Ըստ Յասպերսի մարդկային գոյությունը բացահայտվում է վշտի, տառապանքի, դժվարին կացություններ, պայքարի, մահվան մեջ: Հասարակական ապրելակերպի ու գործունեության ընթացքում մարդը ազատորեն ընտրում է իր գործընթացը և լրիվ պատասխանատվություն է կրում իր ընտրության համար: Ազատությունը մարդու բուն գոյությունն է,նրա տրամադրվածությունը, անձնական ապրումները: Մարդն ազատ է իր ապագան ընտրելու հարցում, բայց ընտրության հուսալիությունը երաշխավորված չէ: Ըստ էկզիստենցիալիստների, մարդու ազատությունը սահմանափակված է, որովհետև ինքը չի ընտրում իր կյանքի պայմանները: Իր կամքից անկախ մարդն աշխարհ է գալիս որոշակի պատմական ժամանակում, ինչ-որ երկրում ու ժողովրդի մեջ և նրա կյանքը որոշվում է գոյության այն պայմաններով, որում հայտնվում է: Այլ խոսքով մարդուց կախված չէ նրա գոյության սկիզբն ու վերջը:

Արտաքին աշխարհն, ըստ էկզիստենցիալիստների, մարդու հոգ-

սերի աշխարհն է և ամպի նման շրջապատում է մարդկային գոյությունը: Հայդեգերն իր «Կեցություն և ժամանակ» գրքում նշում է. «Մինչև այն ժամանակ, քանի դեռ տևում է գոյությունը, կա նաև աշխարհը... Եթե չկա ոչ մի գոյություն, ապա առկա չէ և աշխարհը»: Յասպերսի համոզմամբ մարդն ապրում է առեղվածային, անճանաչելի աշխարհում, շրջապատված է խորհրդավոր սիմվոլներով: Աշխարհը ծածկագրություն է, որն ապարդյուն ձգտում է ընթերցել մարդը: Միայն մահվան պահին է կեցությունը ծածկող վարագույրը մի փոքր բացվում: Իսկ կյանքի ընթացքում հասարակությունը ճնշում, քայքայում է մարդու անհատականությունը, մարդուց խլում է նրա կեցությունը և նրան պարտադրում է նույնաբնույթ բարքեր, ճաշակներ, համոզմունքներ ու սովորույթներ: Լուծվելով անդեմ ամբոխի մեջ մարդը համակերպվում է մահվան մտքի հետ՝ հուսադրվելով թե բոլորն էլ մահկանացու են: Բայց դա մարդու էությունը չէ, այլ նրա էմպիրիկ գոյությունն է:

XX դարավերջում էկզիստենցիալիստական բովանդակություն ունեցող գրականության մեջ խորությամբ վերլուծվում է մարդկային գոյության, անհատի և հասարակության հարաբերության, մարդու ազատության օտարման, կյանքի իմաստի, նպատակի, մահվան և այլ հիմնախնդիրներ: Հիմնավորվում է, որ մարդը շրջապատված է անորոշություններով, մտատանջվում է ապագայի հանդեպ, կորցնում և գըտնում է ինքն իրեն: Կյանքի հորձանուտում մարդու կեցությունը բացատրվում է երկիմաստ ձևով (իսկական կեցություն և անիսկական կեցություն): Անիսկական կեցության տակ Հայդեգերն իմաստավորում է օտարված, անհատականությունը կորցրած մարդու դեգերումները, որը ենթարկվելով հանգամանքների ընթացքին, թաղվելով առօրյա հոգսերի մեջ, նմանակում է ուրիշներին և անտարբեր է վաղվա օրվա ու մահվան նկատմամբ:

Իսկական կեցության դեպքում մարդը գիտակցում է իր ազատությունը և անհանգստանում է ծավալվող իրադարձությունների ընթացքից: Այդ դեպքում մարդը մտահոգվում է իր ապագայի նկատմամբ, վախենում է մահանալուց և ոչնչի վերածվելուց: Նման սարսափ զգալու միջոցով մարդն ըմբռնում է իր գոյության խորհուրդը և ձեռք է բերում իսկական ազատություն:

Յասպերսի համոզմամբ մարդն իր գոյության իմաստն ըմբռնում է միայն ծայրահեղ իրավիճակներում: Ծավալվող իրադարձությունների սրման, անհետ կորչելու, գործած մեղքի համար պատժվելու, երազածին չհասնելու պատճառով տառապելն և այլ գործոնների նկատմամբ

վախի զգացողությունը մարդուն ստիպում է մտորել իր և ուրիշների մասին, ըմբռնել կյանքի իմաստը, իր և մյուսների կոչումը:

Էկզիստենցիալիստական գրականության մեջ մեծ տեղ է հատկացվում անհատի և հասարակության, անձի ազատության հարցերին: Յասպերսի կարծիքով հասարակությունը քիչ է հոգում մարդու ազատ զարգացման, նրա իրավունքների ապահովման մասին: Հասարակության մեջ մարդու ազատությունը սահմանափակվում է, որի պատճառով նա դիմազրկվում, ճնշվում և օտարվում է ինքն իրենից: Մարդը պետք է ազատորեն շփվի իր նմանների հետ, որպեսզի դառնա կատարյալ բանական արարած և հասարակության լիարժեք անդամ:

Վերլուծելով հասարակության մեջ մարդու խորթացման հանգամանքները, Սարտրը, Հայդեգերը հիմնավորում են, որ հասարակական կյանքը «աննպաստ, օտարված հարաբերություններ» ոլորտ է: Այդ միջավայրում անձը հոգեկան բավարարվածություն չի զգում և ստիպված խորասուզվում է ինքն իր մեջ: Այդպիսի առանձնությունը դիտվում է ազատության դրսևորում: Սարտրի համոզմամբ մարդը կարող է հրաժարվել իր ազատությունից միայն այն դեպքում, երբ հրաժարվում է իր անհատականությունից: Ազատությունն ընտրություն կատարելու հնարավորությունն է: Իսկ Հայդեգերի կարծիքով ինքն իրեն գտնելն է: Այսինքն, չմտածել և չգործել ուրիշների նման: Սակայն, մարդը պետք է պատասխան տա իր և ուրիշների գործողությունների համար, քանզի նա ընտրում է ոչ միայն իր համար, այլև ուրիշների: Այդ ընտրության ժամանակ օգտակար, բարոյական կարող է լինել միայն այն, ինչը ընդունելի կլինի բոլորի համար:

Սարտրի կարծիքով մարդու կեցությունը ողբերգական է: Հասարակության մեջ մարդը կամ ինքն է ենթարկվում ուրիշներին, կամ նրանց է ենթարկում իրեն:

Յասպերսի համոզմամբ փիլիսոփայության խնդիրը պետք է լինի՝ օգնել մարդուն, հասկանալու, գիտակցելու իր տեղը կյանքում, աշխարհում և դրանով հասնելու ինքնուրույնության: Յասպերսի համոզմամբ իրական կյանքում մարդը միաժամանակ զգում է աշխարհը փոխելու իր կարողությունը և անզորությունը: Որպեսզի ազատվի այդ զգացողությունից, մարդը պետք է ըմբռնի, թե ինչպիսին է աշխարհն այսօր, և ինչ տեղ է նա զբաղեցնում դրանում: Սակայն դա ըմբռնելու համար մարդը պետք է հասկանա իր էությունը: Իսկ դա այնքան էլ հեշտ չէ, քանզի, Հայդեգերի կարծիքով, ողջ աշխարհը ներթափանցված է «համաշխարհային տագնապով»: Մարդը անհույս

փորձ է անում «ազատվել այդ տագնապից, փախչել ինքն իրենից և լուծվել ամբոխի մեջ»: Սակայն դա նրան չի փրկում, քանզի մարդն իրեն միայնակ է զգում, երբ ըմբռնում է, որ «հասարակական կապերն ու հարաբերությունները զրկված են իմաստից»: Այդ իմաստազուրկ «քաղաքականության, տնտեսագիտության ոլորտներում» մարդը չի կարող ըմբռնել իր գոյության իմաստը, որովհետև «կյանքի իմաստը միայն ազատության ոլորտում է»:

Էկզիստենցիալիստները մարդու ազատությունը դիտում են նրա գործունեության, ակտիվության և ցուցաբերած պատասխանատվության տեսանկյունից: Մարդու ազատությունը կապվում է ակտիվության և պատասխանատվության հետ: Սակայն վերջնական եզրակացություններում Կամյուն ընդհանրացնում է, որ միայն «կյանքի անիմաստ լինելն ըմբռնող անձը իրեն ազատ կզգա»: Մարդը հասկանում է, որ հասարակությունը սահմանափակում է մարդու ազատությունը և բարոյական ընտրության հնարավորությունը: Այդ հնարավորություններում Յասպերսը, Մարսելը հոգևոր ոլորտի իսկական կեցության ըմբռնումը կապում են աստծուն հասու լինելու հետ: Իսկ Սարտրը անձի հոգևոր յուրահատկության, ազատության, բարոյական պատասխանատվության որոնումներում է փնտրում հարցադրումը: Նրա համոզմամբ անձի հոգեկան դատարկության հարցում մեղավորը հասարակությունն է:

5. ՊՐԱԳՄԱՏԻԶՄ

Պրագմատիզմը (տերմինը բովանդակում է օգտակարության իմաստ) ձևավորվել է XIX դարի վերջում ԱՄՆ-ում: Հիմնական ներկայացուցիչներն են՝ Չ. Պիրսը, Ո՛. Ջեյմսը, Ջ.Դյուին, Ա. Բերգսոնը, Չ. Մորիսը, Կ. Լյուիսը, Ո՛. Քուայնը: Նրանց համոզմամբ փիլիսոփայությունը պետք է ունենա գործնական ուղղվածություն, օգնի մարդկանց կարգավորելու իրենց հարաբերությունները բազմաբնույթ գործընթացներում:

Պրագմատիզմի էությունը ձևակերպել է Ջեյմսը 1897 թվականին «փիլիսոփայական կոնցեպցիաները և պրակտիկ արդյունքները» հրապարակային դասախոսության մեջ: Առաջնորդվելով «ճշմարտությունը որպես շահավետություն» սկզբունքով, Ջեյմսը հիմնավորում է, որ ճշմարիտ է այն համոզմունքը, որը «օգտակար է, շահավետ և հաջողաբեր»: Նրա համոզմամբ մարդկանց գաղափարներն ինքնին ճշմարիտ կամ կեղծ լինել չեն կարող, քանի դեռ չեն արժեքավորվել կիրառության ընթացքում: Գաղափարները «լոկ գործիքներ են և կարող են գնահատվել ըստ իրենց դերի կատարման»: Եթե մարդու գործերը հաջողակ են,

նշանակում է նրա գաղափարները («գործիքները») ճշմարիտ են: Ջեյմսը ճշմարիտ համոզմունքը հարաբերակցում է նաև հավատի հետ: Գաղափարի նկատմամբ հավատն է համոզմունքը դարձնում ճշմարիտ : Նման հավատը դարձավ ամերիկյան լավատեսության հիմքը: Ողջ Ամերիկան առաջնորդվում է «հավատա՝ կհասնես հաջողության» նշանաբանով:

Դյուին հիմնավորում է, որ գաղափարը կարող է ճշմարիտ և օգտակար լինել միայն կոնկրետ իրադրության համատեքստում: Նրա կարծիքով մարդկային մտածողությունը գործիքային բնույթ ունի: Մտածողության գործիքների [գաղափարների, հասկացությունների] դերը մարդու առջև ծառացած հիմնախնդիրների լուծումն է: Իսկ փիլիսոփայությունը պետք է օգնի ճիշտ կողմնորոշվելու կյանքում,անցյալի փորձի գնահատման միջոցով մատնանշի մարդկանց դրությունը բարելավելու ուղիներ:

Պիրսի կարծիքով ճանաչողության նպատակը կայուն համոզմունքի ձեռքբերումն է: Ճանաչողությունը շարունակվում է կասկածից դեպի համոզմունք ուղիով: Կասկածի հաղթահարումը կոչվում է հետազոտություն: Իսկ հետազոտությունը կայուն համոզմունքին հանգելն է: Համոզմունքը կոնկրետ ձևով գործելու հմտությունն է: Մարդու արարքները ճշմարիտ կլինեն, երբ և ինքը, և՝ ուրիշները համոզված լինեն դրանում: Գիտության մեջ ճշմարիտ կարող են լինել այն եզրահանգումները, որին հանգել են մասնագետներից շատերը տվյալ խնդրի ուսումնասիրության ընթացքում: Պիրսի համոզմամբ ճշմարիտ կարող է լինել այն համոզմունքը, որով առաջնորդվելիս մարդը հասնում է իր նպատակին և հաջողության: Գիտական մեթոդաբանության հիմքում դնելով «սխալականության» սկզբունքը, Պիրսը հիմնավորում է, որ ճշմարտությունը ձեռք է բերվում սխալների ուղղման, ստացված արդյունքների կատարելագործման և նոր վարկածների առաջադրման ճանապարհով:

Պիրսի կարծիքով «վստահության զգացողությունը քիչ, թե շատ հավաստի վկայություն է այն սովորույթների հաստատմանը, որոնք կորոշեն մեր ապագա գործողությունները: Իսկ կասկածը տհաճ, չբավարարված վիճակ է, որից մարդը ձգտում է ազատվել և անցնել հավատի վիճակի: Հավատը մեզ ստիպում է ոչ անմիջականորեն գործել, բայց մարդուն դնում է այնպիսի պայմանների մեջ, որ առիթը ներկայանալու դեպքում որոշակիորեն կգործի: Իսկ կասկածանքը անմիջականորեն խրախուսում է գործողությունը, քանի դեռ այն չի հաղթահարվել: Եվ

քանի որ կասկածանքի վիճակից անցումը հավատի վիճակին անվանվում է հետազոտություն, ուստի Պիրսը պահանջում է, որպեսզի կասկածանքը լինի ռեալ, կենսական, կոնկրետ իրավիճակով պայմանավորված»:

Պիրսի համոզմամբ հետազոտության նպատակը «ամուր կարծիքն է», որը պետք է ամրապնդվի համառության, հեղինակության, ապրիորի, գիտական մեթոդներով: Համառության մեթոդին հատուկ է ուժի, պարզության արժանիքները: Միշտ օգտակար է, որ մարդն համառորեն ինչ-որ բանի հավատա: Հեղինակության մեթոդի շնորհիվ ամրակայվում են որոշակի սկզբունքներ, որոնք հասարակական հարաբերությունները կայունացնելու հնարավորություն են ստեղծում: Ապրիորի (մետաֆիզիկական) մեթոդի դեպքում հետազոտությունը դրսևորվում է որոշակի աշխարհայացքային դիրքորոշումների տեսանկյունից: Գիտական մեթոդի միջոցով իրականացվող հետազոտության դեպքում տարբեր մարդիկ պետք է հանգեն մրևնույն արդյունքի: Պիրսի համոզմամբ գիտական մեթոդի հիմնական վեւրկածը ռեալ իրերի գոյության ընդունումն է, որոնց հատկությունները կախված չեն նրանց մասին կարծիքներից: Այդ ռեալականությունները ազդելով մարդու զգայական օրգանների վրա նպաստում են իրերի ճանաչմանը: Գիտության մեթոդը փաստերի հետ մարդու կարծիքների համաձայնության դրսևորումն է:

Պիրսի կարծիքով մարդիկ կարիք են զգում ճշմարտացի հստակության: Նրանց հետաքրքրում է ճշմարիտ կարծիքը [Պրագմատիզմի տեսակետից ճշմարտությունը պնդման այն հատուկ բնույթն է, որը բավարար փորձի և մտորումների առկայության դեպքում կնպաստի մարդու ցանկությունների բավարարմանը]:

Պրագմատիզմը դիտվում է նաև գիտությունը և փիլիսոփայությունը միմյանց մոտեցնող մեթոդ: Դյուին «Արժեքավորման տեսություն» աշխատության մեջ հիմնավորում է, որ «Գիտական ճշմարտությունները և տեխնիկական նվաճումները պետք է միացվեն մարդկային արժեքների հետ»: Նա առաջադիմությունը կապում է առկա արժեքների վերագնահատման մարդկանց ջանքերի հետ:

6. ՆՈՐԹՈՄԻԶՄ

Միջնադարյան կաթոլիկական աստվածաբան Թոմա Աքվինացու հավատի և բանականության ներդաշնակության սկզբունքի նորովի մեկնաբանությունն ու զարգացումը 19-20-րդ դարերում Ժ. Մարիտենի,

է. Ժիլսոնի, Գ. Վետտերի, Յ. Բոհենսկու, Գ. Մանզերի և այլոց կողմից ամբողջացվեց որպես համապարփակ աստվածաբանական համակարգ և անվանվեց նորթոմիզմ: Նորթոմիզմի հավատի և գիտելիքի ներդաշնակության ուսմունքում ճշմարտությանը հասու լինելու ուղիներ են գիտությունը, փիլիսոփայությունը, աստվածաբանությունը: Գիտությունը պետք է ուսումնասիրի և բացահայտի երևույթների պատճառահետևանքային կապերը:

Փիլիսոփայությունը, որպես իրերի էությունը կազմող կեցության մասին ուսմունք, պետք է զբաղվի սկզբնապատճառի և իրերի վերջնական նպատակի իմացությամբ:

Աստվածաբանության խնդիրն է ըմբռնելի դարձնել աստվածամարմնավորման, հարության, աստծու եռամիասնության և այլ դոգմատներ: Նորթոմիզմի հայեցակետից գիտության և փիլիսոփայության ճշմարտությունները, որպես բանականության ճշմարտություններ չպետք է հակասեն հավատի ճշմարտությանը, որովհետև դրանց բոլորի արարողը աստվածն է: Գիտելիքի մեջ մարդը հասնում է ճշմարտության զգայությունների վկայության համոզչության և տրամաբանական ապացուցման հետևանքով, իսկ հավատի մեջ՝ ազատորեն: Հետևապես հավատն ավելի մեծ արժեք ունի, քան գիտելիքը:

Նորթոմիստների պատկերացմամբ կեցությունը և նյութականն ու ոչ նյութական առարկաների ընդհանուր հատկությունների վերացական հասկացություն է, և աստված: Կեցությունը կապված չէ էմպիրիկ գոյության նյութական առանձնահատկությունների հետ: Այն աննյութական էություն է: Աստված ոչ միայն ստեղծել է աշխարհը, այլև միշտ միջամտում է բոլոր գործընթացներին: Ոչ մի երևույթ տեղի չի ունենում առանց աստծու մասնակցության: Շարժումը ևս անշարժ շարժիչի, աստծու գործունեության արդյունք է: Նյութականը, մատերիան անորոշ, անձև, պասիվ, ինքնաշարժման ունակությունից զուրկ դրսևորում է և միայն ոչ մատերիական ակտիվ նախասկզբի՝ ձևի հետ միանալով առաջանում է տիեզերքի ողջ բազմազանությունը: Բոհենսկին պնդում է, որ «ոչ մի նվազ կատարյալ էություն չի կարող ծնել ուրիշ, ավելի կատարյալ էություն»: Զարգացման ընթացքում ավելի բարդ ու կատարյալ ձևերի հանդես գալու աղբյուր ու պատճառ կարող է լինել միայն բարձրագույն կատարելություն ունեցող էակը՝ աստված: Հասարակության մեջ հարուստների ու աղքատների գոյությունը ևս բխում է աստծու կամքից:

7.ՄԱՐՔՍԻԶՄ

ՄԱՐՔՍԻԶՄԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ: Մարքսիզմը կառուցված է դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքների վրա և կազմում է բնության ու հասարակության վերաբերյալ ամբողջական տեսություն: Այդ տեսության համաձայն ամեն ինչի նախահիմքը մատերիան է: Իդեալականն էլ մարդկային ուղեղ փոխադրված և այնտեղ փոխակերպված նյութականի դրսևորումն է: Ըստ էնգելսի բնության շարժման հավիտենական շրջապտույտում մատերիայի գոյության ամեն մի վերջավոր ձև անցողիկ է, իսկ մատերիան իր բոլոր փոխակերպումների մեջ մնում է հավերժորեն միևնույնը:

Պարզաբանելով բնության պատմական զարգացման ընթացքը, էնգելսը ընդհանրացնում է, որ մեր գալակտիկայի անթիվ աստղերը կազմավորվել են գազանման միգամածություններից: Այդ ընթացքում առաջացել են և մոլորակները, որոնց աստիճանական սառեցմանը զուգընթաց տեղի են ունեցել բարդ քիմիական փոփոխություններ, իսկ որոշ բարդ քիմիական միացություններից էլ առաջացել են կյանքի հիմքը կազմող սպիտակուցները: Այդ սպիտակուցներից հետագայում առաջացել է բջիջը, որից էլ զարգացել են բույսերի ու կենդանիների տարբեր տեսակները:

Կենդանական աշխարհի զարգացման պարզաբանման հարցում Մարքսն ու էնգելսն առանձնակի խորությամբ վերլուծել են հասարակության ձևավորման և զարգացման փուլը: Արտադրությունը դիտելով որպես հասարակական կյանքի բոլոր ձևերի զարգացման հիմք Մարքսը հիմնավորեց, որ տընտեսական դարաշրջանները տարբերվում են ոչ թե նրանով, թե ինչ է արտադրվում, այլ նրանով, թե աշխատանքի ինչ միջոցներով է արտադրվում:

Հասարակության զարգացման շարժիչ ուժը փնտրելով իր իսկ ձևակերպած արտադրողական ուժերի բնույթին ու մակարդակին արտադրահարաբերությունների համապատասխանության օրենքի գործողության մեխանիզմում, Մարքսը պարզաբանեց սոցիալական հեղափոխության և տնտեսական ֆորմացիաների հերթափոխության պատճառներն ու օրինաչափությունը: Նա բացահայտեց նաև հավելյալ արժեքի գոյացման աղբյուրը: Ելնելով բուրժուական տնտեսագետների այն դրույթից, որ ամեն մի ապրանք, այդ թվում և աշխատուժը ունի արժեք, Մարքսը առաջին հնգամ հիմնավորեց, որ աշխատուժը ունի նաև սպառարժեք, այսինքն, իր արժեքից ավելի շատ արտադրելու ընդունակություն: Բանվորն արտադրում է մի արժեք, որը գերազանցում է

աշխատուժի արժեքը: Այդ տարբերությունից գոյացած հավելյալ արժեքն էլ հարստացնում ու հզորացնում է իշխող դասակարգին: Հետևապես, - եզրակացնում է Մարքսը, - հասարակության մեջ իշխող դասակարգի գաղափարները տիրապետող գաղափարներ են և պետությունն էլ, անկախ կառավարման ձևերից, միշտ ներկայացնում է արտադրության միջոցների սեփականատեր դասակարգի քաղաքական դիկտատուրան: Պարզաբանելով այդ դիկտատուրայի հակաժողովրդական բնույթը Մարքսը և Էնգելսը հիմնավորեցին, որ բուրժուական պետական մեքենան սոցիալիստական վերափոխումների համար պիտանի չէ և պետք է ոչնչացվի:

Մարքսիզմի տեսության նորույթը ընդգծված է 1852 թ. Վեյդեմեյերին գրած Մարքսի նամակում, որտեղ նշված է, որ 1. դասակարգերի գոյությունը կապված է արտադրության զարգացման որոշ պատմական փուլի հետ, 2. դասակարգային պայքարն անհրաժեշտաբար տանում է դեպի պրոլետարիատի դիկտատուրա, 3. պրոլետարիատի դիկտատուրան ևնցում է դեպի դասակարգերի ոչնչացում և անդասակարգ հասարակություն:

ՄԱՐՔՍԻԶՄԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ: Մարքսիզմի տեսությունը հասարակության զարգացման ողջ պատմության գիտական վերլուծության արդյունք լինելով հանդերձ անխուսափելիորեն պետք է իր վրա կրեր նաև ժամանակաշրջանի պատմական սահմանափակության կնիքը: Մարքսը և Էնգելսը բազմիցս նշել են, որ իրենք հավակնություն չունեն իրենց ուսմունքը ներկայացնելու որպես մեկընդմիշտ տրված, ավարտուն ճշմարտություն: Բայց հետագայում մարքսիստ տեսաբանները միակողմանիորեն ֆետիշացնելով մարքսիզմի հիմնադրույթները, իսկ քաղաքական գործիչները այն միանշանակ ներդնելով զարգացման տարբեր աստիճաններում գտնվող ժողովուրդների կյանքում ի վերջո բախվեցին բուն մարքսիզմի ոգուն խորթ տեսական, սոցիալական, բարոյաքաղաքական դրսևորումների:

Մարքսիստ տեսաբանները և քաղաքական գործիչները քաջատեղյակ լինելով Մարքսի պարզաբանած այն ճշմարտությանը, որ մարդիկ ազատ չեն իրենց արտադրողական ուժերն ու այս կամ այն հասարակական ձևն ընտրելու հարցում «որովհետև յուրաքանչյուր արտադրողական ուժ ձեռքբերովի ուժ է, նախորդ գործունեության արդյունք» և անտեսելով այն հանգամանքը, որ հասարակությունն անհատների մեխանիկական ագրեգատ չէ, նրանում զարգացող գործըն-

թացներն ու տնտեսական հարաբերությունները պատահական չեն և կամայականորեն այն շրջել չի կարելի, պատմության ընթացքը ընդհատեցին ու սոցիալիստական արտադրահարաբերությունների ոլորտ ներքաշեցին այնպիսի ժողովուրդների, որոնց ժառանգած արտադրողական ուժերը սոցիալիստական հասարակության բազիսավերնաշենքային հարաբերությունների հիմք դառնալու բնապատմական զարգացման գործընթաց չէին էլ մտել:

Նման արտադրողական ուժեր ունեցող ժողովուրդների տնտեսական զարգացման աստիճանը, քաղաքական հասունացման որակը, գործող բարոյահոգեբանական նորմերը ի զորու և ի հասու չեն պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու, առավել ևս նրա գործընթացը անշեղորեն ու ազնվորեն իրագործելու համար: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան այն կարճ ժամանակամիջոցում կարող է վերածվել կառավարող կուսակցության, կամ իշխող փոքրամասնության դիկտատուրայի, որը ժողովրդի անունից իրականացնում է միայն իր խմբավորման շահերը: Ընդ որում, իրադարձությունների ծավալման ընթացքը ցույց է տալիս, որ պրոլետարիատի դիկտատուրան համաժողովրդական պետության վերածվելուց հետո էլ շարունակում է գործել իշխող փոքրամասնության դիկտատորական մեխանիզմը և անգամ ստորին ու միջին խավերից վեր բարձրացած և ղեկավարման ոլորտն ընդգրկված անհատների մոտ կարճ ժամանակում ի հայտ են գալիս և ամրակայվում են վարվելակերպի ու գործելակերպի ժողովրդին խորթ, բայց իշխող վերնախավին բնորոշ հայտանշաններ: Եվ քանի դեռ հասարակության մեջ կպահպանվի մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունը, տպաւորման ու բաշխման ոլորտներում սոցիալական անարդարությունը՝ սոցիալական շերտավորման տնտեսական հիմքն ու բարոյահոգեբանական սկզբունքները, իշխող վերնախավի և կառավարող կուսակցության բռնության ապարատը սնուցող գաղափարակները կգործեն համաչափ:

ԳԼՈՒԽ XI

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հասարակությունը ծագման ընդհանրությամբ, լեզվով, ճակատագրով, գաղափարներով, կենսագործունեության նպատակներով միմյանց հետ կապված մարդկանց հանրույթ է, ինքնազարգացող, ինքնակառավարվող համակարգ: Հասարակությունը կենդանական աշխարհի ամենաբարդ, բայց և միաժամանակ ամենահակասական կապերով, փոխհարաբերություններով միմյանց հետ համակցված բանական էակների հանրույթ է:

Բնության մեջ սոցիալական կյանքով կենսագործում են բազմաթիվ տեսակներ [մրջյունները, մեղուները, եղնիկները, փղերը և այլն]: Մարդու համեմատ ցածրակարգ այդ օրգանիզմների համատեղ կենսագործունեությունը բավականին կարգավորված, խելամիտ, նպատակաուղղված բնույթ ունի: Այդ կենդանիները միջտեսակային փոխհարաբերություններում երբեք միմյանց ոչնչացնելու ագրեսիվություն չեն դրսևորում: Երկիր մոլորակի կենդանիներից միայն մարդն է, որ իր նմանին սպանում, ոչնչացնում է ոչ թե կենսական պահանջների, այլ համայնքը, պետությունը ղեկավարող անձերի փառասիրությունը, իշխանատենչությունը բավարարելու համար: Էնգելսի պատկերավոր բնորոշմամբ «սպանել մարդուն ուտելու համար ավելի բնական է, քան սպանել նրան մարտադաշտում, կռվի ժամանակ»: Եվ ամենազարմանալին այն է, որ մարդն ավելի շատ միջոցներ է ծախսում իր նմանին սպանելու, քան կենսական կարիքների ու բարեկեցության համար: Այդ զարմանքը բազմապատկվում է հասարակության տարբեր դասերի, խավերի փոխհարաբերությունը դիտելիս, կուսակցությունների անհեթեթ առճակատումների պատճառները պարզելիս:

Հասարակական կյանքի տարաբնույթ հակասությունների, առճակատումների, բախումների էությունը հասկանալու համար անհրաժեշտ է պարզել այդ երևույթների դրսևորման շարժառիթներն ու պատճառները: Հարցի պարզաբանման հիմքը պետք է որոնել հասարակության տարբեր խավերի, դասերի տարաբնույթ շահերի բախման ոլորտում: Այսինքն, պետք է պարզել հասարակության դասային շերտավորման

հիմքերն ու պատճառները:

Վաղնջական ժամանակներում մարդիկ ապրել են տոհմերով: մի քանի տասնյակ մարդկանցից բաղկացած այդ հանրույթը միաձույլ, համերաշխ կենսագործունեություն է դրսևորել: Ոչ ոք արտոնյալ վիճակում չի գտնվել: Դա այն ժամանակն էր, երբ մարդը դեռևս չէր ստեղծել աշխատանքի գործիքներ և իր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար օգտվում էր միայն բնության բարիքներից՝ պատրաստի վերցնելով այն, ինչ նրան տալիս էր մայր բնությունը: Այս դարաշրջանում սեփականություն գոյություն չունի: Տոհմի տարածքում ամեն ինչ պատկանում է բոլորին: Այդ պատճառով էլ չի դրսևորվում և շահերի բախում: Գրեթե բացակայում է և աշխատանքի բաժանումը, քանզի ամեն ինչ կատարվում է համատեղ: Անգամ տոհմի առաջնորդը դեռևս իրավական ոչ մի արտոնություն չունի, քանզի համայնքը կառավարում էր բարոյական նորմերով:

Տոհմը անշեղորեն հետևում է նախնիների ավանդություններին և բոլորն էլ առաջնորդվում են այդ նորմերով: Այդպիսի իրավիճակն ընդգրկել է բավականին երկարատև ժամանակաշրջան: Այդ ընթացքում մարդն աստիճանաբար հմտանում է շրջապատը ճանաչելու գործում և սկսում է այն ծառայեցնել իր կարիքներին: Ի վերջո, գալիս է մի ժամանակ, երբ մարդը հասկանում է, որ կարելի է ընտելացնել որոշ վայրի կենդանիների և դրանց օգտագործել իր պահանջներին համապատասխան: Նման գործընթաց դրսևորվում է և վայրի հացահատիկային բույսերի մշակման ուղղությամբ:

Նշված գործընթացների շնորհիվ իրականանում է աշխատանքի առաջին հասարակական բաժանումը [վայրի կենդանիներին ընտելացնողներ և դրանց պահող ու բազմացնողներ, հացահատիկային բույսեր մշակող հողագործներ, աշխատանքի գործիքներ պատրաստող արհեստավորներ]: Այսպիսի արմատական բեկման շնորհիվ առաջանում է սննդի ավելցուկ:

Նկարագրված գործընթացներին զուգահեռ արմատական տեղաշարժեր է դրսևորվում նաև հասարակական հարաբերություններում: Մայր տոհմի և մյուս արյունակից տոհմերի համատեղվելով ձևավորվում է ցեղը:

Տոհմի նկատմամբ ցեղը բավականին բարդ հանրույթ է: Այդ հանրույթի կենսագործունեությունը կարգավորելու, կառավարման համատեղ գործունեություն իրականացնելու համար ստեղծվում է ցեղի խորհուրդ: Դա նպաստում է մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև

էական տարբերության ձևավորմանը, քանզի ցեղի խորհրդի անդամներն իրականացնելով կազմակերպչական, կառավարման գործողություններ, կատարում են զուտ մտավոր աշխատանք, իսկ կենսական միջոցներ արտադրողներին բաժին է ընկնում ծանր, ֆիզիկական աշխատանքը: Դրանով մարդկային հարաբերությունների առաջին և էական խտրականության հիմքն է դրվում:

Մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև էական զանազանության ձևավորման շնորհիվ օրինաչափորեն ձևավորվում է և դասային շերտավորումը:

Հանրությանը ղեկավարող, ցեղին կառավարող մարդկանց փոքրաքանակ մասը հայտնվելով արտոնյալ վիճակում, աստիճանաբար իր վերահսկողությունը տարածում է և սննդի ավելցուկի ու աշխատանքի գործիքների նկատմամբ: Դա նպաստում է մարդկանց միջև անհավասարության ձևավորմանը և խորացմանը: Այդպիսի միջավայրում բարոյական նորմերը աստիճանաբար թուլանում և իրենց ուժը կորցնում են կառավարման, հպատակեցման գործողություններ իրականացնելու տեսանկյունից:

Անհավասարության, խտրականության և ուժի միջավայրում բարոյական նորմերին փոխարինելու են գալիս հարկադրանքի սկզբունքները: Մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև էական տարբերության միջավայրում ձևավորվում են մարդկանց հարաբերությունները կարգավորող իրավական նորմեր, որով հիմք է դրվում հարկադրանքի իրականացմանը: Հասարակական հարաբերությունները կարգավորելու, ղեկավարման և կառավարման գործողություններ իրականացնելու համար ստեղծվում է մարդկանց պարտադրող և անհնազանդներին պատժող օրենքներ, որոնց շնորհիվ կառավարող վերնախավը հպատակեցնում և իր կամքին է ենթարկում համայնակիցներին:

Հենվելով իրավական օրենքներով ամրակայված ուժի վրա ցեղի խորհրդի անդամները դառնում են տիրակալներ, ցեղի անդամների կյանքը տնօրինողներ: Այդ գործընթացը նպաստում է ցեղի խորհրդի անդամների և նրանց աջակիցների հզորացմանը: Նման գործընթացների շնորհիվ ձևավորվող իշխանությունը աստիճանաբար օտարվում է հանրությունից և դառնում է բռնության, հարկադրանքի գործիք կառավարող վերնախավի ձեռքին՝ ցեղակիցներին հնազանդեցնելու գործում: Իշխող կառավարողների ձևակերպած օրենքները նպատակաուղղվում են հարստացած վերնախավի արտոնությունների պահպանմանը, ամրապնդմանը և անձեռնմխելիության ապահովմանը: Այդ ժա-

մանակաշրջանից սկսած, բոլոր դարաշրջաններում օրենքով ամրագրվել է՝ հասարակությունը կառավարող, իշխանություն իրականացնող հարուստ և ազդեցիկ վերնախավերի առավելությունը՝ ցածր խավերի, չքավոր զանգվածների նկատմամբ: Իհարկե, սեփականության ձևի փոփոխման հետ մեկտեղ փոփոխվել է և իշխող ու հարուստ վերնախավերի արտոնությունների ձևը: Սակայն, էությունը միշտ էլ մնացել է նույնը:

Աշխատանքի գործիքների նկատմամբ սեփականատիրական հնարավորությունից զրկված մասսաները դիտվել են հասարակության ցածր խավեր և միշտ էլ զրկված են եղել իշխանության լծակներին տիրանալու հնարավորությունից: Հետևաբար իշխանությունը և սեփականությունը հանդիսացել են այն երկու կարևոր լծակները, որոնցով դարեր շարունակ հարուստ վերնախավերը ոչ միայն տարբեր ձևերով հպատակեցրել են իրենց նմաններին, այլև իրենց կամքն են թելադրել մասսաներին: Եվ քանի դեռ հասարակությունը շարունակում է իր կենսագործունեությունը մասնավոր սեփականատիրական հարաբերությունների ոլորտում, կպահպանվի և՝ դասային անհավասարությունը, և՝ սոցիալական խտրականությունը, և՝ իշխողների ու հարուստների արտոնյալ կարգավիճակը: Այդպիսի հարաբերությունների ոլորտում եղբայրության, հավասարության, ազատության, սոցիալական խտրականության վերացման կարգախոսները դժվար թե պրակտիկ գործընթացների վերածվեն: Այդ կարգախոսները միշտ էլ իշխանության լծակներին տիրելու համար պայքարող, հարուստ խավերի կողմից որպես գայթակղիչ խայծ կօգտագործվեն մասսաներին խաբելու, նրանց իրենց կողմը գրավելու, նրանց աջակցությունը ստանալու միջոցով իշխանության սանդուխքներով վեր բարձրանալու համար:

Իշխանությունը եղել է ու միշտ էլ կմնա հարկադրանք: Իսկ հարկադրանքի ոլորտում հարուստների, արտոնյալ խավերի և ունեզուրկ մասսաների դրության, կարգավիճակի հավասարությունը լոկ պատրանք է: Դա ոչ միայն կառավարող, իշխող, հարուստ վերնախավերի ծգտման, այլև բնության դաժան օրինաչափության արդյունք է: Մարդիկ ի ծնե զանազանվում են հոգեկան կերտվածքով և ունակություններով: Այդ պատճառով էլ տնտեսական, սոցիալական, իրավական, բարոյական և այլ բնույթի անհավասարությունը կպահպանվի այնքան ժամանակ, քանի դեռ չի վերացել մասնավոր սեփականությունը: Իսկ դա կարող է անել միայն աստված:

Հեգելն իր «Ոգու ֆենոմենոլոգիա» աշխատության մեջ, քաղաքա-

ցիական հասարակությունը բնորոշելով որպես մասնավոր սեփականության վրա հիմնված սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգ, հիմնավորում է, որ այդ համակարգում «մարդկանց միացնում է մասնավոր շահը»: Նրա համոզմամբ սոցիալական կապերի ուժեղագույն ձև հանդիսացող մասնավոր շահը մարդկանց միջև իրավահավասար պայմաններ չի ստեղծում, քանզի հասարակությունը բաժանվում է հարուստների և աղքատների: Այդպիսի բաժանման շնորհիվ ձևավորվել են հասարակական տարբեր խավեր, դասեր, որոնցից յուրաքանչյուրը ընդհանուր շահերով, նպատակներով, ձգտումներով, գործունեության սկզբունքներով միավորված մարդկանց խմբեր են: Այդ խավերից, դասերից յուրաքանչյուրը հասարակության մեջ զբաղեցնում է իր ուրույն տեղը և իր գործունեությամբ ապահովում է քաղաքացիական հասարակության գործառութային գործունեությունը:

2. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ցեղի ձևավորման ժամանակաշրջանում, աշխատանքի հասարակական բաժանման և մասնավոր սեփականության առաջացման պատճառով, դրսևորված դասային շերտավորումը, որոշակի փոփոխություններով, պահպանվում է մինչև այժմ: Յուրաքանչյուր ազգ և ժողովուրդ՝ որպես համակարգային հանրույթ, ի հայտ է գալիս որոշակի շերտակառուցվածքով: Այդ շերտակառուցվածքը ընդհանրացվում է մարդկանց եկամուտի, զբաղմունքի և այլ գործոններով: Այդ գործոնների հիման վրա հասարակությունը բաժանվում է տարբեր խմբերի, խավերի, դասերի:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ միասնականության, անդամակցության, փոխազդեցության գործոններով միմյանց հետ կապված մարդկանց ընդհանրություն է: Այստեղ առաջնային է համարվում մարդկանց կայուն, սերտ կապերի պահպանումն ու համագործակցությունը: Դա մարդկանց այնպիսի միասնություն է, որում նրանք գիտակցում են տվյալ խմբին իրենց պատկանելիությունը:

Սոցիալական խումբը ընդհանուր շահերի, արժեքների, սկզբունքների տեսանկյունից միավորված մարդկանց հանրույթ է, որոնց անդամների համագործակցությունը պայմանավորված է կյանքի բազմաբնույթ ոլորտներում զբաղեցրած նույնանման տեղով ու դիրքով: Սոցիալական խմբերը կարող են միմյանցից զանազանվել ունեցվածքի և շահույթի չափով, զբաղմունքով, իշխանության նկատմամբ ունեցած վերաբերմունքով, հավատալիքներով և այլ գործոններով:

Սոցիալական դասը իրավունքներով ու պարտականություններով միմյանցից տարբերվող մարդկանց խմբեր են: Դասին բնորոշ է ներփակությունը, ժառանգական արտոնությունը, որոշակի իրավունքներով օժտվածությունը: Դա հասարակության մեջ ստեղծում է հիերարխիկ կախվածության վիճակ: Օրինակ, ազնվականությունը և հոգեվորականությունը համարվում են բարձր դաս, իսկ բնակչության հարկատու և արտոնություն չունեցող շերտերը համարվել են երրորդ դաս: Միջնադարյան Հայաստանում ազատների և հոգևորականների դասերն օժտված էին զգալի արտոնություններով:

Սոցիալական խավը հասարակության մեջ զբաղեցրած դիրքով և հետապնդած շահերով առանձնացող մարդկանց խումբ է: Իրենց զբաղեցրած դիրքով հասարակության մեջ հատկապես կարևորվում են վերնախավը և միջին խավը: Վերնախավը հասարակության կազմակերպված լավագույն փոքրամասնությունն է: Այս խավը հասարակության արտոնյալ խումբ է: Կառավարման համակարգում ունի իշխանություն և կարող է որոշել հասարակակլսն կյանքի զարգացման ուղղությունը: Վերնախավի միջուկը կազմում են խոշոր հարուստների այն ներկայացուցիչները, որոնք կառավարող մի խմբավորումից կարող են անցնել մեկ այլ խմբավորման շարքերը՝ չկորցնելով իրենց դիրքը, ազդեցությունը, ներգործելու հնարավորությունները:

Միջին խավը նախաձեռնող, գործարար, նյութական բարիք ստեղծող սոցիալական խումբ է, որի կազմում ընդգրկված են վարչակառավարական ցածր ոլորտի աշխատողները, մենեջերները, որակյալ բանվորները: Դա ծառայողների դասն է և կազմում է վերին ու ստորին խավերի միջանկյալ օղակը: Այդ պատճառով էլ միջին խավի կենսամակարդակով բնորոշվում է հասարակության զարգացման աստիճանը, ապահովվածության վիճակը, քաղաքական կայունության գործընթացը:

Բյուրոկրատիան իշխանությամբ օժտված և կառավարման ղեկի մոտ կանգնած սոցիալական այն խավն է, որը տնօրինում է պետության միջոցները: Դա նյութական բարիք չստեղծող, բայց սպառող չինովնիկների հսկայական զանգվածն է: Պարկինսի բնորոշմամբ բյուրոկրատական ապարատի աճմանը զուգընթաց նրա իշխանությունն անսահմանորեն հզորանում և դառնում է անվերահսկելի: Սոցիալական մյուս խավերը հասարակության մեջ որոշակի դիրք են զբաղեցնում սեփականության և հարստության շնորհիվ: Բյուրոկրատիան ազդեցիկ դիրք է գրավում իշխելու միջոցով: Իշխելով էլ հարստանում է:

Ղեկավարողների դասի մեջ մտնում են քաղաքացիական, կուտակցական, ռազմական բնագավառների ներկայացուցիչները: Այդ դասը հիմնականում միանում է հարուստ վերնախավի հետ և հանդես է գալիս որպես ղեկավարող վերնախավ:

Հասարակության սոցիալական կառուցվածքը սերտորեն կապված է երկրի տնտեսավարման ձևի հետ, որով էլ որոշվում է հասարակության էությունը և զարգացման աստիճանը:

3. ՏԱՐԵՐԱՅԻՆԸ ԵՎ ԳԻՏԱԿՑԱԿԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ՏԱՐԵՐԱՅԻՆԸ հասարակական կյանքի գործընթացների այն դրսևորումն է, որը կարգավորված, ծրագրված չէ հանրույթի կողմից, անկազմակերպ է և նախապես չի գիտակցվում մարդկանց կողմից: Հեգելի պատկերավոր արտահայտությամբ համաշխարհային պատմության մեջ մարդկանց գործողությունների շնորհիվ ստացվում է նաև այնպիսի արդյունքներ, որոնք որոշակիորեն տարբերվում են նրանց նախանշած արդյունքներից: Մարդիկ հասնում են իրենց ձգտումների ու պահանջմունքների կատարմանը, բայց այդ ընթացքում օբյեկտիվորեն դրսևորվում է ևս մի նոր չնախատեսված գործընթաց, որը թաքնված ձևով գտնվել է նրանց շահադիտական մղումներում և չի գիտակցվել մարդկանց կողմից ու չի ընդգրկվել նրանց մտադրությունների գործընթացում:

Հասարակական կյանքը բարդ ու հակասական գործընթացների դրսևորման արդյունք է: Այդպիսի գործընթացներում մարդը կուրորեն, անկազմակերպ չի գործում: Նա գիտակցում, հասկանում է իր տեղն ու դերը մյուսների միջավայրում, պատկերացնում է իր անելիքները և դրանց հնարավոր հետևանքները, գործում է նպատակաուղղված համոզմունքներով:

Ազգի, ժողովրդի զարգացման ընթացքը մարդկանց համատեղ, բազմաբնույթ գործողությունների դրսևորում է: Այդ գործընթացում ամեն մարդ որոշակի տեղ է զբաղեցնում: Նա իր համոզմունքներով, ձգտումներով, իղձերով, ցանկություններով ու նպատակներով ներգրավվում է հանրության գործունեության ոլորտում և իր լուման է ներդնում կյանքի ամենօրյա ծավալվող իրադարձություններում: Այդպիսի գործընթացներում ԳԻՏԱԿՑԱԿԱՆԸ հասարակական կյանքի իրադարձությունների զարգացման ու փոփոխության այն դրսևորումն է, որն իրա-

կանացվում է պլանավորված ձևով և համապատասխանում է իրենց ճակատագիրը կերտող մարդկանց ձգտումներին ու նպատակներին:

Հասարակական կյանքի իրադարձությունների, գործընթացների ծավալման ընթացքը տարերայինի և գիտակցականի, օբյեկտիվի և սուբյեկտիվի համատեղ դրսևորման արդյունք է: Իհարկե, այդ գործընթացներում գլխավոր գործող անձը մարդն է իր նախասիրություններով, ձգտումներով, ցանկություններով, պահանջմունքներով, շահերով: Այդպիսի դրդիչ ազդակների շնորհիվ է ծավալվում տվյալ դարաշրջանի իրադարձությունները: Սակայն դրանց ծավալման ընթացքը, ուղղվածությունը, դրսևորվող երևույթների ու գործընթացների արդյունքները կարող են միայն մասամբ ըմբռնվել առանձին անհատների, հասարակական, քաղաքական գործիչների կողմից: Նրանք կարող են կանխատեսել հասարակական գործընթացների ծավալման ուղղվածությունը, ջանք ու եռանդ ներդնել դրանց իրականացման գործում, սակայն արդյունքը սպասվածից կարող է տարբեր լինել: Դա պայմանավորված է նրանով, որ ծավալվող իրադարձությունները մասամբ մարդկանց կամքի և ցանկության դրսևորման արդյունք են, մասամբ էլ կյանքի են կոչվում անհրաժեշտորեն, մարդկանց կամքից անկախ: Ինչու՞ տիեզերքի գաղտնիքների մեջ թափանցող մարդը ամբողջությամբ չի կարող պատկերացնել հասարակական կյանքում իր արածի ու ներդրածի արդյունքներն ու հետևանքները:

Պատմական իրադարձությունների ծավալման հորձանուտում հայտնվող ամեն մի սերունդ, իր կամքից անկախ, ընդունում է նյութական արտադրության կազմակերպման այն ձևը, որը ստեղծել և իրականացրել են նրա նախորդները: Հետևաբար նախորդների ստեղծած սեփականության ձևն ու հարաբերությունները, դրանով դրսևորվող արտադրության եղանակը, սպառման ու բաշխման հարաբերությունները նրա կամքից ու գիտակցությունից անկախ դրսևորվող գործընթացներ են: Այդպիսին կլինեն և դրանց համապատասխան դրսևորվող հասարակական հարաբերությունները [հասարակության դասային կառուցվածքը, դրանցով պայմանավորված իշխանության բնույթը և այլ գործոններ]: Սակայն դա չի նշանակում, թե ծավալվող իրադարձությունների ոլորտում հայտնված այդ սերունդը լոկ ականատեսի ու դիտորդի դերում է գտնվում: Այդ սերունդն էլ իր հերթին կծավալի ակտիվ գործունեություն՝ առաջնորդվելով որոշակի սկզբունքներով, գաղափարներով, նպատակներով նախասիրություններով ու զգացմունքներով: Հետևաբար իր գիտակցական գործունեությամբ կմասնակցի ծավալվող

իրադարձությունների գործընթացին և իր լուման կներդնի դրանում: Այսինքն, գիտակցաբար գործող անձն իր սկզբունքներով, կամքով, ձգտումներով կդառնա պատմական գործընթացի սուբյեկտ: Այդպիսի սուբյեկտներ կլինեն պետական գործիչները, քաղաքական առաջնորդները, կուսակցությունները, իշխանության օրենսդիր մարմինները, տարաբնույթ կազմակերպությունները:

Այսպիսով, կարելի է ընդհանրացնել, որ հասարակության կենսագործունեության անհատական, հաջող ընթացքը պայմանավորված կլինի մարդկանց կողմից օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների էությունը ճիշտ ըմբռնելուց և դրանք խելամիտ ձևով ծավալվող իրադարձությունների բնույթին համապատասխան նպատակաուղղելուց: Այսինքն, մարդիկ հասարակական կյանքի փոփոխվող իրադարձությունները չեն կարող կամայականորեն նպատակաուղղել իրենց ցանկությամբ: Նրանք հաջողություն կունենան միայն այն դեպքում, երբ խորությամբ ըմբռնեն հասարակական կյանքի զարգացման ու փոփոխության պատճառահետևանքային փոխպայմանավորվածության բնույթը և գործեն դրան համապատասխան: Հասարակությունը ղեկավարող անձը պետք է բազմակողմանիորեն ըմբռնի, թե ինչ ուղղությամբ կծավալվեն զարգացող իրադարձությունները, հասկանա դրանց դրսևորման բնույթը և հասարակության ուժերը խելամիտ ձևով նպատակաուղղի դրանց դրսևորմանը:

Փիլիսոփայության մեջ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների դերը միանշանակ չի արժեքավորվել մտածողների կողմից: Տարաբնույթ մեկնաբանությունները դրսևորվել են ֆատալիստական [լատիներեն fatalis - ճակատագրական] և վոլյունտարիստական [լատիներեն voluntas - կամք] համոզմունքների ձևով:

Օբյեկտիվ գործոնի գերագնահատումը, սուբյեկտիվ գործոնի թերագնահատումը հանգեցնում է ֆատալիզմի: Ճակատագրապաշտական այդպիսի մտածելակերպում զարգացվում է իրադարձությունների անկասելի նախասահմանվածության վերաբերյալ համոզմունք: Հիմնավորվում է, որ աշխարհում և մարդկանց կյանքում ամեն ինչ կանխորոշված է բնական կամ գերբնական ուժերի կողմից և մարդն անզոր է նախասահմանվածից որևէ բան փոխելու: Նման համոզմունքում մարդը դառնում է այդ ուժերի կամակատարը: Հ. Բյուխները, վերլուծելով ֆատալիստական մտածելակերպի բնույթը, հիմնավորում է, որ այդպիսի համոզմունքի դեպքում «առանձին անհատը լոկ փրփուր է ալիքի մակերևույթին, մեծությունը՝ միայն պատահական դեպք»:

Ֆատալիստական մտածելակերպը խորությամբ դրսևորվել է էսքիլեսի, Սոֆոկլեսի ստեղծագործություններում: Նրանց ողբերգությունները ամբողջովին ճակատագրի անխուսափելիության գաղափարի շարադրանք է:

Ֆատալիստական համոզմունքներում դեպքերի, իրադարձությունների ծավալման ընթացքը կախման մեջ է դրվում նախախնամությունից, արտերկրային, գերբնական ուժերի կամքից: Մարդը դառնում է այդ ուժերի հլու կամակատարը և չի կարող ոչինչ փոխել դրանց նախանշած ուղուց: Այդպիսի գաղափարի պատկերավոր ներկայացում է փիլիսոփա Աստիոքոսին գերությունից փրկելու առաջարկին Արիստոտելի տված պատասխանը: Պարզաբանելով, որ ազատներից ամեն մեկն ինքն է ընտրում իր վիճակն, Արիստոտելը հիմնավորում է, որ ոչ ոք չի համարձակվի «կասեցնել ճակատագրի ուղին, աստվածների պատվիրանը»:

Ֆատալիստական մտածելակերպի դրսևորում է նաև կրոնական համոզմունքները: Հավատացյալի ըմբռնմամբ աշխարհում ամեն ինչ, այդ թվում նաև մարդու ճակատագիրը, կանխորոշված է գերագույն արարչի կողմից և մարդիկ անզոր են ինչ-որ բան փոխելու:

Ֆատալիստականս համոզմունքներ դրսևորվում է նաև մերօրյա մարդկանց առօրյա պատկերացումներում: Հաճախ դժբախտ պատահարի զոհ դարձած անձի վերաբերյալ մտքերի փոխանակության ժամանակ արտահայտվում է այն համոզմունքը, որ դա հնարավոր ճակատագիրն էր և նա չէր կարող խուսափել դրանից:

Օբյեկտիվ գործոնի թերագնահատումը, սուբյեկտիվ գործոնի գերագնահատումը հանգեցնում է Վոլյունտարիզմի: Նման համոզմունքների համաձայն պատմական իրադարձությունների զարգացման ընթացքը կախման մեջ է դրվում ականավոր գործիչների կամքից ու ցանկությունից: Կամապաշտական այդ համոզմունքի տեսակետով ազատ կամքը դառնում է կեցության սկզբունք: Ա. Շոպենհաուերը, է. Հարթմանը կամքը դիտում են որպես գործող նախասկիզբ, իսկ Ֆ. Նիցշեն «իշխելու կամքը» դարձնում է կյանքի ներքին մղում, ինքնադրսևորման և ինքնահաստատման սկզբունք: Նա անվերապահորեն մերժելով համընդհանուր օբյեկտիվ օրինաչափության սկզբունքը, առաջնային շարժիչ ուժ է դիտում ազատ, անհատական կամքը:

Վոլյունտարիստական մտածելակերպում կամքը դիտվում է որպես գոյություն ունեցող ամեն ինչի առաջնահիմք, կենդանի էակների շարժիչ ուժ: Վոլյունտարիզմը մերժում է պատմական իրադարձությու-

ների օբյեկտիվ բնույթը և ամեն ինչ կախման մեջ է դնում քաղաքական առաջնորդների կամքից ու ցանկությունից:

4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Մարդկությունը իր զարգացման երկարատև պատմության ընթացքում ստեղծել է սեփականատիրական տարբեր հարաբերություններ: Ստրկատիրական, կալվածատիրական, բուրժուական, հասմայնատիրական սեփականատիրական հարաբերությունների բնույթով անվանվել է և տնտեսական դարաշրջանը: Ամեն մի տնտեսական դարաշրջան ունեցել է իր ձևավորման, զարգացման, վերելքի և անկման ելևէջները: Այդ անհամաչափ զարգացումը պայմանավորված է եղել ոչ միայն տվյալ տնտեսական դարաշրջանի սեփականատիրական հարաբերությունների հնարավորությունների սպառումով, այլև իր ստեղծած արժեքները աստիճանաբար արժեզրկելու և նոր արժեքների ծնգտելու մարդու առեծվածային էությամբ:

Յուրաքանչյուր տնտեսական դարաշրջան ունեցել է իր գաղափարակիրները, որոնք հիմնավորել, գովերգել են ծավալվող իրադարձությունները, մշակել են համապատասխան դաստիարակչական կողմնորոշիչներ: Հաջորդ սերունդը մասնակիորեն փոփոխելով այդ կողմնորոշիչների արժեքները, դրանք համապատասխանեցրել է տնտեսական, սոցիալական տեղաշարժերի բնույթին: Ի վերջո մի քանի սերունդների ներդրած մասնակի փոփոխությունների հանրագումարը դառնում է տվյալ տնտեսական դարաշրջանի հիմնական արժեքները մերժելու և նոր արժեքներով, նոր տնտեսական դարաշրջան ստեղծելու համոզմունք և գաղափարախոսություն:

Այդ համոզմունքները մտածողների լոկ երևակայության արդյունք չեն: Դրանց ծնող, սնող աղբյուրը տնտեսական, սոցիալական, քաղաքական հարաբերություններն են: Իր ֆիզիկական գոյությունը ապահովելու համար մարդը պետք է կազմակերպի նյութական բարիքների արտադրություն: Այդ արտադրության բնույթը պայմանավորված է սեփականության ձևով: Սեփականության ձևը որոշիչ է նաև կառավարման գործընթացում:

Տնտեսական դարաշրջանը ձևավորվելով կոնկրետ սեփականատիրական արժեքների հիման վրա, կշարունակի գոյատևել այնքան ժամանակ, քանի դեռ չեն արժեզրկվել այդ արժեքները: Իսկ ինչու՞ են դրանք արժեզրկվում:

Մարդը հետաքրքրասեր, այրվող, հմայվող, երազող էակ է: Նա երբեք չի բավարարվում ձեռք բերածով: Հասնելով երազածին, նա մըտահղանում է նոր երազանքներ: Ստեղծելով նոր տնտեսական հարաբերություններ, նա սկսում է մտածել դրանք կատարելագործելու, իր հարաճուն պահանջներին համապատասխանեցնելու մասին: Այս հարցում իշխողների և հպատակների ցանկություններն ու պահանջները երբեք չեն համապատասխանում:

Ապահովված իշխող վերնախավը ձգտում է անփոփոխ պահել իր արտոնությունները: Դա տեղի է ունենում ի վնաս հասարակության չբավարարված ներքին խավերի, քանզի նրանց վիճակը բարելավելու համար, հարուստ վերնախավը պետք է զրկվի իր որոշ արտոնություններից: Երկու կողմերի շահերի այդ բախումը աստիճանաբար խորանալով ի վերջո վերածվում է թշնամական հարաբերությունների:

Խորացող հակասությունները կանխելու և մասսաների հետ առճակատումներից խուսափելու համար, կառավարող վերնախավը պետք է իրականացնի սոցիալական, տնտեսական և քաղաքական բարեփոխումներ: Սակայն, այդպիսի գործունեություն իրականացնելու համար պետք է որոշ չափով սահմանափակվի հասարակության հարուստ խավերի իրավունքներն ու արտոնությունները: Դա երբեք չեն հանդուրժի հարուստ խավերը: Այդ պատճառով էլ չլուծված հակասությունները աստիճանաբար սրվելով հանգեցնում են տնտեսական, սոցիալական, բարոյահոգեբանական, քաղաքական ճգնաժամերի: Արմատական հակասությունների ծավալման այդպիսի ընթացքը ի վերջո լուծում է գտնում սոցիալական հեղափոխության միջոցով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ հասարակական կյանքի տնտեսական, սոցիալական, քաղաքական, բարոյահոգեբանական ոլորտների հակասությունների ծավալման և լուծման այն ընթացքն է, որը հանգեցնում է սեփականության ձևի, հասարակության դասային կառուցվածքի, բաշխման հարաբերությունների բնույթի փոփոխմանը: Այդպիսի արմատական բեկումն աստիճանաբար հասունացող ու ծավալվող օրինաչափ գործընթաց է:

Տնտեսական դարաշրջանի բնույթն ու էությունը պայմանավորված է սեփականության ձևով և համապատասխան նյութական ու հոգեվոր արժեքներով: Հետևաբար, տվյալ տնտեսական դարաշրջանը կայուն և կենսունակ կլինի այնքան ժամանակ, քանի դեռ սեփականության այդ ձևի վրա հիմնված արտադրական հարաբերություններն ու արտադրողական ուժերը համապատասխանում են միմյանց բնույթին ու մակար-

դակին: Սակայն, իրենց բնույթով արտադրողական ուժերը (մարդիկ, աշխատանքի գործիքները, գիտությունը) ավելի ակտիվ ու կենսունակ են, քան արտադրական հարաբերությունները (սեփականության ձևով պայմանավորված այդ հարաբերությունները դարեր շարունակ գրեթե չեն փոփոխվում): Այդ պատճառով էլ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների ներդաշնակությունը, ժամանակի ընթացքում, օրինաչափորեն խզվում է: Սակայն, հասարակության հարուստ վերնախավը և կառավարող դասը ի զորու չէ ծավալվող հակասությունները կանխելու, քանզի դա չի համապատասխանում նրա շահերին: Այդպիսի բարեփոխումներ իրականացնելու համար նա պետք է իրականացնի իր շահերին չհամապատասխանող արմատական վերակառուցումներ: Եվ քանի որ անհրաժեշտ բարեփոխումներ չեն իրականացվում, տնտեսական ոլորտի հակասությունները աստիճանաբար տարածվում են սոցիալական ոլորտի վրա:

Արտադրության արդյունավետության անկումը նպաստում է մարդկանց կենսամակարդակի ցածրացմանը, որը հանգեցնում է հասարակության անապահով խավերի դժգոհության մեծացմանը: Հակասականորեն ծավալվող այդպիսի իրադարձությունների միջավայրում օրինաչափորեն ձևավորվում է իրավիճակն արմատապես փոխելու ձգտում դրսևորող սոցիալական նոր խավ, որն իր համոզմունքներով և գործելաոճով նպաստում է արմատական փոփոխությունների աստիճանական ներդրմանը: Դրանով նոր տնտեսական դարաշրջանի սեփականատիրական հարաբերությունների ձևավորման հիմքն է դրվում: Այդ գործընթացը բավականին դիպուկ ձևով նկարագրել է Հեգելը, նշելով, որ այն մարդիկ ովքեր «մեքենայական արտադրության հիմքը դրեցին» երբեք չէին մտածում նոր տնտեսական դարաշրջան հիմնելու մասին, բայց արդյունքում ստացվեց այդպիսի հասարակարգ:

ԳԼՈՒԽ XII

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԱԽՆԴԻՐՆԵՐ

1. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Մարդկային հասարակությունը ձևավորվել է բնության մեջ և իր վրա կրել է շրջակա միջավայրի ողջ ազդեցությունը: Բուսական և կենդանական աշխարհի բոլոր տեսակների նման մարդն էլ բնության արգասիքն է: Բնության բաղադրատարրերի որակական համամասնության արդյունք հանդիսացող մարդու օրգանիզմը սկզբնական շրջանում բուսական ու կենդանական աշխարհի մյուս տեսակների նման հարմարվել է որոշակի միջավայրի պայմաններին և գոյատևել է այդ միջավայրում:

Տիեզերական անհուն տարածության մեջ հրաշք ձևով ձևավորված Երկիր մոլորակը, ինչպես բուսական ու կենդանական աշխարհի բոլոր տեսակների, այնպես էլ մարդու համար ստեղծել է սնվելու, գոյատևելու, աճելու, բազմանալու համապատասխան պայմաններ: Սակայն, եթե կենդանական աշխարհի բոլոր տեսակները բնության հետ փոխհարաբերություններում գրեթե էական փոփոխություն չեն դրսևորել, ապա նույնը հնարավոր չէ ասել մարդու նկատմամբ:

Սկզբնական շրջանում մարդն ամբողջովին գտնվել է բնության գերիշխանության ներքո: Նրա կյանքը և գոյատևելու հանգամանքը ամբողջովին կախված է եղել բնական միջավայրից: Մարդն ինքը ևս այդ միջավայրի ծնունդն է եղել: Իր գոյությունը պահպանելու համար նա բնությունից հայթայթել է պատրաստի սնունդ: Բուսական ու կենդանական աշխարհի որոշ տեսակներ, ջրային որոշ կենդանիներ եղել են մարդու սննդի միջոցները: Սնվելու համար նա պետք է ուսումնասիրեր իր շրջակա միջավայրը, հաճախանար դրանում դրսևորվող երևույթների բնույթը, հարմարվեր դրանց, կամ դրանք հարմարեցներ իրեն: Իրականացնելով բազմաբնույթ գործողություններ, մարդը ոչ մի վնաս չէր պատճառում բնությանը և նրա հետ սերտ ներդաշնակության վիճակում էր գտնվում: Մարդու և բնության այդպիսի սերտ ներդաշնակությունը անփոփոխ շարունակվել է դարեր շարունակ:

Ամբողջովին կախված լինելով բնությունից մարդը կրել է ոչ միայն բնության ազդեցությունը, այլև դիմակայել է նրա արհավիրքներին և աստիճանաբար հնարներ է փնտրել իր վիճակը բարելավելու համար: Բնության հետ մաքառելու երկարատև ընթացքում մարդը ոչ միայն սովորեց բնությունից վերցնել իրեն անհրաժեշտ միջոցները, այլև հնարամտորեն ստեղծեց բնության վրա ներգործելու աշխատանքի գործիքներ: Աշխատանքի գործիքների պատրաստման շնորհիվ մարդը որոշ չափով ազատվում է բնության գերիշխանությունից: Նա կարողանում է բնությունից վերցնել ոչ միայն պատրաստին, այլև կորզել անմատչելին: Այս ժամանակահատվածում մարդու և բնության փոխազդեցությունը գրեթե հավասարակշռվում է:

Կենսական միջոցներ հայթայթելու և ապրելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու պատճառով մարդը բավականին մեծացնում է բնության ռեսուրսների օգտագործման ծավալները, սակայն դրանով դեռևս մեծ վնասներ չի պատճառում բնությանը: Բնությունը ունի հավասարակշռությունը պահպանելու և խախտված հավասարակշռվածությունը վերականգնելու հսկայական հնարավորություններ: Բնական օրինաչափության այդ գործընթացների շնորհիվ բնությունը վերականգնում է մարդու կողմից հասցված վնասները և պահպանում է բնական հավասարակշռությունը: Նման կարգավիճակը շարունակվում է մինչև XIX դարը: Այդ ընթացքում մարդը բազմակողմանիորեն ուսումնասիրում է շրջակա աշխարհի երևույթների, գործընթացների պատճառահետևանքային կապերի բնույթը, բացահայտում բնական օրինաչափությունների էությունը, կուտակում է գիտելիքների հսկայական պաշար: Դա մարդուն հնարավորություն է ընձեռում ստեղծելու աշխատանքի կատարելագործված գործիքներ, տեխնոլոգիաներ: Այդպիսի հմտությունների շնորհիվ մարդը դառնում է բնության տիրակալ և տարբեր հմտություններով աշխատումէ իրեն ենթարկել բնությսն ուժերին:

XIX-XX դարերում աշխատանքի գործիքների և տեխնոլոգիաների կատարելագործման մարդու հաղթարշավը հանգեցրեց բնության հավասարակշռվածության արմատական խախտումների: Այդ խախտումները XXI դարասկզբին հասել են այնպիսի ահռելի չափերի, որ բնությունը չի հասցնում ապաքինել մարդու անխելամիտ գործողությունների միջոցով հասցված վնասները: Զարգացման այս փուլում մարդը կարծես գերիշխում է բնության վրա և փորձում է բնական օրինաչափությունները նպատակաուղղել իր ցանկությանը և պահանջնե-

րին: Գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ մարդը փորձում է իրեն ենթարկել բնությունը: Սակայն, մարդը երևի այնքան խելամիտ կգտնվի, որ հետագայում չի փորձի տոնելու բնության հանդեպ իր տարած ժամանակավոր հաղթանակը, քանի որ այդպես շարունակելու դեպքում բնությունը վրեժխնդիր կլինի մարդուց:Մարդը կարող է գիտության զարգացման շնորհիվ բացահայտել բնության օրինաչափությունները և դրանք խելամիտ ձևով ծառայեցնել իր բարեկեցությանը: Սակայն, երբեք բնության նկատմամբ հաղթանակ տանել չի կարող: Մարդն իր անսահման ունակություններով, հնարամտություններով կարող է հաղթել բնությանը միայն նրա հետ կործանվելով:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԻԶՄ

Ինչպես նշվեց վերևում բնակլիմայական պայմանները ազգերի, ժողովուրդների կյանքում չափազանց մեծ դեր են խաղացել: Այն որոշակիորեն ազդել է նրանց տնտեսական գործունեության, հոգեկան կերտվածքի, կենցաղային հարաբերությունների վրա: Անգամ որոշիչ է եղել զարգացման ուղղության տեսանկյունից: Անապատային, տափաստանային, հարթավայրային, լեռնային բնակլիմայական գոտիների ժողովուրդները միմյանցից զգալիորեն զանազանվում են ոչ միայն ավանդություններով, այլև զարգացման աստիճանով: Եթե բնությունից դուրս հասարակության գոյատևությունը անհնար է պատկերացնել, ապա պարզ է, որ բնական պայմանները վճռորոշ պետք է լինեն մարդու տնտեսական, անգամ քաղաքական գործունեության ոլորտում: Սակայն հասարակության զարգացման բոլոր դարաշրջաններում աշխարհագրական միջավայրի դերը միանշանակ չի եղել: Այդ իսկ պատճառով էլ այն փիլիսոփաների կողմից գնահատվել է տարբեր չափանիշներով:

XVI դարից սկսած մտածողների մոտ որոշակիորեն կարևորվում է աշխարհագրական միջավայրի դերի ու նշանակության արժեքավորումները: Ֆրանսիացի մտածողներ՝ ժան Բոդեն, Մոնտեսկյոն, Ռեկլյուս, անգլիացի պատմաբան Բոկլը, գերմանացի ազգագրագետ Ռաթցելը և այլ մտածողներ զգալի դեր խաղացին աշխարհագրական դետերմինիզմի գաղափարների զարգացման գործում [դետերմինիզմ լատիներեն determinare – որոշել]:

Մոնտեսկյոն «Օրենքների ոգու մասին» աշխատության մեջ զարգացնում է այն միտքը, որ կլիման ազդելով մարդու օրգանիզմի վրա, որոշում է նրա հոգեկան կերտվածքը, կյանքի բնույթը, քաղաքական հա-

րաբերությունները: Նրա կարծիքով, չափազանց շոգը «ընկճում է մարդկանց առույգությունը և ուժը», իսկ ցուրտ կլիման «մարդկանց մարմնին և մտքին տալիս է որոշակի դիմացկունություն», որի շնորհիվ նրանք դառնում են տոկուն և գործողություններում՝ վճռական: Մոնտեսկյոն հիմնավորում է, որ տաք կլիմա ունեցող երկրներում «ժողովրդի փոքրոգությունը նրանց հանգեցրել է ստրկության», իսկ ցուրտ երկրների ժողովուրդների տոկունությունը պահպանել է նրանց ազատությունը:

Բոկլը «Անգլիայի քաղաքակրթության պատմություն» գրքում տեղեկությունների տրամաբանական ընդհանրացումներով հիմնավորում է, որ կլիման, սնունդը, հողը, բնության ընդհանուր պայմանները հզոր ազդեցություն ունեն մարդու վրա:

Ընդգծելով աշխարհագրական միջավայրի կարևորությունը ժողովրդի զարգացման գործում, Մեչնիկովը մարդկության քաղաքակրթության պատմությունը բաժանում էր երեք փուլերի, 1. գետային ժամանակաշրջանի, որի ընթացքում ժողովուրդները բնակություն են հաստատում խոշոր գետերի տարածքներում, 2. Միջերկրածովյան ժամանակաշրջանի, երբ ծովագնացության զարգացման շնորհիվ քաղաքակրթության և կուլտուրայի կենտրոնը տեղափոխվում է ծովափնյա տարածքներում, 3. Օվկիանոսային ժամանակաշրջանի, որում մարդկությունը հասնում է մշակույթի բարձրագույն աստիճանի:

Իհարկե, աշխարհագրական դետերմինիզմի գաղափարների արժեքավորումը միանշանակ չի կարող իմաստավորվել տարբեր դարաշրջանները գնահատելու տեսանկյունից: XVI-XVIII դարերում աշխարհագրական դետերմինիզմի գաղափարներն հիմնավորվում էր աշխարհագրական խոշոր հայտնագործությունների արժեքավորումով և ուներ որոշակի ուղղվածություն: Սակայն, հետագայում աշխարհագրական դետերմինիզմի գաղափարական ուղղվածությունը փոխվում է: Ռաթցելի, Բոկլի, Ռեկլյուի հայացքներում դրսևորվում է հարցի քաղաքականացման ուղղվածություն: Բոկլը փորձում էր հիմնավորել, որ «քաղաքակրթության անհավասար զարգացումը» ամբողջովին պայմանավորված է ժողովուրդների ապրելավայրի բնական հարստությունների անհավասար տեղաբաշխումով: Նման տրամաբանության համաձայն բնական ռեսուրսներով չափազանց հարուստ Ռուսաստանը պետք է Ճապոնիայից առավել զարգացած լիներ, մինչդեռ իրականությունը բոլորովին այլ է:

XX դարասկզբին Ռաթցելը «Երկիրը և կյանքը» աշխատության մեջ

հիմնավորում էր, որ «աստված ինքն է կամեցել գերմանացիներին պայքարելու տարածքների վերաբաշխման համար»: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին այդ գաղափարները ավելի խորացրեց Հաուսհոֆերը: Արդարացնելով ֆաշիստական Գերմանիայի նվաճողական քաղաքականությունը, նա հիմնավորում էր, որ Գերմանիան կենդանի օրգանիզմի նման աճում է և կենսական տարածքների կարիք է զգում և կարող է որոշ տարածքներ վերցնել շատ տարածք ունեցող հարևան ժողովուրդներից:

Փիլիսոփայության պատմության մեջ որոշ մտածողներ հասարակության զարգացումը փորձել են հիմնավորել ազգաբնակչության գործոնով: XVIII-XIX դարերում է. Թեյլորը, Ա. Բաստիանը, Լ. Մորգանը, Ա. Կետլեյը իրենց աշխատություններում հիմնավորում էին, որ ժողովուրդների ցածր կենսամակարդակի պատճառը պետք է փնտրել նրանց չափից արագ բազմացման գործոնում: Մալթուսի կարծիքով ազգաբնակչության աճը նրա թշվառության հիմնական պատճառն է: «Փորձ ազգաբնակչության օրենքի մասին» աշխատության մեջ նա հիմնավորում էր, որ «աղքատության գլխավոր պատճառը քիչ է կախված կամ բոլորովին կախված չէ կառավարման ձևից» ու հարստության անհավասար բաշխումից: Մալթուսի համոզմամբ հարուստները «չունեն այնքան ուժ, որ բոլոր աղքատներին ապահովեն աշխատանքով»: Այդ պատճառով էլ աղքատները իրավունք չունեն պահանջելու հարուստներից սնունդ և աշխատանք: Նրա կարծիքով «ժողովուրդների դըժբախտության պատճառը պետք է փնտրելոչ թե սոցիալ-քաղաքական հարաբերություններում, այլ բնության հավերժ, կենսաբանական օրենքներում», քանզի մարդկանց չափից ավելի բազմացման պատճառով բնական ռեսուրսները չեն բավականացնի նրանց, և «աղքատների նկատմամբ պետության ցուցաբերած հոգատարությունը» միայն կարող է սրել աշխարհի գերբնակչության խնդիրը:

Ամերիկացի մտածող Պենդելը 1951 թվականին «Ազգաբնակչության անզսպելի աճը» գրքում հիմնավորելով, որ «ազգաբնակչության գերաճը ամենամեծ դժբախտությունն է», առաջարկում էր մոլորակի մարդկանց քանակը կրճատել 700 միլիոնով, որպեսզի մարդկությունը չբախվի սոցիալական աղետների: Նման գաղափարներ զարգացրել են նաև ամերիկացի մտածող Քուկը, անգլիացի Բերվիստը և այլ մտածողներ: Փարիզում հրատարակված Մյուրդալի և Վենսանի «Մենք չափից ավելի շատ չե՞նք» գրքում հիմնավորվում է, որ անհրաժեշտ է սահմանափակել աշխարհի բնակչության քանակը: Պոլ Ռեբոն «Չափից

ավելի չե՞ն երեխաները» գրքում զարգացնում է այն միտքը, որ մարդկանց չափից ավելի բազմացման պատճառով շատանում է նրանց «դժբախտությունը, գործազրկությունը, սովը, բնակարանային ճգնաժամը» և այլ սոցիալական աղետներ:

Արդի ժամանակաշրջանում մտածողների կողմից բնակլիմայական գործոնների շեշտադրումը երկիմաստ բնույթ է կրում: Գիտնականներից շատերը իսկապես անհանգստանում են ոչ միայն աշխարհի գերբնակչության հիմնախնդրից, այլև մարդու կողմից բնության ռեսուրսների հանդեպ ցուցաբերած անխելամիտ գործողություններից: Սակայն քիչ չեն նաև խնդիրը միակողմանիորեն քաղաքականացնողները: Հարպերը, Քուկը, աշխարհի գերբնակչությունը կրճատելու համար հզոր տերությունների ղեկավարներին խորհուրդ էին տալիս ներգործության հնարներ փնտրել արագ բազմացող ժողովուրդների աճի տեմպերը կրճատելու ուղղությամբ:

3. ԿԵՆՍՈՒԺԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Դարեր շարունակ փիլիսոփաները, կենսաբանները և այլ բնագավառների մտածողներ փորձել են հասկանալ օրգանական և անօրգանական աշխարհի օրինաչափությունների բնույթը, պարզել դրանցում դրսևորվող երևույթների պատճառահետևանքային կապերի սկզբունքները, բացահայտել արմատական տարբերությունների էությունը: Մտածողներից ոմանք կարծիք են հայտնում, որ օրգանական աշխարհի տեսակները իրենցում կրում են ինչ-որ «կենսական ուժ»:

XX դարի 70-ական թվականներին Ուոթսոնը հիմնավորում էր, որ «ոչ մի ֆիզիկաքիմիական տեսություն չի կարող միանշանակ բռնել կենդանականի իսկական էությունը», քանզի դեռևս գիտության որևէ բնագավառում կյանքի այդ ուժերի վրաբերյալ հիմնավորված մեկնաբանություն չի տրվել: «Մոլեկուլար կենսաբանություն» գրքում նա բացատրում էր, որ «բջջի մոլեկուլները, հատկապես սպիտակուցները և նուկլեինային թթուները շատ մեծ են և շատ դժվար է գուշակել դրանց քիմիական կառուցվածքը»: Այդ մակրոմոլեկուլների մեծ մասը ամբողջական ուսումնասիրել դեռ չի հաջողվում: Այդ պատճառով էլ քիմիկոսները դրանք մաս-մաս են հետազոտում: Հիմնվելով այդ հանգամանքի վրա Ուոթսոնը եզրակացնում է, որ «բջջի կառուցվածքը երբեք այնպես չի ճանաչվի, ինչպես ջրի կամ շաքարի կառուցվածքը»: Սակայն, եթե գիտնականները դեռևս չեն կարողանում վերջնականորեն լուծել կեն-

սաբանության որոշ կնճռոտ խնդիրներ, դա չի նշանակում, թե անհնար է թափանցել այդ բնագավառի գաղտնիքների մեջ և պարզել դրանցում դրևորվող օրինաչափությունների բնույթը: Այդ խորհրդավոր գաղտնիքներից մեկն էլ կենսուժի երևույթն է:

Կենսուժի վերաբերյալ մտորումները տանում են դեպի շարժման աղբյուրի հարցադրմանը և հոգու խորհրդավորության պարզաբանմանը: Այս խնդրում հետազոտության արդյունավետությունը երևի կախված կլինի ֆիզիկոսների և կենսաբանների հնարավոր համագործակցությունից:

Գենետիկական կոդի խորհրդավորության քողը թափանցիկ դարձնելու ճանապարհին երևի զգալի անելիքներ կունենան ատոմի միջուկի գաղտնիքներով զբաղվող ֆիզիկոսները, քանզի շարժման աղբյուրի բացահայտումը կենսուժի էության բացահայտման բանալի կարող է ծառայել:

XX դարում, ֆիզիկոսները, խորանալով ատոմի հետազոտությունների ոլորտում, հիմնավորեցին, որ միջուկը բաղկացած է երկու տեսակի ծանր մասնիկներից՝ պրոտոնից [որը հանդիսանում է ջրածնի ատոմի դրական լիցքավորված միջուկ և մասսայով 1800 անգամ մեծ է էլեկտրոնի մասսայից] և նեյտրոնից [չեզոք մասնիկ, որի մասսան մոտավորապես հավասար է պրոտոնի մասսային]: Պրոտոնը և նեյտրոնը միասին կոչվում են նուկլոն: Ամեն մի նուկլոն փոքր մագնիս է: Միջուկում գործում են ձգողական և վանողական ուժեր: Հիմնավորված է, որ ձգողական ուժերը գերազանցում են դրական լիցքերի միջև գործող վանողական ուժերին: Բայց ինչու մարդը չի զգում այդ ուժերի ներգործությունը, եթե դրանց հզորությունը միլիոնավոր էլեկտրոն վոլտ է:

Ատոմում էլեկտրոնները գտնվում են միջուկից 10^{-8} սմ հեռավորության վրա: Իսկ պրոտոնները միջուկում գտնվում են միմյանցից 10^{-12} սմ հեռավորության վրա: Միջուկային ուժերը չափազանց հզոր են, բայց գործում են 10^{-12} սմ հեռավորության վրա: Այդ միջակայքից դուրս միջուկային ուժերի ազդեցությունը դադարում է: Ասվածից կարելի է եզրակացնել, որ շարժման աղբյուրը միջուկային ուժերն են, որոնց բնույթը չափազանց բարդ է, բայց ոչ խորհրդավոր: Սակայն ատոմի միջուկը պարզ կառուցվածք չունի: Այն բազկացած է մի շարք պարզագույն մասնիկներից, որոնք պահվում են միասին միջուկային ուժերի շնորհիվ և համապատասխան խմբավորումից հետո կարող են ձևափոխվել այլ միջուկների: Բնական օրինաչափության այս նույն սկզբունքը գործում է նաև կենսաբանության բնագավառի ատոմ հան-

դիսացող բջիջում:

Օրգանական աշխարհում դիտվում է զարմանահրաշ օրինաչափություն, պատճառահետևանքային անվերջանալի մի շղթա, որը կարելի է անվանել կենսագործունեության ծգտում: Միաբջիջ օրգանիզմներից սկսած մինչև ինտելեկտուալ կատարելություն համարվող մարդկային օրգանիզմի բազմաբնույթ գործառույթներից կարելի է առանձնացնել մեկը, որն ի հայտ է գալիս և՛ որպես կյանքի իմաստ, և՛ որպես ներտեսակային ու միջտեսակային պայքարի մեխանիզմ, և՛ որպես կրքերի բախման պատճառ, և՛ որպես գործունեության հիմք, և՛ որպես քաղաքական բախումների, իշխանատենչ պայքարի մոլուցք: Այդ ամենը իրականացվում է քիմիական բարդ գործընթացներով, որի նպատակը օրգանիզմի կենսագործունեության ապահովումն է հնարավոր բոլոր միջոցներով: Այդ մեխանիզմի վերահսկումը երևի իրականացնում է գենը:

Ամենայն հավանականությամբ բջիջները որոշակի ազդեցություն են թողնում մարմնի և օրգանիզմի վրա: Բջիջները կարծես թե մտածող միավորներ լինեն և նրանց զգացածը կարող է փոխանցվել մարմնին, օրգանիզմի բոլոր մասերին: Փոքրագույն բջիջի բարդ կենսագործունեությունը օրգանիզմին ապահովում է և կառուցողական նյութերով, և՛ կենսական էներգիայով: Ոչ միայն մարդու օրգանիզմը, այլև մտածողության օրգան ուղեղը ամբողջովին գործում է կենսաբանական էներգիայի շնորհիվ:

Արտաքին աշխարհից զգայարանների միջոցով ստացված ազդակները ներվային թելիկներով ուղեղ են հասնում կենսաբանական էներգիայի շնորհիվ: Մտածողության ժամանակ ուղեղի նուրբ և գորշ մասսայի զանազան ոլորտները փայլատակում են կենսաբանական էներգիայի սպարպումներով: Երևի մարդու հոգին էլ այդ կենսաբանական էներգիան է: Հիվանդանալու ժամանակ մարդու օրգանիզմը թուլանում է, որովհետև ախտածին բակտերիաները խախտում են օրգանների կենսագործունեության օրինաչափ ռիթմը, որի պատճառով էլ նվազում է կենսաբանական էներգիայի արտադրությունը: Օրգանիզմը կմահանա միայն այն դեպքում, երբ սպառվի կենսաբանական էներգիան: Իսկ թե ինչու է սպառվում, երևի արդի գիտությունը ի զորու չլինի պատասխանելու: Կենսաբանական էներգիայի ակտիվացման և սպառման կարգադրիչ , և վերահսկիչ մեխանիզմը երևի գտնվում է գենում:

4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Բնության և հասարակության բազմաբնույթ փոխազդեցության ուսումնասիրությունը ներկա փուլում չափազանց կարևորվում է ոչ միայն օրգանական աշխարհին սպառնացող աղետները կանխելու, այլև մարդկությանը զգուշացնելու ծեռնարկած և ծեռնարկվելիք անխուսափելի, կործանարար արարքներից: Եվ իզուր չէ, որ բնապահպանական խնդիրներով զբաղվող գիտությունը՝ էկոլոգիան հունարեն՝ տուն, կացարան և գիտություն, բառակապակցություն է իմաստավորում: Վերջապես, բանական էակ մարդը պետք է հասկանա, որ Երկիր մոլորակը բուսական և կենդանական աշխարհով իր տունն է և նրան պետք է խնամքով վերաբերվել:

XX դարում, առավել ևս XXI դարասկզբին, մարդը զարմանահրաշ գիտական հայտնագործությունների և նոր տեխնոլոգիաների մշակման շնորհիվ, չափազանց մեծացնելով իր իշխանությունը բնության նկատմամբ, ինքն է հայտնվել կախյալ վիճակում: Այժմ մարդկությունը բացարձակապես չի կարող գոյատևել առանց երկրի ընդերքի օգտակար հանածոների ու էներգառեսուրսների, որոնց պաշարները աղետալի ծևով նվազում են: Այդ գործընթացների պատճառով չափազանց թուլացել է բնության վերականգնողական հնարավորությունները: Դա արդեն Երկիր տան փլուզման սկիզբն է: Եվ զարմանալին այն է, որ գիտնականների ահազանգին քաղաքական գործիչները գրեթե ուշադրություն չեն դարձնում:

Արդի ժամանակաշրջանում, ինչպես ամբողջական երկրագնդի, այնպես էլ նրա բուսական ու կենդանական աշխարհի առջև ծառացել է բնապահպանական տնտեսական, ռազմական, քաղաքական և այլ հիմնախնդիրներ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ կապված է մարդու կենսական միջոցների արտադրության բազմաբնույթ գործընթացների հետ: Արդի դարաշրջանում նյութական բարիքների արտադրությունը իրականացվում է հողօգտագործման և ստացված բարիքների վերամշակման բարդ տեխնոլոգիաներով: Հողը բնության ստեղծած մեծագույն հարաշքն է, որի հետ մարդկությունը անխնայամիտ ծևով է վարվում, քանզի միլիարդավոր տարիների ընթացքում ստեղծված արժեքավոր ծածկույթը գյուղատնտեսական տեխնիկայի կիրառման և ագրոքիմիական միջոցառումների խախտման պատճառով կարող է որակազրկվել և դառնալ անպիտանի դարերի ընթացքում: Իհարկե,

մարդկությունը հողի նվազող պտղաբերությունը փորձում է հավասարակշռել արհեստական սնուցման միջոցներով: Սակայն դա խնդրի արմատական լուծում չի կարող լինել, քանի որ սնուցող միջոցները լոկ ապահովում են անլիարժեք քանակ, որը մարդու օրգանիզմի համար բացարձակապես վնասակար է: Առավել վնասակար ազդեցություն են թողնում մրգերում և բանջարեղենում ներծծվող ու կուտակվող թունաքիմիկատները:

Գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման ժամանակ օգտագործվող խիստ թունավոր նյութերը ներծծվում են մրգերի և բանջարեղենի մեջ, որոնց օգտագործումը չափազանց վնասակար է դառնում մարդու առողջության համար: Սակայն, դրանք մանրուք են հողի, ջրի և անտառների ռեսուրսների պահպանման գործը խելամիտ ձևով չիրականացնելու համեմատ: Մեր նախնիները բնակավայրեր կառուցելիս ընտրել են գյուղատնտեսության համար համեմատաբար քիչ օգտագործելի տարածքներ: Իսկ այժմ հողազուրկ Հայաստանում օժանդակ շինություններ են կառուցվում բարեբեր տարածքների վրա:

Հայաստանում XX դարավերջին կիրառած անտառահատման անվերահսկելի գործընթացի, լեռնային ու նախալեռնային շրջաններում հողի սեփականաշնորհման ոչ գիտական հարցալուծումների աղետաբերությունը իրեն զգացնել կտա առաջիկա տասնամյակներում: Չոր և խիստ բնակլիմայական պայմաններ ունեցող Հայաստանի համար բնական հավասարակշռվածության այդպիսի խախտումները հետագայում կարող են անշրջելի դառնալ:

Արդի դարաշրջանում համայն մարդկությունը բնության ռեսուրսների օգտագործման հարցում ցուցաբերում է անհաշվարկային, անփոխհատուցման մոտեցում: Ածխի, նավթի, գազի և այլ օգտակար հանածոների առաջացման համար պահանջվել են միլիոնավոր տարիներ: Իսկ դրանց հիմնական պաշարները մարդը սպառեց ընդամենը 150-200 տարվա ընթացքում: Բնական հանածոների օգտագործման այսպիսի ընթացքը Երկիր մոլորակին լրիվ կաղքատացնի առաջիկա 100 տարվա ժամանակամիջոցում: Եվ ամենաաղետալին այն է, որ երկրի ընդերքի աղքատացմանը զուգընթաց բարձրանում է մթնոլորտի աղտոտվածության աստիճանը: Միայն ԱՄՆ-ի գործարանները ամեն տարի մոտավորապես 300 միլիոն տոննա վնասակար նյութեր են արտանետում մթնոլորտ: Այսպիսի գործընթացների պայմաններում մոլորակի խախտված հավասարակշռվածությունը ոչ միայն չի վերականգնվի, այլև գնալով կխորանա:

Մարդկությանը պետք է անհանգստացնի, և խելամտության նըպատակաուղղի բնական հավասարակշռվածությունը խախտող ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ: Խոշոր տերությունների զինանոցում կուտակվել է զենքի տարբեր տեսակի հսկայական պաշարներ, որոնք խիստ աղետաբեր են ոչ միայն մարդկության, այլև ողջ մոլորակի համար: Հատկապես վտանգավոր է քիմիական և միջուկային զինատեսակների առկայությունը: Բնական հավասարակշռվածության խախտման գործում քիչ դեր չեն կատարում նաև խոշոր տերությունների զորավարժությունները, որի ընթացքում մեծ վնաս է պատճառվում ինչպես ջրային, այնպես էլ ցամաքային տարածքների բուսական ու կենդանական աշխարհին: Զինավարժությունների տարածքների բնական հավասարակշռվածության խախտումը անդրադառնում է և հարևան տարածքների վրա:

Բնապահպանական ճգնաժամերի դրսևորման գործում զգալի մեծ է և քաղաքական գործոնի դերը: Հզոր տերությունների ղեկավարները միմյանց հետ կնքում են տարբեր բնույթի համաձայնագրեր, պայմանագրեր, որոնցում ավելի շատ արտացոլվում է պետությունների շահը, քան բնապահպանական խնդիրներ: Ներկա փուլում աշխարհի հզոր տերությունները փոքրաքանակ ազգերի ու ժողովուրդների նկատմամբ ցուցաբերում են աշխարհաքաղաքական մոտեցումներ. Նրանց ընդգրկելով իրենց քաղաքական շահերի ոլորտում հզոր տերությունները ոչ միայն իրենց կամքն են թելադրում այդ ժողովուրդներին, այլև իրենց հպատակեցնությամբ նպատակաուղղում են բնական ռեսուրսների օգտագործումը: Այդպիսի գործընթացները չափազանց վնասաբեր ազդեցություն են ունենում փոքրաքանակ ժողովուրդների բնական ռեսուրսների վրա:

Բնապահպանական խնդիրների իրականացման գործում զգալի ներդրում են կատարում «Կանաչների միությունը», «Հռոմեական ակումբը» և այլ միջազգային կազմակերպություններ: Հատկապես մեծ ծառայություն է մատուցել Աուրելիո Պեչեին: Երկու տասնամյակ առաջ ահազանգելով, որ «էկոճգնաժամը ընդգրկում է ողջ երկրագունդը», նա հիմնավորում էր, որ միայն բոլոր պետությունների համատեղ ջանքերով կարելի է վերականգնել խորացող բնական անհավասարակշռվածությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գաբրիելյան Հ.Գ. Հայ փիլիսոփայության պատմություն, Երևան, 1976:
2. Զաքարյան Ս.Ա. Փիլիսոփայության պատմություն, Երևան, 2000:
3. Խաչատրյան Բ.Ա. Փիլիսոփայության թեմատիկ ձեռնարկ, Երևան, 1992:
4. Կանկե Վ.Ա. Փիլիսոփայություն, Երևան, 2001:
5. Հակոբյան Ս.Մ. Փիլիսոփայություն, Երևան, 2000:
6. Շաքարյան Հ.Գ. Կեցության էությունը և տիպաբանությունը, Երևան, 1997:
7. Алексеев П.В., Панин А.В. Философия: учебник.-М., 1999.
8. Радугин А.А., Философия: курс лекций.-М., 1999.
9. Спиркин А.Г., Философия.-М., 2000.
10. Философия: учебник /Под ред., В.Н. Лавриненко.-М., 2001.
11. Философия: учебник.-Ростов Н/Д., 1999.
12. Философия: учебник /Под ред. В.Д. Губин и др.,-М., 2000.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ I «ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆ 3
1. Ի՞նչ է փիլիսոփայությունը 3
2. Փիլիսոփայական մտածելակերպի յուրահատկությունները 4
3. Փիլիսոփայության պատմական ընբռնումները 6
4. Փիլիսոփայությունը որպես աշխարհայացք 8
5. Աշխարհայացքի պատմական տիպերը 15
6. Փիլիսոփայության հիմնախնդիրները 18
7. Փիլիսոփայության բազմիմաստությունը և բազմարժեքությունը 20
8. Փիլիսոփայության գործառույթները 22
9. Փիլիսոփայության և կոնկրետ գիտությունների փոխհարաբերությունը 27

ԳԼՈՒԽ II ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԷՏԱՊՆԵՐԸ 29
ԲԱԺԻՆ I ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄԻՏՔԸ 29
1. Անտիկ դարաշրջանի փիլիսոփայական մտքի յուրօրինակությունները և տիեզերակենտրոն ուղղվածությունը 29
2. Արևելյան և Արևմտյան փիլիսոփայական մտքի նմանության և տարբերության գծերը 30
3. Անտիկ Հունաստանի փիլիսոփայական հիմնական դպրոցները 32
ԲԱԺԻՆ II ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄԻՏՔԸ 43
1. Տիեզերակենտրոն մտածելակերպից աստվածակենտրոնին անցնելու հիմնախնդիրները 43
2. Բանականության և հավատի հարաբերակցության հարցադրումները 44
3. Աշխարհիկ և աստվածային ճշմարտությունների հարցադրումները 47
4. Ռենիվերսալիաների արժեքավորման հարցադրումները. 49

ԲԱԺԻՆ III ՀԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՁԱՏԱԳՈՎԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ 51
1. Քրիստոնեական ջատագովության բնույթը 51
2. Քրիստոնեական ջատագովությունը ազգային անկախության համար մղվող պայքարի գաղափարախոսություն 52
3. Մարդու կամքի ազատության հարցալուծումները 54
4. Արևմուտքի և Արևելքի հոգևոր մշակույթների համադրումը: Դավիթ Անհաղթ 55
5. Անանիա Շիրակացու բնափիլիսոփայությունը 59
6. Մխիթար Հերացու բնափիլիսոփայությունը 60

ԲԱԺԻՆ IV ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ 61
1. Հումանիզմի փիլիսոփայություն 61
2. Լուսավորականության փիլիսոփայություն 64
3. Գիտական ճանաչողության մեթոդի հիմնախնդիրը 66
4. Մար դկային ճանաչողության սահմանների և հնարավորության հարցալուծումները 74

ԳԼՈՒԽ III ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 80
1. Կեցություն, սուբստանցիա, մատերիա 80
2. Կեցության բովանդակային ըմբռնումները 81
3. Կեցության պատմական ըմբռնումները 83
4. Կեցության տիպաբանությունը 86
5. Շարժումը, տարածությունը, ժամանակը կեցության համակարգում 92
6. Շարժման, ժամանակի, տարածության վերաբերյալ դասական և հարաբերականության տեսությունների սկզբունքները 96

ԳԼՈՒԽ IV ԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐԸ 101
1. Կեցության համընդհանուր կատեգորիաները 101
2. Կեցության համընդհանուր օրենքները 116

ԳԼՈՒԽ V ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ 126
1. Գիտակցության ծագումը 126
2. Գիտակցության ըմբռնումը 128

3. Անպայման և պայմանական ռեֆլեքսների հիմքերը 131
4. Գիտակցության աղբյուրները 133
5. Նյութականը և իդեալականը 135
6. Գիտակցականը, ենթագիտակցականը, անգիտակցականը 138
7. Մարդու հոգեկանի ոլորտների ֆրոյդյան մեկնաբանումները 141
8. Լեզվամտածողություն. լեզուն որպես իմաստավորված նշանների համակարգ 142

ԳԼՈՒԽ VI ԻՄԱՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 145
1. Մարդկային ճանաչողության հնարավորությունների ու սահմանների հարցադրումները 145
2. Իմացության սուբյեկտ և օբյեկտ 147
3. Առօրեական, կրոնական, փիլիսոփայական, գիտական ճանաչողության առանձնահատկությունները 148
4. Զգայական իմացության ձևերը 150
5. Ռացիոնալ ճանաչողության ձևերը 155

ԳԼՈՒԽ VII ԳԻՏՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ 161
1. Գիտական իմացության էմպիրիկ և տեսական մակարդակները 161
2. Գիտական հետազոտության մեթոդները 163
3. Ստեղծագործություն, ներհայեցողություն, բանավեճ 169
4. Գիտության դերի արժեքավորումները 172

ԳԼՈՒԽ VIII ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ 175
1. Ճշմարտության պատմական ընթացումները 175
2. Ճշմարտության օբյեկտիվությունը, հարաբերականությունը, բացարձակությունը, կոնկրետությունը 178
3. Ճշմարտություն, մոլորություն, կեղծիք 181
4. Գիտելիքի հավաստիության ստուգման չափանիշները 183

ԳԼՈՒԽ IX ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
1. Մարդու բնույթը 185
2. Մարդու կերպարը փիլիսոփայական մտքի պատմության մեջ 187

3. Մարդը կենսաբանականի, հոգեկանի,
հասարակականի ամբողջություն 191
4. Մարդու սոցիալականացման գործընթացները 194
5. Կյանքի իմաստի փիլիսոփայական
հարցալուծումները 195

ԳԼՈՒԽ X ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ 197

1. Հերմենևտիկա 197
2. Ֆենոմենոլոգիա 200
3. Պոզիտիվիզմ և նորպոզիտիվիզմ 201
4. Էկզիստենցիալիզմ 205
5. Պրագմատիզմ 208
6. Նորթոմիզմ 210
7. Մարքսիզմ 212

ԳԼՈՒԽ XI ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ 215

1. Հասարակության դասային շերտավորման հիմքերը 215
2. Հասարակության դասային կառուցվածքը 219
3. Տարերայինը և գիտակցականը հասարակության
զարգացման գործընթացներում 221
4. Հասարակական կյանքի անհամաչափ զարգացման
հիմքերը 225

ԳԼՈՒԽ XII ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ
ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԱԽՆԴԻՐՆԵՐ 228

1. Բնության և հասարակության փոխազդեցության
պատմական ընթացքը 228
2. Աշխարհագրական դետերմինիզմ 230
3. Կենսոլժի առեղծվածը 233
4. Բնապահպանական հիմնախնդիրներ 236

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 239

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 240